ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՄԱՅՐԻԿԻՍ՝
ԾԱՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

TO MY MOTHER
ПОСВЯЩАЕТСЯ МОЕЙ МАМЕ

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF HISTORY

LILIT HOVHANNISYAN

THE ELUCIDATION OF THE PROBLEMS OF HISTORY OF THE ARMENIAN QUESTION, 1915–1923, IN HISTORICAL SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA (1991–2015)

YEREVAN – 2020

—

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЛИЛИТ ОГАНИСЯН

ОСВЕЩЕНИЕ ПРОБЛЕМ ИСТОРИИ АРМЯНСКОГО ВОПРОСА 1915–1923 ГГ. В ИСТОРИЧЕСКОЙ НАУКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1991–2015 ГГ.)

ЕРЕВАН – 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1915–1923 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1991–2015 ԹԹ.)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ARCH. MESROB ASHJIAN
ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES
207 207

ԵՐԵՎԱՆ – 2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 854

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ

Գիտական խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Գ. Մախմուրյան

Գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարուքյան
պատմական գիտությունների թեկնածու Ա. Խոսրոևա

Հովհաննիսյան Լիլիթ
Հ 854 Հայկական հարցի 1915–1923 թթ. պատմության հիմնահարցերի լուսաբանումը հայաստանյան պատմագիտության մեջ (1991–2015 թթ.) [Խմբ.՝ Գ. Մախմուրյան]; Եր.: Պատմության ինստիտուտ, 2020, 384 էջ:

Աշխատության մեջ ներկայացված է 1991–2015 թթ. Հայաստանի Հանրապետությունում Հայկական հարցի 1915–1923 թթ. պատմության հիմնահարցերին նվիրված պատմագիտական հետազոտությունների արդյունքների, դրանց հեղինակների կարծիքների ու տեսակետների քննական վերլուծությունը:

Նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, միջազգայնագետների, իրավաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-97-8

© Հովհաննիսյան Լ., 2020.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայկական հարցը վաղուց դադարել է սոսկ հայկական լինելուց: Այն ժամանակակից մարդկության գիտակցության հարցն է: Հայերն արել են մարդկայնորեն հնարավոր ամեն բան հիմնավորվելու սեփական տանը: Պատմությունը չգիտե ոչ մի ուրիշ ժողովրդի խնդիր, որն այդքան զոհաբերություններ արած լիներ հանուն ազատության»[1]:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակմամբ Հայոց պետականությունը թևակոխեց զարգացման նոր փուլ: Իր բազմադարյա պատմության ընթացքում ազատության ու վերելքի բերկրանքը վայելած, կորուստների դառնությունն ու ցեղասպանության չսպիացող վերքի ցավը կրող հայ ժողովուրդը միջազգային դժվարին պայմաններում սկսեց կերտել ազգային պատմության նոր էջը՝ Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունը:

Անկախության վերականգնումը հասարակական-քաղաքական նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև հայ պատմագիտության ու պատմագրության զարգացման համար. գիտական նոր հնչեղություն ստացավ Հայկական հարցի ուսումնասիրումը՝ դառնալով հայ պատմագիտության առանցքային ուղղություններից մեկը թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ Սփյուռքում:

---

[1] ***Ադոնց Ն.*** Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 33:

Անկախության պայմաններում միանգամայն նոր լույսի ներքո սկսեցին վերանայվել հատկապես Հայոց ցեղասպանության հետևանքով հայաթափված Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդից խլված այլ տարածքների ազատագրության, հայկական անկախ և միացյալ պետականության վերականգնման, այդ հարցերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականության ու դիվանագիտական պայքարի հիմնախնդիրները: Կարևորվեց դրանց գիտական օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրման շարունակումը, արդեն կատարված աշխատանքի արդյունքների ամբողջացումն ու վերաարժևորումը՝ դրա միակ չափանիշ համարելով պատմականությունն ու պատմական ճշմարտությունը:

Վերոնշյալ հիմնախնդիրների թվում Արևմտյան Հայաստանի ազատագրության հիմնահարցի պատմության՝ 1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմից մինչև 1923 թ. Լոզանի պայմանագիրն ընդգրկող և հայ ժողովրդի ճակատագրում բախտորոշ նշանակություն ունեցած ժամանակահատվածն առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում արդի հայաստանյան պատմագիտության համար: Եթե մինչև պատերազմը Հայկական հարցը մեծ տերությունների դիվանագիտական քննարկումների օրակարգում էր եղել որպես Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ու ինքնավարության խնդիր, ապա պատերազմի տարիներին նրա բովանդակությունն աստիճանաբար փոխվեց:

Իր գագաթնակետին հասած Հայոց ցեղասպանության թուրքական պետական քաղաքականության ու Անտանտի կամ Եռյակ համաձայնության տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ռազմաքաղաքական նպատակների ու հռչակած դիվանագիտական սկզբունքների ազդեցությամբ առաջ քաշվեցին Արևմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից

ազատագրելու, հայրենազրկված հայերի համար Հայրենիք վերադառնալու միջազգային իրավական նախադրյալներ ու հնարավորություններ ստեղծելու, միջազգային վերահսկողության կամ մեծ տերություններից որևէ մեկի հովանավորության ներքո Հայաստանի ինքնավարության և անկախության, հայ ժողովրդի նկատմամբ ոճրագործությունների համար թուրքական պետության պատասխանատվության հարցերը:

«Արևմտահայաստանի հայաթափումից հետո խնդիրն այլևս Հայկական հարց կոչելն անիմաստ էր: Այն հայության կողմից այդուհետ ընկալվում էր որպես բռնազավթված Հայրենիքը վերադարձնելու, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու, տարածքային, նյութական ու բարոյական հատուցման հասնելու խնդիր: Ուստի ամբողջապես արդարության համար հայ ժողովրդի մղած այդ պայքարը ստացավ Հայ դատ խորհրդանշական անվանումը»[2],– նշեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը 2015 թ. հոկտեմբերի 15-ին «Հայոց ցեղասպանություն–100: Ճանաչումից՝ հատուցում» խորագրով երևանյան միջազգային գիտաժողովում հնչեցված «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և հատուցման հիմնախնդիրը» թեմայով իր զեկուցման մեջ: Ավելին, զարգացնելով իր միտքը, պատմաբանն առանձնացրեց Հայոց ցեղասպանությունից հետո Հայ դատի համար մղված 100-ամյա պայքարի պատմության չորս շրջափուլ՝ 1915–1923 թթ., 1923–1945 թթ., 1945–1965 թթ. և 1965–2015 թթ.՝ հիմք ընդունելով պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում խնդրի նկատմամբ միջազգային ասպարեզում առկա վերա-

---

[2] ***Մելքոնյան Ա. Ա.*** Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և հատուցման հիմնախնդիրը // Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), Երևան, 2015, էջ 157:

բերմունքի սկզբունքային տարբերությունները՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից մինչև դրա հետևանքների հաղթահարման ու հատուցման պահանջի ձևակերպում[3]: Ըստ այդմ, առաջին շրջափուլն ընդգրկում է 1915–1923 թթ., այսինքն՝ բուն ցեղասպանության տարիները, երբ աշխարհի մի շարք պետություններ և միջազգային կազմակերպություններ ոչ միայն դատապարտեցին հայերի ֆիզիկական բնաջնջման ու հայրենազրկման թուրքական քաղաքականությունը, այլև որպես դրա հետևանքների վերացման եղանակ առաջարկեցին Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման ծրագիրը[4]:

Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած Դաշնակից տերությունների[5] միասնական դիրքորոշումը վերոնշյալ հարցերի նկատմամբ իր արտացոլումը գտավ նախ պարտված Օսմանյան կայսրության հետ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի հաշտության պայմանագրում, ապա նույն թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի վերաբերյալ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռում[6]:

---

[3]Տե՛ս նույն տեղում, էջ 158–163:

[4]Տե՛ս նույն տեղում, էջ 158:

[5]Դաշնակից տերությունները բաժանված էին երկու խմբի՝ Գլխավոր դաշնակից տերությունների և Դաշնակից տերությունների: Գլխավոր դաշնակից տերություններն էին՝ Բրիտանական կայսրությունը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ Դաշնակից տերությունները՝ Պորտուգալիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովենական պետությունը, Չեխոսլովակիան, Հայաստանը, Հեջազը (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923) / Խմբ. պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, փաստ. № 338, էջ 676):

[6]Տե՛ս Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson / Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia. Washington, November 22nd, 1920 / Prepared

Նշված երկու միջազգային իրավական փաստաթղթերն էլ պահպանում են իրենց վավերականությունը և արդիականությունը: Այդ պատճառով էլ հայաստանյան պատմագիտության մեջ կարևորվեց մեծ տերությունների ռազմաքաղաքական հեռահար նպատակներում ու ծրագրերում Արևմտյան Հայաստանը թուրքական պետությունից անջատելու, Անկախ և Միացյալ Հայաստան ստեղծելու գաղափարի միջազգային իրավական հիմքերի լուսաբանումը՝ արդիական շունչ ու գիտագործնական բնույթ հաղորդելով նաև 1921–1923 թթ. Մոսկվայի ու Կարսի, Լոնդոնի և Լոզանի միջազգային պայմանագրերում Հայկական հարցի վերաբերյալ դրույթների վերլուծությանը:

Բացի այդ, անհրաժեշտաբար վերագնահատվեց ու վերահիմաստավորվեց Հայկական հարցի պատմության վերաբերյալ պատմաքաղաքական ու կուսակցական բնույթի այն հսկայական գրականությունը, որ ստեղծել էր խորհրդային պատմագիտությունն իր գոյության 70 տարիների ընթացքում:

Հայտնի է, որ այդ գրականության նպատակը ոչ միայն և ոչ այնքան պատմական ճշմարտության վերհանումն է եղել, որքան գաղափարախոսական ճակատում հակախորհրդային-հակակոմունիստական ուժերի դեմ պայքարելը: Ըստ այդմ, խորհրդահայ պատմագիտության քննադատության գլխավոր թիրախը եղել է XIX դարավերջին և XX դարասկզբին հայ իրականության մեջ ամենաազդեցիկ ազգային կուսակցությունը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), իր գործունեության հետ կապված ազգային

---

with an introduction by A. Papian, Yerevan, 2011; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, в 2 томах / Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, т. 1. М., 2002, док. № 473, с. 557.

հիմնահարցերով հանդերձ: «Խորհրդահայ հեղինակներն աշխատություններ են գրել պատմության դաշնակցական նենգափոխումների ու խեղաթյուրումների վերաբերյալ, սակայն իրականում տարվելով գաղափարաքաղաքական կոյր քննադատությամբ՝ ավելի հաճախ հենց իրենք են աղավաղել ու ծուռ հայելու մեջ ներկայացրել հայոց քաղաքական պատմության շատ հիմնահարցեր: Մյուս կողմից գիտական անաչառությունը պահանջում է նշել, որ Սփյուռքի հեղինակները ևս երբեմն շրջանցել են իրենց կուսակցությունների անցյալին վերաբերող ոչ հաճելի փաստերը և փորձել են գունազարդել դրանց պատմությունը: Այստեղից հետևում է, որ կուսակցական-հատվածական նեղ շահերը և գաղափարաքաղաքական անհանդուրժողականությունը երբեք չեն կարող նպաստել պատմագիտության զարգացմանը, անցյալի պատմական ճշմարտության վերհանմանը»[7],– նկատում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանը՝ արտահայտելով հայաստանյան գիտական շրջանակների մտահոգությունը:

Հարկ է նշել, որ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում Հայաստանի ու Սփյուռքի գիտնականների միջև համագործակցության ամրապնդմանն է միտված Հայաստանի Հանրապետությունում սփյուռքահայ հայտնի մասնագետների գիտական վաստակի արժևորումը, նրանց աշխատությունների թարգմանությունը, հրատարակությունը, նաև վերահրատարակությունը հայերեն ու ռուսերեն լեզուներով: Այսպես, դեռևս 1990 թ. ՀՍԽՀ ԳԱ արտասահմանյան անդամի պատվավոր կոչմանն է արժանացել ԱՄՆ-ի Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Հայաստանի պատմու-

---

[7] ***Հակոբյան Ա.*** Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2006, № 3, էջ 36:

թյան ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը: Նրա «Հայաստանի Հանրապետություն» անգլերեն քառահատոր կոթողային աշխատությունը 2005–2016 թթ. թարգմանվել է հայերեն, իսկ «1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերությունները» մենագրությունը՝ 2007 թ. ռուսերեն[8]: Հայերեն թարգմանվել կամ ՀՀ ԳԱԱ-ի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աջակցությամբ տպագրվել են նաև սոցիոլոգ ու իրավագետ, Նյու Յորքի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր, Հայոց ցեղասպանության հիմնախնդրի գիտակ Վահագն Դադրյանի (1926–2019)[9], ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ և պատվավոր դոկտոր (1997 թ.) արգենտինահայ պատմաբան ու իրավաբան Պասկալ Օհանյանի (1932–2018)[10], ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր (2001 թ.), Վիեննայի համալսարանի դոկտոր Արտեմ Օհանջանյանի[11], բանասեր, պատմաբան, գրակա-

---

[8]Տե՛ս ***Հովհաննիսյան Ռ. Գ.*** Հայաստանի Հանրապետություն / Խմբ. Ա. Ա. Խաառատյան / հ. I / Առաջին տարին, 1918–1919, Երևան, 2005, հ. II / Վերսալից–Լոնդոն, 1919–1920, Երևան, 2014, հ. III / Լոնդոնից–Սևր, փետրվար–օգոստոս, 1920, Երևան, 2015, հ. IV / Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, Երևան, 2016, ***նույնի՝*** Международные отношения Республики Армения, 1918–1920 гг. / Пер. с англ. Г. Г. Махмурян. Ереван, 2007.

[9]Տե՛ս ***Дадрян В.*** История Армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа / Пер. с англ. С. Д. Оганесян / Науч. ред. А. В. Акопян. Ереван, 2007; ***նույնի՝*** Հայոց ցեղասպանությունը՝ ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր / Անգլ. թարգմ. Ա. Բեժանյան, Երևան, 2012:

[10]Տե՛ս ***Ohanian C. P.*** La Cuestión Armenia y las Relaciones Internacionales / t. 5 / 1919 / Director L. Barseghian, Buenos Aires, 2005, t. 6 / 1920, Buenos Aires, 2010.

[11]Տե՛ս Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.): (Փաստաթղթերի ժողովածու) / Կազմ. և առաջաբ. Ա. Օհանջանյան / Գերմ. թարգմ. Վ. Մարտի-

նագետ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2011 թ.), Օքսֆորդի և Միչիգանի համալսարանների պրոֆեսոր, ԱՄՆ-ի հայագետների ընկերակցության նախագահ Գևորգ Բարդակչյանի[12], Սորբոնի միջազգային հարաբերությունների ինստիտուտի անդամ Արթուր Բեյլերյանի (1925–2005)[13] աշխատությունները:

Միևնույն ժամանակ սփյուռքահայ պատմաբաններն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հայագիտական հիմնարար հետազոտություններում, նրանց աշխատություններն օգտագործվում են հայաստանյան պատմաբանների կողմից՝ լրացնելով ու ամբողջացնելով Մայր հայրենիքում Հայկական հարցի վերաբերյալ գիտամեթոդական ուսումնասիրությունները:

1991–2015 թթ. հայաստանյան պատմաբանների Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականությանը, միջազգային բանակցություններին և կնքած պայմանագրերին վերաբերող ուսումնասիրությունները պատկառելի ներդրում են խոր-

---

րոսյան / Խմբ. Լ. Բարսեղյան / Մատենաշար «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը», թիվ 3, Երևան, 2004, ***Ohanjanian A.*** Österreich-Armenien 1872–1936: Faksimilesammlung diplomatischer Aktenstücke / herausgegeben und eingeleitet von Artem Ohanjanian / Bände 1-12. Wien: Ohandjanian Eigenverlag, 1995; Österrich-Ungarn und Armenien 1912–1918: Sammlung diplomatischer Aktenstücke / Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. A. Ohanjanian. Jerewan, 2005; ***Ohanjanian A.*** Die Armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutschland. Jerewan, 2005.

[12]Տե՛ս ***Բարդակչյան Գ. Պ.*** Հիտլերը և հայոց ցեղասպանությունը: (Հիտլերի ճառը 1939 թ. օգոստոսի 22-ին) / Անգլ. թարգմ. Շ. Ս. Ալթունյան, Երևան, 2005:

[13]Տե՛ս Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918) / հ. I և II / Աշխատասիրությամբ Ա. Պեյլերյան / Առաջաբ. Ժան-Բատիստ Դյուրոզել / Թարգմ. ֆրանս. Վ. Պողոսյան, Երևան, 2005:

հրդային ու Սփյուռքի հայ հետազոտողների կողմից շրջանառության մեջ դրված գիտական տեսակետներն ու գնահատականները վերաիմաստավորելու և զարգացնելու գործում: Բացի այդ, դրանցում թուրքական տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրության, նրա քաղաքական կարգավիճակի, հայ ժողովրդի արևմտյան հատվածի ճակատագրի իրար փոխկապակցված հարցերը ներկայացված են գաղափարաքաղաքական միակողմանիությունից ու անհանդուրժողականությունից զերծ, գիտական անաչառության դիրքերից:

Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների նորովի ուսումնասիրումը փաստական և վերլուծական ծանրակշիռ հիմք է հայ ժողովրդի ու հայկական անկախ պետության համար՝ ազգային խնդիրների լուծման գործում արտաքին քաղաքական ուժերի ազդեցության ու աջակցության վրա հենվելու, միևնույն ժամանակ դրանցով չտարվելու, միջազգային իրադրության փոփոխությունները վերլուծելու, դրանցից շահեկանորեն օգտվելու կարողություն մշակելու տեսանկյունից: Մասնավորապես, Հայ դատի պատմական ընթացքի, դրան վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում հայ հասարակության և նրա շահերը ներկայացնող իշխանությունների համար այլևս անառարկելի է, որ Թուրքիայի ու Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը հնարավոր է միայն Հայաստանին ներկայացված նախապայմաններից Թուրքիայի հրաժարման դեպքում՝ օրակարգում պահելով մեր բռնազավթված Հայրենիքի վերադարձի խնդիրը:

Սույն աշխատության նպատակն է վերլուծել 1915–1923 թթ. միջազգային դիվանագիտական բանակցություններում և պայմանագրերում Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի ու արևմտահայերի արդար իրավունքների պաշտպանության հար-

ցերի արծարծումների վերաբերյալ 1991 թ. Հայաստանի անկախության վերականգնումից մինչև Հայոց պահանջատիրության առումով կարևոր 2015 թ. Հայաստանի Հանրապետությունում կատարված հիմնարար պատմագիտական ուսումնասիրությունների արդյունքները՝ ընթերցողին ներկայացնելով Հայաստանի երրորդ հանրապետության պատմագիտության մեջ նշված հիմնահարցերի վերաբերյալ գիտական եզրահանգումների համընդգրկուն պատկերը քառորդդարյա կտրվածքով: Աշխատության մեջ քննության առնված ուսումնասիրությունների վերլուծությունը նաև նպատակ ունի վերհանելու Հայկական հարցի պատմության քիչ հետազոտված ու արժևորման կամ վերաարժևորման կարիք ունեցող հիմնահարցերը, փաստերն ու երևույթները, մատնանշելու դրանց հեղինակների տեսակետների ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Մենագրությունը 1915–1923 թթ. Հայկական հարցի վերաբերյալ 1991–2015 թթ. հայաստանյան պատմագիտության մեջ կատարված աշխատանքը վերլուծելու և առանձին ուսումնասիրությամբ ամփոփելու առաջին փորձն է: Հետազոտությունը կատարելու ընթացքում թեմայից բխող առանձին հիմնահարցեր լուսաբանվել են Հայաստանի Հանրապետությունում և Լիբանանում լույս տեսնող հեղինակավոր պարբերականներում՝ գիտական հոդվածների տեսքով: Ընդ որում, դրանցից հինգում 1915–1923 թթ. Հայկական հարցի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում հրատարակված աշխատությունների վերլուծությունը հասցված է մինչև 2018–2019 թվականները[14]:

---

[14]***Հովհաննիսյան Լ. Հ.*** Հայկական հարցի պատմության 1917–1918 թթ. հիմնախնդիրների լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2018 թթ.) // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2019, № 1, էջ 107–125, ***նույնի***՝ Ուշագրավ աշխատություն ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների և հատուցման կառուցակարգերի

Քանի որ 2015 թվականից մինչ օրս հրատարակված գիտական աշխատանքների ուսումնասիրումն ու մշակումը դեռևս ընթացքի մեջ են, այդ պատճառով հարմար գտանք այս աշխատության մեջ ներառել 1991–2015 թթ. Հայաստանի Հանրապետությունում կատարված պատմագիտական ուսումնասիրությունների արդյունքները: Այդ ուսումնասիրություններն ունեն թե՛ աղբյուրագիտական ու պատմագիտական, թե՛ հասարակագիտական և իրավաքաղաքագիտական բնույթ: Դրանց մի մասն ուղղակիորեն վերաբերում է հիմնահարցի պատմության կոնկրետ ժամանակահատվածին կամ էլ ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում մեծ տերություններից որևէ մեկի քաղաքականությունը, իսկ մյուս մասն էլ Հայկական հարցի պատմությունը դիտարկում է հայոց պատմության կամ մեր ազգային հիմնախնդիրների համատեքստում: Հետազոտությունների նշանակալի մասը կատարվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, որը հայագիտական հիմնախնդիրների ուսումնասիրության առաջատար կենտրոնն է Հայաստանի Հանրապետությունում:

վերաբերյալ // Վէմ / համահայկական հանդես, 2019, ԺԱ տարի, թ. 3, հուլիս–սեպտեմբեր, էջ 193–203, ***նույնի***՝ Հայկական հարցի 1919–1920 թթ. պատմության լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2019 թթ.) // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2020, № 1, էջ 60–80, ***նույնի***՝ 1918–1920 թթ. Հայկական պետականութեան եվ ազգային միասնութեան հիմնահարցերի լուսաբանումը Հայաստանի պատմագրութեան մէջ (1991–2019 թթ.) // Հայկազեան հայագիտական հանդէս, Բէյրութ, 2020, թ. 40, էջ 63–82, ***նույնի***՝ Melkonyan A., Poghosyan G., Aghasyan A., Marukyan A., Kertmenjyan D., Melik-Adamyan H., Vardanyan V., Badalyan G., Hovhannisyan A. The losses of Armenian people because of Genocide and the methodological grounds of compensation structure. Yerevan, “Tir” Publishing House, 2019, 608 pp. // Review of Armenian Studies / NAS RA, 2020, № 1, pp. 241–244.

Դեռևս 1992 թ. Պատմության ինստիտուտում հիմնադրվել է Հայկական հարցի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող թեմատիկ խումբ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանի ղեկավարությամբ, որի հենքի վրա էլ 1999 թ. ձևավորվել ու մինչ օրս գործում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժինը Ս. Ստեփանյանի, իսկ 2011 թվականից՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Մարուքյանի (2018 թ. հունիսի 6-ից՝ պատմական գիտությունների դոկտոր) ղեկավարությամբ:

Բաժնի աշխատակիցների հրատարակած մենագրությունները, փաստաթղթերի ժողովածուները, թարգմանական գրականությունը, գիտական հոդվածները, հանրապետական և միջազգային գիտաժողովներում կարդացած զեկուցումները, որոնք շարադրված են արխիվային հարուստ նյութերի, հրատարակված փաստաթղթերի ու պատմագիտական գրականության համակողմանի ուսումնասիրության հիման վրա, ակնառու ներդրում են Հայկական հարցի պատմության ուսումնասիրության մեջ[15]:

1991–2015 թթ. Հայկական հարցի պատմության ամենատարբեր ժամանակահատվածների և հիմնախնդիրների լուսաբանման գործում անուրանալի է նաև Պատմության ինստիտուտի նոր ու նորագույն պատմության խնդիրներով զբաղվող բաժինների և Երևանի պետական համալսարանի գիտնականների ներդրումը:

1990-ական թվականներին, երբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը թևակոխել էր նոր փուլ, թուրքական իշխանությունները, պաշտոնական

---

[15]Տե՛ս ***Խաչատրյան Կ.*** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատանքները 2009–2013 թթ. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում // Հայագիտության հարցեր / ԵՊՀ, 2014, թ. 1, էջ 214–217:

և ոչ պաշտոնական պատմագիտությունն ու հրապարակախոսությունը, Արևմուտքում նրանց սատարող պրոթուրքական շրջանակները շարունակում էին պնդել, որ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանություն տեղի չի ունեցել, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի և թուրքերի միջև եղել են լոկ կրոնական բնույթի բախումներ, որոնց հետևանքով ավելի շատ թուրք է կոտորվել, քան՝ հայ: Ավելին, նրանք հայտարարում էին, որ հայերի տեղահանությունն ու զանգվածային կոտորածները փաստող անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, ռուսական և իտալական դիվանագիտական վավերագրերը ներկայացնում են պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությանը թշնամի պետությունների պաշտոնական դիրքորոշումը: Հենց այդ պատճառով էլ դրանք, իբր, չեն կարող օբյեկտիվ համարվել[16]:

Ստեղծված պայմաններում առաջնակարգ նշանակություն էր ստանում Գերմանիայի արխիվներում, մասնավորապես՝ պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական դաշնակից և Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականությանը մեղսակից կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության Քաղաքական արխիվի ֆոնդերում պահպանվող գերմանական դիվանագիտական վավերագրերի հրատարակման խնդիրը: Եվ ահա, 1995 թ. լույս ընծայվեց վաստակաշատ պատմաբան Վարդգես Միքայելյանի (1924–2005, ՀՀ ԳԱԱ ակա-

---

[16]Տե՛ս ***Эриксон Э. Э.*** Турки и армяне. Исследование борьбы с повстанцами. М., 2018, с. 305–309, 312; ***Гюрюн К.*** Армянское досье. Баку, 1993, с. 138; ***Մարության Ա.*** Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2015, № 1, էջ 24–35, ***նույնի՝*** Новые тенденции в процессе отрицания геноцида армян (о попытках отрицания геноцида армян российскими историками М. Мейером и О. Кузнецовым) // Вестник общественных наук / НАН РА, 2014, № 1, с. 19–45.

դեմիկոս 1996 թվականից) «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913–1919): Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության Քաղաքական արխիվի նյութերը»[17] վերնագրով դիվանագիտական փաստաթղթերի ռուսերեն ժողովածուն՝ առաջաբանով, ներածությամբ և արժեքավոր ծանոթագրություններով: Նրանում զետեղված է 1989 թվականին երեք ամսվա տքնաջան աշխատանքի արդյունքում գերմանական արխիվներում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ Վ. Միքայելյանի ժողոված գերմաներեն միկրոկադրերով ավելի քան 3500 էջերի 1/3-րդից ավելին: Ժողովածուում գերակշռում են դեռևս 1944 թ. ֆաշիստների կողմից Պոտսդամից Բոնն տեղափոխված կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության Քաղաքական արխիվի (Politisches Archiv des auswärtigen Amts des kaiserlichen Deutschlands = Politarchiv) նյութերը: Նաև զետեղված են առանձին վավերագրեր Պոտսդա-

---

[17]Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник / Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний доктор исторических наук, профессор В. Микаелян. Ереван, 1995.

2004 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Վ. Միքայելյանի այս աշխատությունը հրատարակել է նաև գերմաներեն՝ “Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913–1919). Dokumente aus dem politischen Archiv des deutschen auswärtigen Amts” վերնագրով (ավելի քան 40 մամուլ): Նույն թվականին սույն ժողովածուի որոշ փաստաթղթեր հայերենով ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության ինստիտուտթանգարանի հրատարակած «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդումներում (1915–1918): Ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի: Կազմող և առաջաբանի հեղինակ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Ա. Միքայելյան» խորագրով փաստաթղթերի ժողովածուում:

մի, Դրեզդենի ու Յոհաննես Լեփսիուսի Արևելյան առաքելության արխիվներից:

Փաստաթղթերի այս մեծածավալ ժողովածուն ամբողջացնում է 1919 թ. Պոտսդամում Յո. Լեփսիուսի հրատարակած “Deutschland und Armenien, 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke” («Գերմանիան և Հայաստանը, 1914–1918: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու») վավերագրերի ժողովածուն՝ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության և այդ ոճրագործության իրագործմանը կայզերական Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ: Աշխատությունը ոչ միայն հիմնավոր ու սպառիչ պատասխան է թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանակներից հնչող Հայոց ցեղասպանության ժխտման փորձերին, այլև ջախջախում է թուրքական սին փաստարկներն Օսմանյան կայսրությանը թշնամի պետությունների փաստաթղթերի վերաբերյալ:

Վ. Միքայելյանի հրատարակած ժողովածուում նաև ընդգրկված են նորահայտ ուշագրավ վավերագրեր Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, ընթացքում ու ավարտից հետո Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, ինքնավարության և անկախության հարցերի շուրջ միջազգային դիվանագիտական բանակցությունների վերաբերյալ: Իր բովանդակությամբ ու գիտաքաղաքական նշանակությամբ սույն աշխատությունը ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի (1910–1999) կազմած և 1966, ապա 1982 ու 1983 թվականներին ռուսերեն հրատարակված, այնուհետև նորանկախ Հայաստանի Հանրապետության պայմաններում հայերեն թարգմանված, լրացված և 1991 թ. լույս ընծայված «Հայերի

ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»[18] վերնագրով փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի տրամաբանական շարունակությունն է:

«Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913–1919)» ժողովածուում տեղ են գտել փաստաթղթեր, որոնցում, ի թիվս Հայոց մեծ եղեռնի հետևանքով հայ ժողովրդի կրած վնասների, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայրենիքի՝ հայերի տնտեսական, ազգային, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոն Արևմտյան Հայաստանի կորստին: Նաև շեշտվում է հայերի ֆիզիկական բնաջնջման թուրքական քաղաքականության շարունակականությունը սուլթանական և երիտթուրքական վարչակարգերի օրոք: Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված այս աշխատությունն ամբողջությամբ հաստատում է միջազգային հանրության անտարբերության վտանգավորությունն ազգային փոքրամասնությունների շահերին վերաբերող հարցերում՝ մանավանդ նրանց ֆիզիկական գոյության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական հարցի պատմության ազգային և միջազգային դիվանագիտական խնդիրների վերաբերյալ ուշագրավ արխիվային նյութ է պարունակում ֆրանսերենից պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի թարգմանությամբ լույս տեսած ֆրանսահայ պատմաբան Ա. Բեյլերյանի «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–

[18]Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում / Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Խմբ. Մ. Գ. Ներսիսյան, Երևան, 1991:

1918)»[19] երկհատոր ծավալուն ժողովածուն: Նրանում ընդգրկված է ֆրանսիական տարբեր արխիվներից, մասնավորապես՝ Արտաքին գործերի նախարարության արխիվից քաղված 757 անտիպ փաստաթուղթ, որոնք այս աշխատությամբ են դրվել գիտական շրջանառության մեջ: Այդ փաստաթղթերը լույս են սփռում պատերազմի հաղթական ավարտի դեպքում Ասիական Թուրքիան մասնատելու Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ծրագրերի, Օսմանյան կայսրության հայերի տեղահանության ու զանգվածային կոտորածների, բռնագաղթված և հայրենազրկված հայերի իրավունքները պաշտպանելու ուղղությամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի (Տփխիսեցի, 1911–1930 թթ.), Հայկական Ազգային պատվիրակության ու նրա ղեկավար Պողոս Նուբարի (1851–1930) գործունեության, Արևելյան լեգեոնի կազմավորման ու նպատակների, Կովկասյան ռազմաճակատում մղված մարտերին հայ կամավորականների մասնակցության, ռուսական ինքնակալության տապալումից, ապա Անդրկովկասում անկախ հանրապետությունների հռչակումից հետո երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության վրա:

Հայկական հարցի պատմության ուսումնասիրման համար արժեքավոր է նաև պատմական գիտությունների դոկտոր Գայանե Մախմուրյանի կազմած «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի փաստաթղթերում 1917–1920 թթ.»[20] ռուսերեն ժողովածուն: Նրանում զետեղված է Պետդեպարտամենտի 330 դիվանագիտական փաստաթուղթ, որոնց մի մասը առանձնացվել է ԱՄՆ-ի

---

[19]Տե՛ս Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հ. I և II:

[20]Տե՛ս Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг. / Составитель и перевод с английского Г. Г. Махмурян / Ред. В. Казахецян. Ереван, 2011.

ազգային արխիվի կողմից Հայաստանի ազգային արխիվին (ՀԱԱ) նվիրաբերված միկրոժապավենների ընդգրկուն հավաքածուից և ՀԱԱ-ի տարբեր ֆոնդերից, իսկ մյուս մասը՝ ԱՄՆ-ի կառավարության դիվանագիտական փաստաթղթերի պաշտոնական հրատարակություններից: Խորհրդային տարիներին այդ վավերագրերը պահպանվում էին հատուկ ֆոնդերում՝ անհասանելի լինելով Հայկական հարցի պատմությունն ուսումնասիրող պատմաբանների համար:

Գ. Մախմուրյանի հրատարակած ժողովածուում զետեղված փաստաթղթերը լույս են սփռում Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության ձևավորման ընթացքի, Հայաստանի առաջին հանրապետությանը տնտեսապես աջակցելու, արևմտահայկական տարածքները թուրքական տիրապետությունից ազատագրելու հարցերի, հայկական անկախ պետություն ստեղծելու ամերիկյան քաղաքականության, դրա հեռանկարների վերաբերյալ Մերձավոր Արևելք ուղարկված ամերիկյան զինվորական առաքելությունների տեսակետների, Հայկական հարցում ԱՄՆ-ի և Գլխավոր դաշնակից մյուս տերությունների միջև հակասությունների, Հայկական հարցի լուծման ուղղությամբ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի գործունեության վրա:

Հայկական հարցի 1915–1923 թթ. պատմության լուսաբանման համար հայեցակարգային նշանակություն ունի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանի (1927–1999) «Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը»[21] աշխատությունը: Համադրելով Հայկական հարցի առաջացման, բովանդակության և զարգացման փուլերի մասին հայ

[21]Տե՛ս ***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը / Խմբ. Բ. Ուլուբաբյան, Երևան, 1995:

պատմագիտության մեջ գոյություն ունեցող տարբեր տեսակետնե-ը՝ պատմաբանը նորովի ներկայացնում է Հայկական հարցի պատմության համառոտ ուրվագիծը: Լ. Խուրշուդյանը «Հայկա-կան հարցը» սահմանում է որպես հայ ժողովրդի՝ Հայրենիքի ազատագրության և 1375 թ. Կիլիկիայի թագավորության անկու-մով կորսված անկախ ազգային պետականության վերական-գնման խնդիր, որը պատմության մեջ մտել է նաև «Հայ դատ» և «Պահանջատիրություն» անուններով: Պատմաբանը «Հայկական հարց» հասկացության բովանդակության մեջ ներառում է ոչ միայն Արևմտյան Հայաստանի խնդիրը, այլև՝ պատմական Հայաստանի ամբողջ տարածքում հայկական պետականության վերական-գնման խնդիրը: Լ. Խուրշուդյանը գրում է. «Հայկական հարցի լուծ-ման համար մղվող պայքարը առաջին հերթին պայքար է կորցրած Հայրենիքը ազատագրելու, անկախ պետականությունը վերա-կանգնելու և հայ ժողովրդի գոյատևումը ապահովելու համար: Կորցրած Հայրենիքի ամեն մի մասի ազատագրման համար մղվող պայքարը Հայկական հարցի բաղկացուցիչ մասն է կազ-մում»[22]:

Հայկական հարցը դիտարկելով որպես ազգային հարց՝ պատմաբանը դրա պատմության ամենափառավոր էջերից է հա-մարում «հայոց պատմության արդի փուլում Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորման համար մղվող ազգային-ազատագրական պայքարը»[23]:

Համամիտ լինելով վաստակաշատ պատմաբան Լ. Խուր-շուդյանի հետ, որ Հայկական հարցն ունի ազգային բնույթ, որ նրա առաջացման պատճառ հանդիսացել է հայկական անկախ պետա-

[22]Նույն տեղում, էջ 4:
[23]Նույն տեղում, էջ 7:

կանության կորուստը, իսկ նպատակը եղել է դրա վերականգնման համար հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հարկ է «Հայկական հարց» եզրույթն օգտագործել կոնկրետ բովանդակությամբ: Այն է՝ Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի արևմտյան հատվածի քաղաքական կարգավիճակի հարցի նկատմամբ մեծ պետությունների շահերի, այդ ուղղությամբ նրանց մշակած նախագծերի ու վարած քաղաքականության պատմությունը՝ սկսած 1878 թվականից, այսինքն՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հիմնախնդիրների միջազգայնացումից:

Հայկական հարցի պատմության ամենաբարդ ժամանակահատվածն է ներկայացված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի (1927–2004) «Հայկական հարցը 1918 թվականին»[24] մենագրության մեջ: Աշխատությունը բովանդակում է 1917 թ. վերջից Անդրկովկասի ռազմաքաղաքական իրադրությանը, թուրքական նվաճողական նկրտումներին, Երզնկայի զինադադարի կնքումից հետո թուրք-անդրկովկասյան հարաբերություններին, ինչպես նաև Բրեստ-Լիտովսկի, Տրապիզոնի, Բաթումի կոնֆերանսներում Հայաստանին ու Հայկական հարցին վերաբերող հիմնախնդիրները, հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերը, Հայաստանի առաջին հանրապետության ծնունդը, Բեռլինում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում Հայոց Ազգային խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության պատվիրակությունների գործունեությունը, հայ-գերմանական, հայ-ավստրո-հունգարական, հայ-թուրքական և հայ-ռուսական հարաբերությունները, Բաքվի պաշտպանությունում հայերի դերն արժևորող հիմնահարցերը:

---

[24]Տե՛ս ***Ավետիսյան Հ. Ա.*** Հայկական հարցը 1918 թվականին / Խմբ. Ա. Ա. Խառատյան, Երևան, 1997:

Մենագրության մեջ Հայկական հարցի պատմության սակավ ուսումնասիրված ժամանակահատվածի երևույթներն ու իրադարձությունները լուսաբանված են Երևանի, Մոսկվայի, Բուդապեշտի, Վիեննայի արխիվներում պահպանվող փաստաթղթերի և նյութերի հիման վրա: Վավերագրերի ճնշող մասը հայտնաբերվել է հետազոտողի կողմից և շրջանառության մեջ դրվել այս աշխատության շնորհիվ: Աշխատանքում լայնորեն օգտագործվել են նաև գիտական ու հուշագրային գրականություն, փաստաթղթերի ժողովածուներ, ժամանակի պարբերական մամուլը:

1917–1923 թթ. Հայկական հարցի միջազգային դիվանագիտական բուռն քննարկումների, ինչպես նաև այդ ժամանակահատվածում հայ ժողովրդի ինքնակազմակերպման ուղղությամբ հասարակական-քաղաքական շրջանակների գործունեության ուշագրավ վերլուծությամբ աչքի են ընկնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Մելիքյանի «Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր)», «Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ.» ու «Հայկական պահանջատիրութիւն: Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը» աշխատությունները[25]: Վերջին երկուսը գրված են 2006 թ. դեկտեմբերի 11–12-ը Սևրում (Փարիզ) տեղի ունեցած Մեծ եղեռնից փրկվածների ժառանգների ներկայա-

---

[25]Տե՛ս ***Մելիքյան Վ. Հ.*** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր) / Պատ. խմբ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1997, ***նույնի՝*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Երևան, 2007, ***նույնի՝*** Հայկական պահանջատիրութիւն: Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, Երևան, 2010:

ցուցիչների երրորդ համագումարի[26] նախապատրաստման և անցկացման կազմակերպչական կոմիտեի առաջին նիստում, ապա նույն կազմկոմիտեի կողմից 2008 թ. ապրիլի 18–19-ը Նիկոսիայում (Կիպրոս) կազմակերպված «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» գիտագործնական միջազգային գիտաժողովում պատմաբանի կարդացած զեկուցումների հիման վրա:

Երկու աշխատություններում էլ առանցքայինը հայ ժողովրդի արևելահայ ու արևմտահայ հատվածների հասարակական-քաղաքական շրջանակներում XX դարասկզբին տիրող մթնոլորտի ու ներքաղաքական գործընթացների դերի, ինչպես նաև հայության ինքնակազմակերպման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և Սփյուռքի միջև տարաձայնությունների հաղթահարման, համազգային կենսական հիմնախնդիրների նկատմամբ միասնական դիրքորոշում մշակելու կարևորության արժևորումն է՝ դրանք միջազգային ասպարեզում արծարծելու և լուծելու տեսանկյունից: Նշենք, որ այս իրողությունը կարևորվում է Հայկական հարցի վերաբերյալ պատմագիտական տարբեր աշխատություններում, և դա պատահական չէ: Հարցն այն է, որ իր ազգային պետականությունն ունենալու կամ այն վերականգնելու համար պայքարող ժողովրդին առաջնորդող քաղաքական ուժերի ու գործիչների, նրանց հայացքների ու գործունեության միասնությունը մեծապես կանխորոշում են ազգային պայքարի հաջողությունը՝ նաև որոշակիորեն ազդելով խնդրին միջամտող պետությունների դիրքորոշման վրա:

---

[26]Արևմտահայերի ներկայացուցիչների առաջին և երկրորդ համագումարները տեղի են ունեցել 1917 թ. մայիսի 2–11-ը և 1919 թ. փետրվարի 6–13-ը Երևանում:

Վ. Մելիքյանի «Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար)»[27] աշխատության մեջ ևս անդրադարձ կա Արևմտյան Հայաստանի հիմնախնդրին՝ 1917 թ. հետհոկտեմբերյան ժամանակահատվածում Անդրկովկասում իշխանության համար վրացական, թաթարական և հայկական քաղաքական ուժերի միջև ընթացող լարված պայքարի տեսանկյունից: Այս աշխատանքը պատմաբանի թեկնածուական ատենախոսության (1989 թ.) ու «Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (մարտ–հոկտեմբեր 1917 թ.)» վերնագրով մենագրության թե՛ ժամանակագրական և թե՛ թեմատիկ ուսումնասիրության շարունակությունն է: Հայ պատմագիտության մեջ այն առաջին փորձն է՝ աղբյուրագիտական լայն և հարուստ հենքի վրա ներկայացնելու 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի քաղաքական կյանքի կարևորագույն հիմնախնդիրը՝ իշխանության հարցը: Նույն համատեքստում լուսաբանված են 1917 թ. նոյեմբեր–1918 թ. մարտ ժամանակահատվածում Անդրկովկասի կոմիսարիատի գործունեության բոլոր բնագավառները, վեր են հանված հայ հասարակական-քաղաքական շրջանակների դիրքորոշումները երկրամասի անվտանգության և վարչաքաղաքական կառուցվածքի հարցերում:

Գ. Մախմուրյանի «Ազգերի լիգան, Հայկական հարցը և Հայաստանի Հանրապետությունը» ռուսերեն աշխատությունը Հայկական հարցն Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում ձևավորված միջազգային հարաբերությունների հիմքում դրված

---

[27]Տե՛ս ***Մելիքյան Վ. Հ.*** Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար) / Խմբ. Հ. Հարությունյան, Երևան, 2010:

իրավական սկզբունքների ու միջազգային քաղաքականության տեսանկյունից ներկայացնելու առաջին փորձն է հետխորհրդային Հայաստանում[28]: Ուսումնասիրության մեջ առանցքայինը պատերազմում հաղթանակած Անտանտի տերությունների քաղաքական շահերն են, հետպատերազմյան միջազգային իրադրության առանձնահատկությունները, որոնք անմիջական ազդեցություն ունեցան Հայկական հարցի ընթացքի վրա:

Աշխատության մեջ բրիտանական, ամերիկյան և հայկական արխիվային վավերագրերի, ժամանակի քաղաքական և պետական գործիչների հուշերի, գիտական ուսումնասիրությունների հենքի վրա ներկայացված են առաջին միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի նպատակները, կանոնադրության հիմնարար սկզբունքները, նաև մանդատների, այսինքն՝ պարտված Գերմանիայի ու Թուրքիայի նախկին գաղութները Ազգերի լիգայի անունից որևէ պետությանը կառավարելու իրավունքի լիազորություն տալու գաղափարի էությունն ու այն առաջ քաշելու պատճառները: Դրանց լույսի ներքո բնութագրված են Հայկական հարցի, Հայաստանի առաջին հանրապետության և Թուրքիայի միջև պետական սահմանի գծման, Հայաստանի նկատմամբ հովանավորության, հայկական երկու՝ պաշտոնական ու Ազգային պատվիրակությունների տարաձայնությունների վերացման վերաբերյալ Դաշնակից ազդեցիկ պետությունների քաղաքական, դիվանագիտական շրջանակներում ուրվագծված հեռանկարները:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի (1927–2003) «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.»[29] և «Հայաս-

---

[28]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения. Ереван, 1999, էջ 7:

[29]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ. / Խմբ. Վ. Միքայելյան, Երևան, 1999:

տանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.,»[30] աշխատությունները հեղինակի գրչին պատկանող քսանից ավելի մենագրություններից վերջինի՝ «Հայաստանը և մեծ տերությունները XVI դարից 1923 թ.» մեծարժեք աշխատության երկու գրքերն են: «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.)» աշխատության մեջ մի շարք երկրների արխիվներից քաղված նորահայտ վավերագրերի, նաև տարբեր լեզուներով հրատարակված փաստաթղթերի ժողովածուների, մենագրությունների և պարբերական մամուլի նյութերի օգտագործմամբ լուսաբանված են ուշ միջնադարից անկախությունը կորցրած և Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետության տակ ընկած հայ ժողովրդի ծանր վիճակը, նրա ազատագրական պայքարի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը: Ընդ որում, XVI դարից սկսած մեծ տերությունների արտաքին քաղաքականությունը վերլուծված է նրանց Արևելյան քաղաքականության, Օսմանյան կայսրությունն ու Սեֆյան Պարսկաստանն իրենց ազդեցության գոտում պահելու նպատակով մղված միջպետական պայքարի տեսանկյունից: Պատմաբանը եզրակացնում է, որ յուրաքանչյուր անգամ, երբ Ռուսաստանն Ասիական Թուրքիայում վտանգ է ներկայացրել եվրոպական տերությունների շահերին, վերջիններս մի կողմ են թողել հակասությունները և միավորվել արևմտահայերի պաշտպանությամբ հանդես եկող Ռուսաստանի դեմ: Գրքում մանրազնին ուսումնասիրված են նաև Օսմանյան կայսրությունում ու Սեֆյան Պարսկաստանում հայերի սոցիալական, իրավական ու քաղաքական վիճակի հարցերը, արևելյան այդ երկու միապետությունների՝

[30]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.) / Խմբ. Է. Լ. Դանիելյան, Երևան, 2004:

եվրոպական տերությունների հետ ունեցած փոխհարաբերությունները և հայ ժողովրդի ազատագրական պայքարի վրա դրանց ազդեցությունը: Գ. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.» մենագրությունում բերված բազմաթիվ փաստերը նոր լույս են սփռում հայ ժողովրդի պատմության ամենադաժան ժամանակահատվածների կնճռոտ հարցերի վրա և վկայում են, թե ինչու դարեր պահանջվեցին Հայաստանի անկախությունը վերականգնելու համար, այն էլ միայն նրա մի փոքր հատվածում: Թեև Գ. Գալոյանն ուշադրության կենտրոնում է պահում դրա արտաքին պատճառները՝ կապված մեծ տերություններից յուրաքանչյուրի վարած քաղաքականության հետ, այնուամենայնիվ, շեշտում է, որ անկախությունը ձեռք է բերվում համազգային ազատագրական պայքարի, հեռատես քաղաքական հաշվարկների և ազգօգուտ ճկուն դիվանագիտության միջոցով: Ընդհանրացնելով պատմական փաստերը, հեղինակը ցավով նշում է, որ հենց այս գործոնների պակասն է զգացել անկախությունից զրկված մեր ժողովուրդը: Գրքում նաև քննական վերլուծության են ենթարկվում Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման ու անկման, Դաշնակից տերությունների, ինչպես նաև Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանի անկախության միջազգային ճանաչման ու ապա դրա ուրացման պատճառները:

Ուսումնասիրությունն ունի ոչ միայն պատմագիտական, այլև արդիական ու գործնական նշանակություն, քանի որ անկախության հռչակումից հետո Հայաստանը կրկին հայտնվել է մեծ տերությունների քաղաքականության ոլորտում: Աշխատության աղբյուրագիտական հենքը կազմում են ամերիկյան, ռուսական և բրիտանական արխիվների նյութերը, մեծ տերությունների վարած արտաքին քաղաքականությունը լուսաբանող դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները, օտարազգի պատմաբանների՝

Հայ դատի նկատմամբ տարբեր երկրներում արտահայտված հասարակական կարծիքները լուսաբանող աշխատությունները:

Մենագրությունում ներկայացված, գիտական շրջանառության մեջ դրված պատմական փաստերի համադրումն անխուսափելի է դարձնում պատմագիտության մեջ տեղ գտած մի շարք հարցադրումների վերագնահատումը: Աշխատությունը լրացնում է խնդրո առարկա դարձած հիմնախնդիրների վերաբերյալ գոյություն ունեցող գիտական գրականությունը: Նրանում ամփոփված նյութերը կարող են օգտակար լինել հայ հասարակության լայն շերտերի համար՝ Հայ դատի արդար լուծման գործում: Պատմաբանի համոզմամբ, Հայկական հարցը Հայ դատի բաղկացուցիչ մասն է: Հայկական հարցը միջազգային քննարկման առարկա դարձավ 1878 թ. Սան Ստեֆանոյի կոնֆերանսում և Բեռլինի վեհաժողովում որպես Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարց: Իսկ Հայ դատը, որպես հայ ժողովրդի ազգային գոյությունը կանխորոշող գերագույն խնդիր, պատմականորեն ծագել է ավելի վաղ՝ XVI դ. կեսերին, երբ Հայաստանը նվաճվեց և բաժանվեց Թուրքիայի ու Պարսկաստանի միջև: Այդ ժամանակվանից էլ Հայ դատը՝ երկատված Հայրենիքի վերամիավորման ու կորցրած անկախության վերահաստատման համար պայքարը, դարձավ հայ ժողովրդի ազգային գերագույն խնդիրը:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Հակոբյանը (1927–2009) Հայաստանի երրորդ հանրապետության պատմաբաններից առաջինն է, ով պատմական ու միջազգային իրավական տեսանկյունից ներկայացրեց արդի միջազգային իրավունքի համակարգում տարողունակ, առավել խճճված ու վիճահարույց, տարբեր պատճառներով (ցեղասպանություն, բռնագաղթ, պատերազմ, ազգամիջյան բախում, գաղթ կամ բնակչության միգ-

ռացիա և այլն) իրենց բնօրրանը լքած մարդկանց հայրենիք վերադառնալու հիմնահարցը[31]:

Պատմաբան-միջազգայնագետը վերլուծության է ենթարկում հայրենիք վերադառնալու գաղափարը և դրա էվոլյուցիան պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ սկսած հին դարերից մինչև ժամանակակից միջազգային իրավունքում այդ գաղափարի կարևորությունը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում բռնությամբ տարագրված ժողովուրդների, հատկապես թուրքերի կողմից ցեղասպանության և բռնագաղթի ենթարկված, հայրենազրկված հայերի ու նրանց սերունդների Հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, Կիլիկիա և Արևելյան Հայաստանից բռնազավթված հողերը (Կարս, Արդահան, Սուրմալու) վերադառնալու իրավունքին՝ վերհանելով դրա պատմական ու իրավական հիմքերը:

Թուրքական իշխանությունների կողմից բռնությամբ տեղահանված և իրենց բնօրրանից արտաքսված հայերի ու նրանց սերունդների՝ հայրենի օջախները վերադառնալու իրավունքի հարցն այս կամ այն չափով շոշափվել է հայկական տարբեր կազմակերպությունների ծրագրերում ու բանաձևերում, քննարկվել միջազգային զանազան ատյաններում և իր արտացոլումը գտել մի շարք պայմանագրերի առանձին հոդվածներում: Այդուհանդերձ, այն առանձին քննության առարկա չի դարձել ո՛չ հայ և ո՛չ էլ օտար գրականության մեջ՝ ո՛չ պատմագիտական և ո՛չ էլ միջազգային իրավական առումով: Հ. Հակոբյանը նման թերացման գլխավոր պատճառ համարում է այն, որ «վերադարձը հայրենիք չի ընկալվել այլ կերպ, քան երևույթ, որը կարող է տեղի ունենալ հայոց առևանգված հայրենիքը Թուր-

---

[31]Տե՛ս ***Հակոբյան Հ. Վ.*** Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, 2000, ***նույնի՝*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը / Խմբ. Վ. Բայբուրդյան, Երևան, 2002:

քիայի լծից ազատագրելուց հետո միայն: Մինչդեռ վերադարձի իրավունքի ճանաչումը անուղղակիորեն հաստատում է հայերի՝ իրենց պատմական հողերի նկատմամբ սեփականատիրոջ իրավավիճակը և կարող է կռվան հանդիսանալ Հայ դատի ամբողջական լուծման համար: Մյուս կողմից, թուրքերը Հայաստանը բռնությամբ հայաթափելու ոճրի հետևանքները ձգտում են օրինականացնել իբրև փաստարկ ընդդեմ Արևմտահայաստանի նկատմամբ հայ ժողովրդի պահանջատիրության՝ պնդելով, թե այն առարկայազուրկ է և ապօրինի, քանզի պահանջվող տարածքներում հայեր այլևս չեն ապրում»[32]:

Հ. Հակոբյանն իր ուսումնասիրություններով շնորհակալ աշխատանք է կատարել հայ ժողովրդի պահանջատիրության հարցում առկա բացը լրացնելու ուղղությամբ, քանի որ արխիվային նյութերի, Հայ դատին վերաբերող պայմանագրերի ու միջազգային այլ փաստաթղթերի, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի վրա հենվելով՝ հիմնավորել է տարագիր հայության Հայրենիք վերադառնալու պահանջը: Հայրենիք վերադառնալու գաղափարի իրացման ուղիների և հեռանկարների վերաբերյալ իր տեսակետը նա ամփոփել է 12 դրույթներում, որոնք շարադրված են իրատեսության և անաչառության դիրքերից, ունեն գործնական նշանակություն: Այդ հանգամանքն առավել ցայտուն է դարձել անցած ավելի քան մեկ տասնամյակի ընթացքում, քանի որ Հայ դատի արդարացի լուծմանը սպառնացող վտանգների մասին նրա արտահայտած մտահոգությունները, ցավոք, գնալով, խորացել են: Ուշագրավ է, որ ազգային հիմնախնդիրների լուծման վերաբերյալ Հ. Հակոբյանի հայեցակարգային դրույթներն արտացոլվել են Հայ դատի լուծմանն ու Հայոց ցեղաս-

---

[32] ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 7:

պանության հետևանքների վերացմանն ուղղված մեր ազգային-պետական քաղաքականության հիմնարար փաստաթղթում՝ 2015 թ. հունվարի 29-ի «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում»[33]:

Տողերիս հեղինակի «Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին»[34] աշխատության մեջ ամբողջացված և քննական վերլուծության է ենթարկված մեծ տերությունների դիրքորոշումների ու քաղաքականության աստիճանական զարգացման ընթացքը Հայկական հարցում 1914–1917 թթ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում, որը դիտարկվում է որպես առանձին փուլ Հայկական հարցի պատմության մեջ: Ժամանակահատվածն առանձնահատուկ է նրանով, որ համաշխարհային պատերազմը ոչ միայն խափանեց 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված բարենորոգումների ծրագրի իրագործումն Արևմտյան Հայաստանում, այլև եկավ շտկումներ մտցնելու հայ ժողովրդի ճակատագրի ու Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի նկատմամբ մեծ տերությունների քաղաքական մոտեցումներում և գործողություններում: Օսմանյան կայսրության ու կայզերական Գերմանիայի միջև ռազմաքաղաքական դաշինքի կնքումը 1914 թ. օգոստոսին, կայսրության՝ Անտանտի երկրների դեմ պատերազմի մեջ մտնելն ամրապնդեցին թուրք-գերմանական հակահայկական գործակցությունը Հայկական հար-

---

[33]Տե՛ս armeniangenocide100.org/pan-armenian-declaration/: Տե՛ս նաև՝ ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 395–401:

[34]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին / Պատ. խմբ. Հ. Ա. Ավետիսյան, Երևան, 2002:

ցում, նպաստեցին հայերի բնաջնջման ծրագրի մշակմանն ու իրագործմանը:

Թուրքական և գերմանական կառավարող շրջանակներում նախագծվեց նաև Ռուսաստանի կովկասյան տարածքների ու դրանց բնակչության ապագայի հեռանկարը, որը հանգում էր «Կովկասյան տան» գաղափարին և, դրանով իսկ, հայ ժողովրդի արևելյան հատվածի համար ևս ստեղծում ձուլման ու կոտորածների սպառնալիք: Միևնույն ժամանակ փոփոխություն կրեց նաև Անտանտի երկրների Արևելյան քաղաքականությունը: Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության պահպանման սկզբունքին փոխարինելու եկավ թուրքահպատակ ժողովուրդների ազատագրության, ինքնավարության և անկախության սկզբունքը, որը համահունչ էր աշխարհի գաղութային վերաբաժանման նրանց շահերին: Դրանցից բխող պահանջներին համապատասխան՝ Հայկական հարցի դիվանագիտական քննարկումները թևակոխեցին նոր փուլ: Ավելին, 1915–1916 թթ. արևմտահայկական տարածքների ռուսական զինագրավումը և Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի ստորագրումը նոր բնույթ հաղորդեցին Հայկական հարցին: Այն կորցրեց իր միջազգային բնույթը և դարձավ ռուսական պետության ներքին հարց: Քննադատելով հանդերձ մեծ տերությունների շահախնդիր և նվաճողական քաղաքականությունը Հայկական հարցում՝ աշխատության մեջ համեմատված ու վեր են հանված Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական կարգավիճակի հարցում Քառյակ միության կամ Կենտրոնական պետությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Թուրքիայի և Անտանտի պետությունների մոտեցումների ու քաղաքականության տարբերությունները, հիմնախնդրով զբաղվող պատմաբան-

ներին, դիվանագետներին և քաղաքագետներին տրված է փաստական նյութ՝ վերաարժևորելու հայ ժողովրդի ազգային նպատակների ու տերությունների արտաքին շահերի համապատասխանությանը տրված գնահատականները:

1914–1917 թթ. Հայկական հարցի պատմությունը հենց այս տեսանկյունից է ներկայացված նաև հետխորհրդահայ պատմագիտական աշխատություններում:

1917 թ. երկրորդ կեսից մինչև Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումն ընկած ժամանակահատվածում Արևելյան և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած պատմական դեպքերի ու իրադարձությունների նկարագրության, ազգային և քաղաքական հիմնախնդիրների ու երևույթների համատեքստում ուշագրավ են պատմաբան Ստեփան Պողոսյանի (1932–2012) և պատմական գիտությունների թեկնածու Կարո Պողոսյանի վերլուծությունն ու տեսակետները: «Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն»[35] վերնագրով իրենց մեծածավալ աշխատության մեջ հեղինակները վերլուծել են Հայկական հարցի լուծման ուղիներն ու գործնական հնարավորությունները, վերաարժևորել դրանք օգտագործելու հայ հասարակական-քաղաքական շրջանակների կարողությունը, նաև «Թուրքահայաստանի մասին» Խորհրդային Ռուսաստանի հրովարտակի ընդունման և Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում հայկական տա-

---

[35]Տե՛ս ***Պողոսյան Սկ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, Երևան, 2003, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն: Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը, հ. III, գիրք I, մաս Ա, Երևան, 2004, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1918–1919 թթ.), գիրք I, մաս Բ, Երևան, 2004:

ռածքների ճակատագրի ու քաղաքական կարգավիճակի շուրջ դիվանագիտական քննարկումները:

Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը փորձում են արտահայտել նոր ու համարձակ տեսակետներ, բայց դրանց հիմնավորումները միշտ չէ, որ սպառիչ են և փաստարկված, իսկ մի շարք գաղափարներ ու տեսակետներ էլ նյութ կարող են դառնալ գիտական բանավեճի կամ ուսումնասիրության համար, ինչն աշխատանքի գովելի կողմերից է: Ակնհայտ է, որ մենագրության հեղինակները կարևորել են խնդրո առարկա ժամանակահատվածի քաղաքական կյանքի համընդգրկուն պատկերը ներկայացնելը, բայց հենց այդ պատճառով էլ տուժել է աշխատության շարադրանքը: Այն խրթին է, ունի շեղումներ դեպքերի ժամանակագրական հաջորդականության պահպանման սկզբունքից, հեղեղված է տարբեր սկզբնաղբյուրներից և աշխատություններից բերված մեջբերումներով, որոնք թեև ճիշտ են ընտրված պատմական փաստերը ներկայացնելու առումով, սակայն ետին պլան են մղում հեղինակների վերլուծական միտքը:

Ա. Մարուքյանի «Հայկական հարցը և Ռուսաստանի քաղաքականությունը (1915–1917 թթ.)»[36] ռուսերեն մենագրության մեջ ներկայացված է Ռուսաստանի երեք վարչակարգերի՝ ցարական, Ժամանակավոր և խորհրդային կառավարությունների քաղաքականությունը Հայկական հարցում 1915–1917 թվականներին՝ Հայոց ցեղասպանության տարիներին: Հանգամանորեն և համակողմանիորեն վերլուծված է դրա աստիճանական զարգացման ընթացքը, ներկայացված է նաև ռուսական իշխանությունների քաղաքականությունն Արևմտյան Հայաստանի բնիկ բնակչության՝ հայերի

[36]Տե՛ս ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.) / Отв. ред.: В. Тунян, Р. Багдасарян. Ереван, 2003.

նկատմամբ: Աշխատության աղբյուրագիտական հիմքը կազմում են ՀԱԱ-ի ֆոնդերում պահպանվող վավերագրերը, որոնց թվում՝ ռուսաստանյան արխիվներից բերված նյութերի հավաքածուները, նաև՝ տպագրված փաստաթղթերի բազմաթիվ ժողովածուներ:

Ա. Մարուքյանի համոզմամբ, Հայոց ցեղասպանության տարիներին Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականությունը եղել է ո՛չ բացարձակ հայամետ և ո՛չ էլ հակահայկական, թեև երկար տարիներ հենց այդ երկու բնութագրումներով էլ սահմանափակվել են հիմնախնդիրն ուսումնասիրած հայ պատմաբանները: Նրա կարծիքով, Հայոց ցեղասպանության տարիներին խնդրո առարկա հարցում Ռուսաստանի քաղաքականության վրա էական ազդեցություն են ունեցել մի կողմից՝ դաշնակից երկրների՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հակազդեցությունը նրա արտաքին քաղաքական գրեթե բոլոր նախաձեռնություններին, մյուս կողմից՝ ռուսական պետական բարձրաստիճան պաշտոնյաների անձնական վերաբերմունքը հայերի, նրանց ազատագրական ձգտումները Ռուսաստանի շահերին ծառայեցնելու հնարավորությունների ու հեռանկարների նկատմամբ, ինչպես նաև դիրքորոշումը ռուսական պետության հետպատերազմյան սահմանների, պատերազմի իրավունքով նվաճված Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի ու վարչաքաղաքական կառուցվածքի հարցերում: Այդ հանգամանքով էլ պայմանավորված է եղել ցարական և Ժամանակավոր կառավարությունների, դրանց մասը կազմող առանձին գերատեսչությունների, մասնավորապես՝ Արտաքին գործերի, Ֆինանսների, Ռազմական, Ծովային, Երկրագործության, Պետական վերահսկողության նախարարությունների, Կովկասի փոխարքայության և Կովկասյան բանակի գլխավոր շտաբի պաշտոնական դիրքորոշումը հայերին ու Արևմտյան Հայաստանին վերաբերող հարցերում: Չնայած Հայկական հարցի վերաբերյալ տեսա-

կետների և գործնական քայլերի տարբերությանը, անգամ ամենահայանպաստ որոշումները կայացնելիս ռուսաստանյան երեք վարչակարգերն էլ առաջնորդվել են իրենց պետության շահերով[37]: Ռուսաստանյան ազդեցիկ դիվանագետների թվում Ա. Մարուքյանը բարձր է գնահատում հատկապես արտգործնախարար Սերգեյ Սազոնովի (1910–1916) գործունեությունը՝ նշելով, որ Հայկական հարցում նրա դիրքորոշման հիմքում Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի խորը ընկալումն էր: Ս. Սազոնովը պաշտպանում էր ռուսական և օսմանյան մահմեդականների միջև հայկական «սեպը» վերականգնելու ու պահպանելու գաղափարը՝ դրա բովանդակության մեջ ներառելով հայերի ֆիզիկական անվտանգությունը երաշխավորելու, դեպի Հայրենիք՝ Հայաստան, նրանց վերադարձն ապահովելու, ռուսական պետության սահմաններում ստեղծվելիք արևմտահայկական վարչաքաղաքական միավորի ստեղծման ու կառավարման հարցերում հայերի գործոնը կարևորելու խնդիրները[38]:

Ա. Մարուքյանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները»[39] աշխատության մեջ վեր են հանված Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հիմնախնդիրները՝ պատմական փաստերը միջազգային իրավական նորմերի ու սկզբունքների հետ համադրելու միջոցով, ինչպես նաև նախանշված են դրանց հաղթահարման պատմահրավական հիմքերն ու հնարավորությունները: Արդի պայմաններում Հայոց ցեղասպանության

---

[37]Տե՛ս նույն տեղում, էջ 24–26, 141:

[38]Այս մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 34–56:

[39]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները / Խմբ. Ա. Մելքոնյան, Վ. Վարդանյան, Երևան, 2014:

հետևանքների վերացումն ունի համազգային կենսական նշանակություն և գործնական կարևորություն, քանի որ ուղղված է ոչ միայն պատմական արդարության վերականգնմանը, այլև՝ հայության անվտանգության ապահովմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Հիմնախնդրի նշանակությամբ ու կարևորությամբ էլ պայմանավորված է աշխատության բովանդակության և բնույթի արդիականությունը:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման վերաբերյալ գլխավորապես իրավական հարթության վրա մինչ օրս կատարված ուսումնասիրությունների համեմատ Ա. Մարուքյանի աշխատությունը շահեկանորեն տարբերվում է, որպես պատմական փաստերը և միջազգային իրավական տեսական գիտելիքները գործնական-կիրառական հարթություն տեղափոխելու հաջողված փորձ: Այս իմաստով աշխատության գլխավոր խնդիրն է՝ ներկայացնել այն հնարավորությունները, որ ժամանակակից միջազգային իրավունքն ընձեռում է ցեղասպանության զոհ հանդիսացող ժողովրդին, մասնավորապես՝ հայ ժողովրդին՝ հասնելու իր նկատմամբ իրագործված ցեղասպանության հանցագործության համար ցեղասպան պետության քաղաքական ու նյութական պատասխանատվության՝ ոճրագործության հետևանքների վերացմամբ հանդերձ:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրների պատմահրավական քննությունն Ա. Մարուքյանը սկսում է անդրադարձով՝ Հայոց ցեղասպանության կատարման պահին գործող միջազգային իրավունքի կողմից դրա գնահատման խնդրին: Այնուհետև, հեղինակը վերլուծում է XVIII–XIX դարերում Օսմանյան կայսրության նկատմամբ քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության նպատակով, ապա XIX դարավերջին–XX դարասկզբին Հայկական հարցի առնչությամբ մեծ տե-

րությունների մարդասիրական միջամտություններն ու Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության սահմանումը: Քննության են ենթարկվում նաև Թուրքիայի Հանրապետության՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում Հայաստանի Հանրապետության իրավասուբյեկտության, 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հետադարձ ուժի հարցերը:

Հայկական հարցի 1915–1923 թթ. դիվանագիտական քննարկումների, ինչպես նաև այդ ժամանակահատվածում հիմնախնդրի վերաբերյալ միջազգային դիվանագիտական փաստաթղթերի վերլուծության տեսանկյունից ամենակարևորը խնդրո առարկա աշխատության երկրորդ գլուխն է, որը նվիրված է Օսմանյան կայսրության և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության պարտավորություններին Հայկական հարցում՝ սկսած 1878 թվականից ընդհուպ 1923 թ., ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանության համար թուրքական պետության քաղաքական պատասխանատվությանը: Նշված հարցերից բացի, մենագրության մեջ Հայոց ցեղասպանության համատեքստում տրված է 1919–1921 թթ. թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրքերի դատավարության և 1921 թ. Սողոմոն Թեհլիրյանի դատական գործի, «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, նաև միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի պատմաիրավական քննական վերլուծությունը:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանի (1926–2015) «Հայաստանը 1920–1940 թթ.»[40] մենագրության երկրորդ գլուխը նվիրված է 1921 թ. ՀՍԽՀ տարածքային հիմնախնդիրներին: ԱԱ վավերագրերի, հրատարակված փաստաթղթերի ժողովածուների և գիտական ուսումնասիրությունների հարուստ հենքի վրա հեղինակը վերլուծել է Մոսկվայի ու Կարսի կոնֆերանսները, որոնց ընթացքում առանձին քննարկման առարկա է հանդիսացել հայ-թուրքական սահմանի հարցը: Այս աշխատությամբ Վ. Ղազախեցյանը գիտական շրջանառության մեջ է դրել նոր և էական նշանակություն ունեցող տվյալներ Մոսկվայի ռուս-թուրքական բանակցությունների վերաբերյալ: Դրանք վկայում են, որ, մասնավորապես, հայ-թուրքական սահմանի հարցը լուծվել է ոչ թե բանակցությունների եղանակով, այլ առանց դրանց՝ կուսակցական-պետական բարձրագույն մարմիններում և թուրքական պատվիրակության հետ առանձին հանդիպումների ժամանակ՝ ուժեղ պայքարով և փոխզիջումների միջոցով, մասամբ էլ անդրկուլիսյան բանակցություններում՝ խորհրդային կուսակցական-պետական ազդեցիկ գործիչների աջակցությամբ[41]:

Մեկ այլ պատմաբան՝ Ա. Հակոբյանը, հիմնավորապես ուսումնասիրել է 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի պատմությունը՝ սկսած համանուն կոնֆերանսների դիվանագիտական նախապատրաստությունից, ընթացքից, ներառյալ նշված պայմանագրերի հոդվածների պատմաքննական ու հա-

---

[40]Տե՛ս ***Ղազախեցյան Վ.*** Հայաստանը 1920–1940 թթ. / Պատ. խմբ. Հ. Մ. Հարությունյան, Երևան, 2006:

[41]Տե՛ս նույն տեղում, էջ 95:

մադրական վերլուծությունը[42]: Նրա մենագրության մեջ կենտրոնականը հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդիրներն են, նշված պայմանագրերի օրինականության ու միջազգային պայմանագրային իրավունքին դրանց համապատասխանության հարցերը, որոնք ուսումնասիրված են տարածաշրջանի աշխարհաքաղաքական կացության և Հայաստանում մեծ տերությունների մրցակցության ու շահերի բախման համատեքստում:

Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը մեկ ուսումնասիրության մեջ ներկայացնելը Ա. Հակոբյանը հիմնավորում է իրավահաջորդության և բովանդակության տեսակետից դրանց նմանությամբ, հոդվածների մեծ մասի նույնականությամբ:

Հայոց պահանջատիրության տեսանկյունից պատմաբանը հատկապես կարևորել է Կարսի պայմանագիրը, քանի որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն առհասարակ չի վավերացվել, իսկ Մոսկվայինը Հայաստանը չի ստորագրել: Պայմանագրերը վերլուծված են խորհրդային գաղափարաքաղաքական կապանքներից ազատ պայմաններում, հայաստանյան և ռուսաստանյան արխիվների նորահայտ նյութերի հենքի վրա: Մենագրության արժանիքներից է նաև թեմային վերաբերող խորհրդային պատմագիտության մեջ առկա փաստական աղավաղումների, իրադարձություններին տրված կամայական մեկնաբանությունների վերհանումը, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերագնահատումը, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պատմաբան-քարտեզագետ Բաբկեն Հարությունյանի (1941–2013)[43] սահմանային ճշ-

---

[42]Տե՛ս ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում / Խմբ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 2010:

[43]Տե՛ս ***Հարությունյան Բ.*** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2011, № 3, էջ 51–61:

գրտումների, պատմագիտական նոր մոտեցումների և տեսակետների արժևորումը ուսումնասիրության մեջ:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Խաչատրյանի, պատմական գիտությունների թեկնածուներ Համո Սուքիասյանի և Գեղամ Բադալյանի «Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին»[44] կոլեկտիվ ուսումնասիրության մեջ փաստական հարուստ հենքի վրա, որի առանցքը կազմում են Հայաստանի և Վրաստանի ազգային արխիվներում, Արցախի Հանրապետության պետական արխիվում հայտնաբերված ու առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող արժեքավոր վավերագրերը, լուսաբանվում է Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի (ԼՂԻՄ) տարածքային կորուստների հիմնախնդիրը 1920–1930-ական թվականներին: Հետազոտության արդյունքներն արտացոլված են կից երկու քարտեզներում: Աշխատանքը պատկերացում է տալիս հայկական երկու պետականությունների սահմանների ձևավորման ընթացքի վերաբերյալ:

Աշխատությունը բաղկացած է երեք գլխից և վեց ենթագլխից: Ուսումնասիրության տեսանկյունից ուշագրավ է Խորհրդային Հայաստանի տարածքի և սահմանների ձևավորման գործընթացին վերաբերող առաջին գլխի երկրորդ ենթագլուխը, որում ներկայացված է 1920–1922 թթ. հայկական տարածքների անցումը Թուրքիային ու Ադրբեջանին 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով: Ինչպես գիտենք, խորհրդային տարիներին չէր խրախուսվում «եղբայրական ժողովուրդների բարեկամությունը խաթա-

---

[44]Տե՛ս ***Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.*** Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին, Երևան, 2015:

րող» թեմաների, այդ թվում՝ տարածքային վեճերի հիմնախնդրի ուսումնասիրումը:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո հայաստանյան պատմագիտությունը հարստացավ 1920–1922 թթ. հայկական տարածքների կորուստների վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններով: Խնդրո առարկա աշխատությունը դրանցից առանձնանում է նրանով, որ Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստների հիմնախնդիրն առաջին անգամ հանգամանորեն ներկայացված է Անդրդաշնության գոյության ժամանակագրական սահմաններում՝ 1922–1936 թվականներին: Ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև՝ գաղափարաքաղաքական կարևորություն: Այն պատմական փաստերի վրա հիմնված անաչառ պատասխան է թեմայի վերաբերյալ ադրբեջանցի պատմաբանների՝ միանգամայն այլ դիտանկյունից գրված աշխատություններին:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությունը համառոտ ներկայացրել է պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Կիրակոսյանն (1956–2019) իր պատրաստած պատմահրավական եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) տեղեկանքում[45]: Գրքույկում ժամանակագրական հաջորդականությամբ թվարկված են Հայկական հարցին վերաբերող կարևոր միջազգային պայմանագրերը, տրված է դրանց բովանդակության ընդհանուր բնութագիրը:

Հայկական հարցի 1915–1923 թթ. պատմության առանձին հիմնահարցեր լուսաբանված են նաև 1991–2015 թթ. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պաշտպանված պատմական գիտու-

[45]Տե՛ս ***Կիրակոսյան Ա.*** Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահրավական եռալեզու տեղեկանք), Երևան, 2006:

թյունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար Գայանե Մախմուրյանի, Ստեփան Ստեփանյանցի (Կերտող) և պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Միքայել Մինասյանի, Սամվել Ղազարյանի, Արմինե Եփրիկյանի, Գեորգի Գաբրիելյանի, Նորայր Հակոբյանի, Ջավահիր Թորոսյանի ատենախոսություններում[46]:

Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում և բուհերում թափ առած հայագիտական հետազոտությունների, այդ թվում նաև Հայկական հարցի տարբեր հիմնախնդիրների արդյունքների ներկայացման լուրջ հարթակ դարձան գիտական պարբերականները և գիտական հոդվածների ժողովածուների պարբերական հրատարակությունները: Դեռևս խորհրդային տարիներին հանրապետությունում լույս ընծայվող «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Երևանի համալսարա-

[46]Տե՛ս ***Մախմուրյան Գ. Գ.*** 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2007, ***Ստեփանյանց Ս. Մ.*** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը առաջին աշխարհամարտի տարիներին / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2013, ***Մինասյան Մ. Ա.*** Հայ առաքելական եկեղեցին և Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2004, ***Ղազարյան Ս. Հ.*** Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը Հայկական հարցում (1918–1920 թթ.) / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006, ***Եփրիկյան Ա. Մ.*** Նախիջևանը 1917–1921 թվականներին / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2008, ***Գաբրիելյան Գ. Ֆ.*** Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի փոխհարաբերությունները 1920 թ. մայիս–դեկտեմբերին / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012, ***Հակոբյան Ն. Է.*** Հայ-ամերիկյան առնչությունները 1914–1920 թթ. / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015, ***Թորոսյան Ջ. Ջ.*** Հայաստանի տարածքների խնդիրը 1918–1920 թթ. խորհրդաժողովներում և պայմանագրերում / ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015:

նի» գիտական պարբերականների կողքին ծնվեցին նորերը՝ խթանելով հայագիտության զարգացումը: Այդպիսին են՝ «ՎԷՄ» համահայկական հանդեսը (նոր շրջանի համարները լույս են տեսել 2009 թվականից), «Բանբեր հայագիտության» հայագիտական միջազգային հանդեսը (լույս է տեսնում 2013 թվականից), ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Հայագիտության հարցեր» պարբերականը (լույս է տեսնում 2014 թվականից): Դրանցում հրատարակված ուսումնասիրությունները գիտական շրջանակներին ծանոթացնում են ինչպես Հայկական հարցի պատմության գիտատեսական հիմնախնդիրներին, այնպես էլ դրա քաղաքական լուծման գործնական ուղիներին ու հնարավորություններին, նպաստում են թե՛ Թուրքիայի և Ադրբեջանի պատմաբանների, թե՛ արևմտյան հայագիտության կեղծ դպրոցի ներկայացուցիչների կողմից հայոց նոր ու նորագույն ժամանակների պատմության զեղծարարություններին և պատմական ու գիտական փաստերի միտումնավոր խեղաթյուրմանը դիմագրավելուն: Հայաստանի Հանրապետությունում լույս ընծայվող գիտական պարբերականները նաև յուրօրինակ կամուրջ են Հայաստանի ու Սփյուռքի, հայաստանյան ու այլազգի մասնագետների միջև, կամուրջ, որի ամրապնդմանը նպաստում է անկախ Հայաստանի պատմաբանների օտար լեզուների իմացությունը: Լեզվական խոչընդոտի հաղթահարումը հասանելի է դարձրել այլազգի պատմաբանների տեսակետները Հայաստանում, իսկ հայ պատմաբաններն էլ հնարավորություն ունեն իրենց գիտական հետազոտությունների արդյունքները, դրանցում արտացոլված գիտական տեսակետներով հանդերձ, ներկայացնել Հայաստանի սահմաններից դուրս: Հայաստանյան գիտական պարբերականների թվայնացումը ևս կարևոր դեր է կատարում ուսումնասիրությունների հասանելիությունն ապահովելու գործում:

Գիտական կարևոր նշանակություն ունեն նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» պարբերական հրատարակությունը, Հայաստանի Հանրապետության բուհերի գիտական խորհուրդների երաշխավորությամբ հրատարակվող հոդվածների ժողովածուները, որոնցում ևս փորձառու ու երիտասարդ պատմաբանների կողմից լուսաբանվում են Հայկական հարցի պատմությանն առնչվող բազմաթիվ հարցեր:

Այսքանով, թերևս, ավարտեմ ուսումնասիրությանս մեջ ներկայացված աշխատությունների տեսությունը, քանի որ հնարավոր չէ ներածության սահմաններում բնութագրել Հայկական հարցի 1915–1923 թթ. պատմությանը վերաբերող 1991–2015 թթ. Հայաստանի երրորդ հանրապետությունում կատարված պատմագիտական բոլոր հետազոտությունները, ինչի համար հայցում եմ դրանց հեղինակների ներողամտությունը:

Հարկ է նշել, որ այս ուսումնասիրությունը չի հավակնում թեմայի վերաբերյալ բոլոր հրատարակությունների սպառիչ ընդգրկմանը՝ հաշվի առնելով այդ ուղղությամբ գիտական հետազոտությունների շարունակական բնույթը և հրատարակված որոշ աշխատանքների հասանելիության հանգամանքը:

Աշխատությունը հարգանքի տուրք է իմ ավագ գործընկեր, բազմավաստակ պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանի հիշատակին, ում կարծիքը որոշիչ է եղել այս թեման ուսումնասիրելու նպատակադրմանս մեջ:

ԳԼՈՒԽ 1
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

1. Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակի հարցը Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերում և «Կովկասյան տան» թուրք-գերմանական ծրագրում

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակահատվածը ճակատագրական եղավ հայ ժողովրդի ու նրա ազգային նպատակների համար: 1915–1916 թթ. իր պատմական Հայրենիքում՝ Օսմանյան կայսրության տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև կայսրության հայաբնակ շրջաններում հայ ժողովուրդը ենթարկվեց նոր ու աննախադեպորեն լայնամասշտաբ ցեղասպանության՝ Մեծ եղեռնի: Դա Օսմանյան կայսրությունը քայքայումից փրկելու և ժամանակակից պետության վերածելու՝ գործող երիտթուրքական վարչակարգի ազգային քաղաքականության բաղկացուցիչ մասն էր, քանի որ թուրքական միատարր պետության ստեղծման ճանապարհին ցեղասպանության թիրախ էին դարձել բոլոր քրիստոնյա թուրքահպատակ ժողովուրդները: Նույն տարիներին Օսմանյան կայսրության դեմ պատերազմող Անտանտի տերությունները մշակեցին Հայկական հարցի լուծման գաղտնի ծրագիր, որը կայսրության ասիական կամ ոչ թուրքական տիրույթների, այդ թվում՝ Արևմտյան Հայաս-

տանի ու Կիլիկիայի բաժանման ծրագրի բաղկացուցիչ մասն էր: Այդ ծրագիրը աշխարհի գաղութային վերաբաժանման համար մեծ տերությունների պայքարի դրսևորումներից մեկն էր: Դրանով Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ուրվագծեցին Օսմանյան կայսրության հետ ապագա հաշտության սկզբունքները:

Խորհրդահայ պատմագիտության մեջ 1915–1916 թթ. գաղտնի բանակցությունների դերն ու նշանակությունը առանձնապես չի կարևորվել: Դրանք հիմնականում ներկայացվել և գնահատվել են որպես մեծ տերությունների խարդախ դիվանագիտության ու հայ ժողովրդի նկատմամբ դավաճանության դրսևորում, որպես Հայոց մեծ եղեռնի ընթացքում նրան թիկունքից հասցված հարված: Ասիական Թուրքիայի բաժանման հարցի շուրջ ընթացած անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունների և դրանց արդյունքում ստորագրված համաձայնագրերի հիմքում դրված Հայկական հարցի լուծման վերաբերյալ Անտանտի տերությունների միասնական նոր մոտեցումը չի ներկայացվել նրանց վարած քաղաքականության հետ պատճառահետևանքային կապի մեջ:

Մեծ չէ հայաստանյան այն պատմաբանների թիվը, ովքեր հետխորհրդային տարիներին անդրադարձել են Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագա վարչաքաղաքական կարգավիճակի հարցին՝ ինչպես Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններում, այնպես էլ դրանց արդյունքում ստորագրված համաձայնագրերում, վեր են հանել ու ներկայացրել հայկական տարածքների բաժանման թուրք-գերմանական ծրագիրը: Այդ պատմաբանների թվում են ավագ սերնդի ներկայացուցիչներ Հ. Ավետիսյանը և Գ. Գալոյանը:

Հ. Ավետիսյանը հետխորհրդահայ առաջին պատմաբանն է, ով քննական վերլուծության ենթարկեց արևմտահայերի բնաջնջման և Արևմտյան Հայաստանի հայաթափման թուրք-գերմանական ծրագրի տրամաբանական շարունակությունը դարձած «Կովկասյան տան» կամ Կովկասյան ֆեդերացիայի ստեղծման նախագիծը[1]:

Գ. Գալոյանը 1915–1916 թթ. Հայկական հարցում Անտանտի տերությունների վարած քաղաքականությունը ներկայացրել է XVI դարից մինչև 1917 թ. ընկած ժամանակահատվածում մեծ տերությունների աշխարհակալական նկրտումների և Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրում դրանց ազդեցության ու հետևանքների տեսանկյունից[2]:

1915–1916 թթ. մեծ տերությունների կողմից Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներին անդրադարձել է նաև ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը[3]:

Հիմնախնդիրը կենտրոնական տեղ է գրավում տողերիս հեղինակի գիտական ուսումնասիրություններում, որոնցում այն ներկայացված է Մերձավոր Արևելքում մեծ տերությունների ու նրանց ձևավորած ռազմաքաղաքական դաշինքների որդեգրած մոտեցումների, մշակած ծրագրերի և վարած քաղաքականության տեսանկյունից[4]:

---

[1]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 3–9:

[2]***Գալոյան Գ.*** Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), էջ 669–694:

[3]***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, էջ 41:

[4]***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 78–101, ***նույնի՝*** Западная Армения в планах великих держав в 1914–1916 гг. // Вестник общественных наук / НАН РА, 2013, № 3, с. 68–76; ***նույնի՝*** Западная Армения в планах великих держав в годы Первой мировой войны // Историческое пространство. Проблемы истории стран

Մեկ այլ հեղինակ՝ Հ. Հակոբյանը, հիմնախնդրին անդրադարձել է Հայոց մեծ եղեռնի հետևանքով տարագիր հայության Հայրենիք վերադառնալու պահանջի տեսանկյունից՝ վերհանելով դրա պատմական ու իրավական հիմքերը[5]:

Գիտական կարևոր արժեք են ներկայացնում նաև Ա. Մարուքյանի աշխատությունները: Դրանցում քննության են առնված Հայոց ցեղասպանության տարիներին՝ 1915–1917 թթ., Հայկական հարցում Ռուսաստանի ցարական, Ժամանակավոր և բոլշևիկյան կառավարությունների վարած արտաքին քաղաքականության աստիճանական զարգացման ընթացքը, ռուսական իշխանությունների քաղաքականությունն Արևմտյան Հայաստանի հայ բնակչության նկատմամբ, իսկ Օսմանյան կայսրության ասիական տիրույթների համար Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիվանագիտական պայքարը պատմաքննական վերլուծության է ենթարկված միջազգային իրավունքի տեսանկյունից[6]:

Վերոնշյալ հեղինակների աշխատություններում 1915–1916 թթ. Հայկական հարցի պատմության լուսաբանման գիտական նորույթը նախևառաջ Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունների մանրամասն և համակողմանի վերլուծությունն է,

---

СНГ. М., 2014, с. 91–114; ***նույնի՝*** Օսմանյան կայսրության մասնատման մեծ տերությունների ծրագրերը 1914–1917 թթ. // Հայոց պատմություն, հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին) / Խմբ. Ա. Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, 2015, էջ 529–535:

[5]***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 200–220:

[6]***Марукян А.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 24–325; ***նույնի՝*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 84–89:

դրանց պատճառների, նպատակների, արդյունքների և Հայկական հարցի հետագա ընթացքի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ պատմական փաստերի վերաարժևորումը:

Հիմնախնդրի ուսումնասիրության գիտական նոր արդյունք է նաև Արևմտյան Հայաստանի հայաթափման ծրագրի տրամաբանական շարունակությունը դարձած Անդրկովկասի զավթման ու բաժանման թուրք-գերմանական ծրագրի վերհանումը, Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հարցում Անտանտի և Քառյակ միության պետությունների հեռահար նպատակների պատմահամեմատական վերլուծությունն ու առանձին-առանձին դրանց անաչառ գնահատումը: Մասնավորապես, հայաստանյան պատմաբանների աշխատություններում հիմնավորվում է, որ 1914 թ. թուրք-գերմանական ռազմաքաղաքական դաշինքի կնքումը նշանակում էր Օսմանյան կայսրությանը ավստրո-գերմանական խմբավորումից կտրելու ուղղությամբ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ջանքերի լիակատար ձախողում ու այդ պետության նկատմամբ Անտանտի տերությունների քաղաքականության արմատական վերանայման անհրաժեշտություն: Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների միջև կայացած բանակցություններով այդ խնդիրը դրվեց գործնական հիմքի վրա:

Նշենք, որ դեռևս 1840 թ. Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանն աջակցելու պարտավորություն ստանձնել էին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի և Պրուսիայի կառավարությունները՝ Լոնդոնում սուլթանական կառավարության հետ ստորագրված համաձայնագրով: Այդ պարտավորության ոգուն համահունչ 1878 թ. ստորագրվել էր Բեռլինի տրակտատը, որով էլ միջազգային դիվանագիտության մեջ սկսվել էր Հայկական հարցի պատմությունը:

Եթե Բեռլինի վեհաժողովից հետո մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի և հայերի նկատմամբ եվրոպական մեծ տերությունների քաղաքականությունը գլխավորապես պայմանավորված էր եղել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը չխախտելու, անձեռնմխելիությունը պահպանելու սկզբունքով, ապա նրա մուտքը պատերազմ՝ որպես կայզերական Գերմանիայի դաշնակից՝ ցրեց Անտանտի տերությունների վերջին հույսերն անգամ Օսմանյան կայսրության չեզոքությունն ապահովելու մասին: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը առանց հապաղելու հրաժարվեցին կայսրության տարածքային ամբողջականության պահպանման քաղաքականությունից: 1914 թ. սեպտեմբեր-նոյեմբերին առաջ քաշվեց օսմանյան «ժառանգության», այսինքն՝ կայսրության ասիական տիրույթների բաժանման խնդիրը, որի բաղկացուցիչ մասն էր Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի հարցը: Մեծ Բրիտանիայի վարչապետ Հերբերտ Հենրի Ասքվիթի բնորոշմամբ՝ «ժամանակի հարց էր, մինչև որ թուրքական կայսրության անկայունությունը Ասիայում ևս նախապատրաստեր նրա անկումը»[7]: Այդ օրերին Ռուսաստանի ցար Նիկոլայ II-ը ևս հայտարարեց, որ «Թուրքիային վերջ պետք է տրվի»[8]: Շուտով Լոնդոնի և Պետերբուրգի պաշտոնական հայտարարություններին միացավ Ֆրանսիայի կառավարությունը: Այս հանգամանքը Հայկական հարցի ընթացքի վրա ազդող լուրջ գործոն դարձավ:

---

[7]Քաղվածքն ըստ ***Նասիպեան Ա.*** Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրութ, 1994, էջ 70:

[8]***Գալոյան Գ.*** Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), էջ 670:

1915 թ. փետրվարին բրիտանական և ֆրանսիական ռազմածովային ուժերի իրականացրած Դարդանելի գործողությունը, ինչպես նաև Օսմանյան կայսրության դեմ պատերազմին մասնակցության վերաբերյալ Լոնդոնի, Փարիզի և Աթենքի կառավարությունների միջև բանակցություններն արագացրին կայսրության ասիական տիրույթների բաժանման հարցի բարձրացումը: «Այլ պայմաններում,– նկատում է ակադեմիկոս Գ. Գալոյանը,– այդ պայքարը կարող էր ոչ միայն խզել հարաբերությունները, այլև պատերազմի պատճառ դառնալ դաշնակիցների միջև: Սակայն գերմանական բլոկի սպառնալիքը ստիպում էր նրանց առժամանակ ետին պլան մղել իրենց միջև գոյություն ունեցող հակասությունները և միավորել ուժերն ընդհանուր թշնամու դեմ»[9]: Ա. Մարուքյանը նկատում է, որ ռազմաքաղաքական նոր իրադրության պայմաններում Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ին Կոստանդնուպոլսում կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը կորցրեց իր նշանակությունն, իբրև Հայկական հարցի լուծման արտաքին քաղաքական ծրագիր, և գործնականորեն ստորադասվեց սևծովյան նեղուցներին ու Կոստանդնուպոլսին տիրելու գլխավոր նպատակին: Քանի որ Ռուսաստանի համար Արևմտյան Հայաստանը հիմնականում դիտվում էր որպես ցամաքային ճանապարհ՝ դուրս գալու դեպի այդ բաղձալի տարածքներ, ուստի նրա ապագան կախման մեջ դրվեց Ասիական Թուրքիան ազդեցության գոտիների բաժանելու աշխարհաքաղաքական գործընթացի արդյունքից[10]: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակին, ապա պատմաբանի համոզմամբ, իրեն չկաշկանդելով ռուս-թուրքական

---

[9]Նույն տեղում, էջ 669–670:

[10]Տե՛ս ***Марукян А.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 63–64, 143.

համաձայնագրով, Ռուսաստանը վերադարձավ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ 1913 թ. իր նախագծին՝ քաղաքական պայմանների փոփոխության դեպքում հնարավոր տարածքային ընդլայնումները դրանում հաշվի առնելու հեռանկարով[11]:

1915 թ. մարտ–ապրիլին հուշագրերի փոխանակմամբ, ապա ապրիլի 26-ին Լոնդոնի գաղտնի համաձայնագրի ստորագրումով Իտալիան միացավ Անտանտին, իսկ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները հստակ ձևակերպեցին ոչ միայն Կոստանդնուպոլսի ու սևծովյան նեղուցների կարգավիճակը, այլև՝ Օսմանյան կայսրության ասիական տիրույթները մասնատելու իրենց մտադրությունը: Արևմտյան Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, Կիլիկիան՝ Ֆրանսիային[12]:

Ամփոփելով անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունների նպատակի ու նշանակության վերաբերյալ պատմագիտության մեջ մինչ օրս արտահայտված տեսակետները՝ հետխորհրդահայ պատմաբաններն ընդունում են, որ 1878–1914 թթ. ընդգրկող ժամանակահատվածում թուրքական պետության նկատմամբ եվրոպական մեծ տերությունների քաղաքականության հիմքում դրված էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման ու անձեռնմխելիության ապահովման սկզբունքը: Միևնույն ժամանակ, հիմնախնդիրը դիտարկելով այդ ժամանակ գործող միջազգային իրավունքի հիմնարար նորմերի ու սկզբունքների տեսանկյունից՝ նրանք հավելում են, որ նշված ժա-

---

[11]Տե՛ս նույն տեղում, էջ 96, 98–99:

[12]Տե՛ս Documents on British Foreign Policy 1919–1939 / Vol. 1 / Ed. by E. L. Woodward, R. Butler / 1st Series. Lnd, 1947, pp. 84–85; ***Махмурян Г.*** Лондонский договор 26 апреля 1915 г. на Парижской мирной конференции (апрель–май 1919 г.) // Вопросы истории Армении / Сборник научных статей 8. Ереван, 2007, с. 252–253.

մանակահատվածում մեծ տերություններն անտեսում էին ճնշված հայ ժողովրդի ինքնորոշվելու իրավունքը, իսկ Հայկական հարցը դիտարկում էին որպես Օսմանյան կայսրության սահմաններում հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովման, հայերի անձնական և ունեցվածքային իրավունքների պաշտպանության, այդ նպատակով Օսմանյան կայսրության դեմ հումանիտար ինտերվենցիա իրականացնելու հարց: Առաջին համաշխարհային պատերազմը սկիզբ դրեց Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման ծրագրի մշակման դիվանագիտական գործընթացին:

Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ 1916 թ. հունվարի 3-ին բրիտանական կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչ, Մերձավոր Արևելքի փորձագետ Մարկ Սայքսի և Բեյրութի ֆրանսիական նախկին գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոյի միջև ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնությունը պետք է դիտարկել լոկ որպես նախնական համաձայնություն Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև: Այն դիվանագիտական վերջնական փաստաթուղթ չէր, քանի որ Անտանտի տերությունները դեռևս 1914 թ. օգոստոսի 25 (սեպտեմբերի 5)-ի Լոնդոնի համաձայնագրով ստանձնել էին թշնամու հետ անջատ պայմանագրեր չկնքելու, ինչպես նաև խաղաղության բոլոր պայմանները միմյանց հետ համաձայնեցնելու փոխադարձ պարտավորություններ[13]: Հետևաբար, ցանկացած

[13]Համաձայնագիրը ստորագրել էին՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյը, այդ երկրում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Բենկենդորֆը և Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնը: Համաձայնագրի ամբողջական տեքստը տե՛ս Сборник договоров России с другими государствами (1856–1917) / Сост. И. В. Козьменко / Под ред. Е. А. Адамова. М., 1952, с. 425.

ծրագիր ու որոշում պատերազմի կամ ապագա հաշտության վերաբերյալ, որն ընդունվել էր Անտանտի տերությունների մի մասի կողմից ու չէր քննարկվել և համաձայնեցվել դաշինքի բոլոր անդամների միջև, չէր կարող համարվել վերջնական: Պատահական չէ, որ Սայքս-Պիկոյի պայմանագիրը դարձավ հիմնարար փաստաթուղթ և դրվեց հետագա բանակցությունների ու համաձայնագրերի հիմքում Ռուսաստանի կառավարության հետ 1916 թ. փետրվար–մարտին համաձայնեցնելուց հետո: Նշենք, որ դեռևս 1915 թ. ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական հուշագրերի և Լոնդոնի համաձայնագրի հիման վրա դեռևս նույն թվականի նոյեմբերին բրիտանական ու ֆրանսիական կառավարությունների միջև, դաշնակից Ռուսաստանից անջատ, բանակցություններ էին տեղի ունեցել Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման նպատակով: Անհանգստացած Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաղթանակներով՝ Լոնդոնի ու Փարիզի կառավարությունները շահագրգռված էին նախապես հստակեցնել ու սահմանագծել իրենցից յուրաքանչյուրին անցնելիք տարածքները և կանխել Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը Մերձավոր Արևելքի այն մասերում, որոնց նկատմամբ լուրջ հետաքրքրություններ ունեին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան: Բանակցությունների արդյունքում 1916 թ. հունվարի 3-ին կայացավ նախնական համաձայնություն: Դրա տեքստը 1916 թ. փետրվարի 25 (մարտի 9)-ին փոխանցվեց Ռուսաստանի կառավարությանը՝ որպես դաշնակից երկրների պատրաստած անակնկալ: Ինչպես գիտենք, հայկական տարածքների բաժանման հարցում Ռուսաստանի արտգործնախարարությունը դժգոհ էր, որ Ուրմիա լճի հյուսիսային առափնյա տարածքը ու Բիթլիսի լեռնանցքներն ընդգրկվել էին Ֆրանսիային անցնելիք գոտում: Թեև տեղագրական տեսակետից այդ սահմանը «բնական էր, որովհետև ընթանում էր գլխավոր լեռնազանգվա-

ծի ուղղությամբ, սակայն քաղաքական ու ռազմագիտական կշռադատությունների տեսակետից», արտգործնախարար Ս. Սազոնովի համոզմամբ, «այն հազիվ թե կարելի էր ընդունելի համարել»[14], քանի որ զրկում էր Ռուսաստանին տարածքային ընդլայնման հնարավորությունից: Ի վերջո, երկարատև ու լարված բանակցությունների արդյունքում բրիտանական ու ֆրանսիական կողմերը տեղի տվեցին: Հուշագրերի փոխանակմամբ 1916 թ. ապրիլի 13 (26)-ին, մայիսի 9–16-ին և մայիսի 10 (23)–օգոստոսի 19 (սեպտեմբերի 1)-ին ստորագրվեցին համապատասխանաբար ռուս-ֆրանսիական, անգլո-ֆրանսիական և ռուս-անգլիական համաձայնագրերը՝ Օսմանյան կայսրության ասիական տիրույթները միմյանց միջև բաժանելու վերաբերյալ[15]: 1917 թ. ապրիլի 19-ին օսմանյան «ժառանգության» բաժանման ծրագրին միացավ նաև Իտալիան՝ իր տարածքային պահանջներն ամրագրելով Սեն-Ժան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալական գաղտնի համաձայնագրում[16]:

Հայաստանյան արդի պատմագիտության մեջ, ի տարբերություն խորհրդահայ պատմագիտության, օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուս-իտալական

---

[14]«Հայաստանի ավտոնոմիան» յեւ Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից / Առաջաբ. Ա. Հովհաննիսյան, Յերեվան, 1926, փաստ. № 43, էջ 30:

[15]1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցությունների և հուշագրերի մասին մանրամասն տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 78–101:

[16]Տե՛ս Papers Relating to the Foreign Relations of the United States, The Paris Peace Conference, 1919 / Vol. 1 / Ed. by J. V. Fuller. Washington, 1942, doc. № 364, p. 468; ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 98, ***Գալոյան Գ.*** Հայաստանը Ասիական Թուրքիայի բաժանման ծրագրերում (1915–1917 թթ.) // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2001, № 2, էջ 58–76:

համաձայնագրերին տրված է ոչ միայն պատմագիտական, այլև՝ միջազգային-իրավական գնահատական:

Ինչ խոսք, Անտանտի տերությունների մշակած ծրագիրը որևէ ընդհանուր բան չուներ Հայկական հարցի բովանդակության հետ: Ընդհակառակը, այն վկայում էր այդ տերությունների քաղաքականության նվաճողական, գաղութատիրական էության մասին. Հայաստանը բաժանվելու էր երկու մասի՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Միջազգային վերահսկողության ներքո հայկական ինքնավարություն կամ անկախ պետություն հիմնելու հարցը չէր քննարկվում: «Հայերի կյանքում պարզապես տեղի էր ունենում արմատական փոփոխություն. Թուրքիայի տիրապետության տակ գտնվող տարածքները անցնում էին Ռուսաստանին եւ Ֆրանսիային»[17],– գրում է Լ. Խուրշուդյանը: Այդուհանդերձ, կարևոր է, որ Անտանտի տերությունների համաձայնագրերով ճանաչվում էր ցեղասպան օսմանյան պետության իշխանությունից Արևմտյան Հայաստանն Անտանտի տերությունների կողմից զինագրավելու միջոցով ազատելու անհրաժեշտությունը, ինչն արդեն իսկ 1916 թ. իր արտահայտությունը գտավ պատերազմի նպատակների, ճնշված ժողովուրդների ազատագրության և ինքնորոշման մասին այդ դաշինքի երկրների կառավարությունների, արտաքին գերատեսչությունների ղեկավարների հրապարակային ելույթներում ու պաշտոնական հայտարարություններում[18]: Անդրադառնալով 1915–1916 թթ. Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ Մեծ Բրիտա-

---

[17] ***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, էջ 41:

[18] Այդ մասին տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, в 2-х томах / Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2. М., 2005, с. 225–226.

նիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարող շրջանակներում քննարկվող նախագծերին՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վալերի Թունյանը եզրակացնում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին և առաջին տարիներին մեծ տերություններից միայն Ռուսաստանն է իրական ջանքեր գործադրել արևմտահայերի ֆիզիկական անվտանգությունը պաշտպանելու ուղղությամբ[19]:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ճնշված ժողովուրդների ազատագրության և կարգավիճակի հարցերը դրվեցին Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի հիմքում: Հայ պատմաբանների աշխատություններում ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ այդ ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի արդար լուծումը կապվում էր հենց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ: Եվ դա պատահական չէր. Գերմանիայի, Օսմանյան կայսրության ու նրանց դաշնակիցների դեմ մղվող պատերազմում Անտանտի տերություններն առաջնորդվում էին թուրքահպատակ ժողովուրդների ազատագրության սկզբունքով: Թեև վերջինս ավելի շուտ շահարկվում էր, քան՝ իրա-

---

[19]Տե՛ս ***Тунян В.*** Россия и Армянский вопрос / Отв. ред. С. С. Степанян. Ереван, 1998, с. 224–230. Այս մենագրությունից բացի, հեղինակն ունի բազմաթիվ այլ աշխատանքներ, որոնք վերաբերում են Ռուսաստանի քաղաքականությանը Հայկական հարցում XIX դարավերջին և XX դարասկզբին, լուսաբանում են այն ռուսական պարբերական մամուլում, ներկայացնում Հայկական հարցում օսմանյան վարչակարգի քաղաքականության աստիճանական փոփոխությունը երիտթուրքերի իշխանության գալուց հետո: Դրանցում նաև մերկացված է տվյալ ժամանակաշրջանում Հայկական հարցում և Հայոց ցեղասպանության նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականության մասին ադրբեջանական պատմագիտության կեղծարարությունը:

գործվում, այնուամենայնիվ, արևմտահայերի շահերի տեսանկյունից օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերը գերադասելի էին թուրքական բռնակալությունից: Այդ մտայնությանը նպաստում էին նաև 1916 թ. աշնանը մոտալուտ խաղաղության մասին լուրերի տարածումը և 1917 թ. ապրիլին միջազգային տնտեսական ու ռազմաքաղաքական հարցերի լուծման գործում մեծ կշիռ ունեցող չեզոք ԱՄՆ-ի մուտքը պատերազմի մեջ ընդդեմ Քառյակ միության պետությունների:

Փաստորեն, հայաստանյան պատմաբանների աշխատություններում հիմնավորվում է 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններով և դրանց արդյունքում ստորագրված համաձայնագրերով միջազգային դիվանագիտության մեջ քաղաքական նոր մոտեցման սկզբնավորումը, որը նախադրյալներ էր ստեղծում թուրքական տիրապետությունից հպատակ ժողովուրդների ազատագրման համար: Հայկական հարցը լուծվելու էր ոչ թե Օսմանյան կայսրության սահմաններում հայկական վեց վիլայեթները (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) բարենորոգելու կամ դրանց ինքնավար կարգավիճակ տալու, այլ՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ օսմանյան պետության գերիշխանությունը դադարեցնելու և միջազգային վերահսկողության ներքո ինքնավար Հայաստան հիմնելու միջոցով:

Հայկական հարցի նկատմամբ Անտանտի տերությունների որդեգրած այս նոր քաղաքական մոտեցումը դարձավ այն միջազգային-իրավական հիմքը, որի վրա Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում առաջադրվեց Հայաստանի ինքնորոշման և անկախության պահանջը:

Ընդհանրացնելով Հայոց ցեղասպանության տարիներին Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցի

շուրջ հայ ազգային գործիչների՝ Պողոս Նուբարի ու Հակոբ Զավրյանի գործունեությունը Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիվանագիտական շրջանակներում՝ Ա. Մարուքյանը նշում է, որ դրա անհաջողության հիմնական պատճառներն էին՝ գործողությունների միասնական ծրագրի բացակայությունը, հայ գործիչների միջև առկա ներքին լուրջ տարաձայնությունները, անիմաստ մրցակցությունը, նրանց քայլերի անկազմակերպ ու քաոսային բնույթը, ինչպես նաև մեծ տերությունների դիվանագիտության ազդեցությունը[20]: Նա չի պաշտպանում խորհրդահայ պատմագիտության այն տեսակետը, թե հայ հասարակական-քաղաքական շրջանակներում, տեղեկանալով անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին, չեն համարձակվել անգամ քննադատել Անտանտի տերություններին:

Ըստ Ա. Մարուքյանի, թե՛ Պ. Նուբարը և թե՛ Հ. Զավրյանը քաջ գիտակցում էին, որ իրենց կարծիքը կամ քննադատությունը ուշադրության չէին արժանանա, քանի որ Անտանտի տերությունների կողմից Ասիական Թուրքիայի մասնատմանը վերաբերող բոլոր հարցերը վճռված էին այդ դաշինքի տերությունների կողմից: Ավելին, հայ գործիչների քննադատությունը կարող էր վնասել հայ ժողովրդի շահերին ու անվտանգությանը[21]:

Բացի այն, որ 1915–1916 թթ. Անտանտի տերությունները որոշակիացնում էին իրենց շահերն ու հետաքրքրություններն Օսմանյան կայսրության ասիական տիրույթներում, այդ տարիները նաև առանձնանում են որպես Հայկական հարցը հայերի ցեղասպանությամբ լուծելու թուրքական քաղաքականության բարձրակետ: Ուստի, հայաստանյան պատմագիտության մեջ չէին կարող անտես-

---

[20]Տե՛ս ***Марукян А.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 145.

[21]Տե՛ս նույն տեղում, էջ 192–193:

վել կամ շրջանցվել Արևմտյան Հայաստանի ու արևմտահայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության դիրքորոշման, Հայկական հարցում թուրք-գերմանական գործակցության հարցերը:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներն ուսումնասիրող պատմաբանների աշխատություններում զարգացվեց սուլթանական և երիտթուրքական կառավարությունների հակահայկական քաղաքականությանը տրվող գիտական գնահատականը՝ դրանում կարևորելով այն հանգամանքը, որ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման թուրքական քաղաքականությունը, անկախ պետական վարչակարգի փոփոխությունից, շարունակական էր: Դրա գործադրման ծավալները, ձևերն ու մեթոդներն աստիճանաբար կատարելագործվում էին՝ թուրքական պետության նվաճողական նկրտումներին համապատասխան: Ավելին, համաշխարհային պատերազմի ընթացքում նվաճած կամ նվաճելիք տարածքների բաժանման ու կառավարման հեռանկարները, այդ թվում՝ Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հարցերը, նախապես քննարկում և դրանց լուծման նախագծեր մշակում էին ոչ միայն Անտանտի տերությունները, այլև Օսմանյան կայսրությունն ու կայզերական Գերմանիան:

Պատմագիտական աշխատություններում նշվում է, որ արդեն XIX դ. վերջին թուրքական կառավարող շրջանակներում հետևողականորեն արմատավորված օսմանականության գաղափարախոսությունը՝ ազգակից ժողովուրդներին Ջիբրալթարից մինչև Չինաստան Օսմանյան կայսրության մեջ միավորելու ձգտումը, Հայկական հարցը Հայաստանի հայաթափման, հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման միջոցով լուծելու գաղափարաքաղաքական հիմքն էր: Խնդիրն այն է, որ Մարմարա ու Էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափերը և դրանից այն կողմ՝ մոտ 2,5 հազ. կիլոմետրի վրա տարածվող մահմեդական օվկիանոսում, Հայաստանը

քրիստոնեության միակ կղզյակն էր. այն խանգարում էր օսմանականության գաղափարախոսության իրականացմանը, Կովկասում բնակվող մահմեդականների հետ անմիջական շփմանը, ազդեցիկ ուժ ներկայացնող համատարած զանգվածի ստեղծմանը, ազգային-կրոնական տեսանկյունից միատարր համաթուրանական պետության ստեղծման գաղափարի իրագործմանը: Մշակվում էր հայկական կենդանի «պատնեշի» վերացման պետական ծրագիր: Այն պաշտոնապես ձևակերպվեց Բեռլինի միջազգային վեհաժողովից հետո՝ Մեծ վեզիր Քյամիլ փաշայի հրապարակած հրահանգով[22]: Ըստ այդմ, մի կողմից փորձ էր արվում հայերին, բուլղարներին, սերբերին, հույներին ներկայացնելու իբրև «թուրքական քրիստոնյաներ», մյուս կողմից էլ այդ ժողովուրդների դեմ գործի էր դրվում ջիհադի՝ «անհավատների դեմ սրբազան պատերազմի» գաղափարը: Երկու դեպքում էլ հայերին, ի թիվս թուրքահպատակ այլ ժողովուրդների, սպառնում էր բնաջնջման, իսկ Հայաստանին՝ հայաթափման մռայլ հեռանկարը:

Օսմանականության և համաթրքության տեսաբանների գաղափարները հաստատվեցին երիտթուրքերի՝ Սալոնիկի 1911 թ. համագումարում, ապա զարգացվեցին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Բնութագրական է 1914 թ. նոյեմբերի 12-ին երիտթուրքերի կուսակցության կենտրոնական վարչության հրապարակած շրջաբերականից Հ. Ավետիսյանի հետևյալ մեջբերումը. «Մեր ժողովրդի և մեր երկրի ազգային իդեալը մեզանից պահանջում է մոսկովյան թշնամու ոչնչացումը, այն բանի համար, որպեսզի դրանով հասնենք մեր բնական սահմաններին, որոնք կընդգրկեն և կմիացնեն մեր բոլոր ազգակիցներին: Մեր կրոնա-

[22]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 3–4, նաև՝ ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 37–39:

կան զգացմունքները թելադրում են մեզ ազատել իսլամական աշխարհը անհավատների տիրապետությունից»[23]: Պատերազմի ընթացքում կովկասյան ուղղությամբ գործող թուրքական բանակը լուծում էր հենց այս խնդիրը:

Երիտթուրքական վարչակարգի ազգայնամոլական, հակահայկական քաղաքականությանը համահունչ էին Մերձավոր Արևելքում համագերմանականության շահերը: Դրանք թելադրում էին Օսմանյան կայսրությունը դիտել և՛ որպես փորձադաշտ հպատակ ժողովուրդների շահագործման, ձուլման ու ֆիզիկական ոչնչացման հակամարդկային գաղափարներն իրագործելու համար, և՛ որպես հումքի աղբյուր ու ապրանքների արտահանման եկամտաբեր շուկա, և՛ որպես Արևելքի հետ կապող կարևոր օղակ: Գերմանիայի տնտեսական ու ռազմաքաղաքական ծրագրերի հիմնական զարկերակը պետք է լիներ Բեռլինից սկիզբ առնող, Հայաստանով անցնող և Բաղդադով մինչև Բասրա ձգվող բաղդադյան երկաթուղին: Համագերմանականության տեսաբանները և համաթրքության գաղափարախոսները համակարծիք էին, որ Օսմանյան կայսրության թուրքերն ամեն կերպ պետք է մոտենան Կովկասում ապրող իրենց ազգակից մահմեդականներին, կազմեն համատարած ազգային զանգված: Այդ նպատակն իրագործելու համար առաջարկում էին ռուսական կողմնորոշում ունեցող հայերին դուրս մղել իրենց բնակավայրերից, տեղափոխել Միջագետք՝ բաղդադյան երկաթուղու կառուցման աշխատանքներում որպես էժան բանվորական ուժ օգտագործելու համար: Նախատեսվում էր Հայաստան՝ հայերի բնակավայրեր, տեղափոխել մահմեդականներ արաբական երկրներից, Թրակիայից և Ռուսաստանից: Այս-

---

[23]Քաղվածքն ըստ ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 6, նաև՝ Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), с. 420–422.

պես ծնվեց Արևմտյան Հայաստանում «կոմպակտ մուսուլմանական մեծամասնություն» ապահովելու գաղափարը[24]: Որպես դրա վկայություն, Հ. Ավետիսյանը մեջբերում է կատարում գերմանական աշխարհաքաղաքականության խոշոր տեսաբան, 1914 թ. հունիսին Բեռլինում ստեղծված Գերմանա-հայկական ընկերության փոխնախագահ Պաուլ Ռոհրբախի՝ պատերազմի նախօրյակին գրած «Պատերազմը և գերմանական քաղաքականությունը» գրքույկից. «… Առաջ քաշելով «Ի՞նչ կլինի, եթե Անտանտի պետությունները միմյանց մեջ բաժանեն մի կողմից Բոսֆորի և Պարսից ծոցի, մյուս կողմից՝ Սուեզի ջրանցքից մինչև Արարատի միջև ընկած տարածքը» հարցը, Պաուլ Ռոհրբախը պատասխանում է. «Դա կլինի Գերմանիայի վախճանը, որպես համաշխարհային տերություն, առաջնակարգ տերությունների շարքից Գերմանիայի դուրս մղում, քանզի Գերմանիայի ապագան Անատոլիայում է, Փոքր Ասիայում, Սիրիայում, Միջագետքում, Պաղեստինում: … Եվ քանի որ քաղաքական անհրաժեշտությունից ելնելով մենք պետք է պահպանենք Թուրքիան, մինչև վերջին ծայրահեղություն, ապա մենք չպետք է թույլ տանք, որպեսզի Հայաստանը անցնի Ռուսաստանին»»[25]:

Հայաստանյան պատմագիտական աշխատություններում ներկայացված է նաև Օսմանյան կայսրության ու Գերմանիայի հաղթանակի դեպքում նրանց տնօրինությանն անցնելիք տարածքների քաղաքական կարգավիճակի և վարչական կառուցվածքի վերաբերյալ նախագիծը, որում կարևոր տեղ էին գրավում Կովկասի ապագա վարչաքաղաքական կառուցվածքում հայկական տարածքների ճակատագրին և Կովկասի էթնիկական բազմազա-

---

[24]Այս մասին մանրամասն տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 39–49:

[25]***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 7–8:

նության մեջ հայերի ապագային վերաբերող հարցերը: 1915 թ. վերջերին երիտթուրքական կառավարության և Կովկասի մահմեդականության հասարակական-քաղաքական շրջանակների նախաձեռնած այդ նախագիծը վերլուծված է որպես Հայկական հարցն Արևմտյան Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման և բնաջնջման միջոցով լուծելու թուրք-գերմանական տարբերակի տրամաբանական շարունակություն, քանի որ նախատեսում էր «ազգային-կրոնական առումով միատարր» Օսմանյան կայսրության հովանավորությամբ «անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկասի» կամ «Կովկասյան տան» ստեղծում: Դա Կովկասը Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու ծրագիր էր[26]:

Նշենք, որ միջազգային դիվանագիտության մեջ «Կովկասյան տան» գաղափարն առաջ էր քաշել Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Հենրի Պալմերսթոնը դեռևս 1853–1856 թթ. Ղրիմի (Արևելյան) պատերազմի ժամանակ՝ Ռուսաստանը թուլացնելու և նրա ազդեցության ոլորտները նեղացնելու նպատակով: Սակայն Կովկասը Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու գաղափարի զարգացումը և հստակ ձևակերպումը կապված են «Կովկասյան տան» թուրքական, այնուհետև՝ Կոստանդնուպոլիս-Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագրերի հետ: Դրանցից առաջինը մշակվել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, իսկ երկրորդը՝ դրա ավար-

---

[26]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայաստանը «Կովկասյան տան» թուրքական և Կ.Պոլիս-Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագրերում // Ժամանակակից քաղաքակրթական գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում / Խմբ. Հ. Հակոբյան և ուրիշներ, Երևան, 2004, էջ 110–125:

տից անմիջապես հետո: Հարցն այն է, որ 1914 թ. Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև պատերազմի բռնկմանը հաջորդել էր թուրք-վրացական գաղտնի համաձայնագրի ստորագրումը Կոստանդնուպոլսում: Ըստ այդ փաստաթղթի, որը անդրկովկասյան մամուլում հրապարակվել է համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո, Ռուսաստանի դեմ պատերազմում նրան աջակցելու, Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու և Օսմանյան կայսրության ազդեցության ոլորտը դարձնելու թուրքական պետական ծրագրի իրագործմանը նպաստելու դիմաց Վրաստանը ճանաչվելու էր անկախ պետություն, նրան տրվելու էին հայկական ընդարձակ տարածքներ՝ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանները, ներառյալ՝ Սևանա լճի հյուսիսային առափնյա հատվածը[27]:

Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրության կառավարող շրջանակների հեռահար ծրագրերն ամբողջացվեցին 1916 թ., երբ Ցյուրիխում գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն հրատարակվեց ազգությամբ վրացու վերագրվող «Վրաստանը և պատերազմը» գրքույկը «Կովկասյան տուն» կամ ֆեդերացիա հիմնելու վերաբերյալ[28]:

Գրքույկի հեղինակը լիահույս էր, որ Կովկասի բոլոր ժողովուրդները կհամախմբվեին ռուսներին երկրամասից վտարելու համար, իսկ Վրաստանը Օսմանյան կայսրության ու նրա դաշնակիցների օգնությամբ կվերականգներ ավելի քան մեկ դար առաջ

---

[27]Տե՛ս ***Закарян А.*** Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.) // Историко-филологический журнал / НАН РА, 2005, № 3, с. 254–257.

[28]Տե՛ս Georgia and the War. Zurich, 1916: Գրքույկի հիմնական դրույթները Հովհաննես Հակոբյանի թարգմանությամբ և վերլուծությամբ տպագրվել են «Մշակ» թերթի 1917 թ. 197–204 համարներում:

կորցրած անկախությունը: Միևնույն ժամանակ օրինաչափ էր համարվում թուրքական պետությանը Կովկասում հարակից հողերի մի մասի բռնակցումը Թուրքիային՝ որպես հատուցում նրա ռազմական ծախսերի: Ուշագրավ է, որ 1917–1918 թթ. Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում[29] թուրքական պատվիրակությունը հենց այդ հիմնավորմամբ և 1914 թ. ռուս-թուրքական սահմանի վերականգնման պահանջին զուգահեռ բարձրացրեց նաև Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերը Թուրքիային վերա-

---

[29]Հաշտության բանակցությունները մի կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի, մյուս կողմից՝ Քառյակ միության երկրների միջև գերմանական զորքերի կողմից գրավված Բրեստ-Լիտովսկում տեղի են ունեցել 1917 թ. դեկտեմբերի 9 (22)-ից մինչև 1918 թ. փետրվարի 18 (մարտի 3)-ը՝ անցնելով երեք փուլ: Բանակցությունների տարբեր փուլերում խորհրդային և թուրքական պատվիրակությունները ղեկավարել են՝ Ադոլֆ Իոֆֆեն, Լև Տրոցկին, Գրիգորի Սոկոլնիկովը (Խորհրդային Ռուսաստան), Թալեաթ փաշան, Ահմեդ Նեսիմի բեյը, Հագգը փաշան (Օսմանյան կայսրություն):

Հայկական հարցը քննարկվել է բանակցությունների երկրորդ փուլում՝ 1917 թ. դեկտեմբերի 27 (1918 թ. հունվարի 9)-ից մինչև 1918 թ. հունվարի 28 (փետրվարի 10)-ը: Առաջին փուլում խորհրդային պատվիրակության անդամներ Լև Կամենևից, Անաստասիա Բիցենկոյից, Միխայիլ Պոկրովսկուց, Լևոն Կարախանից (քարտուղար), Միխայիլ Պավլովիչից (Վելտման) (պատվիրակության քաղաքական խորհրդական) բացի, նրա կազմում ընդգրկված են եղել նաև ազգային հարցերի գծով խորհրդականներ՝ Կարլ Ռադեկը, Պյոտր Ստուչկան, Վինցաս Միցկևիչ-Կապսուկասը, Ստանիսլավ Բոբինսկին: Որպես խորհրդական, Վլադիմիր Լենինի (Ուլյանով) ստորագրությամբ մանդատ էր ստացել Վ. Տերյանը:

Եթե գերմանական, ավստրո-հունգարական և բուլղարական պատվիրակությունները գործում էին անփոփոխ կազմով, ապա թուրքական պատվիրակության անդամների՝ արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմի բեյի, նախկին Մեծ վեզիր, այդ ժամանակ սենատոր և Գերմանիայում Թուրքիայի դեսպան Հագգը փաշայի հետ միասին բանակցությունների երկրորդ փուլին մասնակցում էին հեծելազորի գեներալ Ահմեդ Իզզեթ փաշան և կապիտան Հուսեին Ռաուֆ բեյը:

դարձնելու հարցը: «Կովկասյան տան» սահմաններում Հայաստանը որպես վարչաքաղաքական և աշխարհագրական հասկացություն վերացվելու էր, հայկական տարածքները տարրալուծվելու էին վրացական ու թաթարական գավառների կազմում, իսկ հայերին դրանց սահմաններում տրվելու էր միայն ազգային եկեղեցական-մշակութային ինքնուրույնություն[30]:

«Կովկասյան տան» գաղափարը, ըստ հայ պատմաբանների, հատկանշական էր Կովկասում ոչ միայն Թուրքիայի, այլ նաև կայզերական Գերմանիայի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից: Գերմանիայի Արևելյան քաղաքականության մեջ արդեն ձևավորվում էր Օսմանյան կայսրության և Ռուսաստանի սահմանին մի շարք մանր պետություններ ստեղծելու գաղափարը, որով գերմանական դիվանագետներն առաջնորդվելու էին նաև Գերմանիայի ու Ռուսաստանի միջև ընկած սահմանային գոտու կարգավորման հարցում:

Փաստորեն, Արևմտյան Հայաստանը հայաթափելուց ու նրա վրայով Կովկաս մտնելուց հետո թուրքերը վերացնելու էին նաև Արևելյան Հայաստանը, իսկ հայ բնակչությանը՝ տարրալուծելու էին Կովկասում ստեղծվելիք պետական միավորների մեջ: Նշանակում է, որ Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի, Օսմանյան կայսրության ու նրանց դաշնակիցների հաղթանակի դեպքում արևելահայությանը սպառնալու էր ձուլման ու կոտորածների վտանգը:

Նկատենք, որ «Կովկասյան տան» գաղափարն արդիական է նաև ժամանակակից Թուրքիայի համար, որը աշխարհաքաղաքական հարմար իրադրությունն օգտագործում է հետխորհրդային

---

[30]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 9, նաև՝ ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 102–103:

անդրկովկասյան տարածաշրջանում՝ Ադրբեջանում և Վրաստանում իր տնտեսական ու ռազմաքաղաքական ազդեցությունն ամրապնդելու, Հայաստանն ու Արցախը թուլացնելու և նվաճելու համար:

1915–1916 թթ. երիտթուրքական կառավարության անմիջական պատասխանատվությամբ արևմտահայերի նկատմամբ իրագործված Մեծ եղեռնը անխուսափելիորեն պարտադրեց միջազգային հանրությանը Հայկական հարցի բովանդակության մեջ ներառել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հիմնախնդիրները, որոնց թվում առաջնահերթորեն բարձրացվեց օսմանյան հանցագործ կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչներին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդիրը: Նախ՝ այն պաշտոնապես ձևակերպվեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթղթում՝ Ռուսաստանի նախաձեռնած և 1915 թ. մայիսի 24-ին հրապարակված անգլո-ֆրանս-ռուսական համատեղ հայտարարության մեջ, ապա արձանագրվեց Հայկական հարցին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերում:

Պատմագիտական ուսումնասիրություններում շեշտվում է, որ անգլո-ֆրանս-ռուսական համատեղ հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությանը տրված «նոր հանցագործություն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության» որակմամբ Անտանտի տերություններն այդ հանցագործության անձնական պատասխանատվությունը դնում էին թուրքական կառավարության բոլոր անդամների, տեղերում կառավարության այն ներկայացուցիչների վրա, ովքեր մեղսակից էին կոտորածին: Նրանք այդ արտահայտության մեջ ներառում էին ոչ միայն 1915 թ. սահմռկեցուցիչ դեպքերը, այլև 1894–1896 թթ. հայերի կոտորածները, որոնք Հայոց

մեծ եղեռնի նախերգանքն էին եղել[31]: Ստեղծված պայմաններում Արևմտյան Հայաստանի անջատումը Օսմանյան կայսրությունից կարող էր դիտվել իբրև քաղաքական պատասխանատվության իրացում ցեղասպանություն իրականացրած պետության նկատմամբ[32]:

Բարձրացնելով մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված հանցագործությունների համար ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, այս հայտարարությամբ կանխվեցին ոչ միայն «պետական գործողություն» հասկացությանը հղում կատարելու, այլև պետական մարմինների կատարած հանցագործությունների պատասխանատվությունը բացառապես պետության վրա դնելու և պետության անունից, պետական իշխանության ու միջոցների գործադրմամբ հանցագործություն կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունը շրջանցելու հնարավորությունները[33]:

Այսպիսով, հայաստանյան պատմաբանները Հայկական հարցի 1915–1916 թթ. պատմության ուսումնասիրությունն ամբողջացրել են երկու իմաստով. նախ՝ ցույց է տրվել, որ Հայաստանը և հայ ժողովուրդը վարչաքաղաքական վերաբաժանման էին ենթարկվելու անկախ այն բանից, թե որ ռազմաքաղաքական խմբավորումը՝ Անտանտը, թե՞ Քառյակ միությունը, կհաղթեր համաշխարհային պատերազմում, քանի որ նրանցից յուրաքանչյուրի մշակած հետպատերազմյան կարգավորման ծրագրում էլ ներառ-

---

[31]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 57–60:

[32]Տե՛ս ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 87.

[33]Տե՛ս ***Մարուքյան Ա.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 82:

ված էին արևմտահայկական տարածքների պատկանելության, սահմանների, կարգավիճակի և հայ բնակչության ճակատագրի հարցերը: Այնուհետև, Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման անգլո-ֆրանս-ռուսական և «Կովկասյան տան» թուրք-գերմանական ծրագրերի պատմահամեմատական վերլուծությամբ հիմնավորվում է այն տեսակետը, որ, չնայած իր զավթողական էությանը, այնուամենայնիվ, անգլո-ֆրանս-ռուսական ծրագիրը նախընտրելի էր թուրք-գերմանականից, քանի որ դրանում չէր դրվում հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հարց, ընդհակառակը, կարևորվում էր Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ թուրքական գերիշխանության դադարեցման անհրաժեշտությունը:

2. Հայկական հարցի 1917–1918 թթ. պատմության հիմնախնդիրների լուսաբանումը

Հայկական հարցի 1917–1918 թթ. պատմությունը բազմաշերտ է: Այն ներառում է 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից մինչև 1918 թ. Հայաստանի Հանրապետության հռչակումն ընկած ժամանակահատվածի հիմնահարցերը: Դրանց թվում կարևորվում են Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի և արևմտահայերի նկատմամբ Ռուսաստանի Ժամանակավոր ու խորհրդային կառավարությունների քաղաքականությունը, Հայկական հարցը դիվանագիտական և ռազմական միջոցներով լուծելու հնարավորություններն արդյունավետ օգտագործելու հայ ազգային-քաղաքական ուժերի կարողության վերագնահատումը:

Նշված հիմնահարցերի տրամաբանական շարունակությունը կազմում են 1917 թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նշանակության և իրագործման հնարավորությունների վերաարժևորումը, 1917–1918 թթ. Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության պետությունների միջև Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում, 1918 թ. մարտ–ապրիլին Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսում ու մայիս–հունիսին Բաթումի հայ-թուրքական բանակցություններում թուրքական նվաճողական նկրտումների բացահայտումը: Իսկ 1917 թ. ընթացքում, ապա 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության հռչակումից մինչև հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում Օսմանյան կայսրության և Դաշնակից տերությունների միջև զինադադարի ստորագրումն ընկած ժամանակահատվածում Ռուսաստանում, եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և Օսմանյան կայսրությունում հայկական ազգային ու պաշտոնական պատվիրակությունների գործունեության վերագնահատումը եզրափակում է պատմափուլի հիմնահարցերի վերլուծությունը:

Խորհրդային պատմագիտության մեջ վերոնշյալ հիմնահարցերի վերաբերյալ որևէ հիմնարար աշխատանք չի կատարվել. գլխավոր ուշադրությունը դարձվել է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի քաղաքական գնահատականի վրա: Ընդունելով Խորհրդային Ռուսաստանի համար այդ պայմանագրի պարտադրվածությունը և պայմանների ստորացուցիչ լինելը՝ այն բնորոշվել է որպես իմպերիալիստական տերություններից կորզված անհրաժեշտ դադարի պահ՝ նորաստեղծ խորհրդային իշխանության դիրքերը

թե՛ երկրի ներսում, թե՛ միջազգային ասպարեզում ամրապնդելու համար[34]:

Միևնույն ժամանակ «մոռացության» է տրվել բանակցություններում քննարկման առարկա դարձած Հայկական հարցը, շրջանցվել են Հայաստանին և Անդրկովկասին վերաբերող փաստաթղթերն ու նյութերը: Բացի այդ, հպանցիկ են արծարծվել թուրքական զավթողական նկրտումները և գերմանական դիվանագիտական աջակցությունը դրանց, Խորհրդային Ռուսաստանի կառավարության զիջումների քաղաքականությունը, չի ներկայացվել ու արժևորվել դիվանագիտական հնարքների թուրքական զինանոցը, չեն հիշատակվել բանակցությունների տարբեր փուլերում խորհրդային և թուրքական պատվիրակությունների հանձնաժողովների համատեղ բանակցությունների չորս նիստերն ու հարցադրումները, հաշտության պայմանագրի թուրքական պայմանների նախագիծն ու 1918 թ. փետրվարի 18 (մարտի 3)-ին կնքված ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագիրը: Խորհրդային հետազոտողները բավարարվել են միայն Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների վերջնական արդյունքի արձանագրումով: Այն է՝ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում մի կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի և մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի ու Բուլղարիայի միջև կնք–ված հաշտության պայմանագրով Թուրքիային անցան Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերը:

Հաշտության բանակցություններում թուրքական գործոնի, նաև խորհրդա-թուրքական դիվանագիտական քննարկումների նշանակության թերագնահատումը նկատի ունենալով՝ Հ. Ավետիս-

---

[34]Այս մասին տե՛ս ***Махмурян Г.*** Брестский мир 1918 г. в оценке современников и армянской историографии // Историко-филологический журнал / НАН РА, 2012, № 2, с. 46–62.

յանը Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին և պայմանագրին խորհրդային պատմագիտության մեջ տրված գնահատականն արդարացիորեն բնութագրում է որպես «պատմական ճշմարտության կեղծիք, նահանջ պատմականությունից, հրաժարում պատմության անաչառ շարադրանքից»[35]:

Հայաստանի Հանրապետության պատմագիտական միտքը, անմասն չլինելով նախկին խորհրդային հանրապետություններում ընթացող պատմական անցյալի վերաարժևորման գործընթացից, վերանայման ենթարկեց հայոց պատմության շարադրման մեջ արմատավորված գաղափարաքաղաքական կարծրատիպերը: Մասնավորապես, վերագնահատվեց 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած հոկտեմբերյան իրադարձությունների նշանակությունը հայ ժողովրդի և Հայկական հարցի պատմության մեջ, վերանայվեց Հայկական հարցում Ռուսաստանի ցարական, Ժամանակավոր ու խորհրդային կառավարությունների վարած քաղաքականությանը տրված գնահատականը: Բացի այդ, համակողմանիորեն ներկայացվեցին հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից, ինչպես նաև մեծ տերությունների դիվանագիտական շրջանակներում մշակված ծրագրերը Հայկական հարցի լուծման վերաբերյալ՝ վեր հանելով Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի բովանդակության առանձնահատկությունները:

1991–2015 թթ. Հայկական հարցի 1917–1918 թթ. բազմաշերտ պատմությունն առանձին ուսումնասիրության առարկա է դարձել մի շարք պատմաբանների աշխատություններում (Հ. Ավետիսյան, Գ. Գալոյան, Վ. Մելիքյան, Գ. Մախմուրյան, Լ. Հովհաննիսյան, Ա. Մարուքյան, Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան): Դրանցում ժամանակահատվածի իրադարձությունները լուսաբանված են միջազգային-քա-

---

[35] ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 43:

ղաքական իրադրության, Հայկական հարցում մեծ տերությունների շահերի ու հակասությունների, Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության, նաև Հայոց ցեղասպանության ու դրա հետևանքների հաղթահարման հիմնահարցերի տեսանկյունից:

Պատմագիտական վերլուծությունները հիմնված են բազմալեզու արխիվային փաստաթղթերի ուսումնասիրման և համադրման արդյունքների վրա: Նշենք, որ այդ վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում հայաստանյան և արտասահմանյան արխիվներում հայ պատմաբանների երկարատև պրպտումների արդյունքում հայտնաբերված ու գիտական շրջանառության մեջ դրվածները: Պատմագիտական աշխատություններում նաև հաշվի են առնված Հայկական հարցի վերաբերյալ սփյուռքահայ, եվրոպական, ամերիկյան և թուրքական արդի պատմագիտության տեսակետները: Թե՛ փաստերը և թե՛ այդ տեսակետներն արժևորված են գիտական անաչառության դիրքերից: 1917 թ. ապրիլի 25-ի (մայիսի 8-ի) «Պատերազմի իրավունքով նվաճված Թուրքահայաստանի մարզերի կառավարման մասին»[36] Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության որոշումը հայաստանյան պատմագիտության մեջ գնահատված է որպես «երկրամասը բնականոն վիճակի բերելուն», այսինքն՝ հայերի ու մահմեդական բնակչության միջև հավասարակշռություն ապահովելուն ուղղված քայլ՝ որպես ցարական իշխանությունների՝ «Հայաստանն առանց հայերի» քաղաքականության շարունակություն: Որ-

[36]Տե՛ս ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 1, թ. 3–20: Տե՛ս նաև՝ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, т. 1, док. № 298, 300, с. 296–297, 298. Այդ որոշմամբ Արևմտյան Հայաստանի քաղաքացիական կառավարումը վերցվել է կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների իրավասությունից և անմիջականորեն դրվել Ժամանակավոր կառավարության տնօրինության ներքո:

պես հիմնավորում մատնանշված են մայիսի 15-ին Ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի Ընդհանուր կոմիսարին տրված ցուցումները, ըստ որոնց, չկանխորոշելով Հայաստանի ապագա աշխարհագրական-քաղաքական սահմանները, Ասիական Թուրքիայի՝ պատերազմի իրավունքով նվաճված մարզերից զուտ հայկական էին համարվելու միայն Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները: Այնուհետև, ելնելով երկրի տնտեսության վերականգնման անհրաժեշտությունից, ինչպես նաև հանուն արդարության, առաջնորդվելով թուրքերի կազմակերպած կոտորածների ու բռնագաղթի հետևանքով հայերի ոտնահարված իրավունքները վերականգնելու շահով, նախատեսվում էր անհապաղ միջոցներ ձեռք առնել այդ մարզերը Ռուսաստան գաղթած հայերով վերաբնակեցնելու ուղղությամբ՝ հավասարապես չարգելելով նաև այլ երկրներում ապաստանած նախկին թուրքահպատակ հայերի վերադարձը նշված տարածքներ: Բացի այդ, տեղում մնացած թուրքերի, քրդերի ու լազերի համար որևէ բարդություն չառաջացնելու, թիկունքի ռազմական անվտանգության ու ազգամիջյան հնարավոր բարդությունները կանխելու նպատակով նախատեսվում էր առանց հատուկ կարգադրության չթույլատրել թուրքական զորքի հետ հեռացած թուրքերի, քրդերի և լազերի վերադարձը[37]:

Փաստորեն, 1916–1917 թթ. ռուսական պետության սահմաններում ստեղծվում էր երկու Հայաստան, այնպես, ինչպես 1878 թ. կազմավորվել էր Կարսի մարզը, թեև այդ ժամանակ Անդրկովկասը բաժանված էր հինգ նահանգների, որոնցից երեքի՝ Երևանի, Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգների սահմաններում ընդգրկված էին արևելահայկական տարածքները: Միակ տարբերությունն այն

[37]Տե՛ս ***Ռոստոմ***, Նամականի: (Մահուան ութսունամեակին առթիւ), Պէյրութ, 1999, էջ 635, ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 15:

էր, որ եթե 1916 թ. ցարական կառավարությունն արգելում էր գաղթական հայերի վերաբնակությունն Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում, ապա Ժամանակավոր կառավարությունը համաձայնեց թույլատրել, որ հայերը բնակվեին իրենց Հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Պատմագիտական աշխատություններում նշված է, որ ռուսական իշխանությունների համար, անկախ վարչակարգի փոփոխությունից, նախընտրելի էր փոքր, բայց հանգիստ ու անվտանգ Հայաստան ունենալը: Վ. Մելիքյանի կարծիքով, Արևմտյան Հայաստանի ինքնուրույն՝ Կովկասից առանձին վարչական միավորի ստեղծումը «հին, ցարական քաղաքականության տարատեսակն էր»: Միևնույն ժամանակ դա Կովկասյան ռազմաճակատը փրկելու միակ ելքն էր. անհրաժեշտ էր ռազմաճակատի հոգսերի ծանրությունը փոխադրել տեղաբնակների վրա, քանի որ ռուս զինվորը հոգնել էր և այլևս չէր ուզում կռվել[38]: Այս առիթով բնութագրական է ռուսական պետական գործիչ, 1905–1915 թթ. Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովի դիրքորոշումը. նկատի ունենալով հայերի մարտական ոգին՝ նա նշում էր, որ 4–5 հազար կամավորներ Ռուսաստանի համար վտանգ ներկայացնել չեն կարող, երբ կռվում են ճակատային առաջին գծում: Բայց Ի. Վորոնցով-Դաշկովն անհանգստանում էր, որ նրանք կարող էին վտանգավոր տարր դառնալ, եթե առանձնացվեին զորքի շարքերից և կուտակվեին թիկունքում: Հետևաբար, տեղին էր համարում «այդ ռումբ նետողներին» պահել կռիվների մեջ ու հետագայում նրանց

---

[38]Տե՛ս ***Մելիքյան Վ. Հ.*** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 149, 150, ***Պողոսյան Սկր., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 23–26, ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 12–13:

ռազմական ներուժն օգտագործել Թուրքիայի դեմ պայքարում: Ավելին, նույնիսկ առաջարկում էր Վանն էլ վերադարձնել թուրքերին, քան թե հայ կամավորական ջոկատներով «հուզել» Անդրկովկասի ներքին կյանքը[39]:

Անշուշտ, գիտական անաչառության դրսևորում է քննադատական մոտեցումը Ժամանակավոր կառավարության քաղաքականությանն Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ:

Միևնույն ժամանակ 1991–2015 թթ. հայաստանյան պատմագիտության մեջ ընդգծված է, որ հայաթափված ու թուրքական բազմադարյա տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանն այդ քաղաքականության շնորհիվ ստացավ առանձին վարչական միավորի կարգավիճակ ռուսական պետության սահմաններում՝ աշխարհասփյուռ հայերի համար ազգահավաքման կենտրոն դառնալու հեռանկարով[40]: Սակայն հարկ է նշել, որ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանն աստիճանաբար կորցրեց իր ազդեցիկ դերն Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում, ինչի վկայությունը Սեն-Ժան-դե Մորիենի անգլո-ֆրանսիտալական համաձայնագրի կնքումն էր առանց Ռուսաստանի մասնակցության[41]: Իսկ նույն թվականի վերջին Ժամանակավոր

---

[39]Տե՛ս ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 5–6:

[40]Տե՛ս ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 197–254; ***Մելիքյան Վ. Հ.*** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 154–155, ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 124–132:

[41]Այս մասին տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 98, ***Գալոյան Գ.*** Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917

կառավարության տապալմամբ իշխանության եկած բոլշևիկներն արմատապես փոխեցին ռուսական պետության դիրքորոշումը թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Կովկասյան ռազմաճակատի և թե՛ Դաշնակիցների[42] նկատմամբ, ինչի հետևանքով ձախողվեց Հայկական հարցի լուծումը[43]:

Շահագրգռված լինելով ընդլայնելու իրենց ազդեցության ոլորտներն ի հաշիվ Ռուսաստանի, նաև նսեմացնելու պատերազմում Դաշնակիցների հաղթանակն ապահովելու գործում Ռուսաստանի դերը և կանխելու նրա ռազմաքաղաքական հավակնությունները՝ Լոնդոնի ու Փարիզի կառավարությունները կարող էին Ռուսաստանին դուրս թողնել «խաղից», եթե վերջինս չվերանայեր իր ռազմական գործողությունների ակտիվությունը պատերազմական ռազմաճակատներում: Ա. Մարուքյանի համոզմամբ, այս պայմանների ազդեցությամբ է, որ Ռուսաստանի Ժամանակավոր կա-

---

թ.), էջ 692–693: 1917 թ. օգոստոսին համաձայնագիրը վավերացվեց առանց Ռուսաստանի մասնակցության և համաձայնության, թեև դա նախատեսված էր փաստաթղթի տեքստով: Նույն թվականին տեղի ունեցած հոկտեմբերյան իրադարձությունների, դրանց արդյունքում Ռուսաստանի արտաքին քաղաքականության կուրսի կտրուկ փոփոխության պատճառով ռուսական կառավարության կողմից Սեն-Ժան-դե Մորիենի համաձայնագրի վավերացման հարցը հանվեց միջազգային դիվանագիտական քննարկումների օրակարգից: Պատահական չէ, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Իտալիան Զմյուռնիայի, իսկ Ֆրանսիան Կիլիկիայի նկատմամբ իրենց հավակնություններն արտահայտում էին անթաքույց ինքնավստահությամբ:

[42]Անտանտի տերությունները և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանց միացած 22 պետությունները, այդ թվում՝ Իտալիան, Ճապոնիան ու ԱՄՆ-ը:

[43]Տե՛ս ***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, էջ 41, նաև՝ ***Կարապետյան Հ.*** Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում / Խմբ. Ա. Հարությունյան, Երևան, 2004, էջ 8–9:

ռավարությունը Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էլզաս-Լոթարինգիայի և Արևմտյան Հայաստանի հարցում որդեգրեց «հաշտություն առանց զինագրավումների ու ռազմատուգանքների՝ ժողովուրդների ինքնորոշման հիման վրա» զգուշավոր մոտեցումը՝ նպատակ ունենալով նշված տարածքները վերածել բուֆերային կամ անվտանգության գոտիների Գերմանիայի ու Ռուսաստանի, Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև: Արևմտյան Հայաստանն այդ նույն դերը կարող էր կատարել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ազդեցության գոտիների միջև՝ 1915–1916 թթ. նշված պետությունների ստորագրած գաղտնի համաձայնագրերի իրագործման դեպքում, իսկ Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաստանին չտրվելու դեպքում Արևմտյան Հայաստանը կծառայեր իբրև բուֆեր նրա ու Թուրքիայի միջև[44]:

Այս առիթով Ա. Մարուքյանը հատկանշական է համարում Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարար Միխայիլ Տերեշչենկոյի պնդումը, թե Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաստանին չտրվելու դեպքում անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերը վերջինիս համար վտանգավոր կարող էին դառնալ Փոքր Ասիայում ռուս-անգլիական, ռուս-ֆրանսիական և ռուս-իտալական հակասությունների սրման տեսանկյունից: Հետևաբար, ելնելով Ռուսաստանի կենսական շահերից, դիվանագետն Արևմտյան Հայաստանի հարցում ևս նախընտրելի էր համարում ինքնորոշման սկզբունքի կիրառումը[45]: Պատմաբանի գնահատմամբ, դա, ըստ էության, նշանակում էր Ռուսաստանի վերադարձ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության քաղաքականությանն այն հաշ-

---

[44]Տե՛ս ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 325–399.

[45]Տե՛ս նույն տեղում, էջ 374–375:

վով, որ վերջինիս դաշնակից տերություններն էլ չկարողանային Ասիական Թուրքիայում իրենց հետաքրքրող տարածքների համար պահանջել ավելին, քան դրանց ինքնավարությունը կայսրության սահմաններում այնքան ժամանակ, քանի դեռ լուծված չէր Կոստանդնուպոլսի և սևծովյան նեղուցների հարցը:

Անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերի իրագործումը կախման մեջ դնելով սևծովյան նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը Ռուսաստանին հանձնելու պահանջից՝ Ժամանակավոր կառավարությունը, ըստ էության, ակնարկում էր, որ առանց ստանալու Ռուսաստանի տնտեսության զարգացման և արտաքին անվտանգության ամրապնդման տեսանկյունից կարևոր այդ տարածքները, իմաստ չէր տեսնում պաշտպանելու Արևմտյան Հայաստանը: «Օբյեկտիվորեն, Արևմտյան Հայաստանը դարձավ լոկ միջոց Ռուսաստանի համար՝ հասնելու բաղձալի նպատակին՝ նեղուցների և Կ. Պոլսի տիրապետությանը, իսկ նպատակի բացակայության պայմաններում միջոցը (այսինքն՝ Արևմտյան Հայաստանին տիրելը կամ նրա նկատմամբ Ռուսաստանի վերահսկողությունը հաստատելը – Լ. Հ.) կորցրել էր իր նշանակությունը»[46],– նկատում է Ա. Մարուքյանը և հավելում, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան, ակնհայտորեն, մերժելու էին Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը և Ռուսաստանին զրկելու էին այդ տարածքից: Այս իմաստով պատմաբանն իրատեսական ու հեռատես է համարում Ռուսաստանի ռազմական նախարար Ալեքսանդր Վերխովսկու առաջարկը՝ պահպանել գոնե Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանները, որոնք ոչ միայն փաստացիորեն պատկանում էին Ռուսաստանին, այլև նրան էին հանձնվելու պատերազմից հետո, ըստ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի

[46]Նույն տեղում, էջ 376:

համաձայնագրերի: Ավելին, նա ընդգծում է, որ Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքն իրացվելու պարագայում Հայկական հարցը կլուծվեր հայ ազգային շահերին ու ակնկալիքներին համահունչ. Արևմտյան Հայաստանը կստանար ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո: Միևնույն ժամանակ Արևմտյան Հայաստանի հարցում Մ. Տերեշչենկոյի «Ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքը գնահատվում է որպես բախտախնդրություն, քանի որ Արևմտյան Հայաստանի ինքնորոշման պատրվակով Օսմանյան կայսրության մասնատումը կանխելով՝ Ռուսաստանը վտանգելու էր թե՛ արևմտահայկական հողերի և թե՛ հայ ժողովրդի ապագան[47]:

Վ. Մելիքյանի դիտարկմամբ՝ արդեն 1916 թ. երկրորդ կեսին և 1917 թ. սկզբին Հայկական հարցը չուներ իր պատմության նախորդ ժամանակաշրջաններին բնորոշ միջազգային, դիվանագիտական բնույթը. այն դարձել էր ազգային բարդ ու հակասական խնդիրներով պայմանավորված ներքին՝ Հայոց հարց[48]:

Հղում կատարելով դիվանագիտական փաստաթղթերին՝ պատմագիտական աշխատություններում նշվում է, որ հայ ազգային-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի լավագույն լուծում էր ընդունվում թուրքական տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանի բռնակցումը Դաշնակիցների կողմից: Փաստացիորեն, դա ռուսական բռնակցումն էր, քանի որ Արևմտյան Հայաստանը զինագրավված էր ռուսական պետության կող-

---

[47]Տե՛ս նույն տեղում, էջ 376–378:

[48]Տե՛ս ***Մելիքյան Վ. Հ.*** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 156–157, ***նույնի՝*** Հայաստանը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո // Հայոց պատմություն, հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), էջ 555–556:

մից:

Այս առիթով ուշագրավ է 1916 թվականից Մոսկվայում լույս ընծայվող «Армянский вестник» շաբաթաթերթի խմբագիր Ալեքսեյ Ջիվելեգովի հայտարարությունը, որը նա 1917 թ. հոկտեմբերի 22-ին հնչեցրել է Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության խորհրդի նիստում. «Ռուսաստանը հիմք չունի հայերին կասկածելու բանսարկությունների մեջ, որովհետև հույս ունի, որ ռուսական դեմոկրատիան կպաշտպանի Տաճկահայաստանի ազատությունը: Այդժամ վերջինս իր հզոր ձայնով ընդմիշտ կամրապնդի բարոյական կապը Տաճկահայաստանի և Ռուսահայաստանի միջև մի կողմից, իսկ մյուս կողմից՝ իր և ռուսական ժողովրդավարական հանրապետության հետ»[49]: Ինչ վերաբերում է Դաշնակից երկրներից նյութական և զինվորական օգնություն ստանալու հայ ազգային-քաղաքական շրջանակների ակնկալիքներին, ապա Հ. Ավետիսյանը նշում է, որ վերջիններս լոկ վերացական խոստումներ էին տալիս, կոնկրետ օգնությունը բացակայում էր, աստիճանաբար մեծանում էր Արևմտյան Հայաստանը Ռուսաստանից անջատելու մղումը[50]: Հարցն այն է, որ Ժամանակավոր կառավարությունը մի կողմից՝ բռնակցման գաղափարին դեմ լինելու և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը պաշտպանելու, մյուս կողմից զինագրավումները շարունակելու և Արևմտյան Հայաստանի ինքնավարության համար երաշխիքներ տալուց խուսափելու իր քաղաքականությամբ վստահություն չէր ներշնչում հայ ազգային-քաղաքական շրջանակներին, չնայած, որ նրանց քննարկումների օրակարգում էր Հայկական հարցի լուծման Ռուսաստանի հետ անմիջականորեն կապված երեք տարբերակ. Արևմտյան Հայաստանի ռուսական զի-

---

[49]Քաղվածքն ըստ ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 40:

[50]Տե՛ս նույն տեղում:

նագրավում, ռուսական պետության սահմաններում նրա ազգային ինքնավարություն և Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Դաշնակից տերությունների միջազգային վերահսկողության ներքո:

Պատահական չէ, որ Հայկական հարցը եվրոպական կառավարող շրջանակներում բարձրացնելու նպատակով դեռևս 1912 թ. կազմված Ազգային պատվիրակության ղեկավար Պ. Նուբարի կողմից Հայկական հարցի վերաբերյալ շրջանառության մեջ դրված ծրագիրը նախատեսում էր Թուրքիայի հայկական բոլոր հողերի՝ Կովկասից մինչև Միջերկրական ծով՝ ներառյալ առափնյա Ալեքսանդրետ ու Մերսին նավահանգիստները, միավորում մեկ պետության կամ համաեվրոպական համագործակցության՝ հայկական պետության ներքին կյանքին սահմանափակ միջամտություն ենթադրող ժամանակավոր հովանավորության ներքո և ինքնավար, այնուհետև Անկախ ու Միացյալ Հայաստանի ստեղծում:

Ըստ Պ. Նուբարի, Հայաստանը պետք է լիներ անկախ պետություն՝ Շվեյցարիայի նման հավիտենական չեզոքությամբ: Դա համապատասխանում էր արևմտահայկական տարածքների իրավական կարգավիճակի հարցն Արևելյան Հայաստանի հարցից առանձին քննարկելու՝ հայ հասարակական-քաղաքական ուժերի սկզբունքային դիրքորոշմանը[51]: Միաժամանակ Պ. Նուբարն ընդգծում էր արևմտահայկական հողերի և Կիլիկիայի միասնությունը՝ ի հակադրություն անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրե-

---

[51]Տե՛ս ***Մելիքյան Վ. Հ.*** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 177–180, նաև՝ ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 40, ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 44–45, ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 15–16:

րի, որոնք նախատեսում էին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի բաժանում Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև[52]:

Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերի 25 (նոյեմբերի 7)-ի հեղաշրջման հաղթանակից մինչև 1918 թ. նոյեմբերի 11-ին Քառյակ միության պետությունների պարտությամբ և Դաշնակիցների ռազմական հաղթանակով Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ընկած ժամանակահատվածը հայաստանյան պատմագիտության մեջ դիտարկվում է որպես Հայկական հարցի պատմության առանձին փուլ, որն իր բովանդակությամբ տարբերվում է հիմնախնդրի պատմության նախորդ ու հաջորդ ժամանակահատվածներից: Ընդգծվում է, որ վերոնշյալ պատմական իրադարձությունները ուղղակիորեն ազդեցին Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների ընթացքի վրա, իսկ վերջիններիս արդյունքները որոշիչ եղան Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդի արևմտյան հատվածի ճակատագրում: Գիտական այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակը ոչ միայն շեղեց ռուսական բազմազգ պետությունն իր պատմական զարգացման բնականոն ընթացքից, այլև էապես ազդեց թե՛ 1919–1945 թթ. միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման և թե՛ նրա գոյության ժամանակաշրջանում ծավալվող միջազգային հարաբերությունների վրա:

Ռուսաստանի խորհրդային իշխանությունն իր արտաքին ու ազգային քաղաքականության հիմքում դրել էր 1917 թ. հոկտեմբե-

---

[52]Տե՛ս ***Պողոսեան Ս.*** Պողոս Նուբար փաշա: Ազգային գործիչը / Գիտ. խմբ. Մ. Կարապետյան, Ս. Դանիելյան, Երևան, 2004, էջ 127–128, ***Հովհաննիսյան Լ.*** Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1917 թվականին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 11 / Խմբ. խորհ. Ա. Ա. Մելքոնյան, Կ. Հ. Խաչատրյան, Երևան, 2010, էջ 252–253:

րի 26 (նոյեմբերի 8)-ի «Հաշտության մասին» հրովարտակը, նոյեմբերի 2 (15)-ի հռչակագիրը «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին», 1918 թ. հունվարի 12 (25)-ի «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների հռչակագիրը» և մի քանի այլ իրավական ակտեր:

«Հաշտության մասին» հրովարտակը խորհրդային իշխանության առաջին իրավական ակտերից էր և արտաքին քաղաքական ծրագրային փաստաթուղթ, որում պատերազմող բոլոր ժողովուրդներին ու կառավարություններին առաջարկվում էր անհապաղ սկսել բանակցություններ՝ առանց զինագրավումների և ռազմատուգանքների արդարացի ու ժողովրդավարական հաշտություն կնքելու նպատակով[53]:

«Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրով սահմանվում էր ազգային քաղաքականության չորս սկզբունք՝ Ռուսաստանի ժողովուրդների հավասարություն և ինքնիշխանություն, Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունք, ընդհուպ մինչև անջատում և ինքնուրույն պետությունների կազմում, բոլոր ազգերի և ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացում, Ռուսաստանի տարածքում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի ազատ զարգացում[54]:

Այսպիսով, «Հաշտություն առանց զինագրավումների» բոլշևիկյան սկզբունքը վերաբերում էր ոչ միայն պատերազմի իրավունքով գրավված տարածքներին, այլև՝ պետությունների կողմից այլ ազգային տարածքների նկատմամբ բռնի ուժի գործադրումն

---

[53]Տե՛ս Декреты советской власти / Сборник материалов и документов / В 2-х томах, т. I (25 октября 1917 г.–16 марта 1918 г.). М., 1957, док. № 11, с. 12–16.
[54]Տե՛ս Документы внешней политики СССР, т. 1 (7 ноября 1917 г.–31 декабря 1918 г.) / Ред. кол.: И. Н. Земсков и др. М., 1959, док. № 3, с. 14–15.

արգելելուն: Ավելին, այդ սկզբունքը և դրան անմիջականորեն կապված՝ «բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչումը, ընդհուպ մինչև լիակատար անկախություն», ենթադրում էին ոչ միայն պատերազմող երկրների կողմից ռազմական գործողությունների ընթացքում գրավված տարածքների վերադարձ, այլև՝ առանց բացառության, բոլոր ժողովուրդների ազատություն և հնարավորություն՝ ինքնուրույն որոշելու՝ ունենալ անկախ պետություն՞ն, թե՞ լինել որևէ պետության կազմում: Այս դիրքորոշումը վերաբերում էր և՛ Լեհաստանին, և՛ Ֆինլանդիային, և՛ Կուռլանդիային, և՛ Ուկրաինային, և՛ Արևմտյան Հայաստանին: Դրանով իսկ այն հակադրվում էր տարածքների բաժանման և վերաբաժանման՝ մեծ տերությունների ավանդական քաղաքականությանը՝ հզոր հարված հասցնելով 1815–1918 թթ. միջազգային հարաբերությունների Վիեննայի համակարգին:

Համաշխարհային պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանի ռուսական զինագրավումը, որն իրավական ձևակերպում էր ստացել Օսմանյան կայսրության ասիական տիրույթների մասնատման վերաբերյալ Անտանտի տերությունների գաղտնի համաձայնագրերում, ևս չէր համապատասխանում բոլշևիկյան արտաքին քաղաքականության փիլիսոփայությանը:

Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը 1917 թ. նոյեմբերի 8 (21)-ին հատուկ հուշագրով ծանուցեց, որ «Հաշտության մասին» խորհրդային կառավարության հրովարտակը բոլոր ռազմաճակատներում անմիջապես զինադադար կնքելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկություն է: Դա բնավ չազդեց Ռուսաստանին դաշնակից պետությունների՝ պատերազմը մինչև հաղթական ավարտ հասցնելու վճռականության վրա, քանի որ դեռևս 1917 թ. ապրիլի 6-ին չեզոք ԱՄՆ-ի մուտքը պատերազմ կանխորոշել էր, թե Մեծ

Բրիտանիան ու Ֆրանսիան ո՞ր պետության ռեսուրսներով էին փոխարինելու Ռուսաստանի զինուժը: Ավելին, Դաշնակիցները և բոլոր բանիմաց քաղաքական ուժերն այլևս չէին կասկածում, թե ռազմաքաղաքական որ ճամբարն էր հաղթելու պատերազմում:

Քառյակ միության երկրները, անշուշտ, համաձայն էին ընդունել հետպատերազմյան կարգավորման վերաբերյալ խորհրդային իշխանության սկզբունքներն այն պայմանով, որ դրանք նախևառաջ ընդունեին Դաշնակից պետությունների կառավարությունները: Վերջիններիս համար, սակայն, Խորհրդային Ռուսաստանի առաջարկություններն անընդունելի էին, քանի որ դրանց հիմքում դրված սկզբունքները, այդ թվում՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, տարածվում էին նաև բրիտանական ու ֆրանսիական գաղութների վրա: Պատահական չէ, որ Լոնդոնում և Փարիզում որոշվեց հավատարիմ մնալ պատերազմը մինչև հաղթական ավարտ մղելու դաշնակցային պարտավորությանը: Դրան հետևեց խորհրդային կառավարության կոչն աշխարհի «բոլոր բանվորներին, զինվորներին և գյուղացիներին», որով նա իր վրա էր վերցնում հաշտության անջատ բանակցությունների համար պատասխանատվությունը, ավելին, սկսում էր Անտանտի պետությունների դիվանագիտական գաղտնի փաստաթղթերի հրապարակումը[55]:

Այսպիսով, Հայկական հարցի լուծումը տեղափոխվում էր նոր հարթություն՝ Ռուսաստանի խորհրդային իշխանության հռչակած ազգային և արտաքին քաղաքական սկզբունքների ոլորտ: Հետևաբար, փոփոխման ենթակա էր նաև Հայկական հարցի բովանդակությունը՝ պայմանավորված խորհրդային իշխանության նկատմամբ հայ ազգային-քաղաքական շրջանակների վերաբերմունքով, Խորհրդային Ռուսաստանի ու Քառյակ միության երկրնե-

[55]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 27:

րի միջև անջատ հաշտության բանակցությունների ընթացքով, ինչպես նաև միջազգային-քաղաքական նոր իրադրության նկատմամբ Արևմուտքի դիրքորոշմամբ[56]:

«Հաշտություն առանց զինագրավումների» սկզբունքը նշանակում էր, որ խորհրդային իշխանությունը հրաժարվում էր Ռուսաստանին բռնակցել պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունից ռուսական զորքերի նվաճած Արևմտյան Հայաստանը:

---

[56]Ռուսաստանի բոլշևիկյան իշխանության կողմից ցարական և Ժամանակավոր կառավարությունների գաղտնի դիվանագիտական փաստաթղթերի, մասնավորապես՝ Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուս-իտալական գաղտնի համաձայնագրերի հրապարակումն առաջացրեց միջազգային հանրության զայրույթը և համաշխարհային պատերազմին մասնակցող պետությունների զավթողական նպատակների ու քաղաքականության բուռն դատապարտման ալիք, որոնք, չնայած Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքական սկզբունքների նկատմամբ Դաշնակից տերությունների անհանդուրժող վերաբերմունքին, վերջիններիս մղեցին մտնելու մրցակցության մեջ ու նոր թափով ընդգծելու ճնշված ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազատագրության և ինքնորոշման հիմնախնդիրները, ու դրանցով արդարացնելու ընթացող արյունալի պատերազմը:

Փաստորեն, իրար հակադիր միջազգային երկու համակարգերը՝ խորհրդային բազմազգ պետությունն ու լիբերալ Արևմուտքը, կանգնեցին ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պաշտպանության դիրքերում: Պատահական չէ, որ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը միաժամանակ առաջ քաշվեց և՛ խորհրդային պետության հիմնադիր Վլ. Լենինի, և՛ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի հեղինակած հետպատերազմյան աշխարհի կարգավորման ծրագրերում:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաչելու և հարգելու հարցադրումն աշխարհում ընթացող քաղաքական զարգացումների և նոր իրավագիտակցության մշակման հետ էական ազդեցություն ունեցավ հետպատերազմյան աշխարհակարգի ձևավորման վրա: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը դարձավ ոչ միայն քաղաքական իմպերատիվ, այլև՝ միջազգային իրավունքի նորմ:

Բայց դա չէր նշանակում երկրամասի վերադարձ կայսրությանը: Ընդհակառակը, Արևմտյան Հայաստանի բնակչությանը տրվում էր ազատ ինքնորոշման հնարավորություն՝ հանրաքվեի միջոցով վճռելու Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակը: Հավելենք, որ խորհրդային իշխանության հռչակած սկզբունքները ենթադրում էին նաև Արևելյան Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչում:

Տնտեսապես քայքայված ու հեղափոխական ցնցումներից ուշքի չեկած Ռուսաստանի խորհրդային իշխանության պաշտոնական դիրքորոշումը պատերազմի և հաշտության հարցերում ողջունելի էր Քառյակ միության բոլոր պետությունների համար: Մասնավորապես՝ Օսմանյան կայսրությանը ոգևորում ու համաթուրքական ձախողված ծրագիրն իրագործելու հույս էր ներշնչում մինչև Համառուսական Սահմանադիր ժողովի հրավիրումը գործելու նպատակով բազմազգ ու բազմակուսակցական հենքի վրա Անդրկովկասում ձևավորված գործադիր նոր իշխանության՝ Անդրկովկասյան կոմիսարիատի 1917 թ. նոյեմբերի 15-ի հայտարարությունը Խորհրդային Ռուսաստանից անջատ գործելու վերաբերյալ: Պատահական չէ, որ դրանից երկու օր անց՝ նոյեմբերի 17-ին, հենց Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքի հրամանատարությունը, հանձին 3-րդ բանակի հրամանատար Ֆերիք Մահմեդ Վեհիբ փաշայի, հանդես է գալիս զինադադարի առաջարկությամբ:

1917 թ. դեկտեմբերի 5 (18)-ին ստորագրվում է Երզնկայի ռուս-թուրքական զինադադարը, ըստ որի, Կովկասյան ռազմաճակատի համար պարտադիր են դառնում Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների պատվիրակությունների միջև 1917 թ. դեկտեմբերի 2-ին կնքված զինադադարի պայմանների բոլոր կետերը: Ըստ դրա, զինադադարի կնքման պահից սկսած դա-

դարեցվում են մարտական գործողությունները ոչ միայն Սև ծովից մինչև Վանա լճի հարավային ափի շրջանները տեղակայված զորքերի միջև, այլև՝ Կովկասյան-պարսկական ճակատում ու Սև ծովի վրա: Զինադադարի այս պայմանն արդեն իսկ վկայում է, որ կենտրոնից անջատ գործելու՝ Անդրկովկասյան կոմիսարիատի դիրքորոշումը միջազգային իրավական որևէ ազդեցություն չէր ունենալու Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության պետությունների միջև հաշտության բանակցությունների ընթացքում ռուս-թուրքական տարածքային-սահմանային հարցերի, այդ թվում Արևմտյան Հայաստանի հարցի քննարկման ընթացքի ու արդյունքների վրա, քանի որ երկրամասը դեռևս խորհրդային պետության կազմում էր, որպես նրա վարչաքաղաքական միավոր:

Երզնկայի զինադադարի պայմաններից Հ. Ավետիսյանն առանձնացնում է 11-րդ դրույթը, ըստ որի՝ թուրքական հրամանատարությունը պարտավորվում էր ջանքեր գործադրել ու ստիպել քրդերին կատարելու զինադադարի պայմանները: Քրդերի թշնամական գործողությունների դեպքում ռուսական զորքն իր սահմանագծում նրանց վերաբերվելու էր որպես Ռուսաստանի իշխանությունը չճանաչող ավազակների: Զինադադարի այս դրույթը վկայում է, որ թուրքական կառավարությունը, հավատարիմ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի ոգուն, հայ անմեղ բնակչության նկատմամբ իրականացվող հարձակումները շարունակում էր բարդել քրդերի վրա՝ դիվանագիտորեն շրջանցելով այն իրողությունը, որ այդ հանցագործությունները, որպես Հայկական հարցի «լուծման» թուրքական պետական քաղաքականության միջոց, ծրագրվում, հրահրվում, ղեկավարվում և իրագործվում էին իր կողմից ու նախևառաջ թուրք բնակչության ակտիվ մասնակցությամբ:

Երզնկայի զինադադարի կնքումը գնահատելով որպես «ահավոր անակնկալների նախօրյակ»՝ Հ. Ավետիսյանն ուշագրավ փաս-

տերի միջոցով ցույց է տալիս, որ, թեև Արևմտյան Հայաստանի կեսից ավելին գրավված էր ռուսական զորքի կողմից, այնուամենայնիվ, թուրքերի համար Ռուսաստանը համարվում էր պարտված կողմ, իսկ Անդրկովկասի հասարակական-քաղաքական շրջանակներում երկյուղում էին թշնամու անմիջական հարձակումից: Պատմաբանը մեջբերում է ՀՅԴ դիրքորոշումն արտահայտող «Հորիզոն» թերթի 1917 թ. դեկտեմբերի 12-ի «Ահավոր աղետի առջև» խմբագրական հոդվածի սթափեցնող հետևյալ տողերը Երզնկայի զինադադարի վերաբերյալ. «Ճիշտ է, հայտարարված է զինադադար և պատերազմական գործողություններ չեն սպասվում, բայց նախ՝ զինադադարը վերջանում է հունվարի 1-ին, և թշնամին մինչև այդ ուժերը հավաքած ու կազդուրված, կարող է անմիջական հարձակման դիմել, եթե իր պահանջները չընդունվեն: Երկրորդ՝ տաճկական խոսքի ու խոստումի արժեքը հանրածանոթ է, դեռ բոլորի հիշողության մեջ է, որ Բալկանյան պատերազմի զինադադարի միջոցին, Էնվեր փաշան դրժելով իր խոստումը՝ գրավեց անպաշտպան մնացած Ադրիանապոլիսը. ի՞նչ երաշխիք, որ վաղը նույնը չի կրկնվի և մեր ճակատում: Ո՞վ է ապահովում, որ թուրքերը, հանկարծ, օգտվելով մեր ժամանակավոր տկարությունից՝ հարձակման չեն դիմի ու չեն փորձի խլել մեզանից Երզնկան ու Կարինը»[57]:

Կովկաս հասած հավաստի լուրերից ակնհայտ էր, որ Թուրքիան, իբրև հաշտության պայման, պահանջում էր ռուս-թուրքական սահմանը գծել մինչև 1877–1878 թթ. պատերազմը եղած

[57]Քաղվածքն ըստ ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 35–36: Հայկական հարցի 1917–1918 թթ. պատմության հիմնախնդիրների վերաբերյալ իր գիտական պրպտումների արդյունքները Հ. Ավետիսյանը ձևակերպել է նախ «Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум» (Ереван, 1994) մենագրության մեջ, այնուհետև անհրաժեշտ շեշտադրումներով ներկայացրել «Հայոց ազգային միասնության հաղթանակը» (Երևան, 1998) աշխատության մեջ:

դրությամբ: Դա նշանակում է, որ Օսմանյան կայսրությունն ակնկալում էր Ռուսաստանից ետ ստանալ ոչ միայն Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթները, այլև՝ Կարսը, Արդահանը, Բաթումը, ինչպես նաև կայսրությանը բռնակցել Արևելյան Հայաստանի ու Վրաստանի որոշ տարածքներ: Ահա այսպես, համիսլամությունն ու համաթրքությունը փորձում էին հարթել իրենց ուղին դեպի Կովկաս: Նման պայմաններում հայ ժողովրդի համար օրակարգային էին դառնում ռուսական բանակի հետ քաշվելու հետևանքով ռուս-թուրքական ռազմաճակատի մերկացումը դադարեցնելու, ազգային զորամիավորումներ կազմավորելու, արևմտահայերի անվտանգությունն ապահովելու, Արևմտյան Հայաստանի լիակատար ինքնավարությանը հասնելու, Դաշնակիցներից նյութական ու զինվորական օգնություն ստանալու հիմնախնդիրները:

Պատմագիտական աշխատություններում նաև վերլուծված ու ընդհանրացված են 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին հայ ազգային նպատակների իրագործմանը խոչընդոտած ներքին հանգամանքները՝ հայ հասարակության արևմտահայ ու արևելահայ շրջանակներում իշխող ազգային պառակտվածության մտայնությունն ու հայ քաղաքական որոշ ուժերի՝ Անդրկովկասի քաղաքական կյանքին արևմտահայության մասնակցությանը դեմ լինելը, Հայկական հարցում մոտեցումների և կարծիքների իրարամերժությունը[58]:

Հայ ազգային կուսակցությունները քննադատվում են անմիաբանության, ՀՅԴ-ն՝ ազգային հասարակական-քաղաքական կյանքում մենիշխանության, իսկ գործիչները՝ «ազգայինների» և «ապազգայինների» կամ արևմտահայերի ու արևելահայերի բաժանված լինելու համար: Շեշտվում է, որ նման պայմաններում ազ-

---

[58]Տե՛ս ***Պողոսյան Սկ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 14–15:

գային ուժերն անկարող գտնվեցին ինչպես հայ բնակչության ինքնապաշտպանությունը թուրքական զորքի հարձակմանը ենթարկվող արևմտահայկական տարածքներում կազմակերպելու, այնպես էլ ռուսական պետության ներքին ու արտաքին կյանքում ընթացող և հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող փոփոխություններին համապատասխան կողմնորոշվելու հարցերում: Թուրքական բանակի հնարավոր հարձակումից և Արևմտյան Հայաստանում հաստատված թուրք ու քուրդ վերաբնակիչների հարձակումներից հայերի և հայկական տարածքների պաշտպանությունը կազմակերպելու անկարողության համար քննադատվում է հատկապես ՀՅԴ-ն[59]:

Միևնույն ժամանակ գնահատվում է ինչպես հայ ժողովրդի արևելյան հատվածի, այնպես էլ զանգվածային կոտորածների, տեղահանության ու բռնագաղթի հետևանքով հայրենազրկված, աշխարհով մեկ սփռված արևմտահայերի շահերը պաշտպանելու, Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակը հայ ժողովրդի հետագա անվտանգ զարգացման հրամայականին համապատասխան ապահովելու ուղղությամբ ՀՅԴ դիրքորոշման ու գործունեության որոշիչ նշանակությունը: Շեշտվում է, որ կուսակցությունն աշխարհասփյուռ հայության մեջ կազմակերպական լայն ցանց ունեցող և Մեծ եղեռնից հետո Արևմտյան Հայաստանում գործող միակ ազգային կուսակցությունն էր, իսկ Անդրկովկասում՝ հայ ժողովրդի շահերը ներկայացնող ամենահեղինակավոր ու ազդեցիկ քաղաքական ուժը: Դրա վկայությունն էր այն, որ 1917 թ. Համառուսաստանյան Սահմանադիր ժողովում Անդրկովկասի պատգամավորների ընտրության արդյունքում հայությունն իր քվե-

[59]Տե՛ս նույն տեղում, էջ 11–15:

ների 95 %-ը վստահել էր ՀՅԴ-ին[60]: Ի վերջո, Հայաստանի երկու մասերից յուրաքանչյուրի ապագա իրավական կարգավիճակի հարցում ուրույն մոտեցում ունենալը բխում էր հայ ժողովրդի արևելյան ու արևմտյան հատվածներին պատմականորեն պարտադրված տարբերություններից և բնավ չէր նշանակում, թե այդ կուսակցությունը արևելահայերին ու արևմտահայերին իրենց խնդիրներով հանդերձ հակադրում էր միմյանց: Ընդհակառակը, այս դիրքորոշումը բխում էր հայ ժողովրդի և Արևմտյան ու Արևելյան Հայաստանի առկա կարգավիճակի և շահերի առանձնահատկություններից: ՀՅԴ-ն փորձում էր կարգավորել ու ներդաշնակել այդ շահերը ոչ թե դրանք միմյանց ստորադասելու, այլ՝ ազգային խնդիրները զուգահեռաբար լուծելու ուղիով:

Վ. Մելիքյանի դիտարկմամբ, թեև Քառյակ միության պետությունների հետ անջատ հաշտություն կնքելու բոլշևիկյան քաղաքականությունը ՀՅԴ-ի համար, ըստ էության, անհասկանալի էր, այնուամենայնիվ, կուսակցության անդամները նպատակամղված առաջ էին տանում հայկական զորքի զորակոչի աշխատանքը: Ավելին, գիտակցվում էր, որ ռուսական պետականամետ ռազմաքաղաքական ուժերի հետ կայուն դաշինքի ստեղծումն առավելապես բխում էր հայ ժողովրդի շահերից, քանի որ, նախ, բացահայտ չէր բարձրացվում ազգային ինքնիշխանության մերժման խնդիրը, ապա Արևմտյան Հայաստանում դեռ կանգնած Կովկասյան բանակի զորամասերի ներկայությունը երաշխավորում էր ռուսաստանյան կենտրոնամետ ուժերի միջոցով Հայկական հարցի բարենպաստ լուծումը: «Հայությանը ձեռնտու էր ռուսական ներկայությունը Անդրկովկասում և գրավյալ Արևմտյան Հայաստանում

---

[60]Տե՛ս ***Փիրումեան Ռ.*** Հայաստանը Հ.Յ.Դ. – Բոլշեւիկ Յարաբերութիւններ-ի Ոլորտում (1917–1921), Երևան, 1997, էջ 6:

անգամ բոլշևիզմի տեսքով, իսկ վրաց-թաթարական դաշինքի համար այդ ներկայությունը գլխավոր խոչընդոտն էր Ռուսաստանից հեռանալու և նոր դաշնակիցների աջակցությամբ անկախության ու այդպես նաև տարածքային ձեռքբերումների ճանապարհին: Այս մարտավարությունը ՀՅԴ կողմից դրսևորվեց երկու անգամ՝ 1918 թ. մարտին և սեպտեմբերին, երբ ուշացած փորձ արվեց Ստեփան Շահումյանի և հայանպաստ Բաքվի կոմունայի ուժերով իրականացնելու հեռահար ազգային ծրագիրը»[61],– նկատում է Վ. Մելիքյանը:

Պատմաբանի համոզմամբ, Ռուսաստանից անկախ գործելու և Օսմանյան կայսրության հետ անջատ հաշտություն կնքելու Անդրկովկասյան կոմիսարիատի դիրքորոշմանը սկզբունքորեն դեմ լինելու՝ Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) անդամների մոտեցումը բացատրվում էր ոչ միայն և ոչ այնքան երկրամասային իշխանության կազմում իրենց կուսակցությունը չընդգրկելու ու ՀՅԴ հանդեպ ունեցած անհանդուրժողականությամբ, որքան

---

[61]Տե՛ս ***Մելիքյան Վ.*** Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար) / Խմբ. Հ. Հարությունյան, Երևան, 2010, էջ 153–154, 161: Պատմաբանն իր ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրություն է դարձնում վրաց-թաթարական դաշինքի հակահայկական գործունեության հետևանքներին: Ուշագրավ փաստերի միջոցով հիմնավորում է՝ Երզնկայի զինադադարի կնքման գործընթացի ժամանակ արդեն պարզ էր, որ վրաց-թաթարական դաշինքն ամեն գնով Թուրքիային էր նվիրելու Արևմտյան Հայաստանը: Վ. Մելիքյանը գրում է, որ ի դեմս Կոմիսարիատի հայ անդամների, նախ՝ դրսևորվում էր վրաց-թաթարական շրջանակների բացահայտ հակահայկական քաղաքականությունը և որ ավելի կարևոր է, այդ քաղաքականության դեմ ոչ մի գործնական քայլ չէր ձեռնարկվում, դասեր չէին քաղվում և շարունակվում էր նույն պարտվողական մարտավարությունը՝ այն էլ ներքին քաղաքական անհաշտ հակասությունների պայմաններում (նույն տեղում, էջ 171):

տվյալ պահին առավել կշռադատված, սթափ ու համազգային շահով մտահոգվելու հանգամանքով: Կուսակցության անդամները գիտակցում էին, որ անջատ հաշտությունը սպառնալիք էր հայ ժողովրդի երկու հատվածների, «Հայաստան» հասկացության և Հայկական հարցի գոյությանը: Շեշտվում էր, որ դրա հետևանքով խորանում էր Կովկասյան ռազմաճակատի թուլացման գործընթացը, թուրքական արշավանքը դառնում էր անխուսափելի, ամրապնդվում էր թուրք-քրդական հակահայկական գործակցությունը, ահագնանում էր Արևմտյան Հայաստանի թուրքական բռնազավթման վտանգը, որի հետ մեկտեղ մեծանում էր ազգերի ինքնորոշման իրավունքի բոլշևիկյան սկզբունքը հայաթափված Արևմտյան Հայաստանում հաստատված թուրքերի ու քրդերի շահերին ծառայեցվելու հավանականությունը[62]:

Համադրելով պատմական փաստերը և քաղաքական իրողությունները՝ Վ. Մելիքյանը եզրակացնում է. «1917 թ. իրականության մեջ, անհամեմատ բարդ և բախտորոշ պատմական իրադրության պայմաններում, հայ իրականության ազդեցիկ քաղաքական կուսակցությունը՝ Դաշնակցությունը, իհարկե երկյուղելով ու տագնապելով, բայց և հակաբոլշևիկյան ալիքի վրա վճռականորեն ընտրեց Թուրքիայի հետ մերձեցման ճանապարհով և հարևաններրի աճող ոչ բարեհաճ վերաբերմունքի միջավայրում՝ ազգային գլխավոր խնդիրները լուծելու ճանապարհը, նաև անկախության հիմնահարցը: Շարունակվող պատերազմի պայմաններում անորոշ մի տարածքի վրա պետություն վերագտնելու գաղափարը, փաստորեն, գերակայեց բազմաթիվ ոչ պակաս համազգային կենսական նշանակություն ունեցող հիմնահարցերի վրա, մանավանդ, որ այդ մեծ գործընթացի նախաձեռնությունն ամենևին հայ ազգային-

[62]Տե՛ս նույն տեղում, էջ 163:

դեմոկրատական կուսակցությանը չէր պատկանում: Մեկ դար անց, ՀՅԴ-ն դեմ է իր ընտրած ուղենիշին, որն ի դեպ, սկիզբ էր առել 1907 թվականին, ի դեմս ՀՅԴ – երիտթուրքեր համագործակցությանը»[63]: Պատմաբանը նկատի ունի «Միություն և առաջադիմություն» կուսակցության 1907 թ. փարիզյան համագումարին ՀՅԴ ներկայացուցիչների մասնակցությունը, որով, ըստ էության, գործնական հիմքի վրա էր դրվել քաղաքական այդ ուժերի համագործակցությունն ընդդեմ ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարության: ՀՅԴ-ն այդ քայլին գնացել էր՝ երիտթուրքերից չստանալով որևէ խոստում կամ երաշխիք առ այն, որ իշխանության հասնելուց հետո պատրաստ էին ճանաչելու Արևմտյան Հայաստանի անկախությունը կամ գոնե բարենորոգումներ անցկացնելու արևմտահայկական վիլայեթներում:

Վ. Մելիքյանն իրավացիորեն նշում է՝ մեր օրերում ՀՅԴ-ի գործունեությունը հայոց անկախ պետականության ամրապնդման և Հայոց արդար պահանջատիրության բավարարման ուղղությամբ վկայում է, որ կուսակցությունը հիմնավորապես վերանայել է 1907 թ. ընտրած ուղենիշն ու համարձակորեն կանգնել է սեփական ուժերով հայկական ազգային հիմնախնդիրների լուծման ուղու վրա:

Հայաստանյան պատմաբանների աշխատություններում 1917–1918 թթ. Հայկական հարցի պատմությունն արժևորված է նաև հայ ազգային-ազատագրական պայքարի տեսանկյունից: Ուշագրավ է 1917 թ. վերջին Արևմտյան Հայաստանում հայերի ինքնապաշտպանության կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ Ստ. Պողոսյանի ու Կ. Պողոսյանի մոտեցումը: Նրանք նշում են, որ այդ ժամանակ Արևմտյան Հայաստանին վերաբերող

[63]Նույն տեղում, էջ 166:

հարցերն առաջ մղող շարժիչ ուժը հայտնի դաշնակցական գործիչներ Ստեփան Զորյանն (Ռոստոմ) ու Հակոբ Զավրյանն էին: Զարգացնելով ռուսական բանակում ծառայող հայ զինվորներից հայկական բանակ կազմելու գաղափարը՝ Ռոստոմը համոզված էր, որ հնարավոր կլիներ ապահովել 150 հազարի հասնող զինուժ՝ թուրքական ճակատում արևմտահայ առանձին գնդերի հետ կողք կողքի կռվելու համար[64]: Հայ գործիչները հատկապես զգուշավոր էին հայկական առանձին բանակային կորպուս ստեղծելու խնդիրը բարձրացնելիս: Նրանք նախ հիմնավորում էին ռուսական գործող բանակի կազմում հայկական զորամասեր ունենալու անհրաժեշտությունը նախևառաջ ռուսական պետության համար, այնուհետև՝ շեշտում, որ ազգային զինուժի ստեղծման խնդիր դրել էին նաև այլ ժողովուրդներ, մասնավորապես՝ ուկրաինացիները:

Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը նկատում են, որ, երբ 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունվում էր «Թուրքահայաստանի մասին» Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի հրովարտակը[65], Կովկասյան ռազմաճակատում դեռևս կար մոտ 90 հազարանոց ռուսական և հայկական զինուժ՝ թուրքերի 20–25 հազարանոցի դիմաց: Եթե հայերն ինքնակազմակերպվեին, ապա անպայման կկարողանային բարոյալքված թուրքերի դեմ կռվել ու հաղթել, մանավանդ որ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը, հենվելով Ժամանակավոր կառավարության փորձի վրա և շարունակելով տեղերում ռուսական զորքն ազգային զորամասերով փոխարինելու քաղաքականությունը, պատրաստ էր հայերին հնարավորություն ընձեռել կազմակերպվելու ու սեփական ուժերով

---

[64]Տե՛ս ***Փիրումեան Ռ.*** նշվ. աշխ., էջ 25–26:

[65]«Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ամբողջական տեքստը տե՛ս Декреты советской власти / Сборник материалов и документов, т. I (25 октября 1917 г. – 16 марта 1918 г.), док. № 201, с. 298–299.

պաշտպանելու իրենց երկիրը: Որպես փաստարկ մատնանշվում է հեռացող ռուսական բանակի կողմից երկրամասում զինվորական կադրեր, մեծ քանակությամբ զենք–զինամթերք, պարեն թողնելը: Սակայն ՀՅԴ ղեկավարները, բացառությամբ Ռոստոմի, միասնական և հետևողական չեղան ազգային բանակի կազմավորման հարցում:

Ստ. Պողոսյանի և Կ. Պողոսյանի դիտարկմամբ, ՀՅԴ-ն, բացառությամբ իր առանձին անդամների, ովքեր կողմնակից էին Արևմտյան Հայաստանի անկախությանը, ցավոք, այդ հարցում «պաշտոնական դիրքորոշում չուներ, իսկ ունեցածն էլ տարօրինակ բնույթի էր ու անհասկանալի»[66]: Որպես ասվածի հիմնավորում, պատմաբանները մեջբերում են դաշնակցական մեծամասնություն ունեցող Թիֆլիսի Հայ ազգային ժողովի որոշումներից մեկը՝ կուսակցական հայտնի գործիչ Վահան Նավասարդյանի ձևակերպմամբ, ըստ որի, հաստատվում էր «Հայաստանի կապը միացեալ Ռուսիոյ հետ» և պահանջվում էր «ձգել թուրքահպատակ Հայաստանի այն հողերը, որոնք համաշխարհային պատերազմի ժամանակ գրավված էին ռուսական զորքերի կողմից»[67]: Բերված քաղվածքում «ձգել» բառը կարելի է մեկնաբանել և՛ ինքնորոշման ու անկախության, և՛ լքելու իմաստով: Ինքնին հասկանալի է, որ ՀՅԴ-ն չէր կարող Արևմտյան Հայաստանը թուրքական պետությանը վերադարձնելու վերաբերյալ անգամ ակնարկ պարունակող որոշում կայացնել: Հետևաբար, անհասկանալի է, թե ինչ նկատի ունեն աշխատության հեղինակները Հայկական հարցում ՀՅԴ-ի դիրքորոշումը բնութագրելով՝ «տարօրինակ բնույթի էր ու անհաս-

---

[66] ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 18:

[67] Նույն տեղում, էջ 18–19:

կանալի»: Իսկ եթե նրանք նկատի ունեն Արևմտյան Հայաստանի ինքնորոշման և անկախության գաղափարը, ապա այն ՀՅԴ-ի քննարկումների օրակարգ մտավ՝ հաշվի առնելով պատերազմի շարունակման փաստը, երկրում բոլշևիզմի վտանգի աճը, ռուսական բանակի գրաված տարածքները Թուրքիային հանձնելու մասին կանխատեսումները:

Իհարկե, կուսակցությունը չէր բացառում Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցում հնարավոր անակնկալները, որոնցից ամենաանցանկալին ռուսական զորքի գրաված Արևմտյան Հայաստանը Թուրքիային հանձնելն էր: Այս առումով ուշագրավ է դեռևս 1917 թ. մայիսի սկզբին Երևանում կայացած հայ զինվորականության համագումարում ազգային կուսակցությունների, այդ թվում՝ ՀՅԴ-ի հայտարարությունն այն մասին, որ արևմտահայերի ինքնորոշման իրավունքը կախված է Կովկասյան ռազմաճակատի դրությունից[68]: Եվ իրոք, Արևմտյան ռազմաճակատում ռուսական զորքի 1917 թ. ապրիլյան և հունիսյան անհաջող հարձակումները, դրանց հետևած Ժամանակավոր կառավարության հունիսյան ճգնաժամը, ապա՝ բոլշևիկյան հակապատերազմական ցույցն ամրապնդեցին այն համոզումը, որ Արևմտյան Հայաստանի հարցը պետք չէ կապել Արևելյան Հայաստանի հարցի հետ և պետք է լուծել առանձին[69]: Արևմտյան Հայաստանի համար նախընտրելի էր համարվում ինքնորոշման և անկախության հարցի բարձրացումը՝ միևնույն ժամանակ ամրապնդելով քաղաքական կապերն ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ՝ միջազգային վերահսկողության երաշխիքներ ստանալու նպատակով: Նշենք, որ, դառնալով Առաջին համաշխարհային պատերազմին մասնակից պետություն,

---

[68]Տե՛ս ***«Հորիզոն»,*** Թիֆլիս, 03.V.1917:
[69]Նույն տեղում, 14.VII.1917:

ԱՄՆ-ը չէր թաքցնում իր ռազմաքաղաքական հավակնությունները Օսմանյան կայսրության ապագային, Արևմտյան Հայաստանին և Հայկական հարցի լուծման հեռանկարներին վերաբերող հարցերում[70]:

Արևմտյան Հայաստանի հարցում ՀՅԴ-ի վերոնշյալ մոտեցումը երկրի և միջազգային ժողովրդավարական ուժերի համախմբման ու միասնական պայքարի անհրաժեշտության գիտակցման արտահայտությունն էր ընդդեմ կանխազգացվող մոտալուտ վտանգների: Այս մոտեցումն իր արտահայտությունը գտավ նախ 1917 թ. ապրիլին՝ արևմտահայ հայտնի գործիչ և օսմանյան պառլամենտի նախկին անդամ Գ. Բաստրմաջյանին հատուկ առաքելությամբ ԱՄՆ ուղարկելու՝ Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյի նախաձեռնության մեջ, ապա սեպտեմբեր–հոկտեմբերին՝ Հայոց ազգային համախորհրդակցության որոշումներում, այնուհետև՝ «Թուրքահայաստանի մասին» Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի հրովարտակի նախագծի մշակման ժամանակ[71]:

ՀՅԴ-ն Արևմտյան Հայաստանի հարցում իր դիրքորոշումը արտահայտեց նաև 1917 թ. վերջերին Ստոկհոլմում Միջազգային սոցիալիստական ինտերնացիոնալի համագումարում կուսակցու-

---

[70]Տե՛ս ***Մախմուրյան Գ.*** Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում // Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ) / 1–2 հոկտեմբերի, 2014 թ. / Զեկուցումների ժողովածու / Խմբ. Ա. Մարուքյան, Երևան, էջ 158–171:

[71]Այս մասին տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 146–147, ***Մելիքյան Վ.*** Հայաստանը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, ***նույնի՝*** 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում և Հայաստանը // Հայոց պատմություն, հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), էջ 578, 606–610:

թյան պատվիրակ Ռոստոմի ներկայացրած հուշագրում: Նրա ջանքերի շնորհիվ դեռևս համագումարի նախօրեին չեզոք երկրների պատվիրակների ժողովում որոշում էր ընդունվել Արևմտահայաստանի տարածքային վերականգնման ու անկախության պահանջը պաշտպանելու վերաբերյալ՝ ներառյալ նրա տնտեսական զարգացման երաշխիքների, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի համար Կիլիկիայով դեպի Միջերկրական ծով ելքի ապահովումը: Նաև քննարկվել էին Հայկական հարցի լուծմանը խոչընդոտող ներքին ու արտաքին դժվարությունները՝ Հայաստանում հայ բնակչության փոքրաթիվ լինելը, երկրի կառավարման ձևը, Գերմանիայի դիրքորոշումը Հայկական հարցում՝ Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև մոտալուտ անջատ հաշտության բանակցությունների ժամանակ[72]: Չեզոք երկրների պատվիրակներին Ռոստոմը վստահեցրել էր, որ Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թիվը կարող էր ստվարանալ, եթե երկրամասը հռչակվեր անկախ և զանգվածային կոտորածներից ու բռնագաղթից փրկվելու համար Օսմանյան կայսրությունից հեռացած հայերը վերադառնային Արևմտյան Հայաստան: Երկրի ապագա կառավարման հիմքում

[72]Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող փաստաթղթերը վկայում են, որ 1917 թ. կեսերին Գերմանիայի և Օսմանյան կայսրության միջև կնքվել էր գաղտնի պայմանագիր: Ըստ դրա, Գերմանիան պարտավորվել էր երաշխավորել այն ամենի ամբողջականությունը, ինչ մնացել էր Օսմանյան կայսրությունից՝ պայմանով, որ թուրքական կառավարությունն Արևմտյան Հայաստանին հատկացներ լայն ինքնավարություն: Գերմանական դիվանագետների կարծիքով, այդ քայլը պետք է նպաստեր Ռուսաստանի հետ բանակցություններին, քանի որ լիովին համապատասխանում էր ռուսական Ժամանակավոր կառավարության քաղաքականության հիմնաքարը դարձած ազգերի ինքնորոշման սկզբունքին: Այս մասին տե՛ս Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հ. II, փաստ. № 370, էջ 7–8:

նա առաջարկում էր դնել լայն ապակենտրոնացման սկզբունքը, որը կարող էր հեշտացնել պետության կառավարումը:

Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև անջատ հաշտության բանակցություններում Ռուսաստանի նվաճած տարածքների վերադարձի հարցի հնարավոր բարձրացմանը, ինչի հետևանքով Հայկական հարցը կարող էր տուժել, ապա Ռոստոմը հույս և միևնույն ժամանակ մտահոգություն էր հայտնում. «Ինչպէս Գերմ. զէնքով նուաճուած Լեհաստանը ստանում է անկախութիւն, այնպէս էլ ռուսների զէնքով նուաճուած Հայաստանը պէտք է ստանայ անկախութիւն: Մեր պահանջը աւելի իրաւացի է, քանի որ Վասպուրականը ազատուել է հայերի ապստամբական ուժերով. Վանը՝ արդէն ազատուած՝ դրուեր է Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Եթէ խնդիրը գալու լինի ինքնորոշման սկզբունքին, ժողովրդական քուէարկութեան,– հայ ժողովուրդը վաղուց իր քուէները տուել է անհամար դիակներով:

Զինադադարի խնդիրը ո՞ւր պէտք է տանի ի վերջոյ: Շուարած եմ մնացել: Հոսանքը մեզ քշելու է. աշխատենք՝ ժայռերի չզարնուել»[73]:

«Ինչպիսի պատճառներ էլ որ եղած լինեն,– նշում են Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը,– 1917 թ. սեպտեմբերին, երբ ռազմաճակատում փաստորեն դադար էր, այդ դիրքորոշումը մեղմ ասած, կամակորություն էր ու անհասկանալի: Դա առավել ևս վնասակար ու վտանգավոր էր նաև այն առումով, որ թուրքական (նաև ադրբեջանական շրջաններում) լուրջ տարընթացություններ էին առաջացել Քառյակ զինակցության ռազմական անհաջողությունների հե-

---

[73] ***Ռոստոմ,*** նշվ. աշխ., էջ 648–649, նաև՝ ***Փիրումեան Ռ.,*** նշվ. աշխ., էջ 16–18:

տևանքով: Էնվերը դեմ էր Հայաստանի գոյությանը, իսկ Թալեաթը կողմ էր փոքրիկ ու թույլ Հայաստան ունենալուն (Նոր Բայազետից մինչև Էջմիածին)»[74]: «Դա գուցե պատմական միակ պահն էր, որ հայությունն ի վիճակի էր կռվել ու նաև հաղթել թուրքերին, … եթե հայ ղեկավարները, սկսած 1917 թ. կեսերից, ժամանակին ու ճիշտ կողմնորոշվեին, հրովարտակի հրապարակումից անմիջապես հետո դուրս գային Անդրկովկասի հանրապետության կազմից և, ինչպես Ս. Շահումյանն էր առաջարկում՝ քանի դեռ համաշխարհային պատերազմը չէր ավարտվել, Հայաստանը հռչակեին Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս, որովհետև որքան էլ Ռուսաստանը թուլացած լիներ, թուրքերը նրանից երկնչում էին, հնարավոր էր, որ հայ ժողովրդի ճակատագիրը դասավորվեր շատ ավելի բարեհաջող»[75],– արդարացիորեն նկատում են Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը: Նրանց կարծիքով, եթե հայ ազգային-քաղաքական շրջանակներում կարողանային առանց ժամանակ կորցնելու կազմակերպել ռուսական բանակում ծառայող 130 հազար հայ զինվորների ու արևմտահայ կամավորական ջոկատների ուժերը, ստանալ խորհրդային կառավարության խոստացած աջակցությունը զինվորների փոխադրման ծախսերի վճարման, ինչպես նաև զենքի, զինամթերքի ու հանդերձանքի մատակարարման հարցերում, ապա հնարավոր կլիներ հավաքագրել 80–100 հազարանոց ռազմուժ, որի կեսն անգամ բավարար կարող էր լինել թուրքական բանակի հարձակումը ետ մղելու և Արևմտյան Հայաստանի ու հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար[76]: Ավելին,

---

[74] ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 19:

[75] Նույն տեղում, էջ 67:

[76] Տե՛ս նույն տեղում, էջ 73–74:

մատնանշելով հայկական զինուժի վճռորոշ դերն Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությանը ենթարկվող ռազմուժի կազմում ու անգամ այդ պայմաններում վերջինիս քաղաքականության հակահայկական ուղղվածությունը, ինչպես նաև վրացիների, թաթարների ու թուրքերի հավակնությունները հայկական տարածքների նկատմամբ՝ Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանն առաջադրում են քննարկման արժանի հետևյալ հարցադրումն ու եզրահանգումը. «Ուրեմն ինչո՞ւ մնալ թշնամի կառույցի կազմում, ինչո՞ւ խաղալիք դառնալ նրա ձեռքում ու ձախողել ինքնապաշտպանության գործը: Միայն այն իրողությունը, որ ռազմական ուժը հայերի ձեռքին էր, իսկ իշխանությունը՝ վրացիների, և այդ իշխանությունը գործում էր հայերի դեմ, ասում էր այն մասին, որ հայ քաղաքական գործիչները պատրաստ չէին ինքնուրույն քաղաքական գործունեության, չկարողացան և փորձ էլ չարեցին սթափ վերլուծելու, քննելու քաղաքական-ռազմական իրավիճակը, օգտագործվեցին վրաց մենշևիկների կողմից և ոչ թե պայքարեցին անկախության համար, այլ նրանց այն թելադրվեց»[77]:

Ստ. Պողոսյանի և Կ. Պողոսյանի համոզմամբ, եթե ՀՅԴ-ն խզեր կապերը վրաց մենշևիկների ու թաթար մուսավաթականների հետ և դաշինք կնքեր Ռուսաստանի խորհրդային կառավարության հետ, ապա առանց ժամանակ կորցնելու ձեռնամուխ կլիներ ազգային պետականության ստեղծմանը, հայկական ռազմուժի ձևավորմանը Ռուսաստանի ռազմատնտեսական օգնությամբ[78]: «Հայերի ճիշտ կողմնորոշման դեպքում **բացառված չէր**, որ Ռուսաստանը ձգտեր ապահովելու հրովարտակի պահանջների կատարումը», քանի որ «Հոկտեմբերյան հեղափոխության հաղթա-

[77]Նույն տեղում, էջ 61, 67:

[78]Տե՛ս նույն տեղում, էջ 67, 68, 71–72, 243:

նակից հետո շուրջ երեք ամիս Ռուսաստանում համեմատաբար դադար էր, քաղաքացիական պատերազմը դեռևս չէր ծավալվել»[79],– նկատում են նրանք:

Տեսականորեն կարելի է ենթադրել, որ հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից Ստ. Պողոսյանի և Կ. Պողոսյանի մատնանշած «ճիշտ» կեցվածքի ու գործողությունների արդյունքում հնարավոր կարող էր դառնալ Արևմտյան Հայաստանի ինքնորոշումը: Այս պնդման հետ, սակայն, դժվար է միանշանակ համաձայնել, քանի որ ՀՅԴ-ն, արդյոք, ավելի մեծ վտանգի չէ՞ր ենթարկի հայ ժողովրդի կենսական շահերը, եթե 1917 թ. վերջերին խզեր կապերն Անդրկովկասյան կոմիսարիատի հետ ու բացահայտորեն կողմնորոշվեր դեպի Խորհրդային Ռուսաստան: Արդյո՞ք Խորհրդային Ռուսաստանը մտադիր էր պայքարել Արևմտյան Հայաստանի համար, եթե 1917 թ. նոյեմբերի 20 (դեկտեմբերի 3)-ին «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» ուղղված կոչով խորհրդային իշխանությունն իր բացահայտ համերաշխությունն ու համագործակցությունն էր առաջարկել Թուրքիային՝ «պատռված ու ոչնչացված» հայտարարելով 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերը[80]:

Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի, արևմտահայերի անվտանգության ապահովման հարցերում Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշման ու քաղաքականության վերաբերյալ հայաստանյան պատմագիտության մեջ արտահայտված տեսակետները տարբեր են: Պատմաբանների մի մասը, որպես Հայկական հարցի լուծման ուղղությամբ խորհրդային կառավարության դիրքորոշումը բնութագրող հիմնարար փաստաթուղթ,

---

[79]Նույն տեղում, էջ 68:

[80]Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, в 2 томах, т. 1, док. № 309, с. 306.

վկայակոչում է Ժողկոմխորհի կողմից ընդունված «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը[81]: Նրանք իրավացիորեն նկատում

[81]Հրովարտակի նախագիծը կազմելու համար Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհը ստեղծել էր բազմակուսակցական հանձնաժողով [անդամներն էին՝ բոլշևիկներ՝ ազգությունների գործերի ժողկոմ Իոսիֆ Ջուղաշվիլին (Ստալին), Հայկական գործերի կոմիսարիատի գործիչներ՝ Վառլամ Ավանեսովը, Վահան Տերյանը, Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին), ձախ էսէռ Պռոշ Պռոշյանը, մենշևիկ Պավել Աքսելրոդը, որին փոխարինեց դաշնակցական Ս. Զորյանը]: Հանձնաժողովը պատրաստեց «Զեկուցագիր Արևմտյան Հայաստանի մասին» և «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նախագիծ: Նախագիծը հիմնականում Վ. Տերյանի ջանքերի արդյունքն էր: Զեկուցագրի համաձայն, Արևմտյան Հայաստանը պետք է դառնար անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանը մնար Ռուսաստանի կազմում՝ ներքին ինքնավարության կարգավիճակով: Ե՛վ զեկուցագրում, և՛ հրովարտակի նախագծում կազմողներն Արևմտյան Հայաստանում հայ–կական պետության ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ միջոցառումների թվում կարևորում էին ռուսական զորքի առկայությունն Արևմտյան Հայաստանում (Էրզրումի, Վանի և Բիթլիսի նախկին վիլայեթների սահմաններում) այնքան ժամանակ, մինչև որ արևմտահայերը հնարավորություն կստանային համաժողովրդական ազատ քվեարկությամբ վճռելու անկախ Հայաստանի ներքին կարգի հարցը, կազմակերպելու հայ ժողովրդական միլիցիա՝ երկրի ներքին ու արտաքին անվտանգությունն ապահովելու համար:

Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը նշում են, որ հրովարտակի նախագիծը Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհում դեկտեմբերի 20-ին, 23-ին, ապա 29-ին քննարկելիս «առաջին անգամ պետական մակարդակով բախվեցին տաճկահայերի և ռուսահայերի խնդիրներն առանձին դիտարկելու, ռուսահայերի ճակատագիրը Ռուսաստանի հետ կապելու և ռուսական օրիենտացիայով տաճկահայերի ինքնորոշման հարցն առանձին բարձրացնելու, ռուսական զորքը Հայաստանում պահելու տեսակետները»:

Նշենք, որ առաջին երկու քննարկումներում Ի. Ստալինի և Պռ. Պռոշյանի միջև առաջացած տարաձայնությունների պատճառով որոշում չընդունվեց: Ժողկոմխորհը դեկտեմբերի 29-ին որոշ փոփոխություններով ընդունեց հրովարտակը՝ հայ ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի կենսագործման միակ հիմնական երաշխիքը նրանում ձևակերպելով հե-

են, որ հրովարտակի ընդունումը նշանակում էր 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական ոճրագործների իրականացրած հայերի ցեղասպանության դատապարտում: Խորհրդային Ռուսաստանը հայտնում էր իր կամքը՝ օգնել հայրենի օջախից բռնի ուժով տեղահանված և աքսորված հայ ժողովրդի տառապյալ բեկորներին վերադառնալ Արևմտյան Հայաստան, հիմնել անկախ ժողովրդավարական հայկական պետականություն[82]: Պատմա-

---

տևյալ կերպ. «Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունը ապահովելու նպատակով»: Տե՛ս ***Պողոսյան Սկ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 62:

[82]Հրովարտակում չորոշակիացվեցին վարչաքաղաքական այն սահմանները, որոնցում նախատեսվում էր հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի կենսագործումը: Հատկանշական է նաև, որ փաստաթղթի իրականացման պարտականությունը դրվում էր Կովկասի գործերի արտակարգ ժողովրդական կոմիսար Ս. Շահումյանի վրա, սակայն, այդ նպատակի համար նրան չէին տրվում արտակարգ լիազորություններ՝ ոչ զինված ուժեր և ոչ էլ ֆինանսական միջոցներ: Ավելին, նույնիսկ տարօրինակ էր հրովարտակի իրականացման պարտականությունը դնել մի գործչի վրա, ով դեմ էր Արևմտյան Հայաստանից ռուսական զորքի դուրսբերմանը:

Դեպքերի հետագա ընթացքն ապացուցեց Ս.Շահումյանի, Վահան Տերյանի, Ստեփան Զորյանի, Արամ Մանուկյանի, Հակոբ Զավրյանի, Պռոշ Պռոշյանի և այլ գործիչների մտավախության ու մռայլ կանխատեսումների իրավացիությունը: Հարցն այն է, որ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի հրապարակումից շատ չանցած՝ ռուսական զորքն ամբողջությամբ դուրս բերվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև՝ Անդրկովկասից: Այդպիսով, իրագործվեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ամենակործանարար դրույթը: Օգտվելով բարենպաստ դրությունից՝ թուրքական բանակը ներխուժեց Արևմտյան Հայաստան, վերանվաճեց Երզնկան, Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, այնուհետև շարժվեց

բանների համոզմամբ, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը շահագրգռված էր Հարավային Կովկասում ստեղծելու այնպիսի բուֆերային պետություն, որն ունենար 50–60 հազարանոց բանակ և պատրաստակամություն՝ կռվելու Անդրկովկաս ներխուժած թուրքերի դեմ: Նրանք դրանով են բացատրվում Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի նախագահ Վլ. Լենինի կողմից անկախ և միացյալ Հայաստանի, այսինքն՝ Արևելյան ու Արևմտյան Հայաստանն անկախ հայկական պետության մեջ միավորելու գաղափարն առաջ քաշելը[83]:

Հայ գործիչներ Ս. Լուկաշինը և Վ. Տերյանը, սակայն Ռուսաստանի խորհրդային կառավարության պետրոգրադյան նստավայր Սմոլնիում մասնակցելով Հայաստանի իրավական կարգավիճակի հարցի քննարկմանը, առաջարկեցին Արևելյան Հայաստանի ճակատագիրը կապել Ռուսաստանի հետ, իսկ Արևմտյան Հայաստանում ստեղծել նախնական երաշխիքներ հայ ժողովրդի ազատ ինքնորոշման համար՝ միևնույն ժամանակ կարևորելով ռուսական բանակն Անդրկովկասում պահելու անհրաժեշտությու-

---

առաջ՝ նվաճելու Անդրկովկասը (այս մասին տե՛ս ***Ազատյան Հ. Գ.*** Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 75, ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 62, ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 394):

[83]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 72, 73, ***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, էջ 44, ***Կարապետյան Հ.*** նշվ. աշխ., էջ 10–11, ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 56: Տե՛ս նաև՝ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, т. 2, ч. 2, с. 192.

նը: Նրանց այս դիրքորոշումը թելադրված էր Արևելյան Հայաստանն իր հարևանների տարածքային հավակնություններից պաշտպանելու անհրաժեշտությամբ: Բացի այդ, ինչպես նշվում է պատմագիտական աշխատություններում, բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակից հետո ակնկալել, թե Արևմուտքը կհանդուրժեր, որ Թուրքիայից թեկուզ չնչին հողատարածք տրվեր Ռուսաստանին, իրատեսական չէր: Հենց այս հանգամանքն էլ ուղղորդեց հայ գործիչներին և խորհրդային կառավարությանը կենտրոնանալ միայն Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցի վրա: Ընդ որում, Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը նկատում են, որ հրովարտակը վերաբերում էր ոչ թե ամբողջ Արևմտյան Հայաստանին, այլ նրա այն հատվածին, որը գրավված էր ռուսական բանակի կողմից:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նորայր Սարուխանյանի (1935–2018) կարծիքով, Հայկական հարցի լուծման ուղղությամբ ոչինչ չէին արել Ռուսաստանի ո՛չ ցարական և ո՛չ էլ Ժամանակավոր կառավարությունները: Հոկտեմբերյան հեղափոխությունը հարցը «հանեց» հին փակուղուց և խորհրդային կառավարության 1917 թ. դեկտեմբերի 29-ի հրովարտակով մտցրեց «մի նոր փակուղի»: Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության հետագա ընթացքը շատ ավելի հակահայկական էր[84]:

Փաստորեն, խորհրդային կառավարությունը հայերի վերահսկողության տակ էր դնում պատերազմի իրավունքով իրեն պատկանող տարածքները, առանց հստակ որոշելու հայկական ինքնիշխանության սահմանները: Պատմաբանների համոզմամբ, նշված տարածքներից ռուսական և թուրքական զորքերի դուրսբերումը

---

[84]Տե՛ս ***Սարուխանյան Ն.*** Ռուսաստանը և Հայկական հարցը // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2009, № 2–3, էջ 3–22:

պարտադիր էր համարվում, որպեսզի Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակը որոշող հանրաքվեն ազատ ու անկաշկանդ անցկացվեր[85]: Այս իմաստով խորհրդային Ժողկոմխորհի հրովարտակը գնահատվում է որպես սևրյան փաստաթղթի նախօրինակ տարբերակը. Հայկական հարցում Անտանտի տերությունների և Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության տրամաբանությունը, չնայած Ասիական Թուրքիայի մասնատման վերաբերյալ կնքված գաղտնի համաձայնագրերի նկատմամբ նրանց սկզբունքորեն տարբեր մոտեցումներին, հանգում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշման և անկախության գաղափարներին[86]: Նկատենք, որ այս տեսակետը գերիշխող է հայաստանյան պատմաբանների ավագ սերնդի ներկայացուցիչների աշխատություններում: Ու թեև դրա վրա առկա է խորհրդային գաղափարաքաղաքական ազդեցությունը, այնուամենայնիվ, տեսակետը կարելի է մեկնաբանել արդիական շեշտադրմամբ, ինչպես դա արել է Մոսկվայի Միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի տնօրեն, իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր, դիվանագետ Յուրի Բարսեղովը (1925–2008). «Միջազգային իրավունքի տեսանկյունից Հրովարտակն արժանահիշատակ է որպես ցեղասպանության հետևանքների հարցի լուծում առաջարկող առաջին ամենավաղ պետական ակտերից մեկը համաշխարհային պրակտիկայում: Հրովարտակը

---

[85]Տե՛ս ***Պողոսյան Սկ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 56–57:

[86]Տե՛ս ***Կարապետյան Հ.*** նշվ. աշխ., էջ 10–11, ***Մախմուրյան Գ.*** Ինքնապաշտպանության կազմակերպման հարցերի քննարկումը Հայոց Ազգային խորհրդում (1917 թ. նոյեմբեր–1918 թ. հունվար) // Բանբեր Հայաստանի արխիվների / Գիտական ժողովածու / Հայաստանի ազգային արխիվ, 2014, էջ 63–64:

ենթադրում էր Հայաստանի նկատմամբ թուրքական իշխանության անօրինականության ճանաչում և համապատասխանաբար՝ հայերի ցեղասպանության հետևանքների չճանաչում: Հրովարտակի իմաստի ու բովանդակության համաձայն, կոտորածը, հարկադիր փախուստն ու արտագաղթը չէին կարող ու չպետք է ազդեին հայերի ինքնորոշման իրավունքի իրագործման վրա»[87]:

Մեկ այլ տեսակետի համաձայն, խորհրդային Ժողկոմխորհի հրովարտակով Արևմտյան Հայաստանի բնակչության հանրաքվեի հարցի արծարծումն ինքնին վկայում էր, որ Խորհրդային Ռուսաստանն անվերապահորեն չէր ճանաչում արևմտահայերի իրավունքն իրենց Հայրենիքի նկատմամբ ու դրա իրացումը կախման մեջ էր դնում նաև մահմեդական բնակչության կամքից, որը Հայոց ցեղասպանությունից հետո գերակշռող էր Արևմտահայաստանում, մանավանդ, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ո՛չ դիվանագիտական, ո՛չ ֆինանսական որևէ աջակցություն չէին ցուցաբերում հայերին Հայրենիք վերադառնալու համար[88]: Ավելին, Արևմտյան Հայաստանին ազգային ինքնորոշման հնարավորություն տալը գնահատվում է իբրև «ծաղրուծանակ», «քարոզչական նշանակություն» ունեցող քայլ, «կեղծիք», քանի որ ցեղասպանության ենթարկված, հայաթափված երկրում ինքնավար պետություն ստեղծելն անհնարին էր, առավել ևս, որ հրովարտակի առաջին կետով նախատեսվում էր ռուսական զորքի դուրսբերումն այնտեղից[89]: Մասնավորապես, Ա. Մարուքյանի համոզմամբ, եթե բոլշևիկներին իրոք մտահոգեր Արևմտյան Հայաստանը զինագրավելու համար իրենց հասցեին Արևմուտքի հնարավոր

---

[87]Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, т. 2, ч. 2, с. 192.

[88]Տե՛ս ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 282:

[89]Տե՛ս նույն տեղում, էջ 284:

մեղադրանքների հեռանկարը, ապա ցանկության դեպքում կարող էին հրովարտակում նշել, որ ռուսական զորքը հայ բնակչության խնդրանքով կարող է մնալ Արևմտյան Հայաստանում այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ կլինի ներքին հարցերը համաժողովրդական հանրաքվեի միջոցով լուծելու, ներքին և արտաքին անվտանգությունն ապահովելու նպատակով ժողովրդական միլիցիա ստեղծելու համար[90]: Մինչդեռ դրա փոխարեն հայաթափված Արևմտյան Հայաստանում վերաբնակեցված թուրքերին ու քրդերին տրվում էր հնարավորություն՝ շարունակելու Եղեռնից մազապուրծ փոքրաթիվ հայ բնակչության ֆիզիկական ոչնչացումը: Խորհրդային կառավարության այդ մոտեցումը Հայկական հարցի լուծումը տանում էր փակուղի: Իրականում բոլշևիկները, տեսնելով, որ կորցնում են երկրամասը, հայերին հաճոյանալու համար ընդունեցին այդ հրովարտակը: Պատահական չէ, որ նրանք իրական քայլեր չկատարեցին փաստաթուղթը կենսագործելու ուղղությամբ: Ավելին՝ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտությամբ Վլ. Լենինի կառավարությունը թուրքերին հանձնեց ոչ միայն Արևմտահայաստանը, այլև՝ Կարսի մարզը[91]:

---

[90]Տե՛ս ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 396–397. Ուշագրավ է, որ հետագայում Խորհրդային Միությունը դիմեց դիվանագիտական այդ հնարքին Կուբայում, Աֆղանստանում ու այլ երկրներում իր ռազմաքաղաքական ազդեցությունը պահպանելու և ամրապնդելու համար:

[91]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 20–22, ***Մելքոնյան Ա.*** Հայոց պատմություն / Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998, էջ 191, ***Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա.*** Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2008, էջ 271, նաև՝ ***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), с. 397–398, 399.

Այդուհանդերձ, հայաստանյան պատմաբանների գնահատմամբ, Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը միանգամայն նոր որակ էր Հայկական հարցի պատմության մեջ: Այն դիվանագիտական առաջին փաստաթուղթն է, որը հայ ժողովրդի անվտանգության երաշխիք համարում էր անկախ պետականությունը, իսկ ժամանակի ամենամեծ երկրներից մեկը՝ Ռուսաստանը, այդ հրովարտակով ճանաչում էր հայերի օրինական իրավունքներն իրենց Հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ[92]:

Հայկական հարցի հայաստանյան պատմագրությունը նաև ամբողջացել է 1917–1918 թթ. խորհրդա-թուրքական, թուրք-գերմանական, թուրք-անդրկովկասյան և, մասնավորապես, հայ-թուրքական բանակցությունների փաստարկված ու համակողմանի վերլուծությամբ: Հ. Ավետիսյանի դիտարկմամբ, Խորհրդային Ռուսաստանի՝ «ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքներից բխող … մոտեցումը կարող էր առարկայական ուժ ստանալ միայն միջազգային իրավունքի պաշտպանության առկայությամբ: Սակայն Թուրքիան ժողովուրդների ազգային ինքնորոշման հարցը դիտում էր որպես իր պետության ներքին գործ, ժխտելով ազգային հարցի գոյությունը ընդհանրապես»[93]: Դա նշանակում է, որ բոլոր ճնշված ժողովուրդների, մասնավորապես՝ հայ ժողովրդի ինքնորոշման հնարավորությունները պետք է ապահովվեին նախքան Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների ավարտը:

Դրա փոխարեն Թուրքիան դաշնակից Գերմանիայի աջակցությամբ բանակցությունների օրակարգ բերեց իր հանդուգն, թալանչիական պայմանները, իսկ Կովկասյան ռազմաճակատից ռու-

---

[92]Տե՛ս ***Մելքոնյան Ա.*** Հայոց պատմություն / Դասախոսությունների ձեռնարկ, էջ 191, ***Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա.*** նշվ. աշխ., էջ 271:
[93]***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 51–52:

սական զորքի դուրսբերումը և մասնակի զորացրումը ի չիք դարձրին հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը[94]: Հ. Ավետիսյանի բնորոշմամբ, «Բրեստ Թուրքիան եկել էր մեթոդապես պատրաստված, դաշնակիցներին «մշակելով», նոր համախոհներ գտնելու ձեռնարկումներով» և «թալանչիական ամբարտավան բնույթի» պայմաններով[95]: Ըստ դրանց, հաշտության պայմանագրի ստորագրման պահից 6–8 շաբաթվա ընթացքում ռուսական բանակը դուրս էր բերվում և Օսմանյան կայսրության քաղաքացիական ու զինվորական իշխանություններին վերադարձնում պատերազմի ժամանակ գրավված Օսմանյան կայսրությանը պատկանող ասիական բոլոր գավառները: Բրեստ-Լիտովսկի պայմանագրով 150 կամ ավելի կիլոմետր երկայնքով ռուս-թուրքական սահմանը պաշտպանելու համար Ռուսաստանը կարող էր սահմանագծի երկայնքով պահել ընդամենը մեկ դիվիզիա, զորացրելու էր բանակի մյուս ստորաբաժանումները, այդ թվում՝ ռուսահայերից և թուրքահպատակ հայերից բաղկացած զինված ջոկատները, և դրանք ուղարկելու էր երկրի խորքը: Սև ծովում գործող ռուսական նավատորմիղը ևս պետք է զորացրվեր: Մինչդեռ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և նրանց դաշնակիցների դեմ պատերազմը շարունակող Թուրքիայի բանակը պահվելու էր ռազմական վիճակում:[96]:

Հ. Ավետիսյանը նաև վեր է հանում պատերազմում ըստ էության պարտված, բայց գերմանական հովանու տակ գլուխ բարձրացրած Թուրքիայի թելադրող «պայմաններին» ռուսական պատ-

---

[94]Տե՛ս նույն տեղում, էջ 52–53, նաև՝ ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 277–304, ***Մարուքյան Ա.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 89–93:

[95]***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 46:

[96]Տե՛ս նույն տեղում, էջ 44:

վիրակության կողմից հակահարված չտալու, ավելին, դրանք նույնիսկ չքննարկելու փաստը՝ դա բացատրելով խորհրդային կառավարության և պատվիրակների նկատմամբ ճարպիկ դիվանագետ Իբրահիմ Հագգը փաշայի շողոքորթ պահվածքով[97]: Դրա ուշագրավ դրվագներից է թուրքական «Թանին» թերթի խմբագրի հետ Թուրքիայի Մեծ վեզիր Թալեաթ փաշայի հարցազրույցը[98]: Նա նշել էր. «Եթե ռուս ժողովուրդը հրաժարվի նվաճողական պահանջներից, որին հետամուտ էր ցարական իշխանությունը, այն ժամանակ Արևելքի ժողովուրդների համար կբացվի զարգացման և առաջընթացի նոր դարագլուխ»[99]: Այնուհետև, Թալեաթը տարակուսանք էր հայտնել, թե «Միլյուկովը խոսելով պատվավոր հաշտության մասին, առաջ է քաշում թուրքահայ հարցի լուծումը հօգուտ Ռուսաստանի: Չգիտենք, թե արդյոք համամիտ են Ռուսաստանի ազատամիտ շրջանները ագրեսիվ քաղաքականության այդ տարօրինակ վարպետություններին և եթե ռուս ժողովուրդը պետք է ղեկավարվի իր գործողությունների մեջ ցարական իշխանության այդ կորստաբեր ժառանգությամբ, այն ժամանակ անտեղի կլիներ խոսել հաշտության մասին: … Մենք երբեք ագրեսիվ դիտավորություններ չունենք որևէ երկրի նկատմամբ, թուրք ժողովուրդը երկու և կես տարվա ընթացքում անխնա թափել է իր արյունը և ուստի հարցը կարող է լուծվել հօգուտ թուրքերի»: «… Թուրքիան և Ռուսաստանը դարերի ընթացքում մահացու թշնամիներ են եղել և թշնամության պատճառը գտնվում է բացառապես Ռուսաստանի նպատակների մեջ՝ գրավել մեր երկիրը»[100],– հայտարարել էր Թալեաթը:

---

[97]Տե՛ս նույն տեղում, էջ 45:

[98]***«Մշակ»,*** Թիֆլիս, 25.III.1917:

[99]Նույն տեղում:

[100]Նույն տեղում:

Այս ոգով էլ թուրքական դիվանագետները հետևողականորեն աշխատում էին Բեռլինի ու Վիեննայի դիվանագիտական շրջանակներում, օգտագործում անգամ անձնական կապերը՝ ապահովելու Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններում գերմանա-ավստրիական աջակցությունը: Որպես վկայություն, Հ. Ավետիսյանը մատնանշում է Գերմանիայի արտաքին գործերի պետական քարտուղար ու Բրեստ-Լիտովսկի բանակցություններում գերմանական պատվիրակության ղեկավար Ռիխարդ ֆոն Քյուլմանի և Գերմանիայում Թուրքիայի դեսպան Հագգը փաշայի, արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմիի՝ Բեռլինում կայացած նախաբրեստյան բանակցությունները, բանավեճերը, դրանց արդյունքների վերաբերյալ Հագգը փաշայի Կոստանդնուպոլիս՝ արտաքին գործերի նախարարությանն ուղղված, ինչպես նաև Կոստանդնուպոլսի պաշտոնական դիրքորոշման վերաբերյալ Բեռլին ուղարկված հեռագրերը, Ահմեդ Նեսիմիի 1917 թ. դեկտեմբերի 12-ի հեռագրով Հագգը փաշային տրված հրահանգները: Դրանք վկայում են, որ թուրքական դիվանագիտության գլխավոր խնդիրը Գերմանիայի ու Ավստրիայի կողմից նվաճված հողերի հանձնումից նախ և առաջ ռուսների ձեռքում գտնվող հողերից ռուսական զորքերի դուրսբերումն ապահովելն էր՝ թույլ չտալով, որ որևէ տարածք անցներ նոր-նոր կազմավորվող հայկական զորամասերի վերահսկողության ներքո, և միևնույն ժամանակ այդ տարածքներում թուրքական իշխանության վերականգնման անհրաժեշտությունը հիմնավորելը: Որպես այդ նպատակին հասնելու գործնական ուղի, առաջ էր քաշվում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության հետ բանակցություններում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան կայսրության, Բուլղարիայի շահերը և հաշտության հետ կապված հարցերը միմյանցից չտարանջատելը,

ինչպես նաև Քառյակ միության պատվիրակների միասնական, փոխհամաձայնեցված վարքագիծն ապահովելը[101]:

Հայկական հարցի լուծմամբ անմիջականորեն շահագրգիռ մյուս կողմի՝ խորհրդային պատվիրակության հարցադրումները ներկայացված էին 1917 թ. նոյեմբերի 27 (դեկտեմբերի 10)-ով թվագրված «Հաշտության վերաբերյալ բանակցությունների ծրագրի կոնսպեկտում»: Ըստ դրա, նախատեսվում էր՝ պատերազմող երկրների կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ոչ տիրապետող ազգի համար ազատ ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատում և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի ճանաչում: Ինքնորոշման իրավունքն իրագործվելու էր որոշակի տարածքի ամբողջ բնակչության հանրաքվեի միջոցով: Այդ տարածքի աշխարհագրական սահմանները որոշվելու էին այդ և սահմանակից վարչաքաղաքական միավորների բնակիչների ընտրած ներկայացուցիչների կողմից: Ազգի ազատ ինքնորոշման իրականացումը երաշխավորվելու էր նախապես սահմանագծված տարածքից բոլոր զորքերի դուրսբերմամբ, գաղթականների, նաև պատերազմի սկզբից իշխանության կողմից իրենց բնակության վայրերից վտարված բնակիչների տեղավորմամբ և ինքնորոշվող էթնիկ հանրության՝ ընտրված ներկայացուցիչներից կազմված ժամանակավոր վարչության ստեղծմամբ, բանակցող կողմերի ժամանակավոր վարչությանն առընթեր հանձնաժողովների ձևավորմամբ՝ փոխադարձ վերահսկողության իրավունքով[102]: «Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքներից բխող նման մոտեցումը կարող էր առարկայական ուժ ստանալ միայն միջազգային իրավունքի պաշտպանության առկայությամբ: Սակայն Թուրքիան ժողովուրդների ազ-

---

[101]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 46–50:

[102]Տե՛ս նույն տեղում, էջ 51, ***Аветисян Г.*** Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум, с. 37.

գային ինքնորոշման հարցը դիտում էր որպես իր պետության ներքին գործ, ժխտելով ազգային հարցի գոյությունն ընդհանրապես»[103],– եզրակացնում է Հ. Ավետիսյանը:

Հաշտության պայմանագրի գերմանա-ավստրո-հունգարական նախագծում առաջ էր քաշվում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչումը, Ֆինլանդիայից, Էստոնիայից, Լիֆլանդիայից՝ Արևելյան Գալիցիայից, Հայաստանից ռուսական զորքի դուրսբերումը, սակայն դա չէր նշանակում, թե քաղաքական ինքնուրույնություն չունեցող ժողովուրդների՝ այս կամ այն պետություններին պատկանելության հարցը վճռվելու էր բացառապես միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա: Նախատեսվում էր յուրաքանչյուր հարց վճռել իշխող պետության և ինքնորոշման ձգտող ժողովրդի մասնակցությամբ՝ սահմանադրությամբ նախատեսված ճանապարհով[104]: Ինքնին հասկանալի է, որ բոլոր ճնշված ժողովուրդների՝ մասնավորապես, հայ ժողովրդի ինքնորոշման հնարավորությունները պետք է ապահովվեին նախքան հաշտության բանակցությունների ավարտը: Հակառակ դեպքում հաշտության նախնական պայմանները, ռուսական զորքի դուրսբերումը և մասնակի զորացրումը սպառնում էին ոչ միայն ի չիք դարձնել հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքն, այլև նրան կանգնեցնել նոր ցեղասպանության վտանգի առջև:

Հ. Ավետիսյանը Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում Հայկական հարցի քննարկման ընթացքի վրա ազդող որոշիչ գործոն է համարում թուրք-գերմանական հակահայկական գործակցությունը: Նա ծանրակշիռ փաստեր է ներկայացնում դիվանագիտական այն հնարքների վերաբերյալ, որոնց միջոցով

---

[103] ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 51–52:
[104] Տե՛ս նույն տեղում, էջ 52–53:

գերմանական և թուրքական պատվիրակությունները նախ փորձում էին բանակցությունների երկրորդ փուլի օրակարգից դուրս մղել Հայկական հարցը, ապա «հիմնավորում էին» Կարսից, Արդահանից ու Բաթումից ռուսական զորքը դուրս բերելու, տեղի մահմեդականներին զինելու և նշված տարածքներում թուրքական վերահսկողություն հաստատելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, ուշագրավ են Ռ. ֆոն Քյուլմանի ձախողված փորձերը՝ հանելու Հայկական հարցը հաշտության բանակցությունների երկրորդ փուլի օրակարգից այն պատճառաբանությամբ, որ առաջին փուլի նիստերում «էական դեր չէր խաղացել»: Բնութագրական են նաև թուրքական կողմի (Ահմեդ Նեսիմի, Թալեաթ, Իզզեթ) շինծու անհանգստությունը ռուսական զորքի նվաճած «օսմանյան տարածքում» ռուսական զենքով զինված հայերի կողմից մահմեդականների նկատմամբ կատարվող՝ «իրենց դաժանությամբ չտեսնված բռնությունների» առիթով և նրանց զավթողական նկրտումները Կարսի, Արդահանի ու Բաթումի նկատմամբ: Դրանք արժանանում էին գերմանական ու ավստրիական դիվանագետների սատարմանը՝ հակառակ վերջիններիս կառավարությունների կողմից դեռևս 1878 թ. Բեռլինի տրակտատով Օսմանյան կայսրությունում արևմտահայերի ֆիզիկական անվտանգությանը սպառնացող վտանգը պաշտոնապես ճանաչելու փաստին և հայկական վիլայեթներում տեղական կարիքներից բխող բարենորոգումների իրագործումն ու հայ բնակչության անվտանգության ապահովումն իրենց վերահսկողության տակ առնելու պարտավորությանը[105]:

Հայկական հարցում Քառյակ միության երկրների միասնական դիրքորոշման հերթական դրսևորումներ էին 1918 թ. փետրվարի 5(18)-ին ռուսական ամբողջ ռազմաճակատով գերմանացի-

[105]Այս մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 55–59:

ների նոր հարձակումը և փետրվարի 8(21)-ին գերմանա-ավստրո-հունգարական կողմի ներկայացրած ծանր վերջնագիրը: Հարցն այն է, որ վերջնագրի 5-րդ կետում պաշտպանվում էին թուրքական պատվիրակության առաջադրած պայմաններն առավել հստակ ձևակերպմամբ. «Ռուսաստանը իր տրամադրության տակ ունեցած բոլոր միջոցներով պետք է նպաստի Թուրքիային նրա անատոլիական գավառների ավելի արագ ու պլանաչափ վերադարձմանը և ճանաչի թուրքական կապիտուլյացիաների վերացումը: Ռուսական բանակների լրիվ զորացրումը, ներառյալ և ներկա կառավարության կողմից ստեղծված զորամասերինը, պետք է իրագործվի անհապաղ»[106]:

Թուրքական վերջնագրի պայմաններից ամենածանրը Ռուսաստանից Արդահանի, Կարսի և Բաթումի անջատման պահանջն էր ինքնորոշման պատրվակով, որը, ինչպես նկատում է Հ. Ավետիսյանը, «փաստորեն Կովկասյան ճակատում հաղթանակի հասած Ռուսաստանի կապիտուլյացիան էր ոչ միայն գերմանական իմպերիալիզմի, այլև թուրքական օսմանիզմի առաջ: Դրանով հայ ժողովուրդը անօգնական կանգնում էր թուրքական բիրտ ուժի դեմ ճակատ առ ճակատ, կորցնում իր պապենական հողերը»[107]: «Այստեղ էր, որ գործադրվեց 1914 թ. օգոստոսի 2-ին Ստամբուլում կնքված գերմանա-թուրքական դաշինքի ուժը, գործել սկսեց գերմանացիների խոստումը թուրքերի նվաճողական պլանների պաշտպանության, Օսմանյան կայսրության «արևելյան սահմանների շտկման» և Ռուսաստանում բնակվող մուսուլմանական տարրերի հետ «անմիջական շփման» հարցերում»,– շարունակում է Հ. Ավետիսյանը և, վկայակոչելով Օսմանյան կայսրությունում գերմա-

[106]Նույն տեղում, էջ 80:
[107]Նույն տեղում, էջ 91:

նական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Օ. Լիման ֆոն Սանդերսին, հավելում, որ «թուրքերը ամբողջ պատերազմի ընթացքում վկայակոչում էին այդ դաշնագիրը և պահանջում գերմանական խոստումների կատարում: Եվ Թուրքիան պահը բաց չթողեց: Եվ դա հենց այն ժամանակ, երբ ֆելդմարշալ Պաուլ Ֆոն Հինդենբուրգի վկայությամբ, Հայաստանում «ռուսական ուժը արդեն նոսրացել էր, զորքերի մի մասը բացարձակապես հալվել էր, թուրքերին դիմադրողները» միայն հայկական խմբեր էին»[108]:

Երզնկայի զինադադարն օգտագործելով նոր հարձակողական գործողությունների նախապատրաստվելու համար, նաև օգտվելով ռուսական զորքերի բարոյալքումից և քայքայվածությունից, Կովկասյան ռազմաճակատի փլուզումից՝ թուրքերը, առանց զինադադարը վերացված հայտարարելու, ռուս-թուրքական ամբողջ ռազմաճակատով անցան հարձակման: Թուրքական բանակային կորպուսներին հրաման էր տրված առաջ շարժվել Վան–Բայազետ, Երզնկա–Էրզրում և Բաբերդ–Տրապիզոն ուղղություններով:

Վկայակոչելով գերմանական, ավստրո-հունգարական, ռուսական, հայկական, վրացական աղբյուրները, թուրքական հրամանատարության հեռագրերը, անդրկովկասյան մամուլում ժամանակին տպագրված նյութերն ու հաղորդումները՝ Հ. Ավետիսյանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Էնվեր և Թալեաթ փաշաները, թուրքական բանակի հրամանատարներ Վեհիբ և Հալիլ փաշաները իրենց պետության զավթողական պլանները քողարկում էին ռուսական բանակի կողմից զինագրավված տարածքում «հայկական բարբարոսություններին վերջ տալու», «քաղաքակրթությունը և թուրք ազգաբնակչությանը պաշտպանելու» կեղծ մարդասիրական պատրվակով: Թուրք գործիչները նկատի

[108]Նույն տեղում, էջ 80:

ունեին նոր կազմակերպվող հայկական կորպուսի գնդերը, կամավորական ջոկատներն ու խմբերը: Դրանք օրեցօր դատարկվող Կովկասյան ռազմաճակատում զբաղեցնում էին իրենց դիրքերն անկազմակերպ ու զանգվածաբար լքող, խորհրդային իշխանության խոստացած խաղաղ կյանքին, հողին, գործարաններին տիրելու ակնկալիքով տուն շտապող ռուս զինվորականներին: Այդպիսով հայկական զինուժն աստիճանաբար ստանձնում էր թուրքական կանոնավոր զորքերի առաջխաղացումը կանխելու, ռազմաճակատի գիծը պահելու, թուրքական վերահաս հարձակման դեպքում հայ խաղաղ բնակչության ֆիզիկական անվտանգությունն ապահովելու և, վերջապես, թուրքական տիրապետությունից ազատագրված ու իր քաղաքական կարգավիճակի վերաբերյալ միջազգային իրավական վճռին սպասող հայրենի հողը՝ Արևմտյան Հայաստանը, պաշտպանելու սուրբ պարտականությունը: «Հայկական «բանդաների» կողմից մահմեդականների հալածման հոգեբանական-քարոզչական աշխատանքը թուրքերը ծավալում էին ամենուր, այդ թվում և իրենց դաշնակից պետությունների դեսպանների, հյուպատոսների շրջանում»[109],– գրում է Հ. Ավետիսյանը: Խոսելով թուրք գործիչների կողմից հայերի «վայրագությունների» մասին մտացածին փաստաթղթերով նաև Կովկասյան ռուսական բանակի շտաբը, Անդրկովկասյան կոմիսարիատը և պետական այլ մարմիններ «ռմբակոծելուն»՝ պատմաբանը վկայակոչում է թուրքական կողմի փաստարկների սնանկությունը և զինադադարի խախտման ու օսմանյան բանակի հարձակման հիմնավորման անհեթեթությունը մերկացնող, հայերի նկատմամբ թուրքական կեղծ մեղադրանքները ժխտող երկու վավերագիր: Դրանցից մեկը ռուսական Կովկասյան բանակի հրամանատար, ոչ հայամետ գե-

[109]Նույն տեղում, էջ 82:

ներալ-լեյտենանտ Իլյա Օդիշելիձեի հունվարի 30 (փետրվարի 12)-ի, մյուսը՝ Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Եվգենի Լեբեդինսկու փետրվարի 1(14)-ի հեռագրերն են Վեհիբ փաշային[110]: Դրանցում շեշտվում է, որ մահմեդական բնակչության նկատմամբ բռնությունների վերաբերյալ տեղեկությունները չափազանցված են, որ «իրոք տեղի ունեցած բոլոր գործողությունները եղել են ստիպողական գործողություններ, ինչպես անհատ անձանց, այնպես էլ ոչ մեծ խմբերի վրա քրդերի, ինչպես և մյուս մուսուլմանական տարրերի անընդմեջ գործողությունների պատճառով»: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ «տեղի ունեցած իրադարձությունների մարդասիրական, հումանիզմի տեսանկյունով ամենաարդար գնահատման դեպքում» զորավար Եվգ. Լեբեդինսկին չէր տեսնում թուրքերի կողմից «զինադադարը խախտելու և զորքերը առաջ շարժելու» «իրական անհրաժեշտություն»[111]: Այս վավերագիրն ուշագրավ է նաև այն առումով, որ ռուսական բանակի գեներալ-մայորը թուրքական զորքի հրամանատարին առաջարկում էր վերջ տալ զինադադարի խախտմանը՝ հայտնելով, որ «ռուսական բանակի ազգային սկզբունքով վերակազմավորման կապակցությամբ, բոլոր զորամասերը, որ ազգին էլ որ նրանք պատկանեն, պետք է դիտվեն իբրև ռուսական հանրապետության լիիրավ զինվորական մաս»[112]: Հ. Ավետիսյանը թուրքական հրամանատարության «դիվանագիտական խաղերի» վկայություն է համարում նույն թվականի փետրվարի 1-ին Թիֆլիս՝ Անդրկովկասյան կոմիսարիատին ուղարկված Վեհիբ փաշայի հեռագիրը, որով նա տեղեկացնում էր Անդրկովկասի կառավարության անկախությունը

[110]Տե՛ս նույն տեղում, էջ 83–85:
[111]Նույն տեղում, էջ 84:
[112]Նույն տեղում, էջ 85:

ճանաչելու և Բրեստ-Լիտովսկում կայանալիք խաղաղության կոնֆերանսին երկրամասի պատվիրակությանը մասնակից դարձնելու Քառյակ միության պետությունների մտադրությունների մասին[113]:

Վերոնշյալ հարցերից բացի, Հ. Ավետիսյանը նաև ներկայացնում է հաշտության սկզբունքների հետ կապված տարբեր տեսակետների ու կարծիքների բախումը, երկարատև ու ծանր քննարկումներն Անդրկովկասի հասարակական-քաղաքական շրջանակներում՝ վերհանելով երկրամասի ազդեցիկ բոլոր քաղաքական ուժերի տարաձայնություններն Արևմտյան Հայաստանի ինքնորոշման և ինքնավարության հարցում: Դրանք վկայում են, որ ՀՅԴ գործիչներ Արշակ Զուրաբյանի, Ալեքսանդր Խատիսյանի, Հովհաննես Քաջազնունու, Սիրական Տիգրանյանի առաջ քաշած Արևմտյան Հայաստանի ինքնորոշման և ինքնավարության հարցադրումը ձախողելու գործում վճռական դեր է կատարել մուսավաթականների ընդգծված հակահայկական դիրքորոշումը: Ի հակադրություն հայկական կողմի հարցադրման, նրանք բարձրացնում էին ոչ միայն հայերի, այլև Ռուսաստանի սահմաններում ապրող բոլոր ազգությունների ինքնորոշման հարցը՝ նկատի ունենալով նախևառաջ մուսուլմաններին և հաշվի առնելով իրրեդենտիզմի (չվերամիավորված տարածքների) համաթուրքական գաղափարը, որը ենթադրում էր Կովկասի «միավորում» Օսմանյան կայսրությանը:

Կովկասի մուսավաթականների ճնշման և վրացի մենշևիկների խուսափողական կեցվածքի պայմաններում Անդրկովկասի Սեյմն ընդունեց հաշտության՝ «Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1914 թ. պատերազմ հայտարարելու պահին եղած պետական սահմանների վերականգնման» և «Արևելյան Անատոլիայի ինքնորոշման իրավունքին, մասնավորապես Թուրքահայաստանի ինքնո-

[113]Տե՛ս նույն տեղում:

ոոշմանը՝ թուրքական պետականության շրջանակներում» հիմնադրույթները: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի նկատմամբ թուրքական ատելի տիրապետությունը վերականգնելու համար դուռ բացվեց, մանավանդ, որ թուրքական և գերմանական պատվիրակները, Արևմտյան Հայաստանն անվերապահորեն դիտելով որպես Օսմանյան կայսրության մաս՝ Արևելյան Անատոլիա, փորձում էին դա հաստատել թուրք բնակչության «դիմումներով» և Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերում բնակվող մահմեդականների «ճնշված վիճակով», նրանց «ընդառաջ գնալու» մղումով:

Հ. Ավետիսյանը հիմնավորում է, որ գերմանա-ավստրո-թուրքական պատվիրակությունները Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում «երկակի ստանդարտների» դիվանագիտության միջոցով կարողացան հմտորեն օգտագործել ազգերի ինքնորոշման միջազգային իրավական սկզբունքը Խորհրդային Ռուսաստանի դեմ՝ հօգուտ Քառյակ միության երկրների՝ մասնավորապես, Թուրքիայի ծավալապաշտական նպատակների: Դրանով իսկ ոչ միայն ձախողեցին Հայկական հարցի արդարացի լուծումը, այլև հասան ցեղասպանության թուրքական քաղաքականության հետևանքով հայաթափված Արևմտյան Հայաստանում Թուրքիայի տիրապետության վերականգնմանը: Դա պատերազմում պարտվող Քառյակ միության պետությունների դիվանագիտական խոշոր հաղթանակն էր Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, որը, ի վերջո, կործանարար եղավ Հայաստանի և Անդրկովկասի համար[114]:

Այսպիսով, 1918 թ. փետրվարի 18 (մարտի 3)-ին Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության պետությունների միջև կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածի

[114]Նույն տեղում, էջ 89:

համաձայն՝ Ռուսաստանը պարտավորվում էր անել իրենից կախված ամեն ինչ՝ Արևելյան Անատոլիայից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից իր զորքերը դուրս բերելու և դրա «օրինական վերադարձը Թուրքիային» ապահովելու համար: Ռուսաստանն անհապաղ պետք է դուրս բերեր իր զորքերը նաև Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգներից: Նա չպետք է միջամտեր դրանց պետական իրավական և միջազգային իրավական նոր հարաբերությունների կազմակերպմանը, պետք է իրավունք տար դրանց բնակչությանը հաստատելու նոր կարգ՝ հարևան պետությունների և հատկապես Օսմանյան կայսրության համաձայնությամբ[115]:

Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև նույն՝ մարտի 3-ին, ստորագրված 15 հոդվածից բաղկացած լրացուցիչ պայմանագրի 1-ին հոդվածի համաձայն՝ Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև Կարսից, Արդահանից, Բաթումից իր զորքերի դուրսբերումից բացի, Ռուսաստանը պարտավորվում էր մինչև պատերազմը եղած սահմաններից այն կողմ ընկած տարածքներից հանել իր բոլոր ռազմական ուժերը, քաղաքացիական և զինվորական պաշտոնատար անձանց՝ պայմանագիրը կնքելուց 6–8 շաբաթվա ընթացքում: Նույն հոդվածի 5-րդ կետով Ռուսաստանը պարտավորվում էր նաև զորացրել ու արձակել թուրքահպատակներից և ռուսահպատակներից կազմված հայկական զինված խմբերը, որոնք գտնվում էին ինչպես ռուսական, այնպես էլ գրավված թուրքական տարածքներում: Ռուսաստանը համաձայնվում էր Կովկասի ամբողջ տարածքում հաշտության ամբողջ ընթացքում չկենտրոնաց-

[115]Տե՛ս Мирные переговоры в Брест-Литовске с 22/9 декабря 1917 г. до 3 марта (18 февраля) 1918 г., т. 1 (Пленарные заседания. Заседания политической комиссии) / Полный текст стенограммы под ред. и с прим. А. А. Иоффе (В. Крымского) / Предисл. Л. Д. Троцкого. М., 1920, с. 235; Документы внешней политики СССР, т. 1, док. № 78, с. 121.

նել մեկ դիվիզիայից ավելի զորք: Իսկ Թուրքիան, ընդհակառակը, «իր մյուս թշնամիների դեմ պատերազմը շարունակելու անհրաժեշտությունից» ելնելով՝ «ստիպված է իր բանակը պահել ռազմական վիճակում»[116]:

Վերլուծելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրին նրա ժամանակակիցների և խորհրդահայ պատմաբանների տված գնահատականները՝ Գ. Մախմուրյանը մերժում է դրա արդարացմանն ուղղված տեսակետները: Նա շեշտում է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ոտնահարվեցին հայերի ազգային շահերը: Պայմանագիրը ոչ միայն չհարգվեց օսմանյան կառավարության կողմից, այլև հեշտացրեց թուրքական բանակի ռազմական առաջխաղացումն Անդրկովկասում՝ մասնակի զիջումների սին հույսեր ներշնչելով ու էլ ավելի թուլացնելով հայերի ինքնապաշտպանական ճիգերը[117]:

«Հազար անգամ ավելի լավ կլիներ, եթե Ռուսաստանը միջամտեր Արդահանի, Կարսի, և, եթե հարկ լիներ, նաև հայոց մյուս մարզերի գործերին, քան թե՝ խնդիրները թողներ Թուրքիայի համաձայնությամբ «նոր կարգ» հաստատելուն»[118],– նկատում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Կարապետյանը (1927–2004): Նա կարևորում է հայկական ազգային զորամասերի ձևավորման ու պահպանման խնդիրները, որոնց լուծումը կարող էր ապահովել Արևմտյան Հայաստանի անվտանգությունը: Մինչդեռ, դրա փոխարեն, լրացուցիչ պայմանագիրը պարտավորեցնում էր Ռուսաստանին զորացրել ու արձակել թուրքա-

---

[116]Документы внешней политики СССР, т. 1, док., № 82, с. 199–200; ***Ազատյան Հ. Գ.*** նշվ. աշխ., էջ 77–84:

[117]Տե՛ս ***Махмурян Г.*** Брестский мир 1918 г. в оценке современников и армянской историографии, с. 50, 53–54, 62.

[118]***Կարապետյան Հ.*** նշվ. աշխ., էջ 13:

հպատակներից և ռուսահպատակներից կազմված հայկական զինված խմբերը[119]:

Թուրք-ռուսական լրացուցիչ պայմանագրով վերականգնվեցին Թուրքիայի և Ռուսաստանի միջև 1877 թ. սահմանները:

««Արևելա-անատոլիական գավառներ» ձևակերպմամբ և Գերմանիայի ճնշմամբ, հոգեվարքի հասած Օսմանյան կայսրությանը «վերադարձվեցին» Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի օրենքներով Թուրքիայից ազատագրված հայկական վաղնջական հողերը, զորքերը դուրս հանվեցին նաև ռուսական կայսրության մաս կազմող Կարսի և Բաթումի մարզերից, հայկական տարածքը բռնակցվեց Թուրքիային: Դա Կովկասյան ճակատում հաղթանակի հասած Ռուսաստանի կապիտուլացիան էր ոչ միայն գերմանական իմպերիալիզմի, այլև պանթուրքիզմի առաջ: Դրանով հայ ժողովուրդը անօգնական մնաց թուրքական բիրտ ուժի դեմ՝ մեն-մենակ»[120],– եզրակացնում է Հ. Ավետիսյանը, հավելելով, որ «այսպիսով, ի չիք էր դառնում Ժողկոմխորհի՝ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի իրականացումը: Ժխտվում էր նաև «Հաշտության մասին» հրովարտակով հռչակված «հաշտություն առանց հողագրավումների և ռազմատուգանքների» սկզբունքը»[121]:

Խորհրդային Ռուսաստանի կողմից արդարության այսօրինակ ընկալումը քաղաքական իմաստով անձնատվություն էր թուրքական նվաճողական նկրտումների առաջ: Ռազմական տեսակետից դա իսկական ստորացում էր Ռուսաստանի համար, իսկ իրավական տեսանկյունից՝ միջազգային իրավունքի ոտնահարում, քանի որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրման պահին

---

[119]Տե՛ս նույն տեղում:

[120]***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 41:

[121]Նույն տեղում, էջ 102:

կովկասյան խորհուրդները չէին ընդունել Ժողկոմխորհի իշխանությունը:

Ակնհայտ է, որ նորահռչակ խորհրդային իշխանությունը գերմանա-թուրքական ռազմադիվանագիտական ճնշմանը, ներքին հակահեղափոխությանը դիմակայելու և միևնույն ժամանակ սոցիալիստական հեղափոխությունը համաշխարհայինի վերաճելու դժվարին ճանապարհին չէր կարող խուսափել դիվանագիտական-քաղաքական անհաջողություններից ու ելևէջներից: Այս իմաստով հատկանշական է, որ մարտի 15-ին Խորհուրդների համառուսաստանյան IV արտակարգ համագումարում՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վավերացման երկրորդ օրը, Ռուսաստանը խախտեց պայմանագրում Հայկական հարցին վերաբերող մասը: Խոսքն այն մասին է, որ Ի. Ստալինի ստորագրությամբ հատուկ շրջաբերականով հանձնարարվեց հեղափոխական բոլոր շտաբներին, խորհուրդներին և խորհրդային այլ կազմակերպություններին արգելք չհանդիսանալ այն ջոկատների առաջխաղացմանը, որոնք կոչված էին պաշտպանելու իրենց հայրենիքը թուրք-գերմանական բռնակալներից: Ընդ որում, հատուկ շեշտվում էր որ «հայկական հեղափոխական կազմակերպություններն իրավունք ունեն ազատ կազմակերպել հայկական կամավորական ջոկատներ»[122]:

Հավելենք, որ, ի լրացումն վերոնշյալի, սեպտեմբերի 20-ին Խորհրդային Ռուսաստանը չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը՝ հիմք ընդունելով Թուրքիայի կողմից դրա խախտումները, մասնավորապես՝ Կարսի մարզի գրավումը և տեղի հայերին ցեղասպանության ենթարկելը, պայմանագրով որոշված սահմաններից դուրս թուրքական ռազմական առաջխաղացումը, որը ևս ուղեկցվում էր հայերի

[122] ***Ազատյան Հ. Գ.*** նշվ. աշխ., էջ 17–18:

կոտորածով: Այդ մասին էր վկայում արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինի հուշագիրը՝ Օսմանյան կայսրության արտգործնախարարությանը[123]: Իսկ մեկ ամիս անց Խորհրդային Ռուսաստանը չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ամբողջությամբ:

Հ. Ավետիսյանի համոզմամբ, Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքում «պատերազմում պարտված և փլուզման շեմին գտնվող Թուրքիայի զավթողական նոր կեցվածքը և հոխորտանքը պայմանավորված էին ոչ թե նրա ռազմական ուժով, այլ խորհրդային դիվանագիտության և կառավարության կողմից բանակցությունների ձգձգման և ժամանակ շահելու, զիջողական քաղաքականությամբ, համաշխարհային հեղափոխության մոտալուտ հաղթանակի նրանց ակնկալություններով, հզոր դաշնակցի սատարմամբ»[124]:

Իսկ Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի չիրագործումը և Արևմտյան Հայաստանի, Կարսի ու Արդահանի հանձնումը Թուրքիային պատճառաբանում են նախևառաջ «հայ ժողովրդի անկարողությամբ», նրա՝ միջազգային հարաբերություններում «գործոն չլինելու» հանգամանքով՝ նկատի ունենալով Արևմտյան Հայաստանի հայաթափված լինելը, հայերի՝ ռազմական ու դիվանագիտական ուժի բացակայությունը, ազգային կենսական հարցերում, մասնավորապես՝ ինքնապաշտպանության կազմակերպման հարցում անմիաբան լինելը, Հայկական հարցում մեծ տերությունների և Օսմանյան կայսրության շահադիտական քաղաքականության օբյեկտ լինելը: Ավելին, Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրությանը վերադարձնելը

---

[123]Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, т. 2, ч. 2, с. 220.

[124]***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 106:

ներկայացվում է ոչ այնքան Խորհրդային Ռուսաստանի ներքին ու արտաքին շահերով, որդեգրած քաղաքական սկզբունքներով և թուրք-գերմանական ռազմական ու դիվանագիտական գործակցությամբ, որքան Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության նախագահների՝ Ա. Իոֆֆեի [շեշտվում է նրա հրեա լինելու հանգամանքը, նաև նշվում, որ պատվիրակության մեջ էր մեկ այլ հրեա ևս՝ պատվիրակության փորձագետ Մ. Պավլովիչը (Վելտման)], Լ. Տրոցկու, Գր. Սոկոլնիկովի անձնական որոշմամբ, նրանց «դավաճանությամբ»[125]:

Իհարկե, պատմական դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, թե որքան կորստաբեր էր Խորհրդային Ռուսաստանի «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» դիրքորոշումը. վերջինիս կողմից միակողմանի զինադադարի, ռազմաճակատներից ռուսական բանակի զորացրման, թուրք-գերմանական զորքերի կողմից Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների վերսկսման ու դրան զուգահեռ Քառյակ միության երկրների կողմից սաստկացող դիվանագիտական ճնշման արդյունքում նրանց հետ ստորագրվեց զինադադարից շատ ավելի ծանր պայմաններով Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը:

Ըստ պատմաբանների, Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը 1917 թ. վերջին–1918 թ. սկզբին չէր պատրաստվում ճանաչել Անդրկովկասի անկախ իշխանությունը, քանի որ մտադիր չէր կորցնել նրա տարածքը, մինչդեռ վերոնշյալ գործիչները «որոշել էին հրաժարվել ռուսական բանակի գրաված տարածքներից ու վերադառնալ 1914 թ. սահմաններին» և այդ պատճառով էլ շրջան-

---

[125]Տե՛ս ***Պողոսյան Սպ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 78–79, 95, 114, 148, 151–152, 157:

ցեցին բնակչության հանրաքվեի միջոցով Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքի կենսագործումն ապահովելու, հայկական տարածքներից թուրքական զորքերը պարտադիր դուրս բերելու և գաղթականների ու պատերազմի սկզբից իշխանությունների կողմից դրանցից վտարված բնակիչների վերադարձն ապահովելու մասին խորհրդային կառավարության հրահանգները: Ըստ նրանց, կարծիքը, թե «կորցնել Թուրքիան կնշանակի կորցնել ամբողջ Արևելքը» և «հեղափոխական ազդեցությունից դուրս թողնել մուսուլմանական բոլոր ժողովուրդներին», բոլշևիկյան շրջանակներում աստիճանաբար դարձավ տիրապետող[126]:

Հ. Ավետիսյանը թուրքական գործելակերպի մեջ կարևորում է համաթուրքական նվաճողական նպատակների իրագործմանն ուղղված բարոյահոգեբանական ճնշումների դիվանագիտական հնարքի և տարածքային բռնազավթումների տրամաբանված ու հետևողական զուգակցումը: Դրանով էլ նա բացատրում և հիմնավորում է օսմանյան իշխանությունների կողմից հայերի ցեղասպանությունն ու հայրենազրկումը շարունակելը և քրդական էթնիկ տարրն ամրապնդելը բռնազավթված հայկական տարածքում, թուրքերի դիվանագիտության կողմից նույնիսկ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը թուրքական պետության սահմաններում անզիջում մերժելը, անթույլատրելի ու «իրենց ներքին գործը» համարելը, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, անկախ հռչակելու և այն Թուրքիայի ու Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու խնդրի լուծմանն անցնելը 1918 թ. մարտ–ապրիլին՝ Տրապիզոնի բանակցություններում[127]: «Տրապիզոնի բանակցությունների ընթացքում հայերի դեմ ուղղված թուրքական քարոզչությունը հետա-

---

[126]Նույն տեղում, էջ 78–79:

[127]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 126, 128–129, 135:

պնդում էր Հայկական հարցի վերացման նպատակ: Կոստանդնուպոլսում մշակվում էին «հայկական իմպերիալիզմի» մասին պանթուրքական դրույթները, հայկական նոր կոտորածների, որպես ազգ նրանց ոչնչացնելու պլաններ, «հիմնավորվում» էր Անատոլիայում ի սկզբանե թուրքերի, Ադրբեջանում՝ ադրբեջանցիների տիրապետող լինելու վարկածը»[128],– եզրակացնում է Հ. Ավետիսյանը:

Անդրադառնալով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով «Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերում» անցկացվելիք հանրաքվեի հարցին՝ Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը շեշտում են, որ այդ տարածքների բնակչության՝ իր պետական իրավական և միջազգային իրավական նոր կարգը հանրաքվեի միջոցով որոշելու ու այդ կարգը Օսմանյան կայսրության և Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնեցնելու փոխարեն, «… մտնելով այդ վարչական տարածքները, թուրքերը հանդես եկան հանրաքվեն նախապատրաստողի և անցկացնողի դերում ու այդ արեցին թուրքավարի՝ Կարսի անկումից չորս ամիս անց»: Պատմաբանները նկատի ունեն մինչև հանրաքվեի անցկացումը տեղաբնակ ոչ մահմեդականների նկատմամբ ահաբեկչության քաղաքականությունը և դրա հետևանքով բնակչության այդ հատվածի կողմից հանրաքվեի բոյկոտումը, նաև միայն մահմեդականների քվեարկության հիման վրա Կարսը, Արդահանը և Բաթումը «հետգրավված հռչակելը» սուլթանի հրովարտակով: Այս իմաստով նրանք կարևորում են 1918 թ. օգոստոսի 12-ին Կարսի Հայ ազգային խորհրդի կողմից Բեռլինի կառավարությանը ներկայացված հուշագիրը վերոնշյալ հանրաքվեի վերաբերյալ: Փաստաթղթում ասվում էր, որ հայ բնակչությանը փոքրամասնություն դարձնելու համար մեծ թվով

[128]Նույն տեղում, էջ 126:

հայերի հարկադրել էին արտագաղթել և այլ վայրերից մահմեդականներ էին վերաբնակեցրել հայաթափված բնակավայրերում[129]: Այս փաստը վկայում է, որ Օսմանյան կայսրության հետ հարաբերություններում Ռուսաստանը 1918 թվականին կորցրեց ավելին, քան նախատեսել էին զիջել բոլշևիկները: Դրա հետևանքով ոտնահարվեցին հայ ժողովրդի օրինական իրավունքներն ու ազգային շահերը:

Դիվանագիտական արժեքավոր փաստաթղթերի, դեպքերին ժամանակակից ու մասնակից պետական բարձրաստիճան գործիչների գրառումների հիման վրա վերլուծելով պատմական իրադարձությունները՝ Հ. Ավետիսյանը հիմնավորում է, որ 1918 թ. մայիս–հունիսին Բաթումի հայ-թուրքական դիվանագիտական բանակցություններում Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման, նրա հետ «բարեկամության, հավերժ խաղաղության» վերաբերյալ թուրքական պատվիրակության ներկայացրած ծրագիրը հայաջինջ քաղաքականության նոր դրսևորում էր, որով երիտթուրքական կառավարությունը, ռազմաքաղաքական նոր իրադրությանը համապատասխան, լուծում էր իր համար կենսական մի քանի խնդիր: Մասնավորապես, Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով Արևմտյան Հայաստանում իր գաղութատիրական իրավունքները վերականգնած թուրքական կառավարությունը հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված Բաթումի հաշտության պայմանագրով ոչ միայն վերահաստատեց այդ փաստը, այլև միջազգային իրավական ձևակերպում տվեց Կարսի, Կաղզվանի, Սարիղամիշի վերագրավմանը, Արևելյան Հայաստանի տարածքի զգալի

---

[129]Տե՛ս ***Պողոսյան Սպ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), էջ 232–233:

մասի՝ ամբողջ Սուրմալուի գավառի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասի, Երևանի ու Շարուր–Դարալագյազի գավառների մի մասի, Նախիջևանի, Ախալքալաքի, Լոռու զավթմանը, ինչի հետևանքով Հայաստանն ու հայ ժողովուրդը դրվեցին ավելի ծանր պայմանների մեջ, քան պարտադրված էր եղել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով[130]:

Հայաստանի Հանրապետությանը թողնելով հազիվ 10 հազար կմ^2 լեռնոտ տարածություն Արագած լեռան և Սևանա լճի միջև՝ Թուրքիան անարգել մուտք գործեց Անդրկովկաս, իր ազդեցության տակ առավ Կովկասյան լեռնաշղթայից հարավ գտնվող բոլոր տարածքները, Կարս–Սուրմալու–Նախիջևան–Զանգեզուր–Ղարաբաղ առանցքով միացավ Կովկասյան ու Պարսկական Ադրբեջանին, իսկ հյուսիսում Դաղստանի վրայով՝ Հյուսիսային Կովկասի մահմեդականներին: Թուրքերի առջև բացվեցին լայն հեռանկարներ դեպի անդրկասպյան թուրք-թաթարական ցեղերը և Կենտրոնական Ասիայի թուրքաբնակ տարածքներ:

Թուրքական կառավարությունը հետևողական էր իր թուրանական հավակնություններում. նա ժամանակ շահեց դեպի Բաքու շարժվելու ծրագրին նախապատրաստվելու համար: Դրա իրագործումը լիովին հնարավոր էր Հայաստանի անկախ հանրապետության ճանաչման պայմաններում, քանի որ, ինչպես նշում է Հ. Ավետիսյանը, տնտեսապես աղքատ, փոքր տարածք ունեցող Հայաստանը չէր կարող երկյուղ ներշնչել Օսմանյան կայսրությանը: Ավելին, հեռանկարում թուրքերը տեսնում էին այդ Հայաստանի

---

[130]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 253: Տե՛ս նաև ***Ներսիսյան Ա., Թորոսյան Ջ.*** Բաթումի կոնֆերանսը: Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում // Ակունք / Գիտական հոդվածների ժողովածու թիվ 2 / Գլխ. Խմբ. Ա. Ներսիսյան, Երևան, 2012, էջ 3–18:

վերացումը: Եվ վերջապես, Անդրկովկասում Հայաստանի անկախ հանրապետության հռչակմամբ վերացվեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության՝ թուրքական կառավարությանն անհանգստացնող հարցը, որը կարող էր բարձրացվել Օսմանյան կայսրությանը հակառակորդ պետությունների կողմից՝ համաշխարհային պատերազմում նրա պարտության դեպքում: Թուրքերը հնարավորություն ստացան հայտարարելու, որ Հայկական հարցը հենց իրենց շնորհիվ արդեն լուծված է:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այս դեպքում համաթուրքական գաղափարախոսների հիմնավորումներն էին՝ այդ տարածքը որպես թուրքերի հայրենիքի՝ Անատոլիայի արևելյան մաս ներկայացնելը, Արևմտյան Հայաստանի բնիկ էթնոսի՝ հայերի իրավունքներն իրենց Հայրենիքի նկատմամբ չճանաչելը, բռնագաղթից ու կոտորածից մի կերպ խույս տված ու հայաթափված Արևմտյան Հայաստանի իրենց բնակավայրերում ծվարած փոքրաթիվ հայերին «հայադավան օսմանցիներ» անվանելը և իր Հայրենիքն ազատ ու անկախ տեսնելու՝ հայ ժողովրդի երազանքի իրականացումը բացառապես Հայաստանի Հանրապետության հետ կապելը[131]:

Հայկական հարցի պատմության 1917–1918 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը հայաստանյան պատմագիտության մեջ նաև ներկայացվել է հայության ինքնակազմակերպման, Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակի հարցի շուրջ հասարակական-քաղաքական շրջանակներում ընթացող բուռն քննարկումների, արևմտահայ ու արևելահայ հակասությունների համատեքստում: Շեշտվել է, որ Արևելյան Հայաստանում հայկական պետականության վերականգնման հարցը ազգային

[131]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 237–238:

օրակարգային խնդիր դարձավ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով ռուսական բազմազգ պետության փլուզման արդյունքում. հայ հասարակական-քաղաքական ուժերը հենց այդ ժամանակ կանգնեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը որպես առանձին հարց դիտարկելու կամ այն Արևելյան Հայաստանի հարցի հետ շաղկապելու երկընտրանքի առջև:

Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով Արևմտյան Հայաստանում թուրքական տիրապետության վերականգնման պայմաններում, երբ հայկական ազգային շահերը բախվում էին մի կողմից՝ թուրքական կառավարության, մյուս կողմից՝ Անդրկովկասի Սեյմի մուսուլման պատգամավորների հակահայկական հակադարձումներին, ՀՅԴ-ն շարունակում էր Հայկական հարցի լուծման ուղիներ որոնել: Կուսակցությունում իրագործելի էին համարում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը Օսմանյան կայսրության կազմում՝ առավելագույն դեպքում հայկական վեց վիլայեթների ընդգրկմամբ կամ նվազագույն դեպքում՝ խիստ որոշակի սահմաններում, որը կներառեր Էրզրումի վիլայեթի Բայազետի սանջակը, Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակը և Բիթլիսի սանջակի հյուսիսային մասը, Վանի վիլայեթի Վանի սանջակը՝ մինչև Բաթման-սու գետի հարավային շրջանը:

Փաստորեն, ըստ ՀՅԴ-ի, Վանա լճի շրջանը՝ Մուշի, Վանի և Ալաշկերտի երեք դաշտավայրերով, դառնում էր հայ ժողովրդի վերադարձի ու համախմբման տարածք, ուր վերադառնալու առաջին իրավունքը հայերին էր տրվելու: Այնտեղ կարող էին վերադառնալ մոտ 600 հազար հայ Անդրկովկասից, Օսմանյան կայսրության փոքրասիական վիլայեթներից, Միջագետքից, Ամերիկայից և այլ վայրերից: Կարող էին վերադառնալ և նախկինում այնտեղ բնակված այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Իր ներքին գործերը վարելու համար այդ տարածքի բնակչությունը պետք է

օգտվեր ինքնակառավարման իրավունքներից, այսինքն՝ ունենար իր օրենսդիր ժողովը, ընտրովի գործադիր մարմինն ու ոստիկանությունը՝ համալրված ինքնավարության տարածքում բնակվող բոլոր ազգերի ներկայացուցիչներից: Պետք է լիներ և միջազգային երաշխիք՝ Գերմանիայի դաշնակիցների և անդրկովկասյան պետության, ինչպես նաև հենց իր՝ Թուրքիայի կողմից:

Թուրքիայի հետ հաշտության Անդրկովկասի Սեյմի պատվիրակության 1918 թ. մարտի 18 (31)-ին Տրապիզոնում կայացած նիստում Ալ. Խատիսյանը ՀՅԴ-ի անունից առաջարկում էր, որ սուլթանը Անդրկովկասի հանրապետության հետ հաշտության պայմանագիրը կնքելիս հռչակեր Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը Թուրքիայի հովանավորության ներքո՝ ընդունելով, որ ինքնավար երկրամասի միակ պարտավորությունը թուրքական կառավարության նկատմամբ լինելու էր սուլթանին տարեկան հարկ վճարելը[132]:

ՀՅԴ-ի այս առաջարկների դեմ Անդրկովկասի Սեյմի պատվիրակության մուսուլման անդամների փաստարկները, ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, հանգում էին հետևյալ երեք հիմնական դրույթներին.

1. Անդրկովկասի ներկա վիճակը և թուրքերի ու անդրկովկասցիների ուժերի հարաբերակցությունը հնարավորություն չեն տալիս վերցնել Հայկական հարցի լուծման ծանրությունը: Հիմնախնդրի լուծումը պետք է թողնել հաշտության միջազգային խորհրդաժողովին,

2.չարժե Հայաստանի ինքնավարության հարցը Տրապիզոնի բանակցություններում բարձրացնելու պատճառով վտանգել Թուր-

[132]Այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 128–129, 146:

քիայի հետ «բարի հարաբերությունների և հարևանության վերականգնման» հեռանկարը,

3. բանակցությունների օրակարգից պետք է հանել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը և հանդես գալ այնպիսի առաջարկով, որը չդիտվի իբրև միջամտություն Թուրքիայի ներքին գործերին, քանի որ հակառակ դեպքում Թուրքիան կարող է խզել հարաբերություններն Անդրկովկասի հետ, նոր կոտորածներ կազմակերպել Թուրքիայում ապրող հայերի նկատմամբ[133]:

Անդրկովկասի Սեյմի պատվիրակության մուսուլման պատվիրակների այս մոտեցումը, որը Հ. Ավետիսյանը ներկայացնում է ՀԱԱ-ում պահպանվող վավերագրի հիման վրա, հիմնավորվում էր նրանով, որ Թուրքիան ներկայումս շատ ուժեղ է և պիտի խոսի կտրուկ լեզվով, որ անգլիական և իտալական նավատորմը չկարողացավ մտնել Դարդանել, քանի որ թուրքերը սեփական ուժերով, առանց գերմանացիների, պաշտպանեցին սևծովյան նեղուցները և Կոստանդնուպոլիսը, որ Ռուսաստանը 15 տարի դեռ կլինի թույլ, որ հայ ազգը դավաճանել է Թուրքիային, ինչի հետևանքով կոտորվել է 600 հազար հայ, 300 հազար թուրք էլ սպանվել է հայերի և ռուսների ձեռքով: Թուրքիան հայերին երաշխիք չի տա, եթե մտնի Կովկաս, միջազգային կոնֆերանսների վրա ևս հայերը հույս չպետք է դնեն. հայերի թուրքական կողմնորոշումը պետք է նաև թուրքերին իրենց շահերի համար, Թուրքիայում ապրում է 400 հազար հայ, այդ թիվը թուրքերի համար վտանգավոր չէ, հայերը հմուտ արհեստավորներ են և պարտաճանաչ տուրք վճարողներ, քրդերը թուրքերին պետք չեն, հույների դեմ հայերը հակաթույն են: Եվ վերջապես, շեշտվում էր, որ թուրքերը պետք է կատարեն իրենց պատմական առաքելությունը. եթե հայերը «ստիպեին», որ

[133]Տե՛ս նույն տեղում, էջ 129–131:

Կովկասը կռվի դուրս գար Թուրքիայի դեմ, ապա «թուրքերը պետք է անողոք լինեին հայերի հանդեպ»: Թուրքերն Անդրկովկասում վտանգավոր էին համարում միայն հայերին, ովքեր, իբր, «Երևանի նահանգում ավերում են թուրքական գյուղերը»[134],– ստահոդ հայտարարում էին Սեյմի պատվիրակության մուսուլման պատվիրակները:

1918 թ. գարնանը, երբ Անդրկովկասը դեռևս ռուսական պետության վարչաքաղաքական մասն էր, Բեռլինում իր գործունեությունն էր սկսել Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը: Նրա նպատակն էր՝ կանխել դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքի վտանգը, վերջ տալ հայ բնակչության նկատմամբ թուրքական շարունակվող բռնություններին, ստանալ Գերմանիայի կառավարության աջակցությունը բռնագաղթի ենթարկված հայերի՝ Հայրենիք վերադառնալու, Կարսի, Արդահանի և Բաթումի ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի իրագործման, Անդրկովկասի ներքին գործերին Թուրքիայի միջամտության դադարեցման հիմնախնդիրների լուծման գործում:

Պատվիրակության կազմում էին՝ ՀՅԴ-ն ներկայացնող Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանցը և Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը՝ Ժողովրդական կուսակցությունից: Վրաստանի օրինակով շրջվելով դեպի Գերմանիա՝ Հայոց ազգային խորհուրդը չէր փակել դեպի Ռուսաստան տանող դռները: Պատահական չէ, որ մինչ Բեռլին հասնելը, պատվիրակությունը կանգ է առնում Մոսկվայում, հանդիպումներ ունենում խորհրդային կառավարության անդամների հետ, ստանում նրանց գործնական աջակցությունը: Այնուհետև պատվիրակությունը շարունակում է իր գործունեությունը՝ կատարելապես անտեղյակ Անդրկովկասի անկախության

[134]Նույն տեղում, էջ 146:

հռչակմանն ընդհուպ այն պահը, երբ այդ մասին հայ պատվիրակներին տեղեկացնում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար բարոն Հելմուտ ֆոն Բուսշեն՝ խորհուրդ տալով «այսուհետև իրենց ցանկություններն ու առաջարկությունները, որոնք վերաբերում են Կարսում, Արդահանում, Բաթումում իրենց շահերին, արտահայտել Անդրկովկասյան կառավարության միջոցով, որին նրանք պատկանում են»[135]: Այդպիսով «պարզ ասվում էր, որ Հայոց ազգային խորհրդի պատվիրակության առաքելությունը Բեռլինում ավարտված է: Ակնհայտ դրսևորվեց և այն հանգամանքը, որ գերմանական կառավարությունը հայկական պատվիրակությունը որպես պաշտոնական պատվիրակություն չէր ընդունում, նրան դիտում էր որպես «հայ ազգի ցանկություններն արտահայտող պատվիրակություն»»[136],– գրում է Հ. Ավետիսյանը: Հավելենք, որ, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, պաշտպանելով Հայ ժողովրդական կուսակցության նախաձեռնությունը, նախապես հանդես էր եկել Բեռլին մեկնելու համար մեկ այլ՝ արդեն Ամենայն հայոց կաթողիկոսի մանդատի ներքո գործող պատվիրակություն ձևավորելու առաջարկով: Այդ պատվիրակությունը պետք է գործեր հայ ժողովրդի հոգևոր առաջնորդի անունից ու ջանքեր գործադրեր «զուտ մարդասիրական գործի համար, առանց որևէ քաղաքական նպատակի»[137]:

Պատմագիտական աշխատություններում Բեռլինում հայկական պատվիրակության գործունեությունը ներկայացնելը կարևոր է այն առումով, որ դրա միջոցով բացահայտվում է Գերմանիայի կառավարության դիրքորոշումը հայ ժողովրդի ազգային հիմնա-

---

[135]Նույն տեղում, էջ 184:

[136]Նույն տեղում:

[137]Տե՛ս նույն տեղում, էջ 176:

խնդիրների նկատմամբ՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումից անմիջապես հետո:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը և Հայ դատի նկատմամբ գերմանական առաջադեմ հասարակական կարծիքն արտահայտող Գերմանա-հայկական ընկերությունը, հանձին նրա քարտուղար քահանա Էվալդ Շտիրի, շեշտում էին Գերմանիայի միջազգային պարտավորությունները և պատասխանատվությունը 1878 թ. Բեռլինի տրակտատում ձևակերպված Արևմտյան Հայաստանում բարենորոգումների, արևմտահայերի 1915–1916 թթ. ցեղասպանության, թուրքերի կողմից քրիստոնյաների հնարավոր նոր կոտորածների, կովկասյան ժողովուրդների ներքին կյանքին օսմանյան կառավարության միջամտությունների կանխման հարցերում: Նրանք նաև բարձրաձայնում էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված սահմանների խախտմանը վերջ տալու, ցեղասպանության հետևանքով բռնագաղթած և փախստական դարձած հայերի համար Հայրենիք վերադառնալու պայմաններ ապահովելու անհրաժեշտության մասին, ներկայացնում էին Գերմանիայի տնտեսական և ռազմական շահերն ու հնարավոր օգուտները Կովկասում[138]:

Դրան հակառակ, Գերմանիայի կառավարող շրջանակների համար առավել կարևորվում էր գերմանա-թուրքական դաշնակցային հարաբերությունների պահպանումը: Օսմանյան կայսրությունն ուներ 2 միլիոնանոց բանակ, որը Գերմանիային հարկավոր էր Միջագետքի և Պաղեստինի ռազմաճակատներում անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ կռվելու համար: Այդ իսկ պատճառով գերմանական իշխանությունները չէին ցանկանում, որ հայկական պատվիրակությունը Բեռլինում երկար մնար, հակաթուրքա-

[138]Տե՛ս նույն տեղում, էջ 178–181:

կան քարոզչություն վարեր, հանդիպումներ ունենար մամուլի ներկայացուցիչների հետ: Դա արվում էր դաշնակից Օսմանյան կայսրությանը «չնեղացնելու», հասարակայնությունից, և ոչ միայն գերմանական, իրականությունը թաքցնելու համար: Մյուս կողմից, պաշտոնական Գերմանիան վերահաստատում էր իր քաղաքականությունը Հայկական հարցում, այն է՝ չմիջամտել թուրքական կառավարության գործերին, միևնույն ժամանակ հաստատելով Քառյակ միության պետությունների այն մոտեցումը, որ Արևմտյան Հայաստանի հարցն Օսմանյան կայսրության ներքին գործն է և չպետք է միջազգայնացվի: Այս տեսակետը արժանացել էր կայսրությանը դաշնակից պետությունների պաշտպանությանը Բրեստ-Լիտովսկում:

Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչները ոչ միայն թույլ չէին տալիս Հայոց ազգային խորհրդի պատվիրակներին բարձրաձայն խոսել Բեռլին գալու իրենց նպատակների մասին, այլև խոչընդոտում էին նրանց կապ պահպանել Թիֆլիսի Ազգային խորհրդի, Անդրկովկասի և Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների հետ: Քանի որ հայկական պատվիրակությունը անտեղյակ էր Կովկասում և Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններից, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը նրան գցում էր թյուրիմացության մեջ, ավելին, նույնիսկ՝ ապակողմնորոշում: Բացի այդ, Ավստրիայի և Հունգարիայի արխիվներում պահվող փաստաթղթերը վկայում են, որ շրջանցելով գաղտնապահության սկզբունքը, գերմանական դիվանագետները հայկական պատվիրակության փաստաթղթերի պատճենները, խոսակցությունների սղագրությունները Գերմանիայում Ավստրո-

Հունգարիայի դեսպան Գոտֆրիդ Հոհենլոեի միջոցով ուղարկում էին Վիեննայի կառավարությանը[139]:

Այս փաստերի հիման վրա Հ. Ավետիսյանը եզրակացնում է, որ Գերմանիան հայերին գերմանական կողմնորոշում չէր առաջարկում: Նրա միակ նպատակն էր՝ փոքր ժողովուրդներից բարեկամ շահել, որպեսզի անհրաժեշտության դեպքում, որտեղ գերմանական շահերը կպահանջեին, կարողանար հույս դնել նրանց վրա: Իսկ այդ շահերը որոշակիացվել էին 1918 թ. ապրիլի 27-ին Գերմանիայի և Օսմանյան կայսրության միջև կնքված համաձայնագրով, որով երկու պետությունները Կովկասը բաժանել էին ազդեցության ոլորտների. կայսրությանն էր անցել արդեն Թիֆլիսի նահանգից գրավված տարածքը՝ Ախալցխան, Ախալքալաքը, Բաթումը, գրեթե ամբողջ Հայաստանը, Ադրբեջանը, իսկ Անդրկովկասի մնացած մասում, մասնավորապես՝ Վրաստանում, գործելու էր Գերմանիան[140]: Ինքնին հասկանալի է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով թուրքական կառավարության «զսպմանն» ուղղված քաղաքական ուղերձները, որոնցով բավարարվում էին Բեռլինում և Վիեննայում, չէին կարող գործնական խոչընդոտ դառնալ համաթուրքական ծրագրերի իրագործմանը[141]: Պատահական չէ, որ այդ մթնոլորտում 1918 թ. երկրորդ կեսին Բեռլինում և Կոստանդնուպոլսում գործող Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունները[135] Քառյակ միության երկրների կառավա-

---

[139]Տե՛ս նույն տեղում, էջ 185–188:

[140]Այս մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 175–188:

[141]Տե՛ս նույն տեղում, էջ 238–244, 258–259, 279: ***Հայրունի Ա.*** Հայկական հարցը 1918 թ. հայ-գերմանական և թուրք-գերմանական հարաբերությունների համատեքստում // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2007, № 1, էջ 18–35:

[135]1918 թ. Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը Բեռլինում ներկայացնում էին Համո Օհանջանյանը և Արշակ Զուրաբյանը: Հենց նրանց էր վիճակ-

ված փոքր-ինչ անց հանդես գալ արդեն Հայաստանի անկախ հանրապետության կառավարության անունից: Այս պատվիրակությունը Բեռլինում գործեց մոտ 5 ամիս՝ հունիսի սկզբից մինչև նոյեմբերի սկիզբը, փոխարինելով իրենց առաքելությունը Եվրոպայում ավարտած և Կովկաս վերադարձած Ա. Ջամալյանին, Լ. Նազարյանցին և Գ. Մելիք-Ղարագյոզյանին: Գերմանիայի կառավարող շրջանակներում Հայաստանին աջակցելու վճռականություն չէր ցուցաբերվում: Ընդհակառակը, հետևողականորեն ընդգծվում էր այն միտքը, որ հայերը սխալ ըմբռնում ունեն, հավատացած լինելով, որ եթե Գերմանիան ցանկանա, ապա Օսմանյան կայսրությունն ամեն ինչ կանի: Բեռլինում ուղղակի հրաժարվում էին ազդու միջոցներ կիրառել թուրք դաշնակցի նկատմամբ՝ Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերում:

Նույն ժամանակահատվածում Կոստանդնուպոլսում գործում էր Հայոց ազգային խորհրդի մեկ այլ պատվիրակություն, որի կազմում էին՝ Ավետիս Ահարոնյանը (նախագահ), Ալեքսանդր Խատիսյանը, զինվորական խորհրդական, գեներալ Գաբրիել Ղորղանյանը: Ավելի ուշ նրանց միացավ Միքայել Պապաջանյանը:

Այդ օրերին, հայերին քննադատելով Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի հետ հույսեր կապելու համար և շեշտելով, որ իրենց հաշիվներում նրանք սխալվել են՝ Էնվեր փաշան Հայաստանից պահանջում էր Օսմանյան կայսրության հետ լինել «ոչ միայն լավ հարևաններ, այլև՝ լավ դաշնակիցներ», նրա հետ մտնել կոնֆեդերացիայի մեջ, կնքել «սրտակից համաձայնություն»: Հակառակ դեպքում նա բացառում էր հայկական կողմի հետ որևէ հարցի քննարկում: Թուրքական կառավարողները՝ Էնվերը, Թալեաթը, Նեսիմի բեյը, չէին թաքցնում իրենց դժգոհությունը Բեռլինում հայկական պատվիրակության գտնվելու կապակցությամբ՝ պահանջելով, որ հայերը հարաբերությունների մեջ մտնեն միայն թուրքերի հետ:

Թուրքիայի հետ կոնֆեդերացիայի մեջ մտնելը կնշանակեր հայերի ձուլում կայսրության գերակշռող էթնիկ խմբի՝ թուրքերի հետ և Հայաստանի, որպես Հյուսիսային ու Հարավային Կովկասի միավորման միջև համաթուրանական սեպի, վերացում:

Գործնականում չլուծելով հայկական պատվիրակության առաջադրած և ոչ մի հարց՝ թուրքական ղեկավար շրջանակները քարոզչության միջոցով թյուր կարծիք էին ստեղծում եվրոպական հասարակության մեջ թուրք-հայ-

ությունններից ստիպված էին ակնկալել նվազագույնը՝ Բաթումի պայմանագրի չեղյալ հայտարարում, թուրքերի ռազմական առաջ-խաղացման դադարեցում, Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված սահմաններից դուրս գրավված տարածքներից թուրքա-կան զորքերի դուրսբերում, այդ պայմանագրի պայմանների կա-տարման ապահովում, Արևմտյան Հայաստանից բռնագաղթած, փախստական և ռազմագերի հայերի տունդարձի, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում հայ բնակչության կյանքի, պատվի, գույքի անվտանգության ապահովում:

Հենց այս համատեքստում է Հ. Ավետիսյանը դիտարկում 1918 թ. օգոստոսի 27-ին Բեռլինում կնքված գերմանա-ռուսական լրացուցիչ պայմանագիրը, որով Գերմանիան պարտավորվում էր՝ ցույց չտալ աջակցություն որևէ երրորդ պետության ձեռնարկած ռազմական գործողություններին՝ Բրեստ-Լիտովսկում կնքված հիմնական պայմանագրի 4-րդ հոդվածում նշված սահմաններից դուրս, նաև խոստանում էր ազդել երրորդ ուժի, այսինքն՝ Օս-մանյան կայսրության վրա, որպեսզի նրա ռազմական ուժերը գործողություններ չձեռնարկեին Բաքվի շրջանում: Այսպիսով, Գերմանիան պարտավորվում էր իր դաշնակցին աջակցություն ցույց չտալ ոչ մի տեղ, բացի Կարսի, Արդահանի, Բաթումի շր-ջաններից: Փոխարենը, Ռուսաստանը Գերմանիային տալու էր որոշ արտոնություններ Բաքվի նավթի նկատմամբ:

1918 թ. մայիսին Հայոց պետականության վերականգնումից հետո Հայկական հարցը ստացել էր նոր բովանդակություն՝ վերածվելով նաև միջպետական, առաջին հերթին՝ հայ-թուրքա-կան հիմնահարցի: Սակայն Բաթումի պայմանագրի ստորագրու-

---

կական բարեկամության, դրանից հայերի բավարարված լինելու, իբր, հա-մատեղ գործելու մասին:

մից մինչև Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունն անկարող էր բացահայտորեն անդրադառնալ արևմտահայկական տարածքների խնդրին՝ երկու պատճառով: Նախ՝ հայկական նորանկախ պետությունն ուներ անվտանգության խնդիր՝ կապված համաշխարհային պատերազմի ավարտական փուլում թուրքական զորքերի կողմից բուն Արևելյան Հայաստանի տարածքների՝ Շիրակի, Լոռի–Փամբակի, Շարուր–Դարալագյազի, Նախիջևանի, Արարատյան դաշտի զգալի մասի բռնազավթման հետ: Ապա, Հայաստանի Հանրապետությունը Բաթումի պայմանագրի կապանքներում էր, որոնք սահմանափակում էին նրա արտաքին քաղաքական գործունեությունը, զրկում արևմտահայկական տարածքների հարցն ուղղակիորեն բարձրացնելու հնարավորությունից:

Այդուհանդերձ, մայիսի 30-ին հրապարակված կոչի համաձայն, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը ստանձնեց հայկական բոլոր գավառների միակ և գերագույն իշխանության գործառույթներ՝ չմատնանշելով, թե կոնկրետ որ տարածքների մասին է խոսքը: Դա նշանակում է, որ Հայկական հարցն արդեն իր հաստատուն տեղն էր գրավելու Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղեգծում: Պատահական չէ, որ 1918 թ. օգոստոսի 1-ին՝ Հայաստանի խորհրդի (հետագայում՝ խորհրդարան) անդրանիկ նիստում, խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանը, չխորշելով նիստին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Օսմանյան կայսրության ներկայացուցիչների մասնակցությունից, ասաց. «Այո՛, մեր հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով, նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար:

Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ. միշտ ես հավատում եմ, որ մեր սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե օրենքի ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրաված հողամասերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի ու նրա դաշնակից պետությունների հետ … : Մենք ընտրել ենք համաձայնության և խաղաղության ուղին … »[142]:

«Դա նշանակում է, որ Արևմտյան Հայաստանի հիմնահարցն այնքան վճռորոշ էր հայության համար, որ Բաթումի պայմանագրով ծանրագույն վիճակի մեջ դրված Արարատյան Հանրապետությունն իսկ, ինչպես այն ժամանակ հաճախ անվանում էին փոքրիկ Հայաստանը, ենթատեքստով արտահայտում էր իր մտադրությունները Հայկական հարցում»[143],– շեշտում է Ա. Մելքոնյանը: Նա նկատի ունի 1919 թ. փետրվարի 6–13-ին Երևանում կայացած Արևմտահայերի երկրորդ համագումարի մասնակիցների ծրագրային որոշումը Հայաստանը անկախ և միացյալ հռչակելու վերաբերյալ: Դրանով ընդունվեց «Մեկ ժողովուրդ, մեկ Հայրենիք» սկզբունքը, նոր մակարդակի բարձրացվեց հայության ինքնակազմակերպումը, առանց դուրս մղելու Հայկական հարցը միջազգային դիվանագիտության օրակարգից, քանի որ համագումարն արտահայտում էր արևմտահայերի՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստանած հատ-

---

[142] ***Վրացյան Ս.*** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993 (առաջին և երկրորդ հրատարակությունները՝ ***Վրացեան Ս.*** Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, Պէյրութ, 1958), էջ 194: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918–1920 թթ. / Գլխ. խմբ. և կազմ. Ա. Վիրաբյան / Կազմ.՝ Ա. Հարությունյան, Գ. Մանուկյան, Ս. Միրզոյան, Երևան, 2010, էջ 8, ***«Զանգ»***, Երևան, 4.VIII.1918, ***«Հորիզոն»***, Թիֆլիս, 9.VIII.1918:

[143] ***Մելքոնյան Ա.*** Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), էջ 129:

վածի շահերը՝ առանց հայկական գաղթօջախների, Արևմտյան Հայաստանի ու Կովկասի հայերի: Պատահական չէ, որ համահայկական խնդիրների նկատմամբ արևելահայության, արևմտահայության և հայկական գաղթօջախների դիրքորոշումներն ի մի բերելու, ազգային պահանջների միասնական ծրագիր մշակելու նպատակով Պ. Նուբարն էլ առաջ քաշեց հայկական ազգային համագումար հրավիրելու գաղափարը, ի կենսագործումն որի 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում տեղի ունեցավ Համահայկական համագումարը[144]:

«1878 թ. Բեռլինի վեհաժողովից յետոյ, Հայկական Հարցն առաջին անգամ յառնեց համահայկական քաղաքական ծրագրի տեսքով ու նաեւ որպէս հետեւանք՝ համատեղ գործունէութեան եւ փոխադարձ զիջումների»[145],– նկատում է Վ. Մելիքյանը: Հարկ է նաև նշել, որ, ի կատարումն 1919 թ. Արևմտահայերի երկրորդ համագումարի որոշումների, մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության հռչակման առաջին տարեդարձի օրը, վարչապետ Ալ. Խատիսյանի կառավարությունը հանդիսավոր պայմաններում Հայաստանը հայտարարեց Անկախ և Միացյալ պետություն: Դրանով

---

[144]Տե՛ս ***Պողոսեան Ս.*** նշվ. աշխ., էջ 162–170:

[145]Այս մասին տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Երևան, 2007, էջ 12: Նշենք, որ իր «Հայկական պահանջատիրութիւն: Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը» աշխատության մեջ (էջ 16), ներկայացնելով համազգային խնդիրների ու գաղափարների շուրջ հայ ժողովրդի համախմբման պատմական փուլերը՝ սկսած Հայաստանի 1555 և 1639 թթ. բաժանումներից մինչև 1919 թ. Արևմտահայերի երկրորդ համագումարը, Վ. Մելիքյանը նշում է, որ Հայկական հարցը, որպես արևմտահայության իրավասության ու իրավազորության հարց, ներկայացնելու սկզբունքը հայ քաղաքական-հոգևոր շրջանակների գործունեության հիմքում դրվել է 1912 թվականին՝ Հայոց ազգային պատվիրակության ստեղծմամբ:

հանրապետության կառավարությունը, բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության համաձայն, պաշտոնապես իրեն հայտարարեց նաև Արևմտյան Հայաստանի տեր ու Դաշնակից պետությունների օժանդակությամբ հետամուտ դարձավ համազգային այդ նպատակի կենսագործմանը: Այս հիմնահարցերի վերաբերյալ պատմագիտական մոտեցումները հանգամանորեն ներկայացված են աշխատությանս երկրորդ գլխում:

Վերադառնալով 1918 թ. ռազմաքաղաքական իրողություններին՝ նշենք, որ հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի կնքումն արմատապես փոխեց Հայկական հարցի ընթացքը. Բեռլինում գործող հայկական պատվիրակությունը որդեգրեց նոր դիրքորոշում, որը ձևակերպվեց պատվիրակության անդամների և հայկական ազգային խնդիրների քննարկմանը մասնակցելու նպատակով հայ պետական ու հասարակական-քաղաքական գործիչների մասնակցությամբ հոկտեմբերի 31-ին Գերմանիայի մայրաքաղաքում կայացած խորհրդակցության ժամանակ: Մասնակիցները համակարծիք էին, որ Հայկական հարցի լուծման բոլոր տարբերակներում «Հայաստանը վերջնական և անվերադարձ պետք է դուրս գա թուրքական ոլորտից և նրա ազդեցությունից»: Հաշվի առնելով, որ հաշտության հետ կապված բոլոր հարցերի լուծումը կախված էր «Անտանտի երկրների կամքից», խորհրդակցությունը որոշեց Հ. Օհանջանյանին անհապաղ գործուղել Շվեյցարիա՝ նրանց հետ կապեր հաստատելու և Հայկական հարցն առաջ մղելու համար[146]:

Մյուս կարևոր քայլը դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ՀՀ պատվիրակության հաստատումն էր Ա. Ահարոնյանի (նախագահ), Հ. Օհանջանյանի,

---

[146]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 328:

Մ. Պապաջանյանի անդամակցությամբ՝ Փարիզում նախատեսվող հաշտության միջազգային վեհաժողովին մասնակցելու նպատակով[147]: Պատվիրակության գործունեության վերաբերյալ հրահանգում առանձնացված էր 7 դրույթ: Դրանք նախատեսում էին՝ նախկին ռուսական պետության հայկական տարածքներից և Օսմանյան կայսրության հայկական վեց վիլայեթներից (առանց ոչ հայաբնակ ծայրագավառների) միասնական և անկախ հայկական պետության ստեղծում ելքով դեպի ծով, Հայաստանի մշտական չեզոքության ապահովում միջազգային երաշխիքներով, մեկ կամ մի քանի մեծ տերությունների հովանավորության հաստատում Հայաստանի նկատմամբ, Օսմանյան կայսրության և Հայաստանի միջև 1914 թ. սահմանագծի վերականգնում՝ Հայաստանին վերադարձնելով նրանից զավթված հողերը՝ բոլոր ամրություններով, հաղորդակցության միջոցներով և ռազմամթերքով, Արևմտյան Հայաստանի անվտանգության ապահովում Դաշնակից տերություններից մեկի զորքերով մինչև հայկական ազգային բանակի ձևավորումը, երիտթուրքական կառավարության անդամների և բարձրաստիճան պաշտոնյաների ենթարկում քրեական պատասխանատվության արևմտահայերի նկատմամբ կատարած ոճրագործությունների համար, տարագրված արևմտահայերի տունդարձի ու Հայրենիքում տնտեսությունը վերականգնելու ծախսերի հատուցում թուրքական կառավարության կողմից, այդ գործընթացի նկատմամբ Հայաստանի Հանրապետության և Դաշնակից տերությունների վերահսկողության ապահովում[148]:

---

[147]Հայկական հարցի լուծման նպատակով Ա. Ահարոնյանի գործունեության մասին տե՛ս ***Զատիկյան Հ.*** Ավետիս Ահարոնյանը և Հայկական հարցը // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2006, № 2, էջ 41–52:

[148]Այս մասին մանրամասն տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 328–329:

ՀՀ պաշտոնական պատվիրակությունն այս խնդիրների լուծմանը հետամուտ էր լինելու Պ. Նուբարի Ազգային պատվիրակության հետ համախորհուրդ:

1991 թ. Հայաստանի անկախության վերականգնումը պատմագիտությանը հնարավորություն ընձեռեց համակողմանի ներկայացնելու և վերագնահատելու նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցու գործունեությունը: Այդ տեսանկյունից գնահատելի աշխատանք է կատարում պատմական գիտությունների դոկտոր Ստ. Ստեփանյանցը[149]: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանյայց առաքելական եկեղեցու հայանպաստ և հայապահպան գործունեությանը նվիրված իր հիմնարար մենագրության մեջ արխիվային հարուստ նյութի հիման վրա նա արժևորել է եկեղեցու, մասնավորապես՝ Մայր Աթոռի ակնառու դերը հայ ազգային ուժերի համախմբման, նպատակների հստակեցման, դրանք մեծ տերություններին ներկայացնելու, ցեղասպանության հետևանքով աշխարհասփյուռ հայ գաղթականների վերադարձը Հայրենիք ապահովելու գործում:

Այսպիսով, հայաստանյան պատմաբանները նորովի ուսումնասիրել ու վերաիմաստավորել են Հայկական հարցի 1917–1918 թթ. պատմությունը: Նրանց գլխավոր եզրահանգումն այն է, որ եթե հետփետրվարյան ժամանակահատվածում Հայաստանի երկու հատվածներից յուրաքանչյուրի իրավական կարգավիճակի վերաբերյալ մշակվել էին առանձին ծրագրեր, ապա Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո դրանք վերանայվեցին՝ անկախ և միասնական հայկա-

[149]Տե՛ս ***Ստեփանյանց Ստ. (Կերտող)*** Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Էջմիածին, 2003:

կան պետականության վերականգնման՝ հրատապ դարձած գաղափարին համահունչ:

Հայկական անկախ պետականության վերականգնման և ազգային միասնության հիմնահարցերի վերաբերյալ հայաստանյան պատմագիտության ձեռքբերումներն ունեն գիտագործնական նշանակություն: Դրանք նախևառաջ կոչված են «զինելու» Հայաստանի Հանրապետության դիվանագետներին անցյալի պատմության այն դասերով, որոնցում ներկայացված պատմական իրողություններն ունեն կրկնվելու հատկություն:

ԳԼՈՒԽ 2
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1919–1920 ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովին ներկայացված հայ ազգային պահանջների և Հայկական հարցի նկատմամբ Դաշնակից տերությունների դիրքորոշման վերագնահատումը

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի, Օսմանյան կայսրության և նրանց դաշնակից պետությունների պարտությունը բացեց Հայկական հարցի լուծման նոր հեռանկար: Հայաստանի առաջին հանրապետությունը, ազատվելով 1918 թ. Բաթումի հայ–թուրքական հաշտության պայմանագրի կապանքներից, շրջվեց դեպի պատերազմում հաղթանակած Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու ԱՄՆ–ը: Դրանով Հայկական հարցում Հայաստանի Հանրապետության քաղաքականության մեջ սկսվեց նոր՝ 1919–1920 թթ. ընդգրկող փուլը:

1991–2015 թթ. Հայաստանի պատմագիտության մեջ գնահատելի աշխատանք է կատարվել 1919–1920 թթ. Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում և Ազգերի լիգայում, նաև հայ հասարակական–քաղաքական շրջանակներում Արևմտյան Հայաստանի անկախության, նրա սահմանների ու մանդատի վերաբերյալ դիվանագիտական բանակցությունների և քննարկումների բովանդակությունն ու արդյունքները վերաիմաստավորելու ուղղությամբ: Կատարված գիտական հետազոտության առանցքային

արդյունքը, թերևս, Հայոց պահանջատիրության հարցի նորովի ուսումնասիրումն ու ներկայացումն է, նաև՝ դրա վերաբերյալ երևանյան արխիվների փաստագրական նյութի յուրացումն ու շրջանառության մեջ դնելը:

Գիտական արժեքավոր աշխատանք է կատարվել խնդրո առարկա ժամանակահատվածում Հայկական հարցում Գլխավոր դաշնակից տերությունների դիրքորոշումն ու քաղաքականությունը ներկայացնելու ուղղությամբ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով միջազգային հարաբերությունների Վերսալյան համակարգի հիմքում ընկած տնտեսական, գաղափարաքաղաքական, ռազմական գործոններին ու միջազգային իրավական սկզբունքներին: Վերագնահատվել է Հայկական հարցի լուծման ուղղությամբ հայ ազգային կուսակցությունների, ազգային կյանքը կազմակերպող և ուղղորդող մարմինների, Հայաստանի առաջին հանրապետության պաշտոնական պատվիրակության ու Ազգային պատվիրակության գործունեությունը Փարիզի վեհաժողովում: Վեր են հանվել ինչպես համազգային հիմնախնդիրների և պահանջների ձևակերպման, դրանք միջազգային ասպարեզում ներկայացնելուն ուղղված ձեռնարկումներում հայ պետական, հասարակական-քաղաքական շրջանակների ու գործիչների թույլ տված սխալները, այնպես էլ Հայոց արդար պահանջատիրության ուղղությամբ նրանց գործադրած ջանքերի արդյունքները՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի պետական, հասարակական-քաղաքական ու գիտական շրջանակների կողմից իրականացվող ուսումնասիրությունների և Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված բարոյահոգեբանական, նյութական և տարածքային կորուստների ու վնասների հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերն ամրապնդելու նպատակով:

Մինչև 1990-ական թվականները Հայկական հարցում Հայաստանի առաջին հանրապետության և մեծ տերությունների դիրքորոշումներն ու քաղաքականությունը գլխավորապես ուսումնասիրվում էին Սփյուռքում: Հայ պատմաբանները՝ Ռիչարդ Հովհաննիսյանը[1] և Լևոն Մարաշլյանը[2] (ԱՄՆ), Ագապի Նասիբյան-Էքմեքջյանը[3] (1929–2018, Մեծ Բրիտանիա) և Զավեն Մըսրլյանը[4] (Լիբանան), համակողմանի հետազոտել ու ներկայացրել են Հայկական հարցին առնչվող միջազգային պայմանագրերը, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի տեսանկյունից կարևորել են 1919–1920 թթ. Հայկական հարցի շուրջ միջազգային դիվանագիտական բանակցությունները ու դրանց արդյունքները, հիմնահարցի նկատմամբ մեծ տերությունների և հայ ազգային, հասարակական-քաղաքական շրջանակների դիրքորոշումը:

Թվարկված հարցերի հետազոտության գործում անուրանալի է Ռ. Հովհաննիսյանի ներդրումը: Նրա մոտեցումների ու գնահատականների հիմքում հիմնավորվածության և հավասարակշռվածության սկզբունքներն են ու ամենևին պատահական չէ, որ Հայկական հարցին նվիրված հայաստանյան պատմագիտական աշխատություններում դրանք ճշգրտորեն պահպանված են՝ չնայած, որ

---

[1] ***Հովհաննիսյան Ռ. Գ.*** Հայաստանի Հանրապետություն, ***նույնի՝*** Международные отношения Республики Армения, 1918–1920 гг.

[2] ***Marashlian L.*** Politics and Demography: Armenians. Turks and Kurds in the Ottoman Empire. N.Y., 1991; ***նույնի՝*** Ermeni Sorunu ve Turk-Amerikan Iliskileri – 1919–1923. Istanbul, 2000.

[3] ***Նասիպեան Ա.*** Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923:

[4] ***Մսըրլեան Զ.*** Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), Պէյրութ, 1979, ***նույնի՝*** Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900–2009), Պէյրութ, 2010:

հիմնահարցի մասին գրականության մեջ չկան համապատասխան հղումներ:

Թեև հայրենական և Սփյուռքի պատմաբանների աշխատանքներում առկա են լեզվական, մեթոդաբանական, գաղափարաքաղաքական տարբերություններ, այնուամենայնիվ, սփյուռքահայ պատմաբանների հիմնարար ուսումնասիրությունները ծանրակշիռ ներդրում են հայ պատմագիտության մեջ, որպես բարեխղճորեն կատարված և գիտական բարձր արժանիքներ ունեցող ուսումնասիրություններ:

Ներկայացնենք Հայկական հարցի 1919–1920 թթ. պատմության վերաբերյալ հայաստանյան պատմաբանների մոտեցումներն ու գնահատականները: Գ. Մախմուրյանի և Վ. Մելիքյանի փաստարկմամբ, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայկական հարցն Արևելյան հարցի համատեքստում դիտարկելու Գլխավոր դաշնակից տերությունների միասնական դիրքորոշման գաղափարական հիմքը դրվել էր հետպատերազմյան աշխարհակարգի սկզբունքների մասին 1918 թ. հունվարի 5-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջի՝ Համայնքների պալատում ունեցած հիմնարար ելույթով և հունվարի 8-ին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի՝ Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում հաշտության պայմանների մասին ուղերձի 14 դրույթներով՝ հայտնի որպես «14 կետեր»: Ըստ դրանց, Կոստանդնուպոլիսն ու Օսմանյան կայսրությունը բաժանվելու էին առանձին վարչական միավորների, որոնք ենթարկվելու էին միջազգային կառավարման: Սևծովյան նեղուցներին և օսմանյան մայրաքաղաքին տրվելու էր չեզոք կամ միջազգային կարգավիճակ, իսկ հայերին՝ «նվազագույնը՝ ինքնավարություն»: Ավելին, կարևորվում էր, որ «… ցանկացած տարածքային փոփոխություն … հիմնվի կառավարվողների համաձայնության վրա», որ «… ազգային հատուկ

պայմաններ … ունենան Արաբիան, Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և Պաղեստինը», քանի որ նշված տարածքներում նախկին՝ թուրքական ինքնիշխանության վերականգնումն անհնար էր[5]: Գ. Մախմուրյանի համոզմամբ, թուրքական հիմնախնդրի լուծումը կարևոր էր Գլխավոր դաշնակիցների համար նույնքան, որքան՝ համաշխարհային տարանցիկ ուղիների ազատության, երկրագնդի բնական ռեսուրսների հավասար օգտագործման ապահովումը, միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի հիմնումն ու դրան Գերմանիայի անդամակցությունը, ծովերի ազատությունը և ազգային սպառազինությունների կրճատումը, դրանց արտադրության սահմանափակումը, ռազմական ուժերի, այդ թվում՝ ռազմածովային ուժերի ծավալների ու ռազմական ծրագրերի հրապարակայնության ապահովումը[6]:

Վ. Մելիքյանն Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած պետությունների թվում կարևորում է ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական հարցի լուծման գործում՝ նշելով, որ Փարիզի վեհաժողովին այդ պետության մասնակցությունը նոր թափ էր հաղորդում մեծ տերությունների միջև առկա մրցակցությանը: Բացի այդ, Մեծ Հայաստանի հնարավոր ստեղծման նոր տարբերակներն ու մանդատի խնդիրն առնչվում էին նախագահ Վ. Վիլսոնի անվան հետ: Հայկական հարցի վերաբերյալ վերջինիս բոլոր հայտարարություններն արտահայտում էին ոչ միայն ԱՄՆ-ում առկա հասարակական կարծիքը, այլև՝ քաղաքականության մեջ իդեա-

---

[5]Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, т. 1, док. №№ 315, 316, с. 309, док. № 317, с. 309–310; Архив полковника ***Хауза***, т. IV (Конец войны: июнь 1918–ноябрь 1919). М., 1944, с. 152–153, 156–157.

[6]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 19–21.

լիզմը չբացառող այդ գործչի անձնական հատկանիշները[7]: Հավելենք, որ Փարիզի վեհաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ Վ. Վիլսոնի դիրքորոշման վրա որոշակիորեն ազդում էին թե՛ նրա հակասությունները ԱՄՆ-ի Կոնգրեսի և Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի հետ, թե՛ Դեյվիդ Լլոյդ Ջորջից ունեցած կախվածությունը:

Հ. Ավետիսյանը Փարիզի վեհաժողովում քննարկման առարկա դարձած Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի նախագծի տեսանկյունից է մեկնաբանում եվրոպական տերությունների մերձավորարևելյան քաղաքականությունը և շեշտում Վ. Վիլսոնի դիրքորոշումը՝ վերհանելով դրա անուղղակի կապը թուրքական կառավարության համաթուրքական նվաճողական ծրագրերի հետ: Նա նշում է, որ դեռևս 1918 թ. հոկտեմբերին՝ Մուդրոսի զինադադարի պայմանների մշակման ժամանակ, Մեծ վեզիր Իզզեթ փաշան առաջ քաշեց Դաշնակից տերությունների հովանավորությամբ Օսմանյան կայսրության և կովկասյան ժողովուրդների դաշնություն ստեղծելու հարցը: Դրանով նա դրսևորեց իր պետության «նոր քաղաքականությունը» և «դիվանագիտական նուրբ խաղը»՝ հասնելու համաթուրքական նվաճողական նկրտումների բավարարմանը՝ իբրև խաղաքարտ օգտագործելով Օսմանյան կայսրության լայն հնարավորությունները «ռուսական արշավանքի դեմ պատվար կառուցելու», «Միջագետքի և Հնդկաստանի վրա ուղղված հարվածները» «ջարդ ու փշուր անելու»՝ Դաշնակից տերությունների շահերից բխող հարցերում[8]: Պատմաբանը նաև

---

[7]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 22, 23:

[8]***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 330, ***նույնի՝*** Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի հարցի շուրջ (1919–20) // Հայկական հարց / Հայկական հարցի միջազգայ–

շեշտում է, որ Թուրքիայի նոր քաղաքականության համար կռվան դարձան Վ. Վիլսոնի «14 կետերը» հետպատերազմյան կարգավորման վերաբերյալ և 1918 թ. հոկտեմբերի 14-ին հրապարակված դրանց պաշտոնական մեկնաբանությունների 6-րդ ու 12-րդ հոդվածները, որոնք ներառում էին Կովկասի և Օսմանյան կայսրության հարցերը:

Մեկնաբանություններում տեղ գտած այն ձևակերպման մեջ, թե «Կովկասը, հավանաբար, պետք է դիտել որպես թուրքական կայսրության հիմնահարցի մաս», իսկ «Անատոլիան պետք է թողնել Թուրքիային», համաթրքության գաղափարախոսները տեսնում էին Վ. Վիլսոնի կողմից Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ճանաչումը, ինչով, ըստ նրանց, մերժվում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի «անհիմն» պահանջներն այդ երկրի նկատմամբ, ի չիք էին դառնում 1915–1917 թթ. անգլո-ֆրանս-ռուս-իտալական գաղտնի համաձայնագրերն օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ, Թուրքիան ոչ միայն չէր կորցնում Անատոլիան, այլև ազատվում էր կապիտուլյացիաներից՝ դեռևս XV դ. երկրորդ կեսից Օսմանյան կայսրությունում մի շարք եվրոպական պետությունների քաղաքացիներին տրվող արտոնությունների և առանձնաշնորհումների իրավական ռեժիմից:

Հ. Ավետիսյանը հիմնավորում է, որ պատերազմում պարտված, բայց իր համաթուրանական ծրագրից չհրաժարվող Թուրքիայի զավթողական նկրտումներին համահունչ էր Կոստանդնուպոլիս–Անատոլիա–Արևմտյան Հայաստան–Անդրկովկաս միասնական մանդատի վիլսոնյան նախագիծը, որը մարմնավորվեց 1919թ.

նացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր / Խմբ. Ստ. Պողոսյան, Հ. Ավետիսյան և ուրիշներ, Երևան, 2000, էջ 24–31:

հոկտեմբերի 16-ին ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության կողմից Սենատին ներկայացված Զեկուցագրում[9]: Ըստ այդ Զեկուցագրի, ամերիկյան միասնական հովանավորություն պետք է հաստատվեր Կոստանդնուպոլսում, Անատոլիայում, Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում: Ընդ որում, Անդրկովկասը, որը 1918 թ. ապրիլին պաշտոնապես անջատվել էր Ռուսաստանից, պետք է միացվեր Թուրքիային՝ առանց երկրամասի ժողովուրդների կամքը հաշվի առնելու: Միասնական մանդատով ազգային պետություններ պետք է կազմավորեին թուրքերը, թաթարները, հայերը, վրացիները: Ջ. Հարբորդի առաքելության անդամների կարծիքով, «միասնական մանդատի իրացման ժամանակ հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ»[10]: Ռազմական առաքելության անդամները պնդում էին, որ թուրքական կայսրության ողջ տարածքի ընդգրկումով միասնական մանդատն Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի համար կլիներ ամենաճիշտ տնտեսական որոշումը, քանի որ Հայկական հարցի լուծումը պետք էր փնտրել ոչ թե Հայաստանում, այլ երկու կարևոր հարցերի վերջնական պատասխաններում: Դրանցից մեկը թուրքական պետության ճակատագրի հարցն էր, մյուսը՝ հայկական տարածքների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը: Մինչ այդ հարցերի վերջնական լուծումը, Հայաստանի մանդատը վերցնող պետությունը պետք է իրականացներ մանդատ նաև Ռումելիայի՝ Թուրքիայի եվրոպական հատվածի, Կոստանդնուպոլսի, Անդրկովկասի, նախ-

---

[9]Տե՛ս Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. (In two volumes), vol. II. Washington, 1934, pp. 841–874.

[10]Նույն տեղում, էջ 861, ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 335:

կին Օսմանյան կայսրության հայկական վիլայեթների և Անատոլիայի նկատմամբ:

Հ. Ավետիսյանը եզրակացնում է, որ միասնական մանդատի վիլսոնյան նախագծի իրագործման դեպքում չէր բացառվում նոր հնարավորությունների ստեղծումը թուրքական կառավարության համաթուրքական նվաճողական ծրագրերի իրականացման համար: Հարցն այն է, որ Հայաստանի «վերացումով» կապ կհաստատվեր Կովկասի և անդրկասպյան երկրների թուրք-թաթարների միջև, կստեղծվեր ուժեղ և միասնական թուրանական պետություն: Արևմուտքը մտադիր էր այն դարձնել նոր պատնեշ ընդդեմ Ռուսաստանի: Այս հարցերում թուրք ղեկավարներն ակնկալում էին ԱՄՆ-ի օգնությունը. 1919 թ. հոկտեմբերի 15-ին գեներալ Մուստաֆա Քեմալը հայտարարեց. «Ելնելով մեր ամբողջ փորձից, մենք համոզված ենք, որ Ամերիկան միակ երկիրն է, որն ի վիճակի է օգնել մեզ»[11]: Նա փորձում էր հավատացնել ամերիկացիներին, որ թուրքական ազգայնական շարժումը «թշնամական հակում չունի Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որի կենտրոնը Երևանն է»: Թուրք գործչի այս խորամանկ ակնարկը նշանակում էր, որ քեմալական շարժումը Հայաստանի Հանրապետությունից բացի այլ Հայաստան չէր ճանաչում՝ համարելով, որ Թուրքիայի սահմաններում գոյություն չեն ունեցել ոչ Արևմտյան Հայաստան, ոչ էլ՝ Հայկական հարց:

Փաստորեն, թե՛ «Կովկասյան տան» թուրքական և թե՛ Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան նախագիծը սպառնալիք էին հայ ժողովրդի ու Հայաստանի համար: Ձևակերպված լինելով տարբեր ժամանակներում, քաղաքական տարբեր պայմաններում և հակադիր ռազմաքաղաքա-

[11]Նույն տեղում, էջ 336:

կան բլոկներում գտնվող պետությունների կողմից՝ դրանք գրեթե համընկնում էին հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրի հարցում:

ԱՄՆ-ի Արևելյան քաղաքականությունը հեռու էր հայերի ազգային շահերը, ձգտումներն ու արդարացի պահանջները պաշտպանելուց, թեև այն շաղախված էր ճնշված ժողովուրդների ազատագրության և ազգերի ինքնորոշման առաջադեմ ու համարձակ գաղափարներով: Ջ. Հարբորդի Զեկուցագրում ամփոփված դրույթների իրագործման դեպքում, դառնալով երկրի գլխավոր տերերը, թուրքերը կարող էին միասնական մանդատի ժամկետի ավարտին վերսկսել քրիստոնյաների՝ առաջին հերթին հայերի կոտորածներն ու թալանը, իսկ համաթուրանականությունը կարող էր դառնալ աշխարհի խաղաղությանն ուղղված լուրջ սպառնալիք: Այդ մասին ժամանակին զգուշացրել և միասնական մանդատի դեմ հանդես են եկել ամերիկյան այնպիսի հեղինակավոր պետական գործիչներ և մտավորականներ, ինչպիսիք են՝ Ջեյմս Ջերալդը, Չարլզ Հյուզը, Էլիհու Ռութը, Ալթոն Բ. Փարկերը, Նիկոլաս Բաթլերը, Հենրի Ջեսափը, Էդուարդ Լիթլը, Ջեկոբ Շուրմանը, Ջոն Գիբենը, Ֆիլիպ Ռինելանդերը, Բրեդլի Ա. Ֆիսքը: Համաթուրանականությունից ազատվելու միակ ճանապարհը, ըստ նրանց, կարող էր լինել Անատոլիայի թուրքերի բաժանումը Կովկասից և Կասպիականից այն կողմ բնակվող թուրանականներից: Բաժանարարի դերում նրանք տեսնում էին Հայաստանը[12]:

Համակարծիք լինելով վերոնշյալ գործիչների անհանգստությանը և համաթրքության վտանգավորության խնդիրը դիտարկելով ժամանակի հոլովույթում՝ Հ. Ավետիսյանը միանգամայն

---

[12]Տե՛ս ***Аветисян Г. А.*** Генерал Акоп Багратуни (1879–1943) // Историко-филологический журнал / НАН РА, 1997, № 1, с. 54–55.

իրատեսական և հիմնավորված է համարում 1919 թ. հունիսի 16-ին կնքված վրաց-ադրբեջանական «պաշտպանական» համաձայնագրին միանալու գաղափարի մերժումը Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից, քանի որ դրա նպատակը դեպի Ռուսաստանի հարավ գեներալ Անտոն Դենիկինի Կամավորական բանակի առաջխաղացման դեպքում համատեղ հանդես գալն էր: Կարևորելով պատմական փորձի դերն ազգի և պետության առջև ծառացած բարդ ու ճակատագրական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու գործում՝ նա նշում է, որ Ռուսաստանի հարցում Հայաստանը չի կարող և չպետք է կովկասյան ժողովուրդների կողմնորոշումն ունենա, քանի որ հակառուսական կողմնորոշումը չի բխում հայ ժողովրդի շահերից[13]:

Վ. Մելիքյանի կարծիքով, միասնական մանդատին ենթակա վիթխարի և ռազմաքաղաքական առումով կարևոր տարածքում տարբեր ազգերի ու ժողովուրդների, հետևաբար, նրանց շահերի գոյությունը պարտադրում էր մեկ ուժային կենտրոնի հովանավորության հաստատում՝ աշխարհի այդ պայթյունավտանգ գոտում տևական խաղաղության ապահովման նպատակով: Նա նկատում է, որ «ենթատեքստում անպայման նկատի էր առնում բոլշեւիկների կողմից Անդրկովկասը խորհրդայնացնելու քաղաքականութեան գործօնը»[14]: Այս իմաստով նա արդիական է համարում Ջ. Հարբորդի՝ վերը նշված այն տեսակետը, որ միասնական մանդատի դեպքում հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ[15]:

---

[13]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 337–338:
[14]***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 24:
[15]Տե՛ս նույն տեղում, էջ 25:

Մանդատի գաղափարը, որի հեղինակը բրիտանական բանակի գեներալ-լեյտենանտ Յան-Քրիստիան Սմաթսն էր[16], Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի կառավարող շրջանակներում քննարկման առարկա էր դարձել դեռևս 1917 թ. գարնանը, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո դարձավ միջազգային հարաբերությունների Վերսալյան համակարգի բաղադրիչներից մեկը: Գ. Մախմուրյանը մատնանշում է մանդատի գաղափարը հետպատերազմյան կարգավորման գործընթացում ամրագրելու հետևյալ պատճառները.

- աշխարհի գաղութատեր պետություններում կայսերական իշխանության համընդհանուր ճգնաժամը, որը հետևանք էր տարածքային ձեռքբերումներից ակնկալվող տնտեսական և ֆինանսական շահույթի նկատմամբ այդ նպատակով կատարվող ռազմական, ֆինանսական ծախսերի և դրանց հետ կապված տարաբնույթ խնդիրների ավելացման,
- բրիտանական և ֆրանսիական գաղութներում անջատողական ձգտումների խորացումը,
- պատերազմում պարտված և փլուզվող գերմանական, ավստրիական, թուրքական և ռուսական կայսրությունների տիրապետության ներքո գտնվող ու անկախության ձգտող տարածքներում մետրոպոլիայի իշխանությունն Ազգերի լիգայի մանդատով փոխարինելու միջոցով այդ տարածքներ ներթափանցելու Դաշնակից երկրների նպատակը,
- իրենց գաղութային կայսրություններում ներքին կարգուկանոնը վերականգնելու, գաղութների անկախական ձգտումները վերահսկողության տակ պահելու, ինչպես նաև պարտված պետու-

[16]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 25.

թյունների նախկին գաղութներում Դաշնակից տերությունների ազդեցությունը հաստատելու հարցերում միջազգային իրավական ընդհանուր սկզբունքներով առաջնորդվելու նպատակը[17]:

Պատմաբանի դիտարկմամբ, մանդատի գաղափարը դիվանագիտական քննարկումների օրակարգ բերելով՝ Դաշնակից տերությունները նախևառաջ մտահոգ էին իրենց ներքին ու արտաքին խնդիրներով, իսկ ճնշված ժողովուրդների ճակատագիրը ենթակա էր հարմարեցման դրանց լուծումներին: Ըստ այդմ, «ժողովրդի և պետության ճակատագիրն անմիջապես հանձնվում էր միջազգային դիվանագիտական կոնգրեսի որոշմանը: Այդ պահից այլևս խոսք էր գնում ինքնավար Հայաստանի մասին՝ մեկ կամ բոլոր Մեծ Տերությունների խնամակալության ներքո»,– նշում է Գ. Մախմուրյանը՝ հավելելով, որ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Նուբարի Ազգային պատվիրակության հուշագիրը, օրինակ, պարունակում էր երկիմաստ ձևակերպումներ և՛ ինքնավարության, և՛ օսմանյան տիրապետությունից լիակատար ազատագրության պահաջներով: Իրական ուժի, նյութական հիմքերի, նաև կառավարման համակարգի բացակայությունը ստիպում էին հաշտվել ցանկացած արտաքին առաջարկի հետ, թեև նման աննպաստ պայմաններում անգամ չէր կարելի անտեսել արդեն իսկ առկա Հայաստանի Հանրապետությունը՝ իր խորհրդարանով ու բանակով, կառավարությամբ ու ինքնիշխան պետության մյուս հատկանիշներով[18]:

Հղում կատարելով բրիտանական արտաքին գործերի նախարարության արխիվային փաստաթղթերին՝ Գ. Մախմուրյանը հիմնավորում է Մեծ Բրիտանիայի դիվանագիտության վճռորոշ

---

[17]Տե՛ս նույն տեղում, էջ 31–32:

[18]Նույն տեղում, էջ 35:

դերն Արևելյան հարցի լուծման գործում՝ չնայած ԱՄՆ-ի ընդգծված շահագրգռվածությանը Թուրքիայի ու Անդրկովկասի նկատմամբ միասնական մանդատի հարցում: Այս առումով հարկ է առանձնացնել նրա ուսումնասիրությունը 1918–1920 թթ. Հայաստանում և Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականության մասին, որում Արևմտյան Հայաստանի հարցի լուծման վերաբերյալ բրիտանական կառավարող շրջանակների տեսակետները վերլուծված են ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններում ազդեցիկ այդ պետության աշխարհաքաղաքական շահերի և օսմանյան «ժառանգության» բաժանման հարցում անգլո-ամերիկյան հակասությունների համատեքստում[19]:

Պատմաբանը նշում է, որ մերձավորարևելյան հարցերին տիրապետող բրիտանական պետական ազդեցիկ գործիչները [Ջորջ Քերզոն, Արթուր Բալֆուր, Ռոբերտ Սեսիլ (Կրտսեր), Յ.-Ք. Սմաթս, Էդվին Մոնթեգյու, Հենրի Մ. Վիլսոն և այլք] օսմանյան «ժառանգության» բաժանման հիմքում դնում էին 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերը՝ միևնույն ժամանակ կարևորելով դրանցում Սիրիային ու Մոսուլին վերաբերող հատվածները «խմբագրելու» անհրաժեշտությունը: Նրանք Արևմտյան Հայաստանի հարցը դիտարկում էին Անդրկովկասի հարցից առանձին՝ կարևորելով երկրամասի նկատմամբ միջազգային վերահսկողություն ապահովելու և այնտեղ դաշնակցային զինված ուժեր տեղակայելու անհրաժեշտությունը՝ հայրենի հողում հանգիստ ու ապահով ապրելու արևմտահայերի իրավունքը պաշտպանելու նպատակով[20]: Բրիտանական դիվանագիտությունը Փարիզի վեհաժողովում երկու տարբերակ էր առաջարկում

---

[19]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Бремя белого человека / Ред. С. С. Степанян. Ереван, 2002.
[20]Տե՛ս նույն տեղում, էջ 29–30, 39:

Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի վերաբերյալ, այն է՝ թուրքական պետության մասնատում և Արևմտյան Հայաստանի անկախացում միջազգային վերահսկողության ներքո կամ Արևմտյան Հայաստանի հարցի լուծում թուրքական պետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանման պայմաններում: Երկրորդ տարբերակը, Գ. Մախմուրյանի գնահատմամբ, նախընտրելի էր բրիտանական կառավարող շրջանակների համար՝ որպես այլընտրանք ԱՄՆ-ի գլոբալ հավակնություններին: Առաջարկվում էր Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ազդեցության ոլորտը սահմանափակել Արևմտյան Հայաստանով ու, դրանով իսկ, նվազեցնել վերջինիս հովանավորության հարցում Կոնգրեսի աջակցությունը ստանալու՝ Վ. Վիլսոնի հնարավորությունները[21]:

Պատմաբանի կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ բրիտանական դիվանագիտությունը նախապատվություն էր տալիս Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում Լոնդոնի ունեցած ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական շահերին, իսկ Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը կախման մեջ դնում Մեծ Բրիտանիայի ռազմական և ֆինանսական դժվարություններից[22]:

1919 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 29-ը Վաշինգտոնում բրիտանական և Լոնդոնում ամերիկյան դեսպանությունների միջև տեղի ունեցած ուշագրավ քննարկումները ներկայացնող արխիվային վավերագրերի հիման վրա Գ. Մախմուրյանը մատնանշում է Հայաստանի մանդատի հարցում Լոնդոնի կառավարության՝ իր դաշնակիցներից ավելի արագ ու արդյունավետ գործելու հանգամանքը: Նա հիմնավորում է, որ բրիտանական դիվանագետներին

[21]Տե՛ս նույն տեղում, էջ 97–100:
[22]Տե՛ս նույն տեղում, էջ 162–167:

առավելապես հետաքրքրում էին Արևմտյան Հայաստանի, նաև նախկին Օսմանյան կայսրության այլ տարածքների մանդատը վերցնելու ԱՄՆ-ի մտադրության, Արևմտյան Հայաստանի մանդատը ստանձնելու դեպքում այնտեղ ամերիկյան զորք տեղակայելու, ֆինանսական աջակցություն տրամադրելու, ԱՄՆ-ի կողմից 1919թ. հունիսի 28-ի Վերսալի պայմանագիրը վավերացնելու ժամկետի, նախկին Օսմանյան կայսրության որևէ այլ տարածքի մանդատը վերցնելու դեպքում ԱՄՆ-ի ակնկալիքների, Կոնգրեսի կողմից Արևմտյան Հայաստանի մանդատը վերցնելու համաձայնության վերաբերյալ հնարավոր որոշման ժամկետի, Արևմտյան Հայաստանի մանդատն ընդունելու դեպքում ամերիկյան հետաքրքրությունները Կովկասի նկատմամբ տարածելու հավանականության հարցերը[23]: Վ. Մելիքյանը նկատում է, որ Մերձավոր Արևելքում անգլիական հեռահար նպատակների առանցքը Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցներն էին: Սակայն Փարիզի վեհաժողովում առավել բարդ խնդիրը ոչ թե օսմանյան «ժառանգության» անգլիական կամ ֆրանսիական, այլ՝ ամերիկյան մասնաբաժնի որոշումն էր: Նա չի բացառում, որ նշված տարածքների նկատմամբ մանդատն առաջարկելով ԱՄՆ-ին՝ Լոնդոնը ծրագրել էր մերժում ստանալու դեպքում բարձրացնել անգլիական մանդատի վերաբերյալ հարցը: Հայաստանի մանդատը վերցնելուց ամերիկյան Սենատի հրաժարումը պատմաբանը բացատրում է նախագահ Վ. Վիլսոնի քաղաքական դիրքի թուլացմամբ, Կոնգրեսի երկու պալատներում նրա ղեկավարած Դեմոկրատական կուսակցության մեծամասնության կորստով, ծախսատար ու քիչ արդյու-

[23]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 37.

նավետ վիլսոնյան արտաքին քաղաքականության նկատմամբ երկրում աճող ընդդիմությամբ[24]:

Համադրելով Թուրքիայի հետ հաշտության ամերիկյան, բրիտանական և ֆրանսիական նախագծերը՝ Գ. Մախմուրյանը եզրակացնում է, որ բրիտանական դիվանագիտությունը շահագրգռված էր ետին պլան մղել Ազգերի լիգայի դերը և ընդգծել Դաշնակիցների վերահսկողությունը Մեծ Բրիտանիային անմիջականորեն հետաքրքրող այնպիսի հարցերում, ինչպիսիք էին՝ սևծովյան նեղուցների միջազգայնացումը, օսմանյան պարտքի վերահսկումը, նախկին թուրքական կայսրության ազգային փոքրամասնությունների պաշտպանությունը, ռազմական հանցագործների պատիժը: Ավելին, Գ. Մախմուրյանը և Վ. Մելիքյանն ընդգծում են, որ տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման կանխումը Լոնդոնի կառավարության մերձավորարևելյան քաղաքականության առանցքն էր: Այդ պատճառով էլ, ի հակակշիռ ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքում մանդատի առաջարկ էր արվում նաև Ֆրանսիային: Ընդ որում, բրիտանական կառավարությունն ԱՄՆ-ին և Ֆրանսիային առաջարկում էր մանդատի՝ նրանց ուժերից վեր, հետևաբար, մերժելի տարբերակներ[25]: Միևնույն ժամանակ նշվում է, որ Ազգերի լիգան միջազգային իրավական կարևոր հարցերում կախման մեջ էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հրահանգներից ու միջոցներից, ինչն էլ վճռորոշ դեր կատարեց Ազգերի լիգայի Խորհրդի կողմից թե՛ Հայաստանի մանդատը մերժելու, թե՛ նրան

---

[24]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 25:

[25]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 76; ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 25:

ֆինանսական օգնություն տրամադրելուց հրաժարվելու հարցերում:

Գ. Մախմուրյանի և Վ. Մելիքյանի իրավացի դիտարկմամբ, Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների ընթացքի և արդյունքների վրա ազդող մյուս գործոնը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության թուլությունն էր: Հանրապետության սահմանները ձևավորվում էին ոչ թե «ներսում»՝ պետության շահերին ու հնարավորություններին համապատասխան, այլ այդ հարցի լուծումն ակնկալվում էր «դրսից»՝ Դաշնակից տերություններից, ինչն էլ հայ ժողովրդի ու նրա անկախ հանրապետության համար ծնում էր անորոշ ու սպասողական իրավիճակ՝ կաշկանդելով և կասեցնելով հայկական պետականության համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի լուծումը: Գ. Մախմուրյանը նշում է, որ, այդուհանդերձ, 1919 թ. ամռանից 1920 թ. մարտ ամիսը ՀՀ-ի ներքին ու արտաքին դրությունն աստիճանաբար բարելավվում էր, ինչին համապատասխան պաշտոնական Երևանը նվազեցնում էր Ազգերի լիգայի իրավասություններն իր երկրի սահմաններում[26]: Այս առումով ուշագրավ է նրա եզրակացությունը Հայաստանի մանդատի ուրվագծվող արդյունքների վերաբերյալ: Համեմատելով դրանք Միջագետքի ու Պաղեստինի մանդատի վերաբերյալ Դաշնակից տերությունների ներկայացրած նախագծի պայմանների հետ՝ նա նկատում է, որ թեև մանդատի իրագործման դեպքում Հայաստանն ունենալու էր պետական ինքնուրույնության ավելի բարձր մակարդակ, սակայն դրա դիմաց նրա մանդատի ժամկետն ավելի երկար էր լինելու, քան՝ մյուսներինը: Ավելին, դարձյալ անորոշ էր մնում հայկական

[26]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 42–43; ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 43:

անկախ և միացյալ պետության սահմանների վերջնական ձևավորման՝ Հայաստանի ու հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր հարցը:

Գ. Մախմուրյանն այս երկու հանգամանքները համարում է Հայաստանի մանդատի վերաբերյալ Դաշնակից տերությունների նախագծի թույլ կողմերը: Նա քննադատում է վերջիններիս ղեկավարների կողմից ուղղորդվող Ազգերի լիգայի Խորհրդի գործունեությունը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությանը ռազմական և ֆինանսական օգնություն տրամադրելուց ու տարածաշրջանում խաղաղություն ապահովելու պատասխանատվությունից հրաժարվելը, Սան Ռեմոյի միջազգային կոնֆերանսում Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի և Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեի՝ «կատարված փաստի մարտավարությամբ» գործելը և նշում, որ այդ մասին տեղեկանալուց ու Ազգերի լիգայի գործունեությանը համապատասխան գնահատական տալուց հետո Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է որոշակի փոփոխության ենթարկվեր: Մանավանդ, որ Հայաստանի Հանրապետության սահմանների վերաբերյալ Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումը, ապա 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ կոնգրեսի կողմից Հայաստանի մանդատի մերժումն արդեն իսկ կանխորոշել էին 1920 թ. թուրք-հայկական պատերազմի անխուսափելիությունը: Եվ քանի որ Հայաստանը չափազանց թույլ էր Թուրքիայի հարձակումից խուսափելու ու նրա հետ դիվանագիտական բանակցությունների միջոցով իր խաղաղ գոյակցությունն ապահովելու համար, ուստի նրան մնում էր փորձել համաձայնության գալ Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչը, ցավոք, տեղի չունեցավ[27]:

---

[27]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 45–46.

Ուշագրավ են նաև Հայաստանի մանդատի հարցում Վաշինգտոնի կառավարության գլոբալ շահերի ու հետաքրքրությունների վերաբերյալ պատմաբանների ընդհանրացումները: Գ. Մախմուրյանը եզրակացնում է, որ Փարիզի վեհաժողովի ընթացքում անգլիացիները փորձում էին ԱՄՆ-ին հանձնել երկրորդական նշանակության տարածքները՝ դա ներկայացնելով որպես վարձատրություն պատերազմի ընթացքում Դաշնակիցներին ցուցաբերված ամերիկյան ֆինանսատնտեսական և ռազմական աջակցության դիմաց: Իսկ Վ. Վիլսոնը, դրան հակառակ, օգտագործելով եվրոպական պետությունների՝ ԱՄՆ-ից ունեցած ֆինանսատնտեսական պարտքի հզոր լծակը, մշտապես ակնարկում էր, որ Դաշնակիցներն ԱՄՆ-ի վրա բեռ են դնում, ոչ թե նրան վարձատրում:

Հիրավի, ԱՄՆ-ն ուներ բոլոր հնարավորությունները դառնալու ոչ միայն փլուզված ռուսական, այլև Օսմանյան կայսրության տարածքների ժառանգորդը, սակայն նրան չէին տրվում համաշխարհային կառավարման լծակներ, նաև ԱՄՆ-ի շահերից բխող անհրաժեշտության դեպքում սևծովյան նեղուցները թուրքական կառավարության կամքից անկախ փակելու իրավունք, Շանդուն թերակղզին և գերիշխանություն Խաղաղ օվկիանոսում, որոնք այնքան անհրաժեշտ էին ԱՄՆ-ին իր ռազմածովային և տնտեսական գերազանցությունն ապահովելու համար: Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հետ ԱՄՆ-ի ունեցած հակասություններից բացի, Հայաստանի մանդատի հարցի ընթացքի վրա էապես ազդում էր նաև կոնկրետ պարտավորություններ ստանձնելուց խուսափելու Վ. Վիլսոնի կեցվածքը: Վերջինս Գ. Մախմուրյանը բացատրում է նրանով, որ ԱՄՆ-ը երբևէ պատերազմ չէր մղել Օսմանյան կայսրության դեմ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, կռվելով Գերմանիայի դեմ, չէր մասնակցել օսմանյան պետության դեմ ռազմական գործողություններին, չէր նպաստել թուրքահպա-

տակ ժողովուրդների, մասնավորապես՝ արևմտահայերի ազատագրմանը թուրքական տիրապետությունից, այդուհանդերձ, առանց ԱՄՆ-ի ռազմական ներկայության՝ մանդատ իրականացնելն անհնար էր: Պատմաբանը նաև նկատում է, որ Օսմանյան կայսրության դեմ չպատերազմելու պատճառաբանությամբ ԱՄՆ-ը հրաժարվում էր զորք ուղարկել տարածաշրջան:

Միանգամայն տեղին է Գ. Մախմուրյանի հնչեցրած այն հռետորական հարցադրումը, որ եթե Օսմանյան կայսրության դեմ ռազմական գործողություններին մասնակցած չլինելու հանգամանքն այդքան ծանրակշիռ էր ԱՄՆ-ի համար, և նա հետագայում էլ պատերազմ չէր հայտարարելու այդ պետությանը, ապա ԱՄՆ նախագահն ինչպե՞ս էր համոզելու Կոնգրեսին Հայաստանի մանդատի հարցում[28]: Վ. Մելիքյանն էլ նկատում է, որ ԱՄՆ-ի հրաժարումը Վերսալյան համակարգին մասնակցելուց նշանակում էր ոչ միայն քաղաքական լայն նշանակություն ունեցող երևույթի հաստատագրում, այլև՝ Օսմանյան կայսրության բաժանման հարցի վերադարձ իր ելակետային դիրքին, մասնավորապես՝ 1916 թ. հունվարի 3-ի Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի նախագծի սկզբունքներին, իհարկե, առանց Ռուսաստանի[29]: Այս դիտարկման առնչությամբ Գ. Մախմուրյանը կարծիք է հայտնում, որ պատերազմից Ռուսաստանի դուրս գալու, ապա թուրքական պետության պարտության արդյունքում Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի իրավական ուժը կորցնելու, նաև 1918 թ. սեպտեմբերի 20-ին Գ. Չիչերինի կողմից Օսմանյան կայսրության արտգործնախարարին հղված հայտագրով դրա չեղյալ հայտարարվելու հանգամանքներով պայմանավորված՝ Մեծ Բրիտանիան

---

[28]Տե՛ս նույն տեղում, էջ 56, 98:

[29]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 25:

և Ֆրանսիան այլևս իրավասու չէին զբաղվելու իրենց նախկին զինակից պետության՝ Ռուսաստանի տարածքային խնդիրներով: Դա էլ նշանակում է, որ օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ գաղտնի համաձայնագրերը կորցրել էին իրենց իրավական ուժը: Այս պայմաններում ԱՄՆ-ը, թեև հաստատում էր Սայքս-Պիկոյի համաձայնագրի այլևս ոչ լիարժեք լինելու հանգամանքը, այնուամենայնիվ, բնավ շահագրգռված չէր օգտվելու դրանից և ստանձնելու արևմտահայկական այն տարածքի հովանավորությունը, որը ռուսական բանակը գրավել էր 1914–1917 թթ.[30]:

Հայաստանյան պատմաբանների աշխատություններում կարևորված է նաև Հայաստանի առաջին հանրապետության կողմից ազգային խնդիրներն ու նպատակները միջազգային ասպարեզում հիմնավոր և ընդունելի ներկայացնելուն ու Հայկական հարցի արդարացի լուծմանը խոչընդոտած պատճառների վերլուծությունը: Մասնավորապես, Վ. Մելիքյանն ընդգծում է, որ հայ ժողովրդի գոյության համար ճակատագրական պահին՝ պատերազմի արդյունքների ամփոփման նախօրեին և ընթացքում, հայության ինքնակազմակերպմանն ու համազգային ներկայացուցչությանը խանգարում էր արևմտահայ և արևելահայ առճակատումը, որը սկսվել էր դեռևս 1917 թվականին՝ Արևմտահայերի առաջին համագումարում Արևմտահայ ազգային խորհրդի ստեղծումով և դրանում ՀՅԴ անդամների գերակշռությամբ: Նա միանգամայն օրինաչափ է համարում ՀՅԴ բարձր հեղինակությունն ու ազդեցությունը հայ հասարակական-քաղաքական կյանքում, միևնույն ժամանակ շեշտելով, որ հենց դրա հետևանքով ազգային կյանքին վերաբերող կարևոր հարցերի լուծումից մեկուսացվում էին մյուս առաջատար ազ-

[30]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 51.

գային ուժերը՝ Ս.-Դ. Հնչակյան և Սահմանադիր-Ռամկավար կուսակցությունները, որոնք ավելի հաճախ վերածվում էին անհաշտ հակառակորդների, ինչն էլ հանգեցրեց ճակատագրական սխալների[31]:

Պատմական գիտությունների թեկնածու Ավագ Հարությունյանը փաստական հարուստ նյութի հիման վրա ներկայացնում է, որ Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում համազգային ակտիվ, նախաձեռնողական արտաքին քաղաքականության օրակարգ մշակելու փոխարեն շարունակում էին քննարկել Հայկական հարցի բովանդակության և բնույթի, Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակի հարցերը միասնության մեջ, թե՞ առանձին-առանձին դիտարկելու տեսակետները[32]:

Վ. Մելիքյանն այդ իրողությունը բացատրում է նրանով, որ տասնամյակներ շարունակ հայ հասարակական-քաղաքական միտքը հայոց պատմական Հայրենիքում պետականության վերականգնման գաղափարը կապել էր բացառապես Արևմտյան Հայաստանի հետ: Ընդ որում, Հայկական հարցը հետապնդել էր Արևմտյան Հայաստանի բարենորոգումների կամ էլ ապագայում հնարավոր ինքնորոշման հարցերը: Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանին, ապա ընդհուպ բազմազգ Ռուսական կայսրության փլուզումը, Հայաստանի այդ հատվածում պետականության վերականգնման որևէ ծրագիր կամ նպատակ գոյություն չուներ: Հետևաբար, անկախ պետականության վերականգնումն Արևելյան Հայաստանի տարածքում այն դեպքում, երբ պատմական Հայրե-

---

[31]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 5–6:

[32]Տե՛ս ***Հարությունյան Ա.*** Սևրի պայմանագիրը և հայ հասարակական–քաղաքական միտքը / Խմբ. Վ. Ղազախեցյան, Երևան, 2004, էջ 67–114:

նիքի մեծ մասի խնդիրը տակավին լուծված չէր, արևմտահայերի մի մասի համար խորթ, անընդունելի երևույթ էր: Ավելին, արևելահայ ու արևմտահայ առճակատումից, արևմտահայության մի զգալի մասի մեջ Հայաստանի Հանրապետության նկատմամբ խորացող անհանդուրժողական վերաբերմունքից բացի, տարանջատված ու հատվածական էր նաև Հայաստանի անկախ Հանրապետությունում, Կովկասում և հայկական գաղթօջախներում ապաստանած, Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայերի գործունեությունը[33]:

Փարիզի վեհաժողովում հայ ժողովրդի համար բախտորոշ և կենսական ազգային հիմնախնդիրների միջազգային դիվանագիտական քննարկումներին զուգահեռ ընթացող արևմտահայության և ընդհանրապես ողջ հայության ինքնակազմակերպման գործընթացը վերագնահատելու տեսանկյունից ուշագրավ է Արևմտահայերի երկրորդ համագումարի 1919թ. փետրվարի 12-ին և նրա ընդունած «Քաղաքական բանաձևի» վերաբերյալ Վ. Մելիքյանի կարծիքը: Նախ, պատմաբանն արժևորում է քաղաքական այն նոր իրադրությունը, որի պայմաններում հրավիրվեց համագումարը. «Նախորդ համագումարից այն նախ եւ առաջ առանձնանում է նրանով, որ արտահայտում էր անկախութիւն հռչակած ժողովրդի կամքը»: Ավելին, «նոր համագումարը կազմկոմիտէի արեւմտահայ գործիչների կողմից դիտւում էր որպէս Հայաստանի Հանրապետութիւնում արեւմտահայերի ներկայացուցչական, քաղաքական մարմին»: Այնուհետև, անդրադառնալով արևմտահայերին Պ. Նուբարի կառավարության շուրջ համախմբելու, ապա՝ նրա ու Հովհաննես Քաջազնունու կառավարությունների փոխհամաձայ-

[33]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 8:

նությամբ համազգային սահմանադրություն ընդունելու և միացյալ կառավարություն կազմավորելու միջոցով «մեկ Հայրենիքի», այսինքն՝ «Միացյալ և Ազատ Հայաստանի» գաղափարն իրագործելու համագումարի դիրքորոշմանը՝ հետազոտողը շեշտում է, որ դրանով «վճռական քայլ արուեց հայ ժողովրդի երկու հատուածների մերձեցման, քաղաքական գործիչների հաշտեցման ուղղութեամբ: … Նախաձեռնութիւնը պատկանում էր արեւմտահայերին, ինչը բխում էր ժողովրդի այդ հատուածի օրհասական, ողբերգական վիճակից», ապա ավելացնում՝ «1878 թ. Բեռլինի վեհաժողովից յետոյ, Հայկական Հարցն առաջին անգամ յառնեց համահայկական քաղաքական ծրագրի տեսքով ու նաեւ որպէս հետեւանք՝ համատեղ գործունէութեան եւ փոխադարձ զիջումների» [34]:

Արևմտահայերի ինքնակազմակերպման, արևմտահայ-արևելահայ առճակատումը մեղմելու, համազգային կենսական հիմնահարցերի վերաբերյալ միասնական դիրքորոշում մշակելու և միջազգային ասպարեզում այն միասնաբար պաշտպանելու տեսանկյունից Վ. Մելիքյանը և Ս. Պողոսյանը կարևորում են նաև 1919 թ. փետրվար–ապրիլին Փարիզում տեղի ունեցած համահայկական համագումարը[35]: Քննարկված բազմաթիվ հարցերից նրանք շեշտում են Ազգային պատվիրակության նոր կազմի ձևավորումը, Փարիզի վեհաժողովին ներկայացվելիք հայկական պահանջները, պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական վնասի չափը որոշելու, հայկական ազգային բանակ կազմավորելու, Միացյալ Հայաստան ստեղծելու, Հայաստանի մանդատի հարցերը: Քննարկման ընթացքում ՀՅԴ-ի և ազգային մյուս կու-

[34]Նույն տեղում, էջ 7, 9, 11–12:

[35]Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.) / Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Երևան, 2004, էջ 333–504:

սակցությունների գործիչների միջև բորբոքված տարաձայնությունները հետազոտողները բացատրում են արտաքին քաղաքական իրավիճակով, Օսմանյան կայսրության ու եվրոպական պետությունների միջև ձևավորվող հետպատերազմյան հարաբերություններով[36]:

Հայաստանյան պատմաբանների աշխատություններում նաև ուսումնասիրված ու արժևորված են Դաշնակից տերություններին ներկայացված հայ ազգային պահանջները Հայաստանի իրավական կարգավիճակի ու Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման վերաբերյալ, դրանց բովանդակային տարբերություններն արևմտահայերի Ազգային և Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունների ծրագրերում, որոնք ևս վկայում են հայ իրականությանը բնորոշ հատվածականության մասին: Մասնավորապես, վերլուծելով 1918 թ. դեկտեմբերին Փարիզում Հայկական հարցի լուծման մասին Ազգային պատվիրակության ջանքերով անգլերենով պատրաստված հուշագիրը[37]՝ Գ. Մախմուրյանը, որպես փաստաթղթի ուժեղ կողմեր, նշում է հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի, արդարադատության և ռազմատուգանքների, հաշտության բանակցություններին հայկական կողմի մասնակցության վերաբերյալ պահանջների, իր իշխանությանը ենթակա հայերին բնաջնջելու նպատակով կանխամտածված անմարդկային տառապանքների ենթարկած թուրքական հանցագործ կառավարության անդամներին պատասխանա-

---

[36]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 20, 23–24, ***Պողոսեան Ս.*** նշվ. աշխ., էջ 164–170:

[37]Գրքույկը վերնագրված է՝ "Memorandum on the Armenian National Delegation. Paris: December, 1918" (Second and Revised Issue. London, 17 p.): Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 31, թ. 1–17:

տվության ենթարկելու մասին դրույթները: Որպես հուշագրի թույլ կողմեր են նշված դրա հետևյալ երկու դրույթները. նախ՝ հայկական պետության մանդատը ստանձնող մեծ տերությանն առաջարկվում էր կազմել հայերի Օրգանական ստատուտ՝ հայկական պետության իրավական դրությունը և կառավարման ձևը ամրագրող իրավական ակտ, և վերահսկել Սահմանադիր ժողովի հրավիրումը, այնուհետև, լիակատար անկախությունը դիտելով որպես հայկական պետության ապագան, չէր նշվում հայերի համար ցանկալի հովանավոր-պետությունը, չէին ներկայացվում տնտեսական ու քաղաքական այն օգուտները, որոնք վերջինս կարող էր ակնկալել այդ պետության մանդատից: Գ. Մախմուրյանի կարծիքով, սա ընդհանրական, վերացական մոտեցում էր, որը վկայում էր հայկական կողմի դիրքերի ծայրահեղ թուլության մասին: Իսկ հուշագրի հեղինակների համոզմունքը, թե հայերը կարող էին հուսալի պատնեշ դառնալ Թուրքիայի, Անդրկովկասի թուրք-թաթարների, Կենտրոնական Ասիայի և Թուրքեստանի միջև, ըստ նրա, չէր համապատասխանում «ո՛չ հայ ժողովրդի իրական դրությանը, ո՛չ էլ նրա քաղաքական բարօրությանը, քանի որ դիմակայությունը ապագայի համար միակ և լավագույն հեռանկարը չէր»[38]: Պատմաբանի գնահատմամբ, Պ. Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակությունը Փարիզի վեհաժողովում ներկայանում էր որպես թույլ ու Ազգերի լիգայի մանդատը հայցող կողմ, քանի որ, գործելով Հայաստանի Հանրապետությունից և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից անջատ, իբրև Կիլիկիայի Հայոց կաթողիկոսության ներկայացուցիչ, կարող էր հիմնավորել իր պահանջները միայն ֆրանսիական Արևելյան լեգեոնի 5 հազար հայ կամավորների ու Դաշ-

[38]***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 36.

նակից տերությունների այլ զորամիավորումներում ընդգրկված հայերի ներդրմամբ պատերազմի հաղթանակի գործում: Իսկ Պ.Նուբարի կողմից հայերի զանգվածային տեղահանության, բռնագաղթի, կոտորածների, դրանց հետևանքների համար մեղավորներին պատժելու անհրաժեշտությունը շեշտելու նպատակը, Գ. Մախմուրյանի կարծիքով, ավելի շատ հոգեբանական ազդեցություն գործելն էր Դաշնակից պետությունների վրա, քան հայ ժողովրդի ու նրա անկախ պետականության իրական հնարավորությունները ներկայացնելը:

Պատմաբանը նաև քննադատում է Արևելյան Հայաստանն Արևմտյան Հայաստանին միավորելու միջոցով հայկական անկախ ու միացյալ պետություն ստեղծելու և այդ պետության սահմանների որոշումը ոչ թե հայերին, այլ խառը հանձնաժողովի որոշմանը վերապահելու մասին Փարիզի վեհաժողովում Գլխավոր դաշնակից պետությունների կողմից քննարկված առաջարկները՝ դրանք համարելով մի կողմից ճիշտ, մյուս կողմից՝ սխալ: Մասնավորապես, նշվում է, որ, թեև սուլթան Աբդուլ Համիդի օրոք Արևմտահայաստանի սահմանների փոփոխումը ծառայել էր հայկական վիլայեթներում ժողովրդագրական պատկերի աղավաղմանը, այնուամենայնիվ, փոփոխված սահմաններն ինչ-որ իմաստով արտահայտում էին արտաքին ուժերի առկա հարաբերակցությունը, հետևաբար, սխալ կլիներ դրանց հետ հաշվի չնստելը: Անընդունելի ու վտանգավոր է համարվում հայկական պետության սահմանների որոշումն արտաքին միջնորդներին վերապահելու վերաբերյալ Պ. Նուբարի ծրագրային դրույթը: Գ. Մախմուրյանը շեշտում է, որ ոչ թե Դաշնակից տերությունները, այլ հայերն իրենք պետք է որոշեին, թե որքան տարածք կարող էին վերահսկել: Ավելին, հայերն իրենք պետք է առաջադրեին նաև մանդատար պետության թեկնածությունը, բայց ի վիճակի չեղան այդ անելու: ՀՀ պատվիրա-

կությունը չկարողացավ օգտագործել մեծ տերությունների հակասությունները, թեև նրա պահանջները՝ Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման, Դաշնակից տերությունների կողմից նրան նյութական, բարոյական ու ռազմական օգնություն տրամադրելու, Հայաստանը կռվող կողմ ճանաչելու, նրա պատվիրակությանը Փարիզի վեհաժողովի մասնակից դարձնելու և որպես Արևմտահայաստանի վերակազմավորման ու վերականգնման միակ բավարար հիմք պարտված Օսմանյան կայսրության հայկական վիլայեթները Հայաստանի Հանրապետությանը միավորելու վերաբերյալ, չափավոր ու իրագործելի էին, զերծ ավելորդ կոնկրետացումներից և ծայրահեղություններից:

Գ. Մախմուրյանը Ա. Ահարոնյանի ղեկավարած պատվիրակության դիվանագիտական գործունեության շահեկան կողմեր է մատնանշում Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչման ու վեհաժողովին մասնակցության պահանջները Հայաստանի մանդատի հարցից առանձին դիտարկելը և Ազգերի լիգայի նկատմամբ իրատեսական դիրքորոշում որդեգրելը՝ հաշվի առնելով այդ կազմակերպության իրական ուժն ու սահմանափակ հնարավորությունները[39]:

Գ. Գալոյանի, Գ. Մախմուրյանի, Վ. Մելիքյանի աշխատություններում անդրադարձ է կատարված նաև 1919 թ. փետրվարի 12-ին Ա. Ահարոնյանի կողմից Փարիզի վեհաժողովի բոլոր պատվիրակներին ներկայացված հուշագրին, որում պահանջվում էր Միացյալ Հայաստանի լիակատար անկախություն, հայկական անկախ պետության պաշտպանություն Դաշնակիցների միասնական զինվորական ուժերով կամ Ազգերի լիգայի կողմից՝ առնվազն 12 տարով, որևէ մանդատարի կողմից Հայաստանի ուղղակի կառա-

[39]Տե՛ս նույն տեղում, 66–67:

վարում՝ ներառյալ քաղաքացիական բնակչության զինաթափումը, թուրքական աստիճանավորների հեռացումը, Հայոց մեծ եղեռնի կազմակերպիչների և գործադրողների պատժումը, անհնազանդ քոչվոր ցեղերի արտաքսումը, ոչ վաղուց հաստատված մահմեդական գաղթականների վերաբնակեցումը, առևանգված կանանց ու երեխաների վերադարձումը, զանգվածային տեղահանության և բռնագաղթի հետևանքով հայերին պատճառված նյութական վնասի հատուցումը: Նաև Հայաստանի Հանրապետությունն իր վրա էր վերցնում օսմանյան պարտքի մի մասը: Գ. Մախմուրյանի պնդմամբ, հուշագիրը սկիզբ դրեց Հայկական հարցում մեծ տերությունների դիվանագիտական այն հնարքին, երբ ավելի շատ խոսվում էր հայ ժողովրդի կորուստների ու ազգային պահանջների, քան գործնականում հնարավոր այն օգուտների մասին, որոնք կարող էր ստանալ Հայաստանը հովանավորող պետությունը: Այս ամենը վկայում է, որ հետպատերազմյան աշխարհակարգը տնօրինող պետությունները բնավ շահագրգռված չէին Հայկական հարցի արդարացի լուծմամբ. հետևաբար, խուսափում էին այդ ուղղությամբ գործնական որևէ պարտավորության ստանձնումից[40]:

Վ. Մելիքյանի կարծիքով էլ, առաջին հայացքից հուշագրի դրույթներում արտառոց ոչինչ չկար, քանի որ 1919 թ. հունվարի 30-ին Վ. Վիլսոնի նախաձեռնությամբ վեհաժողովը որոշում էր ընդունել Հայաստանն ազատագրելու և ԱՄՆ-ը մանդատար պետություն նշանակելու մասին: Նման պայմաններում, երբ Մեծ Հայաստանի ստեղծումը կասկածի ենթակա չէր, խնդիրն առավելապես Հայաստանի սահմանների ճշտման և որևէ պետության կողմից նրա մանդատն ընդունելու մեջ էր: Պատմաբանի դիտարկմամբ,

[40]Տե՛ս նույն տեղում, էջ 61:

Դաշնակից տերությունները կարող էին և պետք է այդ հարցը լուծեին Օսմանյան կայսրությանը պարտադրվող հաշտության պայմանագրի շրջանակներում, մինչդեռ նրանց ուշադրությունը սևեռված էր Գերմանիայի հետ հաշտության խնդրին, ինչի հետևանքով հայկական պահանջների Հուշագիրը պատշաճ արձագանք չգտավ[41]:

1919–1920 թթ. Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների համատեքստում Գ. Մախմուրյանը կարևորում է հայկական գործոնի դերը՝ նշելով ՀՀ պաշտոնական և Ազգային պատվիրակությունների թույլ տված դիվանագիտական ու տակտիկական սխալները և շեշտելով, որ դրանք էապես ազդել են Հայկական հարցի լուծման վրա: Նրա փաստարկմամբ, Փարիզի հաշտության վեհաժողովի ընթացքում հայկական կողմի դիրքորոշումը կարող էր վճռորոշ նշանակություն ունենալ հայկական նորանկախ հանրապետության քաղաքական կարգավիճակի, պետական սահմանների, Հայաստանի Հանրապետության մանդատար պետության թեկնածության վերաբերյալ սկզբունքային հարցերում, եթե հայկական պատվիրակությունները կարողանային օգտագործել մեծ տերությունների միջև առկա հակասությունները: Դրան հակառակ, հայկական պատվիրակությունները թույլ են տվել մի շարք սխալներ՝ Փարիզի վեհաժողովի ղեկավար մարմնին՝ Տասի խորհրդին ներկայացրած հուշագրի բովանդակությունը չէր համապատասխանում Հայկական հարցում Դաշնակից տերությունների սկզբունքային մոտեցումներին, հայկական պատվիրակությունների ծրագրային դրույթներում կային արմատական տարբերություններ, Պ. Նուբարի ծրագիրը մաքսիմալիստական էր, նա ձգտում էր

---

[41]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 28:

լիդերության և քամահրական վերաբերմունք ուներ Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Փաստորեն, «երկու ելույթ, երկու տարբեր մոտեցում հայկական պետության ապագայի վերաբերյալ». պատմաբանի գնահատմամբ, դա վկայում էր, որ հայերը չունեին միասնական, համերաշխ պատվիրակություն, որը վարեր երկակի խաղ, այլ ունեին երկու պատվիրակություն, որ մրցակցում էին հանուն լիդերության: Այս պարագայում արտաքին ուժի վրա խաղադրույք կատարելը պատվիրակությունների կողմից չէր ուղեկցվում Հայաստանի մանդատից ակնկալվող տնտեսական շահույթների կամ արտոնությունների մասին Դաշնակից տերություններին տրվող խոստումներով: Այսպիսով, հայկական պատվիրակությունների գործունեությունը ոչ թե ներսից ուղղորդվող երկակի խաղ էր, այլ՝ երկու տարբեր դիրքորոշում նույն ազգային խմբի ներսում[42]: Գ. Գալոյանի դիտարկմամբ էլ, ՀՀ-ին և Արևմտյան Հայաստանին սպառնացող արտաքին վտանգի պայմաններում Պ. Նուբարի կողմից հայկական պատվիրակությունների, նաև նրանց ու Հայաստանի կառավարության միջև տարակարծությունների հրապարակայնացումն էլ ավելի էր նվազեցնում Հայկական հարցի արդարացի լուծման, Անկախ և Միացյալ հայկական պետություն ստեղծելու գաղափարը կյանքի կոչելու հավանականությունը: Պատահական չէ, որ Փարիզի վեհաժողովում հայկական պատվիրակներին «չնկատեցին», իսկ Դ. Լլոյդ Ջորջը Պ. Նուբարի առաջարկները բնութագրեց «Պողոսի կախարդական հեքիաթներ»: «Դաշնակից տերությունները դեռևս չէին կորցրել հույսը Ռուսաստանի այն ուժերի նկատմամբ, որոնք ձգտում էին խորհրդային կարգերի տապալմանը և «մեծ ու անբաժան Ռուսաստանի» վե-

[42]***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 64–65, 67.

ռականգնմանը: Ռուսական նախկին կայսրության փլատակների վրա ստեղծված հանրապետությունների կառավարություններին ճանաչելը և նրանց հետ հաշվի նստելը կարող էին խրտնեցնել այդ ուժերին: Այդ պատճառով էլ աննպատակահարմար գտնվեց ազգային կառավարությունների ներկայացուցիչներին պաշտոնապես խորհրդաժողով թողնելը»[43],– նկատում է պատմաբանը և մեջբերում Դ. Լլոյդ Ջորջի եզրակացությունը. «Հայերը ստիպված կլինեն սահմանափակվել լոկ իրենց սեփական ուժերով, իսկ այդպիսի պայմաններում նրանք, ըստ երևույթին, ընդունակ չեն տիրել Թուրքական Հայաստանին: …Ես չեմ կարող ինձ վրա պատասխանատվություն վերցնել և համաձայնել Մեծ Հայաստան ստեղծելուն»[44]:

* * *

1919–1920 թթ. Հայկական հարցի միջազգային դիվանագիտական քննարկումների հետ անմիջականորեն կապված են 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում Հայաստանի սահմաններին, իրավական կարգավիճակին ու հայ ժողովրդի արդար իրավունքներին վերաբերող հոդվածների գիտական վերագնահատման հարցերը: Համաշխարհային պատերազմում հաղթանակած Դաշնակից տերությունների և պարտված Օսմանյան կայսրության միջև Սևրի հաշտության պայմանագրի ստորագրմամբ Փարիզի վեհաժողովն ավարտեց աշխարհամարտի արդյունքների ամփոփումն ու միջազգային հարաբերությունների Վերսալյան համակարգի ձևավորումը: Հետպատերազմյան աշխարհակարգի ձևավորումը շարունակվեց 1921–1922 թթ. և ավարտվեց վաշինգտոնյան երեք համաձայնագրերի ստորագրմամբ: Սևրի պայմանագիրը

---

[43] ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 104:
[44] Նույն տեղում, էջ 89:

դարձավ Վերսալ-վաշինգտոնյան համակարգի[45] հիմքը կազմող կարևորագույն միջազգային փաստաթղթերից մեկը:

Դաշնակից պետությունների շարքում երիտթուրքական կառավարության հետ պայմանագիրը ստորագրեց նաև Հայաստանը՝ հանձինս ՀՀ պաշտոնական պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի: Հայաստանի Հանրապետության մասնակցությունը պայմանագրի ստորագրմանը միջազգային իրավունքի տեսանկյունից նշանակում էր՝ Հայաստանի de jure ճանաչում պայմանագիրը ստորագրող պետությունների կողմից: 1915–1916 թթ. իր Հայրենիքում բռնի տեղահանության ու զանգվածային կոտորածների ենթարկված, հայրենազրկված, տարբեր երկրներում սփռված և միայն 1918 թ. մայիսին հայրենի մի փոքր հողակտորի վրա անկախ պետականությունը նոր-նոր վերագտած հայ ժողովուրդը Սև-

[45]Վերսալ-վաշինգտոնյան համակարգը, որպես Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած և պարտված պետությունների միջև նոր իրավահարաբերությունները կարգավորող պայմանագրերի ամբողջություն, ձևավորվել է 1919–1922 թվականներին՝ Փարիզի վեհաժողովի և Վաշինգտոնի կոնֆերանսի արդյունքում: Դրա հիմքը կազմում են՝ հաղթանակած Դաշնակիցների հաշտության պայմանագրերը պարտված Գերմանիայի (Վերսալի պայմանագիր, 1919 թ. հունիսի 28), Ավստրիայի (Սեն Ժերմենի պայմանագիր, 1919 թ. սեպտեմբերի 10), Բուլղարիայի (Նեյի պայմանագիր, 1919 թ. նոյեմբերի 27), Հունգարիայի (Տրիանոնի պայմանագիր, 1920 թ. հունիսի 4), Օսմանյան կայսրության (Սևրի պայմանագիր, 1920 թ. օգոստոսի 10) հետ և Վաշինգտոնի կոնֆերանսի արդյունքում 1921 թ. դեկտեմբերի 13-ին ստորագրված «Չորսի համաձայնագիրը» խաղաղ-օվկիանոսյան կղզիների, 1922 թ. փետրվարի 6-ին ստորագրված «Հինգ տերությունների պայմանագիրը» ռազմածովային սպառազինությունների սահմանափակման մասին և համաձայնագիրը Չինաստանում վարելիք քաղաքականության վերաբերյալ: Այս մասին մանրամասն տե՛ս История дипломатии, т. 3 / Ред. А. А. Громыко. М., 1965, с. 161–164, 213–214, 244, 246–248.

րի պայմանագրի հետ էր կապում Հայկական հարցի արդարացի լուծման հույսը:

Թեև Սևրի պայմանագրի ստորագրումից անցել է մեկ դար, սակայն միջազգային դիվանագիտական այդ փաստաթղթի նկատմամբ Հայաստանի ու Սփյուռքի թե՛ գիտական և թե՛ հասարակական-քաղաքական շրջանակներում հետաքրքրությունը ոչ միայն չի նվազել, այլև ձեռք է բերել նոր իմաստ ու բովանդակություն: Դա բացատրվում է նրանով, որ տարիներ շարունակ հայ պատմագիտական միտքը Սևրի պայմանագիրը դիտարկում էր մեր ժողովրդի տարածքային պահանջների վերաբերյալ 88–93-րդ հոդվածների շրջանակներում: Եվ միայն վերջին տարիներին ուսումնասիրության առարկա դարձան նաև պայմանագրում Հայաստանին ու հայ ժողովրդին անուղղակիորեն վերաբերող, բայց չափազանց կարևոր հոդվածները:

Պատմաբանների գնահատմամբ, Սևրի պայմանագիրը գիտական հետաքրքրություն ներկայացնելուց բացի, հայերիս համար ունի քաղաքական նշանակություն, քանի որ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի անվիճելի ու արդարացի իրավունքները հաստատող դիվանագիտական կարևոր փաստաթուղթ է՝ իրավական անբեկանելի հիմք հայոց պահանջատիրության համար: Լ. Խուրշուդյանը գրում է, որ, «եթե իրադարձությունները բարեհաջող ընթացք ունենային, ապա հայ ժողովուրդը կարող կլիներ հայտարարելու, որ ինքը լուծեց նախնիների թողած ծանր բեռը՝ Հայկական հարցը»[46]: Նրա գնահատմամբ, «Սեւրի պայմանագրով Արեւմուտքը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում: Եթե դրան

[46] ***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, էջ 49:

ավելացնենք, որ 1917 թվի վերջին Թուրքահայաստանի մասին դեկրետով … Խորհրդային Ռուսաստանը եւս ճանաչել էր այդ տարածքի նկատմամբ հայ ժողովրդի պատմական իրավունքը, ապա պարզ կդառնա, որ հայ ժողովրդի թափած արյունը, բազմաթիվ սերունդների հերոսական, անձնազոհ պայքարը վերջապես տվեց իր արդյունքը. աշխարհը պաշտոնապես ընդունեց հայ ժողովրդի պատմական իրավունքը Արեւմտյան Հայաստանում եւ այդ տարածքում հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը: Հենց դրա մեջ է այդ փաստաթղթերի պատմական նշանակությունը»: «1920 թվականի ամառը Հայկական հարցի պատմության բարձրակետն էր»[47]:

Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը նշում են, որ Սևրի պայմանագիրը Հայկական հարցի լուծման մինչ այդ եղած տարբերակներից ամենահաջողն ու արմատականն է, քանի որ դրա հիմքում դրված է հայկական տարածքների միավորմամբ անկախ Հայաստանի ստեղծման նպատակը: Այդուհանդերձ, Հայկական հարցի լուծումը Դաշնակիցների համար ուներ առավելապես բարոյական-քարոզչական նշանակություն այն իմաստով, որ նրանք համաշխարհային պատերազմը հայտարարել էին պատերազմ՝ «հանուն փոքր ժողովուրդների ազատագրության»: «… Սեւրը ծնվեց ոչ այնքան որպես աշխատելուն նպատակադրված պայմանագիր, որքան միջոց թույլ չտալու, որ օսմանահպատակ ժողովուրդները, մասնավորապես հայերը կողմնորոշվեին դեպի Խորհրդային Ռուսաստան, հանձինս ստեղծվելիք Հայաստանի ելք ունենալ դեպի Բաքու եւ Իրան, մեկուսացնել Թուրքիան Ռուսաստանից»,– շեշտում են պատմաբաններն ու հավելում, որ Դաշնակից տերությունները մտադիր չէին մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրս-

[47]Նույն տեղում, էջ 49–50:

ներ տրամադրել Սևրի պայմանագրով նախատեսված Հայկական հարցի լուծմանը[48]:

Ա. Մարուքյանի դիտարկմամբ էլ, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքորոշման հիմքում շարունակում էր մնալ Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման համաձայնագիրը միայն մի տարբերությամբ, որ այժմ նշված տարածքներն անցնելու էին ոչ թե Ռուսաստանին, այլ միացվելու էին Հայաստանի Հանրապետությանը: Այդպիսով, Սեբաստիան, Խարբերդը և Դիարբեքիրը դուրս էին բերվում միջազգային իրավարարի՝ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի՝ հայ-թուրքական սահմանը գծելու իրավասություններից, այն դեպքում, երբ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով, ապա նաև 1917 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով ամբողջ Արևմտյան Հայաստանում էր սահմանափակվում թուրքական իշխանությունը[49]:

Գ. Մախմուրյանը Սևրի հաշտության պայմանագիրն արտաքին ուժերով կյանքի կոչելու ՀՀ ղեկավարների հույսերը համարում է սխալ՝ հավասարազոր հանցագործության՝ ընդգծելով, որ դրա հետևանքով վտանգի տակ էր դրվում ամեն ինչ՝ անգամ ազգի ֆիզիկական գոյությունը: Այդ մտայնության հիմքում նա տեսնում է Հայաստանի Հանրապետության կուսակցական-քաղաքական ղեկավարների կողմնորոշումը դեպի Արևմուտք, ինչի միջոցով նրանք

---

[48]Տե՛ս ***Պողոսյան Սկ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, էջ 176, 198–199, 201, 206:

[49]Տե՛ս ***Մարուքյան Ա. Ց.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահիրավական հիմնավորումները, էջ 117:

միայն երկարաձգում էին իրենց իշխանությունը[50]: Պատմաբանի կարծիքով, սխալ էր հուսալ, թե ամերիկյան միջամտության բացակայության պայմաններում հայկական անկախ պետության սահմանները կարող էին որոշվել Վ. Վիլսոնի իրավարար վճռով, քանի որ խնդրի լուծումն իրականում պայմանավորված էր հայ-թուրքական հարաբերությունների ընթացքով, իսկ մեծ տերությունների միջամտությունը կարող էր միայն նպաստող և ոչ թե վճռորոշ դեր ունենալ[51]: Հետազոտողներին հենց այդ եզրահանգման է բերում նաև Գ. Մախմուրյանի կազմած ու ռուսերեն թարգմանած «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917–1920 թթ. փաստաթղթերում»[52] վերնագրով ծավալուն ժողովածուն:

Գ. Գալոյանի համոզմամբ, Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայ դատին սպառնացող գլխավոր վտանգը քեմալական շարժումն էր: Օսմանյան կայսրության նախապատերազմական տարածքների ամբողջականությունը պահպանելու

---

[50]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 123; Дипломатия Республики Армения в январе–апреле 1920 г. // Историко-филологический журнал / НАН РА, 2007, № 2, с. 84.

[51]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 42–43, 46.

[52]Տե՛ս Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг. / Составитель и перевод с английского Г. Г. Махмурян / Ред. В. Казахецян. Ереван, 2011. Ժողովածուում ընդգրկված ու գիտական շրջանառության մեջ է դրված արժեքավոր արխիվային նյութ, մասնավորապես՝ Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատի խնդրի վերաբերյալ: Ծանոթ լինելով արխիվային միկրոժապավենների հետ աշխատանքի առանձնահատկություններին՝ սկսած նյութերի պահպանվածության աստիճանից ու վերջացրած դրանք հատուկ սարքավորման միջոցով ընթերցելու հետ կապված դժվարությունները՝ անհնար է չգնահատել կատարված աշխատանքը. ժողովածուն Գ. Մախմուրյանի բարեխղճության ու գիտական պրպտուն մտքի արդյունքն է:

մղումով այն ուղղված էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հետպատերազմյան քաղաքականության դեմ՝ կանխելու Ասիական Թուրքիայի վերաբաժանումը: Քեմալական շարժումն իր էությամբ նաև հակաբոլշևիկյան էր ու հակառուսական, քանի որ համաթուրքականության ծրագիրն իրագործելու նպատակը սպառնալիք էր Ռուսաստանի շահերին Կովկասում և Միջին Ասիայում[53]: Մերձավոր ու Միջին Արևելքում անգլո-ռուսական հակասություններով էլ պայմանավորված էր Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի ու քեմալական Թուրքիայի բնական դաշինքը. 1918–1920 թթ. բրիտանական կառավարությունը Արևմտյան Հայաստանին անկախություն տալու մասին հայտարարություններով ավելի շուտ փորձում էր Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցով հասնել իր գաղութատիրական նպատակների իրագործմանը[54]:

Գ. Գալոյանի դիտարկմամբ, հայ-ռուսական հարաբերությունների կարգավորմանը խոչընդոտում էր ՀՀ արևմտյան կողմնորոշումը: Թեպետ Ռուսաստանը չէր պաշտպանում Սևրի պայմանագրով Արևմտյան Հայաստանի անկախության գաղափարը և ձգտում էր պայմանագրի ձախողմանը՝ դժգոհ լինելով սևծովյան նեղուցների և Կոստանդնուպոլսի կարգավիճակի վերաբերյալ դրա հոդվածներից, այնուամենայնիվ, չէր կարելի թերագնահատել ռուսական պետության դերը Հայկական հարցի լուծման գործում: Հայաստանի շահը պահանջում էր մերձենալ Ռուսաստանի հետ, քանի որ միայն նա կարող էր կանխել թուրքերի ոտնձգությունները Հայաստանի դեմ[55]: «Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական գլխավոր խնդիրն էր իր սահմաններում

---

[53]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 125:

[54]Տե՛ս նույն տեղում, էջ 126–127:

[55]Տե՛ս նույն տեղում, էջ 128:

վերականգնել հայաբնակ այն բոլոր տարածքները, որոնք մինչև 1914 թվականը գտնվում էին Ռուսական կայսրության սահմաններում»[56],– նշում է Գ. Գալոյանը և հավելում, որ տնտեսական ու ռազմավարական շահերով Ռուսաստանի հետ կապված Հայաստանի քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտք «անհեռատես և անհեռանկար քաղաքականություն էր, որը հետագա չարիքների աղբյուր էր հանդիսանալու»[57]: Նրա պնդմամբ, Սևրի պայմանագրով Գլխավոր դաշնակից տերությունների նախատեսած Հայաստանն անիրականանալի էր. տասնամյակներ տևած ջարդերի ու կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանը հայաթափվել էր, իսկ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը զուրկ էր ռազմական այն ուժից, որն անհրաժեշտ էր ապահովելու հայ գաղթականների վերադարձը հայրենի օջախներ և պաշտպանելու հայոց պետականության սահմանները: Դրան հակառակ, քեմալական Թուրքիան ուներ 150 հազարանոց լավ զինված ու կարգապահ բանակ, որի դեմ եվրոպական և ոչ մի տերություն ուժ գործադրելու մտադրություն չուներ[58]: Գ. Գալոյանը քննադատում է ՀՀ կառավարությանը՝ նշելով, որ եթե նա 1920 թ. հոկտեմբերի 28-ի հայ-ռուսական հաշտության պայմանագրի նախագիծն անմիջապես ստորագրեր և կենսագործեր, ապա կբացառվեր Կարսի ու Ալեքսանդրապոլի անկումը, թուրքերը կդադարեցնեին հետագա հարձակումը և զորքը ետ կքաշեին մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանագիծը: Սակայն ՀՀ կառավարությունը ձգձգում էր պայմանագրի ստորագրումը՝ ակնկալելով ստանալ Գլխավոր դաշնակից տերությունների ռազմական աջակցությունը, բայց դրա փոխարեն ստացավ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախա-

[56]Նույն տեղում, էջ 61:
[57]Նույն տեղում, էջ 60–61:
[58]Տե՛ս նույն տեղում, էջ 279–280:

ռար, պառլամենտի լորդերի պալատի լիդեր Ջ. Քերզոնի խորհուրդը՝ պայմանագիր կնքել ոչ թե Խորհրդային Ռուսաստանի, այլ քեմալական Թուրքիայի հետ[59]:

Պատմաբանը կարևորում է ՀՀ դիվանագիտությունը հնարավոր դաշնակիցների հետ քաղաքական և ռազմական կապերն ամրապնդելու ուղղությամբ: Այս առումով ակնառու էին 1919–1920 թթ. հայ-հունական բանակցությունները: Հունաստանի արտգործնախարարությունը և Կովկասում Հունաստանի դիվանագիտական առաքելությունը ձգտում էին Կովկասի և Հարավային Ռուսաստանի հույներից կազմավորել 60 հազարանոց դիվիզիա, նաև վերազինել Պոնտոսի (Տրապիզոնի վիլայեթ) զորամասերն ու դրանց միջոցով հասնել երկրամասի ազատագրմանը թուրքերից: ՀՀ-ն դիտարկվում էր հունական զինված ուժերի համախմբման «միանգամայն ընդունելի վայր»: Հաշվի առնելով, որ աշխարհագրական առումով Պոնտոսը հնարավոր չէր միացնել Հունաստանին, իսկ նրա անկախությունն անհնար էր՝ մի կողմից երկրամասում հույների համեմատ թուրք բնակչության կրկնակի գերազանցության, մյուս կողմից՝ Պոնտոսի մանդատի գաղափարը տերությունների կողմից մերժելու պատճառներով, ուստի հույները, որպես հարցի միակ իրատեսական լուծում, առաջարկում էին Պոնտոսը և անկախացող Արևմտյան Հայաստանը միավորել հայ-պոնտական համադաշնային (կոնֆեդերատիվ) պետության կազմում:

ՀՀ կառավարությունը դեմ չէր Պոնտոսի ընդգրկմանը հայկական պետության կազմում, բայց պատրաստ էր դա կազմակերպել դաշնային (ֆեդերատիվ) միության հիմունքներով՝ ապահովելով երկրամասի հույների լիակատար ինքնավարությունը ներքին գործերում: ՀՀ-ն և Պոնտոսն ունենալու էին միասնական խոր-

[59]Տե՛ս նույն տեղում, էջ 327:

հրդարան, բանակ, ռազմական նախարարություն, դրամական համակարգ, արտաքին քաղաքականություն, փոստ, հեռագրական կապ, ծովային և ցամաքային հաղորդակցության ճանապարհներ, պետական ֆինանսներ:

Հայ-պոնտական միության հարցում կողմերի մոտեցումների սկզբունքային տարբերությունների, Թուրքիայի հետ Դաշնակից տերությունների հաշտության պայմանագրի կնքման ձգձգման, Արևմտյան Հայաստանի անկախության անհեռանկարայնության հետևանքով հայ-հունական ռազմաքաղաքական համագործակցության գաղափարը չվերածվեց գործնական քաղաքականության:

Պատմագիտական աշխատություններում 1919–1920 թթ. հայ-հունական բանակցությունների վերաբերյալ բացը որոշ չափով լրացվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Հրաչ Բարթիկյանի (1927–2011) «Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918–1920)»[60] փաստաթղթերի ժողովածուի, հայ-հունական հարաբերությունների վերաբերյալ Հ. Ավետիսյանի[61] կողմից արխիվային փաստաթղթերի, «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» փաստաթղթերի և

---

[60]Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918–1920) / Թարգմ. Հ. Մ. Բարթիկյան, Երևան, 1998:

[61]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հունական արխիվային փաստաթղթերը հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918–1920 թթ.) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1999, № 1, էջ 22–33, ***նույնի՝*** Հայ-հունական հարաբերությունները 1919–1920 թվականներին (Հայաստանի պետական արխիվների փաստաթղթեր և նյութեր) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2000, № 2, էջ 192–210:

նյութերի ժողովածուի, նաև Գ. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.»[62] հիմնարար աշխատության հրատարակությամբ: Հայտնի է, որ, 1920 թ. ամռանն ու, հատկապես, Սևրի պայմանագրի կնքումից անմիջապես հետո՝ թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, հայ հասարակությունը միասնական չէր: Նրան բնորոշ էր արտաքին երեք՝ արևմտյան, ռուսական և թուրքական կողմնորոշում: Եթե ՀՀ քաղաքականությունը արևմտյան էր, ապա դրա հետ կապվում էր Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման ազգային նպատակի իրագործումը, շատ գործիչների համոզմամբ էլ, Հայաստանի անվտանգության հեռանկարը պետք էր կապել կամ խորհրդայնացման և Խորհրդային Ռուսաստանի կազմում դաշնային հիմունքներով նրա ընդգրկմանը, կամ էլ՝ թուրքերի հետ համաձայնության գալուն ու հաշտության պայմանագիր կնքելուն՝ սևրյան պահանջներից հրաժարվելու դիմաց նրանցից ետ ստանալով Ալաշկերտն ու Բայազետը: «Իհարկե, կարելի է վիճարկել այդ վարկածի ռեալության շուրջը, բայց, այնուամենայնիվ, կարծում ենք՝ կային համաձայնության գալու հավանականության որոշ պաշար ու կռվաններ: Սակայն հանրապետության ղեկավարությունը և գրեթե ամբողջ ժողովուրդը չգնաց նման զիջման»[63],– գրում է Ա. Հակոբյանը: Պատմաբանն այդ կապակցությամբ հիշատակում է Հովհաննես Քաջազնունու այն միտքը, որ այդ շրջանում Սևրի պայմանագիրն այնքան էր «շլացրել մեր աչքերը, ոգևորել և ինքնավստահ դարձրել մեզ, որ

---

[62]Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» / Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմ. Գ. Գալոյան և ուրիշ. / Խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000, ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 121–124:

[63]***Հակոբյան Ա.*** Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.), Երևան, 1992, էջ 24:

ավելորդ համարեցինք բանակցել թուրքերի հետ»[64]: «Ավելին, այդ ժամանակ նույնիսկ գտնվեցին հայ «գործիչներ», որոնք անարդար համարեցին Սևրի պայմանագիրը՝ դժգոհելով, թե նրանում ընդգրկված չեն հայկական մնացած վիլայեթները: Դատողություններ անելով այդ մասին, այնուամենայնիվ, գտնում ենք, որ դժվար էր վստահել ու հավատալ կոմպրոմիսային բանակցություններ վարելու քեմալականների անկեղծությանը»[65],– շեշտում է Ա. Հակոբյանը: Նրա համոզմամբ, խորհրդա-քեմալական հակահայկական գործակցությունը, քեմալական կառավարությանը սիրաշահելու անգլո-ֆրանսիական քաղաքականությունը Սևրի պայմանագրով Հայկական հարցի լուծումը ձախողելու հիմնական պատճառներն էին:

Ա. Հակոբյանի կարծիքով, Հայաստանի Հանրապետության արևմտամետ կողմնորոշումը տվեց ընդամենը Սևրի պայմանագրով ստորագրված Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանի գաղափար, որն այդպես էլ մնաց թղթի վրա. պայմանագիրը չվավերացրին ո՛չ թուրքական կողմը, ո՛չ էլ Անտանտի տերությունները, այն, ցավոք, չիրականացավ: Միևնույն ժամանակ Ա. Հակոբյանը ՀՀ-ի արևմտամետ կողմնորոշման անխուսափելիությունը բացատրում է Ռուսաստանում իշխանության գլուխ կանգնած բոլշևիկների հասարակական-քաղաքական ռեժիմի անընդունելիությամբ, այդ երկրում ընթացող քաղաքացիական պատերազմով, որն անհնարին էր դարձնում Հայկական հարցին նրա օժանդակությունն ակնկալելը[66]:

---

[64] ***Քաջազնունի Հ.*** Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 33:

[65] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.), էջ 24:

[66] Տե՛ս նույն տեղում, էջ 26: 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության արևմտամետ քաղաքականության ու Սևրի պայմանագրով Անկախ և

Ըստ Ստ. Պողոսյանի և Կ. Պողոսյանի դիտարկման, 1918–1920 թթ. Հայկական հարցում Հայաստանի առաջին հանրապետության քաղաքականությունը զուրկ է եղել նախաձեռնողականությունից, ներքին միասնությունից, իսկ Արևմուտքի պետություններիի քաղաքականության վրա էական ազդեցություն են ունեցել մի կողմից՝ բոլշևիկյան Ռուսաստանի հետ բանակցություններ սկսելու ՀՀ-ում իշխող կուսակցության՝ ՀՅԴ-ի մարտավարական քայլը, մյուս կողմից՝ ռուսական գործոնը՝ Անդրկովկասին տիրանալու բոլշևիկյան Ռուսաստանի ձգտումը[67]: Միևնույն ժամանակ, անդրադառնալով Փարիզի վեհաժողովի շրջանակներում Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներին զուգահեռ ընթացող հայ-ռուսական բանակցություններին, նրանք նկատում են, որ Մոսկվայի դիրքորոշումը միայն առաջին հայացքից էր հակահայկական: «Ռուսաստանը, լինելով հանդերձ քեմալական Թուրքիայի դաշնակիցը, դեմ էր Անդրկովկասում նրա դիրքերի ուժեղացմանը,

---

Միացյալ Հայաստան ստեղծելու հույսերի անհեռանկարայնությունն ու անիրական լինելը վկայող հայկական և ռուսական արխիվային արժեքավոր վավերագրեր են ընդգրկված «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում:

[67]Տե՛ս ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, էջ 143–144, 146–147, 148–149, 150–151, 176: Աշխատության մեջ փաստարկված գնահատական է տրված Ավետիս Ահարոնյանի, Լևոն Շանթի, Ալեքսանդր Խատիսյանի, Պողոս Նուբարի գործունեությանն Արևմտյան Հայաստանի հարցը մեծ տերությունների դիվանագիտական շրջանակներում ներկայացնելու ուղղությամբ, վեր են հանված Փարիզում գործող Ա. Ահարոնյանի պաշտոնական և Պ. Նուբարի Ազգային պատվիրակությունների հակասությունները: Այս մասին տե՛ս ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1918–1919 թթ.), գիրք I, մաս Բ, էջ 112–119, 123–124:

քաջ գիտենալով, որ Քեմալը ձգտում էր ոչ միայն տիրանալ Բաքվի նավթին, այլեւ իրականացնել համաթուրանականության նախնական ծրագիրը՝ ընդհանուր սահման ունենալ թուրք-թաթարական աշխարհի հետ, իսկ համաթուրանականությունն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ այն պարզ պատճառով, որ թուրք-թաթարական ցեղերի մեծ մասի հայրենիքները Ռուսաստանի տարածքում էին:

Մոսկվան նաև գտնում էր, որ, ոչ թե Երեւանը, այլ եթե ինքը հանդես գար թուրքերի հետ բանակցող կողմ, հնարավոր կլիներ չափավորել թուրքերի ախորժակը: Մանավանդ, բացարձակապես ակնհայտ էր, որ Հայաստանը պարտված էր, եւ, եթե չլիներ Ռուսաստանի հակազդեցությունը, թուրքերը չէին հապաղի տիրանալու ամբողջ Արեւելյան Հայաստանին եւ ավարտին հասցնելու հայ բնակչության ամբողջական բնաջնջումը»[68],– գրում են Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը: Նրանց կարծիքով, անգամ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում ՀՀ կառավարությունը «շարունակում էր «ռուսական վտանգից», եթե ոչ ավելի շատ, ապա նույնքան վախենալ, որքան թուրքականից»: Նա «մինչեւ վերջ էլ Ռուսաստան–Եվրոպա–Թուրքիա կապակցություններում անգամ երկրի կործանման պահին, նախ հույսը դնում էր Եվրոպայի, ապա Թուրքիայի հետ «լեզու գտնելու» վրա»[69]: Ըստ այս պատմաբանների, թուրք-ադրբեջանական զավթողական նկրտումների նկատմամբ ՀՀ անվտանգությունն էապես կամրապնդվեր, եթե 1920 թ. գարնանը Մոսկվայում ստորագրվեր հայ-ռուսական պայմանագիրը: Սակայն դա չկնքվեց, որովհետև երկու կողմն էլ չէին շտապում

---

[68] ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1918–1919 թթ.), գիրք I, մաս Բ, էջ 173:

[69] Նույն տեղում, էջ 170, 171:

բանակցային մարաթոնը վերջնագծի հասցնել. հայկական կողմն ակնկալիքներ ուներ Արևմուտքից ու այդ պատճառով ձգձգում էր բանակցությունները, մերժում էր փոխզիջումների հնարավորությունը, ռուսական կողմն էլ ձգտում էր խճճել հայ-ռուսական բանակցությունները՝ դրանք ստորադասելով Անկարայի ու Բաքվի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների ամրապնդմանը[70]:

Անդրադառնալով Հայաստանի առաջին հանրապետության արևմտամետ արտաքին քաղաքականության ազդեցությանը Հայկական հարցի լուծման ընթացքի վրա՝ Հ. Կարապետյանը նկատում է. որքան բնական ու անխուսափելի էր Արևմուտքի հետ հույսեր կապելու ՀՀ քաղաքականությունը, նույնքան բնական և անխուսափելի էր նրա շրջադարձը դեպի Խորհրդային Ռուսաստան: Պարզապես հայաստանյան դիվանագետները նկատի չէին առել, որ Ռուսաստանը կբարձրացներ Հայկական հարցը Փարիզի խորհրդաժողովի օրակարգից դուրս բերելու, ապա Սևրի պայմանագրից հրաժարվելու հարցը՝ Հայաստանի ու Թուրքիայի միջև բանակցություններում միջնորդի դեր ստանձնելու դիմաց: Պատմաբանի համոզմամբ, Հայաստանը պետք է արագ կողմնորոշվեր, քանի որ Թուրքիան և Ռուսաստանը գործում էին թե՛ դիվանագիտությամբ, թե՛ զենքով: Ավելին, որքան ամրապնդվում էր նրանց համագործակցությունը, այնքան շեշտվում էր դրա հակահայկական ուղղվածությունը: Փաստորեն, փոխադարձ շահերով միմյանց կապված երեք պետություններից երկուսը՝ Ռուսաստանը և Թուրքիան, միավորվում էին ընդդեմ երրորդի՝ Հայաստանի: Միևնույն ժամանակ խորհրդա-քեմալական վտանգին գումարվելու էին գալիս խորհրդայնացած Ադրբեջանի հավակնությունները Ղարա-

[70]Տե՛ս նույն տեղում, էջ 146–147, 150–151:

բաղի, Զանգեզուրի, Շարուր–Դարալագյազի, Նախիջևանի նկատմամբ[71]:

Վ. Մելիքյանը իրավացիորեն նշում է, որ Սևրի հիմնահարցի ուսումնասիրողները հիմնականում ուշադրություն են դարձնում ՀՀ պաշտոնական և Ազգային պատվիրակությունների անհամաձայնեցված, երբեմն իրարամերժ գործունեությանը, հայկական երկու պատվիրակությունների, նաև հայ ազգային կուսակցությունների միջև հակասություններին՝ գրեթե անտեսելով ՀՀ ռազմական թուլությունը, արտաքին քաղաքականության անկայունությունը, թույլ դիվանագիտությունը, քեմալականության թերագնահատումը և մեծ տերությունների օգնության գերագնահատումը[72]: Նրա կարծիքով, Հայկական հարցի լուծման ձախողումը և Հայաստանի առաջին հանրապետության անկումը պայմանավորված էին ոչ միայն քեմալա-բոլշևիկյան մերձեցմամբ «համաշխարհային իմպերիալիզմի» ու Կովկասում այդ «իմպերիալիզմի օջախ Հայաստանի Հանրապետության» դեմ, այլև՝ քեմալականությունը բոլշևիզմի դեմ ուղղելու անգլո-ֆրանսիական քաղաքականությամբ: Դա «յանցաւոր համագործակցութիւն էր, որի պատմաքաղաքական գնահատականը չի տրուած մերօրեայ Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան կողմից»[73],– նկատում է Վ. Մելիքյանը՝ դրանով իսկ առաջադրելով ռուսական պետության նկատմամբ Հայաստանի երրորդ հանրապետության պաշտոնական դիրքորոշումը ձևակերպելիս անցյալի պատմական դասերը հիմնավորապես հաշվի առնելու, բայց և ծայրահեղությունների մեջ չընկնելու անհրաժեշտությունը:

---

[71]Տե՛ս ***Կարապետյան Հ.*** նշվ. աշխ., էջ 64, 81, 87:

[72]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 43:

[73]Նույն տեղում:

Այս առումով ուշագրավ են Ա. Հակոբյանի եզրահանգումները Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության ընթացքից առնելիք դասերի վերաբերյալ՝ հանուն հայոց ազգային անկախ պետականության ներկայի և ապագայի: Պատմաբանը համոզված է, որ միմիայն սեփական ուժերին ապավինելն է ազգի գոյատևման ու զարգացման միակ ճշմարիտ երաշխիքը: Սրանից հետևում է, որ պետք է լինել իրատես և բավարարվել հնարավոր հասանելիքով. «Եվ չլինի այնպես, ինչպես 1918–1920 թթ., երբ հայ ժողովուրդն իր քաղաքական գործիչների ու կուսակցությունների հետ միասին պահանջեց Ծովից ծով Հայաստան, բայց արդյունքում կորցրեց նաև իր պետության կազմում եղած տարածքների զգալի մասը, էլ չենք խոսում Հայոց անկախ պետականության կորուստի մասին:

… Ի վերջո, պետք է մեկընդմիշտ ըմբռնել այն հավիտենական ճշմարտությունը, որ յուրաքանչյուր պետություն կամ ազգ նախ և առաջ հետամուտ պետք է լինի իր սեփական, ազգային-պետական շահերի պաշտպանությանը: Առանց այդ շահերի հաշվառման, անմտություն կլինի կարծել, թե որևէ պետություն կպաշտպանի մեկ այլ պետության կամ ժողովրդի շահերը: Այդ համադրույթից ելնելով՝ պետք է ասել, որ ոչ Արևմուտքի տերությունները, ոչ էլ Խորհրդային Ռուսաստանը, իրենց շահերից ելնելով, մատը մատի չտվեցին պաշտպանելու հենց իրենց մեղքով մեծ ողբերգություն ապրած հայ ազգի շահերը: Ընդհակառակը՝ նրանք հաջորդաբար բարեկամացան օրավուր ուժեղացող ու ամրապնդվող քեմալական Թուրքիայի հետ՝ հանուն իրենց մեծապետական շահերի»[74]:

---

[74] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.), էջ 27:

Հայկական հարցի 1919–1920 թթ. պատմության առանցքային դրվագների՝ Սևրի պայմանագրի և Վ. Վիլսոնի իրավարար վճռի ընդունման հանգամանքները, դրանց բովանդակությունը հանգամանորեն ներկայացված են նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ղազարյանի (1930–2014) ծավալուն աշխատության մեջ[75]: Թեև այն աչք է շոյում տպագրության բարձր որակով, լուսանկարների և քարտեզների որակյալ ներդիրներով, սակայն շարադրանքը հիմնականում կրկնում է հիմնահարցի վերաբերյալ գիտական շրջանառության մեջ առկա հիմնարար ուսումնասիրություններում ներկայացված փաստերն ու տեսակետները, սկզբնաղբյուրներն ու գրականությունը: Պատմաբանի հիմնական եզրահանգումն է՝ «հայկական մանդատի ընդունումը փաստորեն մերժեց ԱՄՆ-ի կոնգրեսը, սակայն այն հիմք դարձավ Սևրի պայմանագրի 88–90-րդ հոդվածներին և «վիլսոնյան Հայաստանի» սահմանագծման համար»[76]:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամսոն Քառյանի (1938–2019)՝ Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրությանը նվիրված աշխատության մեջ[77] լուսաբանված են Հայկական հարցի 1918–1920 թթ. պատմության առանձին հիմնահարցեր:

---

[75] ***Ղազարյան Հ.*** Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ / գիրք առաջին / Սևրի 1920 թվականի պայմանագիրը և Միացյալ Անկախ Հայաստանի հռչակումը, Երևան, 2012, գիրք երկրորդ / Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստանի և Թուրքիայի սահմանաբաժանման վերաբերյալ, Երևան, 2012:

[76] ***Ղազարյան Հ.*** նշվ. աշխ., գիրք երկրորդ, էջ 176:

[77] Տե՛ս ***Քառյան Ս.*** Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության պատմագրություն / Խմբ. Հ. Ա. Ավետիսյան, Երևան, 2003:

Պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Զատիկյանի (1945–2018) մենագրությունը[78] Հայկական հարցի ամբողջական պատմությունը ներկայացնելու հաջողված փորձ է:

Սևրի պայմանագրի հենքի վրա Հայկական հարցի արդարացի լուծման ձախողման պատճառները վերհանելու տեսանկյունից ուշագրավ են նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և Փարիզի հաշտության վեհաժողովից մինչև Լոզանի խորհրդաժողովն ընկած ժամանակահատվածում մեծ տերությունների քաղաքականությունը լուսաբանած պատմաբանների (Գալուստ Գալոյան, Արարատ Հակոբյան, Գայանե Մախմուրյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պողոսյան, պատմական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Արմենուհի Ղամբարյան, Լիլիթ Հովհաննիսյան) ուսումնասիրությունները: Դրանցում համակողմանիորեն վերլուծված են մեծ տերությունների հակասություններն ու քաղաքական պատասխանատվությունը ցեղասպանության զոհ դարձած և հայրենազրկված հայ ժողովրդի իրավունքները հարգելու, Հայաստանի առաջին հանրապետությունն անվտանգության միջազգային իրավական երաշխիքներով ապահովելու, բռնագաղթված արևմտահայերի՝ Հայրենիք վերադարձին նպաստելու, Հայաստանի վարչաքաղաքական կարգավիճակի ու սահմանների, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերի բեկորներին ցեղասպանության վտանգից պաշտպանելու հարցերում[79]:

---

[78]Տե՛ս ***Զատիկյան Հ. Գ.*** Հայկական հարց, Երևան, 2014:

[79]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը Առաջին համաշխարհային պատերազմից հետո // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1993, № 4, էջ 3–24, ***Հակոբյան Ա.*** Անկախության գաղափարը Հ.Յ. Դաշնակցության ծրագրերում (1890–1920 թթ.) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1993, № 3, էջ 18–26,

Մախմուրյան Գ. Հայկական հարցն ու Հայաստանի Հանրապետությունը բրիտանական պառլամենտի 1920 թ. փետրվար–ապրիլ ամիսների հաշվետվություններում // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2009, № 2, էջ 20–32, ***նույնի՝*** ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արծարծումը Ավետիս Ահարոնյանի Փարիզից ու Սան Ռեմոյից ուղարկված նամակներում // Բանբեր Հայաստանի արխիվների, 2010, № 1, էջ 56–72, ***նույնի՝*** Лондонский договор 26 апреля 1915 г. на Парижской мирной конференции (апрель–май 1919 г.), с. 252–274; ***Մարուքյան Ա.*** Հայկական հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում (պատմա-իրավական գնահատական) // Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը / Գիտաժողովի նյութեր / Խմբ. Ս. Ստեփանյան, Երևան, 2009, էջ 48–59, ***Պողոսյան Ս.*** Կիլիկիայի հարցը 1920 թ. Սևրի պայմանագրից հետո // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 7 / Խմբ. կոլ. Ա. Ա. Մելքոնյան, Է. Լ. Դանիելյան, Երևան, 2006, էջ 166–178, ***նույնի՝*** Կիլիկիայի հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում // ՎԷմ / համահայկական հանդես, 2012, Դ տարի, թ. 3, հուլիս–սեպտեմբեր, էջ 154–168, ***Ղամբարյան Ա.*** Վուդրո Վիլսոնի ուղերձը ԱՄՆ Կոնգրեսին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 4 / Պատ. խմբ. Ա. Ա. Մելքոնյան, Երևան, 2003, էջ 125–130, ***նույնի՝*** Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի դիվանագիտական դրսևորումները Հայկական հարցում Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 11, էջ 225–239, ***նույնի՝*** ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական հարցում Փարիզի վեհաժողովի նախօրյակին // Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը, էջ 60–68, ***Հովհաննիսյան Լ.*** Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1915 թվականին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 7, էջ 108–117, ***նույնի՝*** Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1917 թվականին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 11, էջ 240–257, ***նույնի՝*** Հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության հարցը Սևրի պայմանագրում // «Գլաձոր»–20: Հոդվածների հոբելյանական ժողովածու / դասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների հինգերորդ գիտական նստա–

1920 թ. մարտ–1921 թ. փետրվար ժամանակահատվածում Հայկական հարցն արծարծվել է նաև միջազգային առաջին կազմակերպությանը՝ Ազգերի լիգային ՀՀ անդամակցության, Ազգերի լիգայի կողմից ՀՀ մանդատը ստանձնելու վերաբերյալ դիվանագիտական քննարկումների ընթացքում, որոնք համակողմանիորեն լուսաբանված են պատմական գիտությունների թեկնածու Էդիտա Գզոյանի մենագրության մեջ[80]: Ուսումնասիրության մեջ ուշագրավ ներկայացված են, մասնավորապես, իրավական այն հնարքները, որոնք կիրառվել են 1920 թ. մարտի վերջին Ազգերի լիգայի քարտուղարության Իրավական բաժնում Հայաստանի մանդատի հարցի քննարկման ընթացքում[81]: Հեղինակի համոզմամբ, բաժնի դիրքորոշումը բավական հակասական էր ու անհասկանալի, քանի որ դրական վերաբերմունք էր ցուցաբերվում Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատը վերցնելու գաղափարին, բայց միևնույն

շրջանի նյութերի ժողովածու / Խմբ. Ա. Պապոյան, Ս. Իսկանդարյան, Երևան, 2011, էջ 173–190, ***նույնի***՝ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական հարցում Սան Ռեմոյի և Լոնդոնի խորհրդաժողովների միջև ընկած ժամանակահատվածում // Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու 13) / Խմբ. խորհ. Ա. Ա. Մելքոնյան, Ա. Ա. Խառատյան և ուրիշներ, Երևան, 2012, էջ 184–194:

[80] ***Գզոյան Է.*** Հայաստանի առաջին Հանրապետությունը և Ազգերի լիգան / Պատ. խմբ. Է. Ա. Զոհրաբյան, Երևան, 2013:

[81] Նշենք, որ Հայաստանի առաջին հանրապետության մանդատի հարցն Ազգերի լիգայի խորհրդում անցել է ընթացակարգային բոլոր փուլերը: Նախքան հարցի քննարկումը խորհրդում այն հանձնված է եղել կազմակերպության քարտուղարության Իրավական բաժնի քննարկմանը: Բաժնի նպատակն էր պարզել՝ արդյո՞ք Գերագույն խորհրդի առաջարկն իրավական առումով համապատասխանում էր Ազգերի լիգայի կանոնադրությանը: Իրավական բաժնի եզրակացության հիման վրա էլ պետք է տեղի ունենար հարցի հետագա քննարկումն Ազգերի լիգայի խորհրդում: Այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 28:

ժամանակ էլ անհիմն փաստարկներով մերժվում էր այն: Բաժինը կարծում էր, որ իրավական տեսանկյունից Ազգերի լիգայի կանոնադրությունը ենթադրում էր ինչպես մեկ պետության, այնպես էլ հավաքական մանդատի հնարավորություն, և նույնիսկ, եթե կոլեկտիվ մանդատի փորձը Եգիպտոսում ու Ալբանիայում դրական արդյունք չէր տվել, ապա Հայաստանի դեպքում պայմաններն այլ էին, և հավաքական մանդատը կարող էր հաջողություն ունենալ, քանի որ «այն կբխի հայերի հանդեպ պատասխանատվության զգացումից, այլ ոչ թե նախանձի և եսասիրության արդյունք կլինի, ինչպես Եգիպտոսի կամ Ալբանիայի օրինակում»[82]:

Անդրադառնալով Իրավական բաժնի առաջարկած լուծումներին՝ Է. Գզոյանը նշում է, որ վերջինս Հայաստանը դիտարկում էր որպես «աջակցվող կողմ», իսկ Ազգերի լիգան՝ որպես «աջակցող կողմ»: Ազգերի լիգայի առաջարկած ձևաչափը բաժնի կողմից որակվում էր որպես կազմակերպության կանոնադրությանը չհակասող, հետևաբար, նաև խնդրի լուծման հնարավոր տարբերակ: Սակայն միևնույն ժամանակ արվում էր անհասկանալի եզրակացություն, թե Հայաստանը, որպես «աջակցվող պետություն» չէր կարող դիտարկվել Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածի դրույթների համատեքստում, քանի որ դրանք ենթադրում էին տարածքի ընդհանուր երաշխիք: Ըստ Իրավական բաժնի, այդ դեպքում «հայկական տարածքների երաշխիքի հարցը պետք է ապահովվեր Թուրքիայի հետ հաշտության պայմանագրով»: Ինչ վերաբերում է հարցի ֆինանսական կողմին, ապա Ազգերի լիգան պատրաստակամ էր ստանձնել Հայաստանին օգնելու խնդիրը միայն այն դեպքում, երբ համոզված լիներ, որ իր ծախսերն ամբողջությամբ փոխհատուցվելու էին պարտավորությունների կամ

[82] Նույն տեղում, էջ 29:

համաձայնությունների միջոցով: Այս ուղղությամբ Ազգերի լիգան պետք է համաձայնության գար կամ պայմանագիր կնքեր Հայաստանի Հանրապետության և երաշխիքային համաձայնագրեր՝ շահագրգիռ կառավարությունների կամ մասնավոր ընկերությունների հետ: Իրավական բաժինը ոչ միայն անհավանական էր համարում Ազգերի լիգայի կողմից Հայաստանի Հանրապետությանն անմիջական երաշխիքներ տալու գաղափարը, այլև վերջինիս փոխառություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ էր համարում միջազգային նոր համաձայնագրի կնքումը նրա և Ազգերի լիգայի՝ խնդրով շահագրգիռ անդամ պետությունների միջև այն հիմնավորմամբ, որ փոխառության տրամադրման պարտավորությունների ստանձնումն Ազգերի լիգայի կանոնադրության մեջ ներառված չէր: Է. Գզոյանը կարևորում է նաև Իրավական բաժնի առաջարկն Ազգերի լիգային միջնորդի կամ կազմակերպչի դեր վերապահելու վերաբերյալ, ըստ որի, առաջարկվում էր Ազգերի լիգային տալ որոշակի քայլեր ձեռնարկելու, որոշումներ կայացնելու կամ որոշ վեճեր լուծելու իրավունք, սակայն գլխավորը պետք է լիներ բարոյական աջակցությունը Հայաստանին[83]:

Ներկայացված փաստերի ու փաստարկների հիման վրա հեղինակը եզրակացնում է. «Փաստորեն, Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու հարցին իրավական տեսանկյունից որևէ որոշակի լուծում չառաջարկվեց, ինչը խիստ բարդացնում էր հարցի հետագա ընթացքն Ազգերի լիգայում: Սա այն միակ հանձնաժողովն էր, որը կարող էր որևէ գործնական և իրավական առումով հիմնավորված առաջարկ անել, մինչդեռ վերջինս ամեն կերպ փորձում էր բեռը գցել ԱՄՆ-ի ուսերին»[84]:

---

[83]Տե՛ս նույն տեղում, էջ 29–30:

[84]Նույն տեղում, էջ 31:

Է. Գզոյանի աշխատանքում լուսաբանված են նաև Հայաստանի մանդատի հետ կապված՝ Ազգերի լիգայի վերահսկողությանը ենթակա բնագավառների խնդիրը, այդ կազմակերպության կողմից Հայաստանի մանդատը մերժելու պատճառները, Հայաստանին ռազմական օգնություն ցուցաբերելու հարցի քննարկումն Ազգերի լիգայում, ինչպես նաև Հայկական հարցի քննարկումները կազմակերպության Վեհաժողովի առաջին նստաշրջանի ավարտից հետո (1920 թ. դեկտեմբեր–1921 թ. փետրվար):

Պատմության հեգնանքով Հայկական հարցի լուծման վերաբերյալ ամենահայանպաստ փաստաթուղթը՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ», ստորագրվեց այն ժամանակ, երբ ՀՀ-ն պարտություն էր կրում թուրք-հայկական պատերազմում և միևնույն ժամանակ պատրաստվում էր ընդունել բոլշևիկյան իշխանությունը: Պատերազմի արդյունքում կնքված 1920 թ. Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրով Թուրքիան Հայաստանից զավթեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Շարուր–Դարալագյազի, Նախիջևանի, Շահթախթիի շրջանները, հրաժարվեց ինչպես այդ պատերազմի, այնպես էլ համաշխարհային պատերազմի ժամանակ բնաջնջված և արտաքսված հայերի ունեցվածքի հատուցումից, իսկ Հայաստանին պարտադրեց հրաժարվել Սևրի պայմանագրից: Այդպիսով քեմալական Թուրքիան իրեն ձեռնտու տարբերակով լուծեց Հայկական հարցը[85]:

---

[85]Այս մասին մանրամասն տե՛ս ***Զոհրաբյան Է.*** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, ***նույնի՝*** Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր–1920

Գ. Գալոյանի գնահատմամբ, Վ. Վիլսոնի իրավարար վճիռը «չափազանց ուշացած էր» և «կարող էր իրագործվել միայն դաշնակից տերությունների ռազմական միջամտության միջոցով, որին, սակայն, ոչ մի երկիր չդիմեց»[86]:

Ա. Մարուքյանի և «Մոդուս վիվենդի» կենտրոնի հիմնադիր ու նախագահ, պատմաբան և դիվանագետ Արա Պապյանի դիպուկ բնորոշմամբ, Վ. Վիլսոնի իրավարար վճիռը միանգամայն ինքնուրույն միջազգային իրավական փաստաթուղթ է, քանի որ հայ-թուրքական սահմանագծման հարցով իրավարարության գործընթացը սկսվել էր դեռ մինչև Սևրի պայմանագրի կնքումը՝ 1920 թ. ապրիլի 25-ին, երբ Գլխավոր դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը դիմել էր Վ. Վիլսոնին իրավարարի դեր ստանձնելու առաջարկով, որը ԱՄՆ նախագահն ընդունել էր մայիսի 17-ին:

Վկայակոչելով միջազգային իրավունքը, մասնավորապես՝ 1907 թ. Հաագայի միջազգային համաձայնագրի 81-րդ հոդվածը, որով ամփոփվել և ամրագրվել է իրավարար վճիռների կարգավիճակը՝ Ա. Պապյանը շեշտում է. Վ. Վիլսոնի իրավարար վճիռը Սևրի պայմանագրի վավերացման հետ կապ չունեցող, վերջնական, վճռին մաս կազմող բոլոր երկրների և դրանց իրավահաջորդների կողմից կատարման համար պարտադիր, ժամանակային սահմանափակում չունեցող միջազգային իրավական փաստաթուղթ է[87]:

թ. ապրիլ), Երևան, 2002, ***Խուրշուդյան Լ.*** Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002 (լրացվել և վերահրատարակվել է 2017 թ.), ***Սիմոնյան Հր. Ռ.*** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

[86]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 380:

[87]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները // Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական

Պատասխանելով թուրքական այն վարկածին, ըստ որի, Վ. Վիլսոնի իրավարար վճռի հիմքը չվավերացված Սևրի պայմանագիրն է, ինչից ելնելով էլ, այդ վճիռը չունի իրավական ուժ, Ա. Մարուքյանը շեշտում է. «… Վիլսոնի արբիտրաժային որոշումը կապ ունի Սևրի պայմանագրի հետ այնքանով, որքանով, որ վերջինս 89-րդ հոդվածով ԱՄՆ-ը նախագահին արբիտրի դեր ստանձնելու խնդրանքով նախկինում դիմած Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդի չորս տերություններին՝ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային և Ճապոնիային, որոնք Սևրի պայմանագրում նշված են իբրև Գլխավոր դաշնակից տերություններ, միացել էին տասը նոր երկրներ՝ Բելգիան, Հունաստանը, Հեջազը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովենական պետությունը, Չեխոսլովակիան և վեճի կողմ հանդիսացող՝ Հայաստանը և Թուրքիան: Այսպիսով, Սևրի պայմանագիրը իրավարար վճռի համար ընդամենը լրացուցիչ իրավական հիմք էր հանդիսանում՝ ի հավելումն դրանից առաջ ԱՄՆ նախագահին ուղղված միջազգային իրավարարության առաջարկին»[88]:

Ա. Մարուքյանը և Ա. Պապյանը նկատում են՝ հենց Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի համաձայն, անդամ պետություններն իրավարար վճռի ընդունումը չեն պայմանավորել որևէ հանգամանքով, այլ պարտավորվել են վճիռն ընդունել անմիջապես, իսկ վեճի կողմ հանդիսացող Թուրքիան 90-րդ հոդվածով լրացուցիչ վերահաստատել է այս դիրքորոշումը՝ հրաժարվելով Հայաստանին անցնելիք տարածքների նկատմամբ իր իրավունքներից:

հիմունքները և հարակից հարցեր (Հոդվածների ժողովածու), Երևան, 2012, էջ 30–31:

[88] ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 117–118:

Հետևաբար, անկախ Սևրի պայմանագրի վավերացումից և իրագործումից, Վ. Վիլսոնի իրավարար վճիռը Թուրքիայի և Հայաստանի համար վերջնական, պարտադիր, վավերական և անբեկանելի իրավական ուժ ունեցող միջազգային իրավական փաստաթուղթ է, որը ոչ միայն արտացոլում է վճռի կայացման պահին տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները, այլև արդիական է մեր օրերում և որոշիչ գործնական նշանակություն ունի Հայկական հարցի լուծման համար[89]: Այս փաստաթղթով Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիան, ենթարկվելով միջազգային քաղաքական պատասխանատվության Հայոց ցեղասպանության համար, զրկվում է Արևմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ գերիշխանությունից, իսկ իրենց պատմական Հայրենիքի այդ հատվածի նկատմամբ ցեղասպանության զոհ հանդիսացող արևմտահայերի իրավունքների վերականգնումը կարող է հիմք դառնալ հայերի զանգվածային վերադարձի ու բնականոն կենսագործունեության համար[90]:

Սևրի պայմանագրի վավերացման հարցը դիտարկելով ժամանակի աշխարհաքաղաքական գործընթացների և միջազգային իրավունքի նորմերի լույսի ներքո՝ Ա. Մարուքյանը ոչ միայն վեր է հանում պայմանագրի ստորագրումից մինչև վավերացում ընկած

---

[89]Տե՛ս նույն տեղում, էջ 115, 118–119: ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 23:

[90]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 120: Տե՛ս նաև ***Մարուքյան Ա. Յ.*** Սևրի պայմանագրի և Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի վավերականության հարցի շուրջ // ՎԷմ / համահայկական հանդես, 2010, Բ տարի, թ. 3, հուլիս–օգոստոս, էջ 130–142, ***նույնի՝*** ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական ու միջազգային-իրավական նշանակությունը // Մեծ եղեռն. դատապարտումից՝ հատուցում / Հոդվածների ժողովածու / Խմբ. Ս. Ստեփանյան, Ա. Մարուքյան, Երևան, 2011, էջ 83–98:

ժամանակամիջոցի համար գործող միջազգային իրավունքի սկզբունքների խախտումը խնդրո առարկա պայմանագրի առնչությամբ, այլև հիմնավորում է, որ Սևրի պայմանագիրը չվավերացնելն ամբողջությամբ չի ազատում այն ստորագրող պետություններին իրենց ստանձնած իրավական պարտավորություններից: Սակայն Սևրի պայմանագիրը ստորագրած եվրոպական ազդեցիկ պետությունները՝ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ելնելով իրենց շահերից, պայմանավորվածություն ձեռք բերելով, ընտրողաբար կիրառել են չվավերացված ու դեռևս ուժի մեջ չմտած Սևրի պայմանագրի միայն այն հոդվածները, որոնք վերաբերում են արաբական տարածքներն Օսմանյան կայսրությունից օտարելուն[91]: Պատմաբանը նկատում է, որ, 1921 թ. Լոնդոնի խորհրդաժողովում մերժելով Սևրի պայմանագրում Հայաստանի և հայ ժողովրդի օրինական իրավունքներն արտահայտող դրույթների փոխարինումը «հայկական ազգային օջախի» անորոշ գաղափարով, թուրքական կողմը, ըստ էության, առաջինը մերժեց այդ պայմանագրի վերանայման հարցը: Չնայած դրան, Սևրի պայմանագրի ուժի մեջ լինելու հարցը մտահոգիչ է թուրքերի համար առ օրս. «Եթե Թուրքիան համարում է Սևրի պայմանագիրը ուժը կորցրած, ապա ինչու հաջորդ՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի պայմանագրերի տեքստերում … իր կողմից մտցվում էին Սևրի պայմանագիրը չեղյալ համարելու հոդվածներ»,– շեշտում է Ա. Մարուքյանը և հավելում, որ նույնը շարունակվում է. Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Թուրքիան առաջ է քաշել Սևրի պայմանագրից և տարածքային պահանջներից հրա-

---

[91]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 106–110:

ժարվելու նախապայմանը, նաև Կարսի պայմանագրի ճանաչումը՝ ենթատեքստում ունենալով Սևրի պայմանագրի չեզոքացումը[92]:

Սևրի միջազգային պայմանագրի չիրագործման պատճառների, հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Վ. Վիլսոնի իրավարար վճռի նշանակության, հայ-թուրքական առկա սահմանագծի անօրինականության նկատմամբ ուշագրավ են Ա. Մելքոնյանի հրատարակած դասախոսություններում և, հատկապես, մեծաթիվ հրապարակային ելույթներում ու զանգվածային լրատվամիջոցներին տված հարցազրույցներում հնչեցրած շեշտադրումները: Դրանք լայնախոհ մտավորականի, ազգային հիմնախնդիրներով մտահոգ հայրենասեր քաղաքացու անձնական դիրքորոշումն են և միևնույն ժամանակ խտացված արտահայտում են վերոնշյալ հիմնահարցերի ուսումնասիրմամբ զբաղվող հայաստանյան մասնագետների կողմից վերջին տարիներին հրատարակված պատմագիտական ու իրավաքաղաքագիտական աշխատություններում ամփոփված հիմնարար եզրահանգումները: Այսպես, ընդհանրացնելով մեծ տերությունների դիվանագիտական խարդավանքները Հայկական հարցում Փարիզի վեհաժողովում և դրան հաջորդած ժամանակահատվածում՝ Ա. Մելքոնյանն առանձնացնում է Սևրի պայմանագրի չիրագործման երեք պատճառ: Նրա կարծիքով, Հայկական հարցի արդարացի լուծմանը խոչընդոտեց նախևառաջ պայմանագիրը լիովին չվավերացնելն այն ստորագրող պետությունների խորհրդարանների կողմից, հետևաբար՝ նաև ուժի մեջ չմտնելը, թեև պայմանագիրը բանակցվել և ստորագրվել էր օրինական ընթացակարգի համաձայն: Առկա հանգամանքը, սակայն, որևէ կերպ չի ստվերում փաստաթղթի վավերությունը: Սևրի պայմանագիրը միջազգային իրավունքի վավեր փաստաթուղթ է, որն

[92]Նույն տեղում, էջ 110–111:

օրինապես կմտնի ուժի մեջ, եթե պայմանագիրը ստորագրած բոլոր երկրները վավերացնեն այն: Այնուհետև, պատմաբանը կարևորում է մեծ տերությունների կողմից Սևրի պայմանագրի կենսագործումը հետաձգելն ու մոռացության մատնելն այն պատճառաբանությամբ, թե դրա համար անհրաժեշտ կլինեն հսկայական ռազմական միջոցներ Թուրքիայում այդ պայմանագիրը չճանաչող քեմալականներին ճնշելու համար:

Պատմաբաններ Էդիկ Զոհրաբյանի (1939-2013), Հակոբ Հակոբյանի և Աշոտ Մելքոնյանի դիտարկմամբ, կարևոր էր նաև այն, որ Անտանտի հակառակորդ Խորհրդային Ռուսաստանը սատար կանգնեց Քեմալ Աթաթուրքին՝ Սևրի ոխերիմ թշնամուն, և դարձավ նրա դաշնակիցը: Խորհրդային Ռուսաստանի զենքն օգտագործվեց 1920 թ. աշնանը Հայաստանի դեմ, և Սևրի պայմանագիրը մնաց թղթի վրա: Ավելին, պատերազմում պարտվելով, Հայաստանը 1920 թ. Ալեքսանդրապոլի պայմանագրով հրաժարվեց Սևրի պայմանագրից[93]:

Ա. Մելքոնյանի համոզմամբ, Սևրի պայմանագիրը Հայկական հարցի արդարացի լուծման համար գործնական նախադրյալներ ապահովող միջազգային իրավական փաստաթուղթ է՝ «Նյուրնբերգի նախադեպ, որով վերջապես հաղթանակում է արդարությունը»[94]: Ինչ վերաբերում է Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու հնարավորություններին, ապա, նրա կարծիքով, «… դա ոչ

---

[93]Այս մասին տե՛ս ***Զոհրաբյան Է. Ա.*** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 318–321, ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 294–295, ***Մելքոնյան Ա.*** Հայոց պատմություն / Դասախոսությունների ձեռնարկ, էջ 207–208, ***Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա.*** նշվ. աշխ., էջ 284:

[94]***Մելքոնյան Ա. Ա.*** Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, 2013, էջ 482:

ոք չի պատկերացնում ո՛չ պատերազմի, ո՛չ էլ ուժի գործադրման տարբերակով: Աշխարհը մեկ անգամ դե յուրե հաստատել է իր կամքը՝ Օսմանյան կայսրության՝ որպես համաշխարհային քաղաքակրթության դեմ թշնամի երկրի փլուզման հանգամանքը և արդարացիորեն օսմանահպատակ ժողովուրդների համար արձանագրել է հեռանկար»[95]: Ուստի, ո՛չ ցեղասպանության, ո՛չ տարածքային խնդրի արծարծումն ամենևին էլ արկածախնդրություն չի ենթադրում: «Այսօր խոսել իրական հատուցման մասին, մի հանգամանք, որը որ, փաստորեն, իրավաբանորեն արձանագրվեց 1920 թ. օգոստոսի 10-ին մեծ տերությունների կողմից, նշանակում է խոսել Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին, բարձրացնել աշխարհով մեկ այն իրողությունը, որ, ցավոք, Հայաստանը գործ ունի նույն ցեղասպան երկրի հետ, որովհետև մերժողականության այդ նույն քաղաքականությունը, որը թուրքերի կողմից տարվում է տասնամյակներ շարունակ, նույն ցեղասպանության քաղաքականության շարունակությունն է»,– նշել է Ա. Մելքոնյանը 2010 թ. «Ռադիոլուր»-ին տված հարցազրուցներից մեկում՝ շեշտելով, որ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված արձանագրությունների սառեցման պայմաններում նշված խնդիրն առավել արդիական է[96]: Ի դեպ, դեռևս 2008 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված բանակցային գործըն-

[95]Նույն տեղում, էջ 483:
[96]Նույն տեղում, էջ 482:

թացն առիթ էր, որպեսզի ակադեմիկոս Ա. Մելքոնյանն իր հրապարակային ելույթներում ու զանգվածային լրատվամիջոցներին տված հարցազրույցներում հանգամանորեն անդրադառնար այն վտանգավոր հետևանքներին, որ կարող էր թողնել հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը Հայկական հարցի արդարացի լուծման վրա[97]:

Ա. Մելքոնյանի համոզմամբ, Հայաստանի և Թուրքիայի միջև գործող սահմանի «դե յուրե» ճանաչման վերաբերյալ արձանագրություններում ձևակերպված դրույթի ընդունումը կնշանակեր հրաժարվել Սևրի պայմանագրից, Հայոց ցեղասպանության դիմաց Արևմտյան Հայաստանով հատուցման խնդրից և ճանաչել ՄԱԿ-ի անդամ Թուրքիայի ու Հայաստանի միջև Ախուրյան–Արաքսով փաստացիորեն գործող սահմանագիծը: Հայաստանը, ըստ նրա, պետք է կարևորի Սևրի պայմանագիրը, որը ՀՀ տարածքը սահմանում է 160 հազ. կմ^2, և որի համաձայն, ՀՀ մաս պետք է կազմի Տրապիզոնի, Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթների զգալի տարածքը: Այս համատեքստում 2010 թ. օգոստոսի 10-ին “News.am”-ին տված հարցազրույցում Ա. Մելքոնյանը հիշեցրեց Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի բացատրությունները թուրքական խորհրդարանում այն մասին, թե, իբր, հայ-թուրքական արձանագրություններով Հայաստանը վերջապես հրաժարվում է Սևրի պայմանագրից ու ճանաչում է Կարսի պայմանագիրը: Պատմաբանը նկատեց՝ թուրք պաշտոնյայի հայտարարություններն «ինչ-որ իմաստով ճշմարտություն են պարունակում». դրանք վկայում են՝ «Թուրքիան իրապես վախենում է Սևրի դաշնագրից»[98]: Ա. Մելքոնյանի հեռատես նկատառումը հանգում է

---

[97]Տե՛ս նույն տեղում, էջ 388–389, 407–409, 410, 421–423, 482–483, 506:

[98]Տե՛ս նույն տեղում, էջ 486–487, ***նույնի՝*** Աշոտ Մելքոնյան. Արձանագրություններում առկա է մի կետ, որը խաչ է քաշում Սևրի դաշնագրի վրա //

նրան, որ միջազգային հարաբերությունների արդի համակարգում ազդեցիկ պետությունները կարող են կրկին օգտագործել սևրյան հաղթաթուղթը որպես Թուրքիայի նկատմամբ նոր ճնշումների գործիք: Հայաստանի Հանրապետությունը պետք է պատրաստ լինի նման սցենարի և կարողանա արտաքին նպաստավոր հանգամանքներն օգտագործել ի շահ հայ ժողովրդից խլված հայրենի տարածքների նկատմամբ նրա օրինական իրավունքների վերականգնման: Ա. Մելքոնյանը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր սկզբունքային մոտեցումներն արտահայտել է նաև գիտական հոդվածներում ու զեկուցումներում[99]:

Ա. Պապյանի համոզմամբ ևս, Հայոց արդար պահանջատիրության բավարարման միակ ուղին Հայկական հարցի լուծումը տեսական քննարկումներից իրավական դաշտ տեղափոխելն է և հայ-թուրքական հարաբերություններում առկա բոլոր խնդիրներին իրավական լուծում տալը[100]: Ընդ որում, ըստ նրա, Հայկական հարցի լուծումը ենթադրում է ոչ թե Հայոց ցեղասպանության ճանաչում Թուրքիայի կողմից, այլ՝ միջազգային իրավունքով արդի Հայաստանի Հանրապետությանը «հատկացված կամ վերապահված տարածքային, նյութական և բարոյական իրավունքների վերականգնում»: Ա. Պապյանը դա համարում է իրագործելի այն առումով, որ 1991–1992 թթ. Եվրոմիության պետությունների կողմից նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների անկախության ճանաչումը բնավ չի նշանակում, թե դրանով

Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), էջ 286–287:

[99]Տե՛ս ***Մելքոնյան Ա. Ա.*** Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, 2011, էջ 386–394, 412–419, 451–452:

[100]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 21:

ճանաչվել է նաև այդ հանրապետությունների սահմանների անձեռն-մխելիությունը: Դրա պատճառն այն է, որ Խորհրդային Միության արտաքին և նրա հանրապետությունների միջև սահմանները մի շարք դեպքերում ձևավորվել են «ուժի կամ ուժի սպառնալիքի» կիրառմամբ: Դրա հետևանք է նախկին խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը, որն անցնում է Ախուրյան և Արաքս գետերով: Ա. Պապյանն այն բնութագրում է որպես բաժանարար գիծ, քանի որ գոյություն չունի օրինականորեն ուժի մեջ մտած, գործող և այդ բաժանարար գծի կարգավիճակը որպես հայ-թուրքական պետական սահման ճանաչող միջազգային որևէ պայմանագիր: Պատմաբանը վստահ է՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև գոյություն ունեցող միակ de jure՝ իրավական, սահմանը վիլսոնյանն է[101]:

Այսպիսով, 1991–2015 թթ. հայաստանյան պատմագիտական միտքը գնահատելի աշխատանք է կատարել Հայկական հարցի 1918–1920 թթ. դիվանագիտական քննարկումները և դրանց արդյունքները լուսաբանելու ուղղությամբ: Հրատարակվել են ոչ միայն արժեքավոր մենագրություններ, ուշագրավ գիտական հոդվածներ, այլև տարբեր պետությունների արխիվներում պահպանվող դիվանագիտական փաստաթղթերի հայերեն և ռուսերեն թարգմանված ժողովածուներ[102], ժամանակակից գործիչների՝ իրադարձություն-

---

[101]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայոց պետականության գաղափարական հիմքը // Հայրենատիրություն, էջ 157, ***նույնի՝*** Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին, նույն տեղում, էջ 83–86, ***նույնի՝*** Կրկին Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման և Կարսի պայմանագրի հետևանքների հնարավոր ճանաչման մասին, նույն տեղում, էջ 119:

[102]Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919); ***Ազատյան Հ. Գ.*** նշվ. աշխ., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հ. I և II, Հայ ժողովրդի կորուստ-

ները քննող երկեր[103], նաև մատենագիտական գրականություն[104]: Գերմանական, ֆրանսիական, իտալական, ամերիկյան մեծաթիվ դիվանագիտական փաստաթղթերի մի մասը հենց այս ժողովածուների շնորհիվ է դրվել գիտական շրջանառության մեջ: Առաջին

ները առաջին աշխարհամարտի տարիներին: «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմ., առաջաբ. և ծանոթագր. Ա. Զաքարյան / Խմբ. Լ. Բարսեղյան, Երևան, 2005, Ցավալի պայմանագրեր / Կազմեց Տ. Ղ. Սահակյան / Խմբ. Վ. Այվազյան, Երևան, 2007, Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923 թթ. / Նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակ. պատրաստեց Արամայիս Բալոյանը, հ. Ա (1913–1917), հ. Բ (1918–1923), Երևան, 2008, Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг.; Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson / Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia; Նախիջևան-Շարուրը 1918–1921 թթ. / Փաստաթղթեր և նյութեր / Խմբ. Վ. Ղազախեցյան // Բանբեր Հայաստանի արխիվների, 1993, № 1–2:

[103] ***Վրացյան Ս.*** Հայաստանի Հանրապետություն, ***Ադոնց Ն.*** Երկեր / Կազմ., ծանոթ., ներած. Պ. Հովհաննիսյան / Թարգմ. Վ. Դիլոյան, հ. Ա (Հայկական հարց), Երևան, 1996, ***Ահարոնյան Ա.*** Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր 1919–1927 / Կազմ. Լ. Գ. Մանուկյան, Երևան, 2001, ***Լիփլ Է.*** Հայկական հարցը / Թարգմ. Գ. Սարգսյան, Երևան, 2003, ***Բրաքյան Ս. Կ.*** Армения между большевистским молотом и турецкой наковальней. Ереван, 1992.

[104] Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877–1997) / Составители: П. О. Оганесян, Э. А. Бабаян / Отв. ред. и предисл. П. О. Оганесян. Ереван, 1998; Հայկական հարց: Հայոց ցեղասպանություն: Մատենագիտություն / Գիրք 1–2 / Կազմողներ՝ Ե. Չեքելեզյան, Լ. Խաչատրյան, Ա. Դավթյան, Է. Բաբայան / Խմբագիրներ՝ Դ. Սարգսյան, Հ. Ղազարյան, Երևան, 2005, ***Հարությունյան Ա.*** Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց: Գրքերի մատենագիտություն (1860–2010) / Խմբ. Պ. Հովհաննիսյան, Էջմիածին, 2014:

համաշխարհային պատերազմին մասնակցած պետությունների արտաքին գործերի նախարարությունների արխիվային փաստաթղթերը լույս են սփռում Արևմտյան Հայաստանի ինքնավարության և անկախության շուրջ դիվանագիտական բանակցությունների, Արևելյան ու Արևմտյան Հայաստանի միասնության գաղափարի նկատմամբ նրանց դիրքորոշումների, սեփական Հայրենիքում հայ ժողովրդի ազատ ու անվտանգ զարգացման հնարավորությունների և գործնականում դրանք իրացնելու հարցում տերությունների շահագրգռվածության հարցի, դրա հիմքում ընկած ռազմաքաղաքական շահերի վրա: Մատենագիտական ցանկերում էլ ամբողջացված են Հայկական հարցի պատմությանը նվիրված գիտական ուսումնասիրությունների վերաբերյալ տվյալներն ընդհուպ 2014 թվականը:

Օգտվելով հայոց անկախ պետականության պայմաններում իրենց տեսակետներն անկաշկանդ արտահայտելու, պատմական փաստերն ու երևույթները վերագնահատելու և նորահայտ փաստերը գիտական շրջանառության մեջ դնելու հնարավորություններից՝ պատմաբանները ժամանակահատվածի իրողությունները հետազոտել ու վերաարժևորել են Հայաստանի Հանրապետության անկախության պահպանման և ամրապնդման, Հայկական հարցը հայ ժողովրդի արդար պահանջատիրությանը համապատասխան լուծելու դիրքերից:

Արտահայտված տեսակետները տրամաբանորեն փոխլրացնում են միմյանց: Դրանք պատմագիտական մտքի արժեքավոր ընդհանրացումներ են, որոնք հայ դիվանագետներին, քաղաքագետներին, պատմաբաններին և ընդհանրապես հասարակության լայն շերտերին ուղղված արդիական ու գործնական ուղերձներ են պարունակում Հայկական հարցի լուծման և ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի էության ու բովանդա-

կության, դրա միջազգային իրավական հիմքերի ամրապնդման, միջազգային հարաբերությունների արդի համակարգում գործող ուժային կենտրոնների տարածաշրջանային շահերի ու հետաքրքրությունների շարունակականության, հայկական անկախ պետության դիվանագիտության առաջնահերթությունների և անելիքների, ազգային ուժերի ներքին միասնությունը, անկախ արտաքին քաղաքական փոփոխություններից, պահպանելու կարևորության վերաբերյալ:

Այս իմաստով առանցքայինը Հայկական հարցի լուծման համար պայքարում հույսը հայ ազգային-պետական ներուժի՝ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի վրա դնելու, ազգային կոնկրետ նպատակները սահմանելիս այդ ներուժի տնտեսական, քաղաքական ու ռազմական կարողությունները հաշվի առնելու և գրագետ օգտագործելու կարողությունը զարգացնելու, այսինքն՝ առավել իրատես ու բանիմաց լինելու վերաբերյալ եզրահանգումներն են:

2. Մեծ եղեռնի հետևանքով հայրենազրկված և տեղահանված հայերի ու նրանց սերունդների՝ Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերի լուսաբանումը

1915–1916 թթ. Մեծ եղեռնի հետևանքներից ամենածանրը տեղաբնիկ հայ ժողովրդի հայրենազրկումն է: Հայրենազրկված և ցեղասպանության ենթարկված աշխարհասփյուռ հայերի ու նրանց սերունդների ազգային բաղձանքը եղել և մնում է Հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, վերադառնալը: Դա արդիական է ոչ միայն հայերի, այլև աշխարհի բոլոր այն ժողովուրդների համար, որոնք զրկվել են իրենց հայրենի օջախներից պատերազմների, զինված բախումների, կամավոր և հարկադրված արտագաղթի ու ներգաղթի, սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների, կրոնական ու էթնիկ դրդապատճառներով պայմանավորված մարդկանց տարերային և կազմակերպված տեղաշարժերի, ցեղասպանության, տեղահանությունների ու բռնագաղթի հետևանքով:

Խորհրդային Հայաստանի պատմագիտությունը, կաշկանդված լինելով գաղափարաքաղաքական կապանքներով, անկարող էր ուղղակիորեն անդրադառնալ Հայրենիք վերադառնալու հիմնահարցին, սակայն Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրման ուղղությամբ կատարված գիտական պրպտումների արդյունքները հիմք հանդիսացան անկախ պետականության պայմաններում հիմնահարցը համակողմանիորեն լուսաբանելու համար: Այդ հիմքն ամբողջացնում է հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանության հանցագործության դատապարտման, դրա հետևանքների վերացման հիմնախնդիրներն ուսումնասիրելու ուղղությամբ այն շնորհակալ աշխատանքը, որը կատարել են հայ և օտարազգի մի շարք հայտնի պատմաբաններ ու միջազգային իրավունքի մասնագետներ (Շա-

վարշ Թորիկյան[105], Յուրի Բարսեղով[106], Վահագն Դադրյան[107], Իոսիֆ Արաբյան[108], Հակոբ Հակոբյան[109], Պարգև Օհանյան[110],

---

[105]Տե՛ս ***Թորիկեան Շ.*** Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976:

[106]Տե՛ս ***Барсегов Ю.*** Геноцид армян–преступление против человечества. (О правомерности термина и юридической квалификации). Ереван, 1990; ***նույնի՝*** Арбитражное решение президента США по армяно-турецкой границе: (политический и международно-правовой комментарий). Ереван, 1995; ***նույնի՝*** Ответственность государства за геноцид в международном праве // Геноцид–преступление против человечества / Материалы I Московского международного симпозиума 18–19 апреля 1995 г. / Отв. ред. В. А. Микаелян. М., 1997; ***նույնի՝*** Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999, ***նույնի՝*** Геноцид армян–престуление по международному праву. М., 2000; ***նույնի՝*** Турецкая доктрина международного права на службе политики геноцида. (О концепции члена «Комиссии примирения» Гюндюз Актана). М., 2002 / http://www.armenianhouse.org/barsegov/genocide-ru/doctrine/doctrine.html#1/; ***նույնի՝*** Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, в 2-х томах. / Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, т. 1, М., 2002, т. 2, ч. 1, М., 2003, т. 2, ч. 2, М., 2005.

[107]Տե՛ս ***Dadrian V. N.*** Genocide as a Problem of National and International Law. The World War I, Armenian Case and its Contemporary Legal Ramifications // Yale Journal of International Law, 1989, vol. 14, № 2, pp. 221–334; ***նույնի՝*** Textual Analyses of the Key Indictment of the Turkish Military Tribunal Investigating the Armenian Genocide // The Armenian Review, 1991, № 1, pp. 1–36; ***նույնի՝*** Геноцид армян. Содержание преступления. Ереван, 2005; ***նույնի՝*** История Армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа.

[108]Տե՛ս ***Арабян И. А.*** Геноцид и его наказуемость. (Страницы истории: вчера и сегодня) / Ред. Л. Барсегян. Ереван, 1999.

[109]Տե՛ս ***Հակոբյան Հ. Վ.*** Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, ***նույնի՝*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը:

Վլադիմիր Մարգարյան[111], Իվ Տերնոն[112] և այլք)՝ տեսական լուրջ հիմք ապահովելով նոր հետազոտություններին գործնական բնույթ հաղորդելու համար: Դրա լավագույն վկայությունը Հայկական հարցի համակողմանի լուծման պատմական ու միջազգային իրավական հիմքերի և ուղիների վերաբերյալ հայաստանյան մասնագետների ուսումնասիրությունների արդյունքներն են:

Թուրքական իշխանությունների կողմից բռնությամբ տեղահանված և իրենց բնօրրանից արտաքսված հայերի ու նրանց սերունդների՝ հայրենի օջախները վերադառնալու իրավունքի հիմնահարցը պատմագիտական և միջազգային իրավական առումով Հայաստանի երրորդ հանրապետության տարիներին հետազոտվել է մի քանի ուսումնասիրողների կողմից, որոնց աշխատանքների արդյունքներն ունեն ուղենիշային կարևորություն: Դրանց շարքում ժամանակագրորեն առաջինը Հ. Հակոբյանի հիմնարար ուսումնասիրություններն են[113]:

Հանգամանորեն վերլուծելով «հայրենիք» հասկացությունն իբրև պատմական կատեգորիա և այն համադրելով «ծննդավայրի» ու պետական սահմաններում պարփակված «պետություն-հայրենիքի» հետ՝ Հ. Հակոբյանը նշում է, որ արդարության պահան-

---

[110]Տե՛ս ***Оганян П. К.*** Геноцид армянского народа и защита прав человека. Ереван, 2003.

[111]Տե՛ս ***Маргарян В. Д.*** Основания международно-правовой ответственности государств за совершение преступления геноцида / Автореферат диссертации кандидата юридических наук по спец. «Международное право». Ереван, 2005.

[112]Տե՛ս ***Տերնոն Ի.*** Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Երևան, 2003:

[113]***Հակոբյան Հ. Վ.*** Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, ***նույնի՝*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը:

ջով յուրաքանչյուր ժողովրդի բնօրրանը՝ Հայրենիքը, որպես տարածք, պետք է ունենա միջազգային իրավական կարգավիճակ, այսինքն՝ ուղղակիորեն ճանաչվի իբրև տվյալ ժողովրդի անվիճելի և անկապտելի սեփականությունը անկախ այն բանից, թե տվյալ ժողովուրդը պետականություն ունի, թե ոչ: «Եթե որևէ ժողովուրդ կամովին հրաժարվում է անկախ պետականությունից և միանում մեկ այլ պետության հետ, դա ամենևին չի նշանակում, թե կորցնում է իր հողի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքը: Առավել ևս, երբ նա բռնությամբ զրկվում է պետականությունից և նրա հողը բռնազավթվում է ուրիշի կողմից, չի դադարում լինել իր երկրի սեփականատերը, ուստի լիիրավ է պայքարել այդ հողը և ունեցվածքը ետ ստանալու համար»[114],– նկատում է պատմաբան-միջազգայնագետը:

Հ. Հակոբյանը շեշտում է, որ որևէ ժողովրդի հայրենիքի տարածքը մի քանի պետությունների միջև բաժանվելու դեպքում, եթե նույնիսկ դրա մի հատվածում պահպանված է բաժանված ազգի պետականությունը, ապա վերջինս նաև պահպանում է հայրենիքի տարածքային ամբողջականությունը վերականգնելու, վերամիավորվելու անվերապահ իրավունքը[115]: Այս իմաստով նա շեշտում է, որ «… ինչպես Հայ Դատն ամբողջությամբ, այնպես էլ հայերի հայրենիք վերադառնալու խնդիրն իբրև ինքնուրույն հարց, մնում են չլուծված, թեև ներկայումս չկա մեկ այլ ժողովուրդ, որը ենթարկված լինի այնքան զանգվածային բռնագաղթի իր ազգային-պատմական տարածքից և ունենա այնքան բազմանդամ (իր ընդհանուր թվաքանակի համեմատ) և լայն աշխարհագրություն ընդգրկող Սփյուռք, ինչպես հայերը: Հայ ազգին բաժին ընկած այդ մեծա-

---

[114]***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 34:

[115]Նույն տեղում, էջ 35–36:

գույն ողբերգության հետ չի կարող համեմատվել նույնիսկ ժողովուրդների ստալինյան բռնագաղթը Ղրիմից և Կովկասից»[116]:

Չնայած հարցի կարևորությանը, գործող միջազգային իրավունքի համակարգում դեռևս մշակված չէ տարագրված ժողովուրդների՝ հայրենիք վերադառնալու իրավունքի և դրանից բխող մի շարք հարցերի, մասնավորապես՝ այն թույլատրող կամ խոչընդոտող հանգամանքների, վերադարձն ապահովելու պարտավոր պետությունների և միջազգային կազմակերպությունների գործառույթների, վերադարձի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների, վերադարձածների նյութական ու բարոյական վնասները հատուցելու, նրանց անվտանգության և լիիրավության երաշխիքների վերաբերյալ համընդհանուր նշանակություն ունեցող որևէ միջազգային իրավական նորմ: Բացառություն են կազմում կոնկրետ դեպքերին վերաբերող երկկողմ և բազմակողմ պայմանագրերի, կոնվենցիաների ու արձանագրությունների, մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող հիմնարար միջազգային փաստաթղթերի առանձին դրույթները: «Անտարակույս, բռնագաղթվածների զանգվածային վերադարձը հայրենիք կարող է լինել ոչ միայն ազգային դատի արմատական լուծման արգասիք, ինչպես հրեաների պարագայում, այլև ինքնուրույն քննարկման և կարգավորման արդյունք, օրակարգից չհանելով ազգային դատը (օրինակ Հայ դատն ամբողջությամբ): Բանն այն է, որ միջազգային ոճրի, մասնավորապես ցեղասպանության (գենոցիդ) հետևանքների՝ բռնի տեղահանության (դեպորտացիա), հայրենազրկման (ապոլիդիզմ, ապատրիդիզմ), փախստականների խնդրի վերացման պահանջը բխում է միջազգային իրավական համապատասխան սկզբունքներից ու նորմերից և կարող է կար-

[116]Նույն տեղում, էջ 5–6:

գավորվել մինչև հարցի ամբողջական և արմատական լուծումը»[117],– նկատում է Հ. Հակոբյանը: Փաստորեն, նրա համոզմամբ, պետք չէ կարծել, որ վերադարձը Հայրենիք կարող է տեղի ունենալ լոկ հայոց առևանգված Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետությունից ազատագրելուց հետո, քանի որ վերադարձի իրավունքի ճանաչումն արդեն իսկ անուղղակիորեն հաստատում է հայերի՝ իրենց պատմական հողերի նկատմամբ սեփականատիրոջ իրավավիճակը և կարող է կռվան դառնալ Հայ դատի ամբողջական լուծման համար: Հ. Հակոբյանն իր տեսակետը հիմնավորել է պատմական փաստերով՝ մասնավորապես, բարձր գնահատելով 1917 թ. Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության քաղաքականությունն արևմտահայերին Հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, վերադարձնելու ուղղությամբ[118]: Պատմաբան-միջազգայնագետի համոզմամբ, դրան հակառակ, աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից և Անդրկովկասից նրա զորքի հետ քաշվելուց հետո Հարավարևմտյան հանրապետության (Կարսի շուրա), ապա նաև Շարուր–Դարալագյազի, Նախիջևանի, Սուրմալուի, Վեդիբասարի, Զանգիբասարի տարածքն ընդգրկող ու Արազդայանի և Նախիջևանի հանրապետությունների միավորման արդյունքում Արաքսյան հանրապետության ստեղծման նպատակն էր՝ «Արևելյան և Արևմտյան Հայաստանները մեկընդմիշտ անջատել միմյանցից, կանխել արևմտահայերի վերադարձը Հայրենիք և անդառնալիորեն թուրքացնել հայաթափված Արևմտյան Հայաստանը ու Արևելյան Հայաստանի տարածքի կեսից ավելին»[119]:

---

[117]Նույն տեղում, էջ 6:
[118]Նույն տեղում, էջ 215–216:
[119]Նույն տեղում, էջ 219:

Հ. Հակոբյանի ծանրակշիռ գնահատմամբ, հայերի վերադարձը Հայրենիք անհամատեղելի էր Թուրքիան մեկընդմիշտ թուրքացնելու՝ թուրքական իշխանությունների քաղաքականության հետ: Ամենևին պատահական չէ, որ Հայաստանը հայերից դատարկելու թուրքական պետական քաղաքականությունն իրագործվել է ոչ թե սովորական արտաքսման, այլ ֆիզիկական բնաջնջման մեթոդով, որպեսզի մեկընդմիշտ վերանա նրանց՝ Հայրենիք վերադառնալու խնդիրը նույնիսկ իբրև գաղափար:

Առաջին համաշխարհային պատերազմում իրենց պարտությունն ընդունելուց հետո էլ թուրքերը հետևողականորեն շարունակեցին մահմեդականներով վերաբնակեցնել արևմտահայկական տարածքները, թեև 1919 թ. երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը հաստատել էր Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը Թուրքիայի կողմից: Դա կարող էր ամենաորոշիչ հիմքը լինել հայերի՝ Հայրենիք վերադառնալու իրավունքն ընդունելու համար թե՛ թուրքական իշխանությունների և թե՛ միջազգային ատյանների կողմից: Սակայն Փարիզի վեհաժողովում Գլխավոր դաշնակից տերությունները հակված էին 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանությունից հետո Արևմտյան Հայաստանում առկա բնակչության էթնիկ կազմը դիտարկել որպես Հայկական հարցի «արդարացի» լուծման հիմք, ինչի դեմ առարկում էր Հայկական պատվիրակությունը վեհաժողովին ներկայացված պահանջներում[120]: Հ. Հակոբյանի պնդմամբ, հայերի վերադարձը Հայրենիք ձախողվել է ոչ թե հայկական հողային պահանջների անչափ մեծ լինելու, այլ այն պատճառով, որ մեծ տերություն-

[120]Տե՛ս նույն տեղում, էջ 226:

ներն իրենց աշխարհաքաղաքական ծրագրերում առանցքային տեղ և դեր էին հատկացնում Թուրքիային[121]:

Ընդհանրացնելով պատերազմից հետո հայերի՝ Հայրենիք վերադառնալու հարցի վերաբերյալ պատմական փաստերը՝ Հ. Հակոբյանը կոչ է անում խիստ զգուշավոր լինել ողջ Արևմտյան Հայաստանն իբրև Քրդստան ազատագրելու քրդերի նկրտումների նկատմամբ: Չժխտելով քրդական ազատագրական շարժման առաջադիմական նշանակությունը՝ նա իրավացիորեն նշում է, որ ինչպես 1919 թ. փետրվարին Փարիզի վեհաժողովում քրդերի շահերը ներկայացնող Շերիֆ փաշայի «Հուշագիր քրդական պահանջների վերաբերյալ» փաստաթղթում, մեր օրերում ևս քրդական ազգայնականները ոչ միայն հույս ունեն մինչև վերջ «մարսել» Հայոց ցեղասպանությանն իրենց ամենագործունյա մասնակցության ոճիրը, այլև տիրանալ բնաջնջված ու բռնագաղթի ենթարկված զոհի երկրին՝ կանխարգելելով Մեծ եղեռնը վերապրողների վերադարձը Հայրենիք[122]: Այս առումով չի բացառվում, որ քրդերը, օգտվելով ներկայումս Մերձավոր Արևելքում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներից, փորձեն վերակենդանացնել քրդական պետականության համար իրավական հիմքեր նախատեսող միակ միջազգային փաստաթուղթը՝ Սևրի պայմանագիրը:

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Հարությունյանի պնդմամբ, նպաստելով հայկական և քրդական պետությունների ստեղծմանը՝ Արևմուտքը, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան, ձգտում էր հնարավորինս «չեզոքացնել» «Ծովից ծով Հայաստանը» և «Մեծ Քրդստանը», քանի որ ապագայում այդ պետություններից մեկը կարող էր առավել հզորանալ և վերածվել մենատիրոջ

---

[121]Տե՛ս նույն տեղում, էջ 232:

[122]Տե՛ս նույն տեղում, էջ 223–225:

տարածաշրջանում, ինչը նախկինում էլ, մեր օրերում ևս հակասում է բրիտանական աշխարհաքաղաքական շահերին[123]:

Այդ և հնարավոր այլ բարդություններից խուսափելու նպատակով Ա. Մարուքյանն իրատեսորեն առաջարկում է հայ-քրդական հարաբերությունների բոլոր հիմնախնդիրները կարգավորել Սևրի պայմանագրի շրջանակներում[124]:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին, չնայած աշխարհի տարբեր պետությունների բարձրագույն իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի ակտիվացմանը, ակնհայտ էր դրա գործնական անարդյունավետությունը: Միևնույն ժամանակ, Թուրքիայում Հայոց ցեղասպանության ժխտման միջազգային իրավական հայեցակարգ ձևավորելուն ուղղված հետևողական քայլերի ձեռնարկումը, հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու նպատակով 2008–2009 թթ. Երևանի ու Անկարայի միջև տեղի ունեցած հրապարակային բանակցություններում արձանագրված վտանգավոր զարգացումները ՀՀ պաշտոնական շրջանակներին, հայ պատմաբաններին ու իրավաբաններին բերեցին այն համոզման, որ Հայոց ցեղասպանությունը մեկ դար անպատիժ է ոչ միայն քաղաքական դրդապատճառներով, այլև՝ դրա հետևանքների հաղթահարման իրավական աշխատակարգերի անորոշության հետևանքով:

---

[123]Տե՛ս ***Հարությունյան Ա.*** Սևրի պայմանագիրը և հայ հասարակական–քաղաքական միտքը, էջ 24:

[124]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 105:

Այս պայմաններում ՀՀ պաշտոնական և գիտական շրջանակներում անցում է կատարվել Հայկական հարցի տեսական իրավական ուսումնասիրությունից դեպի դրա գիտագործնական վերլուծություն, դեպի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, այսինքն՝ հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերի, Հայոց արդար պահանջատիրության հիմնահարցերի մշակում պատմահրավական ու միջազգային իրավական տեսանկյունից:

Ըստ այդմ, կարևորելով հիմնահարցի լուծման ուղիների և հնարավորությունների վերաբերյալ համազգային հայեցակարգի ձևավորումը, Ա. Մարուքյանը նշում է, որ Արևմտյան Հայաստանում հայկական անկախ պետականության վերականգնումը Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների հատուցման խնդիրը վերջնականորեն կարգավորելու հիմքերից մեկն է: Այն ենթադրում է Թուրքիայի Հանրապետության՝ Հայոց ցեղասպանությունն իրականացրած Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու փաստի իրավական հիմնավորում և Օսմանյան կայսրության չգոյության պայմաններում տվյալ հանցագործության համար քաղաքական պատասխանատվության տեղափոխում ժամանակակից Թուրքիայի վրա: Ինչպես գիտենք, Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունը փլուզվեց և դադարեց գոյություն ունենալ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Նրա նախկին տարածքում առաջացան մի շարք նոր պետություններ՝ Սիրիան, Լիբանանը, Իրաքը, Թուրքիայի Հանրապետությունը, Սաուդյան Արաբիան, Հորդանանը, Պաղեստինը, Իսրայելը, Եմենը:

Վկայակոչելով պետությունների իրավահաջորդության վերաբերյալ միջազգային իրավունքում գործող իրավական նորմերն ու սկզբունքները՝ Ա. Մարուքյանը և Ա. Պապյանը նշում են, որ ար-

դի Թուրքիան նոր պետություն չէ, այլ Օսմանյան կայսրության իրավահաջորդն է, քանի որ պահպանում է նախորդ պետության գլխավոր հատկանիշները՝ պատմական կապը, տվյալ տարածքում իշխող կամ հիմնական բնակչությունը, նրա ազգային ծագումը, լեզուն, ավանդույթները, հոգեկերտվածքը, պետության կառավարման եղանակը, միջազգային պարտավորությունները, մասնավորապես՝ Օսմանյան կայսրության պարտքը մարելու վերաբերյալ Լոզանի միջազգային պայմանագրով սահմանված պարտավորությունը: Ի դեպ, միջազգային իրավունքի հայտնի մասնագետներից մեկի՝ պրոֆեսոր Է. Բորելի 1925 թ. ապրիլի 18-ի իրավարար վճռի հիման վրա Թուրքիայի Հանրապետությունը ստանձնեց Օսմանյան կայսրության պարտքը վճարելու պարտավորությունը, որը, չնայած հսկայական զիջումներին, կարողացավ փակել միայն 1944 թ. հունիսին: Հետևաբար, եթե Թուրքիան, անկախ կառավարման ձևի (վարչակարգի) և տարածքի փոփոխության, ճանաչվել է որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ և որպես այդպիսին կատարել իր նախորդի պարտավորությունները՝ կապված պետական պարտքի մարման հետ, ապա նա պատասխանատվություն է կրում նաև վերջինիս կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության համար, ներառյալ դրա հետևանքների հաղթահարման պարտավորությունը, որի բաղկացուցիչ մասն է նաև Վ. Վիլսոնի իրավարար վճռով ստանձնած հանձնառությունը[125]: Իրենց հրապարակումներում այս տեսակետն են

[125]Տե՛ս ***Մարության Ա. Յ.*** Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը: Ամփոփում և առաջարկներ // ՎԷՄ / համահայկական հանդես, 2010, Բ տարի, թ. 1, հունվար–մարտ, էջ 15–17, ***նույնի՝*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 38–40:

պաշտպանում նաև Ա. Պապյանը[126] և տողերիս հեղինակը[127]: Ընդ որում, Ա. Մարուքյանն իրավացիորեն նշում է, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում հավասարապես պատասխանատու են թե՛ Սփյուռքը, թե՛ Հայաստանի երրորդ հանրապետությունը, որպես Հայաստանի առաջին և երկրորդ՝ սոցիալիստական, հանրապետությունների իրավահաջորդ և միջազգային իրավունքի սուբյեկտ[128]: Նա նաև վեր է հանում «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի թերություններն ու բացթողումները, մասնավորապես՝ ցեղասպանության առավել կարևոր հետևանքի՝ հայրենազրկության, ապա նաև տարածքային, նյութական, բարոյական, հոգեբանական կորուստների հատուցում ստանալու տուժածների՝ բռնագաղթվածների ու նրանց ժառանգների իրավունքի շրջանցումը, ցեղասպանության համար ոչ թե պետությանը, այլ լոկ հանցագործությունը կազմակերպած և գործադրած առանձին անհատներին՝ պետական գործիչներին, հանցավոր համարելը, պատիժ չսահմանելն այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են՝ իրենց հայրենիքից բնիկներին բռնի տեղահանելը բնաջնջելու նպատակով և ազգային-մշակութային ցեղասպանություն իրակա-

---

[126]Տե՛ս ***Պապյան Ա.*** Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության իրավահաջորդության // շարունակականության հարցի շուրջ // Հայրենատիրություն, էջ 446–450:

[127]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայերի ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հիմնախնդիրը // Հայաստան: Ցեղասպանությունից վերածնունդ, 1915–2015 / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների յոթերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու / Խմբ. Ս. Պապիկյան և ուրիշներ, Երևան, 2015, էջ 310–332:

[128]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահիրավական հիմնավորումները, էջ 43–46:

նացնելը[129]: Այս հարցերին անդրադառնալու կարևորությունը բացատրվում է նրանով, որ ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների թերի լինելն ազդում է Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի վրա, քանի որ հնարավորություն է տալիս ազդեցիկ պետություններին շրջանցելու միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը՝ այդ մոտեցումը ձևականորեն արդարացնելով խնդրո առարկա փաստաթղթի թերություններով: Այդ պատճառով էլ, թերևս, մինչ օրս ոչ մի պետություն չի ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը՝ դրա զոհի պահանջատիրության իրավունքի ճանաչմամբ հանդերձ:

Ներկա պատմափուլում Հայաստանի Հանրապետությունը պետք է գործի նաև միջազգային իրավունքի վերոնշյալ թերությունների ու բացթողումների վրա միջազգային հանրության ուշադրությունը սևեռելու ու դրանց վերացմանը հասնելու ուղղությամբ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ դիվանագիտական այդ դժվարին պայքարում ցեղասպանության համար պետության պատասխանատվությունը թե՛ ընդհանրապես և թե՛ կոնկրետ գործողության առնչությամբ սահմանող միջազգային իրավական նորմերը ՄԱԿ-ի շրջանակներում կոդիֆիկացնելու, գոյություն ունեցող փորձն ընդհանրացնելու և առկա բացթողումները վերացնելու

---

[129]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վերանայման անհրաժեշտությունը // Պետություն, պատմություն, տնտեսություն, մշակույթ / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների չորրորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու / Խմբ. Հ. Զաքարյան և ուրիշներ, Երևան, 2009, էջ 171–181: Տե՛ս նաև՝ ***Մարության Ա. Ց.*** Թուրքիայի միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը: Ամփոփում և առաջարկներ, էջ 26:

ջանքերը կարող են բախվել ազդեցիկ պետությունների անբարյացկամությանը կամ բացահայտ դիմադրությանը: Դա պայմանավորված է միջազգային իրավունքի այն առանձնահատկությամբ, որ այդ իրավունքը ձևավորվել ու կատարելագործվում է աշխարհի պետությունների միասնական ջանքերով՝ միևնույն ժամանակ կրելով նրանց քաղաքական շահերի ու հակասությունների ազդեցությունը: Կարևոր է նաև հասկանալ՝ թուրքական պետության կառավարման ձևի (վարչակարգի) կամ տարածքի փոփոխությունը կարո՞ղ է որոշակի ազդեցություն ունենալ ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների հատուցմանը հասնելու, ցեղասպանություն իրականացնելու համար այդ պետությանը քաղաքական պատասխանատվության կանչելու գործընթացների վրա:

Ա. Մարուքյանի համոզմամբ, միջազգային որոշակի պարտավորություններ ստանձնած կամ միջազգային հանցագործություն կատարած պետությունը, բնականաբար, շահագրգռված լինելով խուսափել դրանց կատարումից կամ պատասխանատվությունից, կարող է ձևականորեն վերաբաժանել իր տարածքը կամ էլ հեղափոխություն նմանակելու միջոցով փոխել կառավարման ձևը և դրանց հիման վրա պնդել, թե, իբր, տվյալ պարտավորությունները ստանձնել կամ հանցագործությունը կատարել էր այլ պետություն կամ վարչակարգ: Պատմաբանի պնդմամբ, ի դեմս քեմալական շարժման, գործ ունենք հենց նման երևույթի հետ, քանի որ հայտնի է, որ, ըստ էության, նախկին երիտթուրքերն անցան քեմալական շարժման գլուխ, իսկ հետո էլ ստանձնեցին հանրապետական Թուրքիայի կառավարման ղեկը: Հետևաբար, նրա համոզմամբ, պետության կառավարման ձևի կամ տարածքի փոփոխությունը չի կարող որևէ կերպ ազդել հանցագործ պետությանը

քաղաքական պատասխանատվության ենթարկելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացների վրա[130]:

Ոչ միայն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, այլև Հայոց արդար պահանջատիրության բավարարման տեսանկյունից կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության կողմից ժամանակակից Թուրքիային միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու կամ դատական ատյաններում որպես հայցվոր կողմ հանդես գալու իրավունքը հստակեցնելու հարցը:

Ա. Մարուքյանի կարծիքով, Հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրների լուծումը պետք է ստանձնի հայ ժողովրդի այն հատվածը, որն անմիջականորեն տուժել է երիտթուրքերի իրականացրած ցեղասպանության քաղաքականությունից, ինչի արդյունքում էլ սփռվել է աշխարհով մեկ՝ ձևավորելով հայկական Սփյուռքը: Սակայն, քանի որ վերջինս օժտված չէ սուվերենությամբ (ինքնիշխանությամբ), գործող միջազգային իրավական համակարգում և, ըստ գոյություն ունեցող իրավական նորմերի, այն չի կարող դիտվել իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հետևաբար, որպես պահանջատեր չի կարող հանդես գալ միջազգային որևէ ատյանում: «Եթե անգամ Սփյուռքը ունենար իրավական հնարավորություն՝ ներկայացնելու ցեղասպանության հետևանքով տուժած հայ ժողովրդի շահերն ու իրավունքները, տրամաբանական չէր լինի այդ գործընթացից դուրս թողնել Հայաստանում բնակվող ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին» [131],– իրավացիորեն նշում է պատմաբանը: Նաև հավելում է, որ հարկ է մեկընդմիշտ ձերբազատվել մեզանում առկա այն սխալ

[130]Տե՛ս նույն տեղում, էջ 17:

[131]Նույն տեղում, էջ 18:

ու վնասակար մտայնությունից, որ Հայոց պահանջատիրությունը միայն Սփյուռքի գործն է: Ընդհանրացնելով հայտնի իրավաբանների և պատմաբանների տեսակետները՝ նա գրում է, որ Հայաստանի Հանրապետությունն անմիջական առնչություն ունի հայ ժողովրդի՝ ցեղասպանությունից տուժած հատվածի շահերի ու իրավունքների հետ, քանի որ փուլային տարբերակով Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով իշխանությունը բոլշևիկյան հեղկոմին հանձնելու ժամանակ վերջինիս հանձնել է նաև իր իրավունքներն ու պարտականությունները: Այնուհետև, Խորհրդային Հայաստանը, դառնալով նախ Անդրֆեդերացիայի, հետո էլ՝ Խորհրդային Միության մասը, իր իրավահաջորդությունը, փաստորեն, փոխանցել է ԽՍՀՄ-ին: Ահա թե ինչու, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Խորհրդային Միությունն իրեն իրավունք վերապահեց հանդես գալու Խորհրդային Հայաստանի անունից և տարածքային հարց բարձրացրեց Թուրքիայի առջև, վերջինս ու ՄԱԿ-ը չվիճարկեցին Խորհրդային Հայաստանի անունից ԽՍՀՄ-ի հանդես գալու իրավունքը: Եվ վերջապես, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, փաստորեն, ԽՍՀՄ-ից ժառանգեց Խորհրդային Հայաստանի իրավահաջորդությունը[132]: Ա. Մարուքյանն ընդգծում է, որ ներկայումս, ըստ միջազգային իրավունքի, Հայաստանի Հանրապետությունը կարող է ներկայացնել և պաշտպանել Հայոց ցեղասպանության միայն այն զոհերի ու վերապրածների ժառանգների շահերը և իրավունքները, որոնք իր քաղաքացիներն են: Իսկ ինչ վերաբերում է արևմտահայերի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը, ապա այս առիթով պատմա-

[132]Տե՛ս նույն տեղում, էջ 18–19:

բանը հիշատակում է Արևմտահայերի երկրորդ համագումարը, որը դեռևս 1919 թ. օժտել է Հայաստանի առաջին հանրապետությանը նման իրավունքով: Համագումարի ընդունած «Քաղաքական բանաձևի» 5-րդ կետի համաձայն, արևմտահայերի Գործադիր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության և պառլամենտի հետ պետք է ձեռնարկեր իրական քայլեր Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակման ուղղությամբ[133]: Փաստորեն, այս ձևակերպմամբ արևմտահայերի անունից հանդես եկող մարմինը լիազորում էր Հայաստանի առաջին հանրապետությանը հանդես գալ նաև իր անունից՝ իբրև պահանջատեր կողմ, քանի որ Հայոց պահանջատիրությունը ենթադրում էր Միացյալ և Ազատ Հայաստանի հռչակում: Միևնույն ժամանակ, սակայն, օժտելով Հայաստանին նման իրավունքով, Արևմտահայերի համագումարը կարևորում էր միասին ու համատեղ աշխատելու անհրաժեշտությունը: Ա. Մարուքյանը շեշտում է այս դրույթի արդիականությունը, քանի որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում պատասխանատվություն ունեն թե՛ Հայաստանի Հանրապետությունը և թե՛ Սփյուռքը[134]: Ըստ հետազոտողի, իրավական ճանապարհով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում նրա օրինական տիրոջ՝ հայ ժողովրդի իշխանության վերականգնմանը հասնելու հիմքը միջազգային իրավական հիմնավորումների ապահովումն է հետևյալ ուղղություններով.

1. այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացի, միջազգային դատա-

---

[133]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 10:

[134]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Թուրքիայի միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը: Ամփոփում և առաջարկներ, էջ 19:

կան համապատասխան ատյաններում ընթացած դատավարությունների և տվյալ հանցագործության հետ առնչվող մասնավոր դատական գործերի ուսումնասիրում,

2.ցեղասպանության հանցագործությանը վերաբերող միջազգային պայմանագրերի, կոնվենցիաների և դրանք վերանայելու հնարավորությունների ուսումնասիրում՝ Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու տեսակետից,

3. հիմնավոր քայլերի ձեռնարկում՝ ապահովելու Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների ու միջազգային կառույցների գործնական աջակցությունը հայկական կողմին՝ Թուրքիային քաղաքական պատասխանատվության կանչելու հարցում[135]:

Ա. Պապյանը ևս հայոց ազգային իրավունքների վերականգնման համար փուլային պայքարի կողմնակից է, սակայն նա բարձրացնում է իրավական ճանապարհով ոչ թե Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, այլ՝ Հայկական հարցի լուծման գործընթաց սկսելու խնդիրը՝ դրա վերջնարդյունքում տեսնելով Վ. Վիլսոնի իրավարար վճռի վրա խարսխված ՀՀ հողային իրավունքների լիակատար վերականգնումը[136]:

«… Մենք խոսում ենք տարածքային հատուցման մասին միջազգային իրավունքի տեսանկյունից, այլ ոչ թե պատերազմ սկսելու, ոչ թե արկածախնդրության դիրքերից: Այսօր որքան էլ Թուրքիայի տնտեսությունը զարգանում է, եւ շատերին նրա հզորությունը բարձր մակարդակի վրա է թվում, այդ երկիրն էթնիկական հողի վրա փլուզման վտանգի առջեւ է կանգնած ամեն վայրկյան: Ուստի մենք իրավական խնդիրը պիտի առաջ մղենք եւ առանց

---

[135]Տե՛ս նույն տեղում, էջ 27:

[136]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման հայեցակարգ // Հայրենատիրություն, էջ 466–467:

երկնչելու խոսենք հատուցման կարեւորության մասին»[137],– իրավացիորեն նշում է Ա. Մելքոնյանը: Պատմաբանը խնդիրն առավել արդիական է համարում հայ-թուրքական արձանագրությունների սառեցման պայմաններում՝ այդ փաստաթուղթը կյանքի կոչելու հնարավորության առնչությամբ նշելով, որ «… դա ոչ ոք չի պատկերացնում ո՛չ պատերազմի, ո՛չ էլ ուժի գործադրման տարբերակով: Աշխարհը մեկ անգամ դե յուրե հաստատել է իր կամքը՝ Օսմանյան կայսրության՝ որպես համաշխարհային քաղաքակրթության դեմ թշնամի երկրի փլուզման հանգամանքը, և արդարացիորեն օսմանահպատակ ժողովուրդների համար արձանագրել է հեռանկար»[138]: Ա. Մելքոնյանը նկատում է, որ, Հայոց ցեղասպանությունը ժխտելու իր քաղաքականությամբ հանդերձ, Թուրքիան ինքն է սպառնում միջազգային դատարան դիմել այն հիմնավորմամբ, թե իրեն հանիրավի մեղադրում են ցեղասպանություն իրագործելու մեջ: Այնպես որ խնդիրը վաղ թե ուշ շոշափվելու է միջազգային դատարանում, ինչին պետք է պատրաստ լինել: «Մենք Սևրի դաշնագրի լույսի ներքո պիտի պատրաստ լինենք նման մարտահրավերի»[139],– կարևորում է նա:

Հայաստանյան պատմաբանների կողմից Մեծ եղեռնի հետևանքով հայրենազրկված և տեղահանված հայերի ու նրանց սերունդների Հայրենիք վերադառնալու պահանջը գիտական և քաղաքական քննարկումների օրակարգ բերելը պատահական չէ: Այդ պահանջը անթեղված է հայ ժողովրդի հավաքական հիշողության մեջ, հանդիսանում է ազգային անկախության վերականգնման, պահպանման, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի իրա-

---

[137]***Մելքոնյան Ա.*** Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), էջ 401:

[138]Նույն տեղում, էջ 285:

[139]Նույն տեղում:

գործման համար նրա պայքարի շարժիչ ուժը, իսկ դրա բավարարումը հայ ժողովրդի անվտանգ գոյության ու հարատևման միակ ուղին է: Հայրենիք վերադառնալու պահանջի պատմագիտական մշակման առանցքային արդյունքն այն եզրահանգումն է, որ Հայաստանի Հանրապետության հողային իրավունքները խարսխված են Վ. Վիլսոնի իրավարար վճռի վրա: Դրանք ճանաչված են Հայոց ցեղասպանության իրողությունից անկախ, հետևաբար, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը նախապայման չէ ՀՀ հողային իրավունքների վերականգնման համար:

ԳԼՈՒԽ 3
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1921–1923 ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմագիտական վերագնահատումը

Հայկական հարցի նորագույն ժամանակաշրջանի պատմության մեջ ամենավիճելին ու քաղաքական գնահատականի իմաստով ամենաբարդը մեր ժողովրդի ու նրա պետականության համար ճակատագրական նշանակություն ունեցող, միմյանց հետ տրամաբանորեն կապված, հայկական կողմին ուժով պարտադրված երեք անարդար՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի[140] և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի պատմագիտական քննությունն է, ինչպես նաև այդ ուղղությամբ խորհրդահայ ու սփյուռքահայ պատմաբանների կատարած գիտական ուսումնասիրությունների արդյունքների վերահիմաստավորումն ու վերագնահատումը:

---

[140]Մոսկվայի խորհրդա-քեմալական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրն իրականում ստորագրվել է մարտի 18-ին, սակայն փաստաթղթերում թվագրվել է մարտի 16-ով: Դրա պատճառների մասին տե՛ս ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 96, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, т. 2, ч. 2, с. 427–428; ***Казанджян Р.*** К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г. // Вестник общественных наук / НАН РА, 1999, № 1, с. 183–187.

Խորհրդային տարիներին Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը հանգամանորեն ուսումնասիրել են Բ. Բորյանը, Ա. Եսայանը, Ս. Ալիխանյանը, Ջ. Կիրակոսյանը, Մ. Արզումանյանը, Է. Զոհրաբյանը, Գ. Գալոյանը, Սփյուռքից՝ դաշնակցական գործիչներ Ս. Վրացյանը, Ալ. Խատիսյանը, Գ. Լազյանը, Շ. Նաթալին (Հ. Տեր-Հակոբյան), Զ. Մսըրլյանը, Շ. Թորիկյանը և այլք: Հայաստանի երրորդ հանրապետության տարիներին Է. Զոհրաբյանն ու Գ. Գալոյանը զարգացրին իրենց գիտական մշակումները, իսկ Հր. Սիմոնյանը, Հ. Ավետիսյանը, Ե. Սարգսյանը, Լ. Խուրշուդյանը, Հ. Հակոբյանը, Վ. Ղազախեցյանը, Ա. Հակոբյանը, Կ. Խաչատրյանը, Ա. Մարուքյանը, Ռ. Ղազանչյանը, Ա. Պապյանը աչքի ընկան հիմնահարցի վերաբերյալ իրենց արժեքավոր ուսումնասիրություններով[141]:

---

[141]Տե՛ս ***Борьян Б. А.*** Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., 1929; ***Եսայան Ա.*** «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, ***Եսայան Ա.*** Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920–1922), Երևան, 1967, ***Ալիխանյան Ս.*** Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Երևան, 1966, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923) / Խմբ. պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, ***Արզումանյան Մ. Վ.*** Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, ***Զոհրաբյան Է. Ա.*** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920–1922 թթ.), Երևան, 1979, ***նույնի՝*** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, ***Գալոյան Գ. Ա.*** Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, 1982, ***նույնի՝*** Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923), ***Վրացյան Ս.*** նշվ. աշխ., ***Խատիսյան Ալ.*** Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, ***Լազյան Գ.*** Հայաստան եւ հայ դատը: Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, ***Նաթալի Շ. (Տէր-Յակոբեան Յա.)*** Հայաստանի վերջին աղէտը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբօլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները, պալշէվիքեան տիրապետութիւնը: Անտիպ փաստաթուղթեր դիւանագիտական գրեր եւ բազ-

մաթիւ պատկերներ, Կ.Պոլիս, 1921, ***նույնի՝*** Երեք դաշնագրեր: (Աղէք–սանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի) / «Արարատ» մատենաշար թ. 24 և 25, Պէյրութ, 1957, ***Մսըրլեան Հ.*** Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոս–կուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), ***Թորիկեան Շ.*** նշվ. աշխ., ***Սիմոնյան Հր. Ռ.*** նշվ. աշխ., ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվա-կանին, ***Սարգսյան Ե.*** Դավադիր գործարք: Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1995, ***նույնի՝*** Քեմալականների 1920–1921 թթ. արշա-վանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագիրը // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1992, № 1, էջ 19–34, ***Саркисян Е.*** За кулисами, как рождался Московский договор 1921 г. // Литературная Армения, 1991, № 1, с. 71–82; ***Խուրշուդյան Լ.*** Հայաստանի բաժանումը 1920 թվականին, ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայ-րենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, ***Ղազախեցյան Վ.*** Հայաստանը 1920–1940 թթ., ***նույնի՝*** Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը // Հայոց պատմություն, հ. IV, գիրք I (Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)), Երևան, 2010, էջ 324–339, ***Ղազարյան Հ. Մ.*** Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճա-կատագրում, Երևան, 2010, ***Հակոբյան Ա. Մ.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, ***նույնի՝*** Ալեքսան-դրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատ-մագրության մեջ // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2006, № 3, էջ 36–56, ***նույնի՝*** Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանա-գրերի պատմահիրավական գնահատականը (1920–1921 թթ.) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2007, № 2, էջ 17–30, ***Խաչատրյան Կ. Հ.*** Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, ***նույնի՝*** ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2010, №№ 1–2, էջ 36–58, ***Խաչատրյան Կ. Հ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ.*** Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տա-րածքային կորուստները 1920–1930-ական թվականներին, Երևան, 2015, ***Մարուքյան Ա.*** Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգային-իրա-վական գնահատականը // ՎԷՄ / համահայկական հանդես, 2011, Գ տարի, թ. 2, ապրիլ–հունիս, էջ 129–139, ***Казанджян Р.*** К вопросу об оценке Мос-ковского русско-турецкого договора 1921 г. // Страны и народы Ближнего и

Գ. Գալոյանն իր մենագրության մեջ հանգամանորեն վերլուծել է Հայկական հարցում Հայաստանի Հանրապետության, քեմալական Թուրքիայի, Խորհրդային Ռուսաստանի և Գլխավոր դաշնակից տերությունների վարած քաղաքականության վրա Հայաստանի խորհրդայնացման ազդեցությունը: Նրա եզրակացությամբ, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ոչ միայն հիմնովին փոխվեց իրադրությունն Անդրկովկասում, այլև Հայկական հարցի լուծման մեջ շահագրգիռ պետությունների քաղաքականությունը: Խորհրդային Ռուսաստանը սկսեց հանդես գալ իր դաշնակից Խորհրդային Հայաստանի շահերի պաշտպանությամբ, բայց չէր ձգտում հանուն դրանց կորցնել քեմալականների հետ ձեռք բերած բարեկամությունը և նրան վերջնականապես «հրել» Գլխավոր դաշնակից տերությունների «գիրկը»[142]: Քեմալական Թուրքիան իր հերթին ձգտում էր չկորցնել 1920 թ. Հայաստանի դեմ զավթողական պատերազմի արդյունքում նվաճած տարածքները և «ատամներ էր ցույց տալիս» Խորհրդային Ռուսաստանին, երբ վերջինս փորձում էր պաշտպանել Հայաստանին[143]:

Այս առիթով Ա. Հակոբյանը մատնանշում է քեմալական կառավարության կողմից Ալեքսանդրապոլի հաշտության բանակցություններին Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության մերժման փաստը՝ դա բացատրելով Ռուսաստանի միջնորդությամբ

Среднего Востока / XX. Ереван, 2001, с. 106–124; ***նույնի՝*** Русско-турецкие отношения 1920–1921 гг. и вопрос Армении в свете секретных документов московских архивов // Современное состояние и перспективы развития арменоведения / Сборник докладов международного симпозиума / Ред. В. Бархударян. Ереван, 2004, с. 201–227; ***Պապյան Ա.*** Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր: (Հոդվածների ժողովածու):

[142] ***Գալոյան Գ. Ա.*** Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923), էջ 402–403:

[143] Նույն տեղում, էջ 403:

բանակցություններում ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանը վերականգնելու պահանջի բարձրացման հավանականությամբ[144]:

Խորհրդայնացումից հետո Հայաստանն անմիջապես զրկվեց Դաշնակից տերությունների թեկուզ թույլ պաշտպանությունից և հայտնվեց նրանց հակառակորդների ճամբարում: Այս փաստն ավելորդ դարձրեց քեմալական Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի՝ մինչ այդ գաղտնի պահվող մերձեցման ձգտումները: Ընդհակառակը, ռուս-թուրքական բանակցությունների սկզբից ևեթ քեմալականներն այդ պետությունների միջոցով ճնշում էին գործադրում Խորհրդային Ռուսաստանի վրա՝ իրենց ցանկալի զիջումները ստանալու նպատակով: Թուրքական դիվանագիտությունն իր այս հաշվարկներում չսխալվեց: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, ապա Գ. Գալոյանի համոզմամբ, նրանց դիվանագիտության ռազմավարական նպատակը հանգում էր ռուս-թուրքական հարաբերությունների սրմանը՝ ընդհուպ զինված առճակատում: Եվրոպական ազդեցիկ պետությունները մրցում էին միմյանց հետ, թե ով առաջինը կհրաժարվեր Սևրի պայմանագրից, որպեսզի առավել նպաստավոր պայմաններով ամրապնդեր իր դիրքերը Թուրքիայում[145]: Քաղաքական այսպիսի իրադրության պայմաններում է կնքվել Մոսկվայի պայմանագիրը: Եթե խորհրդային իշխանության տարիներին այն կարևորվում էր որպես Խորհրդային Միության և Թուրքիայի միջև պետական սահմանագիծը կարգավորող միջպետական փաստաթուղթ, ապա Հայաստանի անկախացումից հետո մինչ օրս այդ պայմանագրով

---

[144]Տե՛ս ***Հակոբյան Ա.Մ.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 42:

[145]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 402–403:

է կարգավորվում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև պետական սահմանագիծը:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի նկատմամբ իրավաքաղաքական հետաքրքրությունը կտրուկ աճեց նախ 2009 թվականին՝ կապված «հայ-թուրքական սահմանի բացման» նպատակով անսպասելիորեն սկսված և հաջող ավարտի իրական հեռանկարից զուրկ բանակցային գործընթացի հետ, այնուհետև՝ 2016 թ. սկզբին, երբ սիրիական ճգնաժամի հետևանքով ռուս-թուրքական հարաբերությունների սրման պայմաններում Անկարայի նկատմամբ դիվանագիտական ճնշում գործադրելու նպատակով ռուսական կառավարող շրջանակների կողմից ոչ պաշտոնական մակարդակով հնչեցվեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի վերանայման հարցը: Վերջինիս ու Կարսի պայմանագրի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն ունի իր պաշտոնական դիրքորոշումը, որի հիմքում դրված են և՛ պատմաբանների, և՛ միջազգայնագետ-իրավաբանների ու քաղաքական գործիչների վերլուծությունների արդյունքները:

Պատմագիտական աշխատություններում Մոսկվայի ու Կարսի պայմանագրերն ուսումնասիրված և գնահատված են առանց միմյանցից տարանջատելու, քանի որ վերաբերում են միևնույն խնդրին: Այդ իրողությունն ավելի է ընդգծում Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը, որի համաձայն, Ռուսաստանը պարտավորվում էր անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկել քայլեր, որպեսզի վերջիններս հետագայում Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ճանաչեն Մոսկվայի պայմանագրի՝ անմիջականորեն իրենց վերաբերող հոդվածները: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նախքան Կարսի կոնֆերանսի գումարումը Ռուսաստանը և Թուրքիան արդեն վավերացրել էին Մոսկվայի պայմանագիրն ու 1921 թ. սեպտեմբերի 22-

ին, առանց սպասելու Կարսի պայմանագրի ստորագրմանը և պարզելու, թե Մոսկվայի պայմանագրի ո՞ր դրույթներն են անընդունելի Անդրկովկասի հանրապետությունների համար, Կարսում փոխանակեցին վավերագրերը:

Հ. Ավետիսյանն իր «Հայկական հարցը 1918 թվականին» աշխատության վերջաբանում անդրադառնալով խորհրդա-քեմալական գործակցությանն ու 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրին՝ ցույց է տալիս, որ դրանք Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ թուրքական ռազմական ուժի և դիվանագիտության փոխկապակցված ու տրամաբանական հաջորդականությամբ իրականացրած քայլերի շարքում հերթականն էին՝ նպատակաուղղված թուրքական տարբերակով Հայկական հարցի վերջնական լուծմանը, այսինքն՝ Հայաստանն, իբրև համաթուրանական պլաններն արգելակող պատվար, վերացնելուն: Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով թուրքերը հասան Ադրբեջանի օգտին Նախիջևանի ու Շարուր–Դարալագյազի բռնակցմանը՝ Հայաստանին զրկելով Զանգեզուրի հետ լիարժեք կապի հնարավորությունից: Թուրքիային անցան Սարիղամիշը, Կարսը, Կաղզվանը, Սուրմալուն, Իգդիրը: Դրանով Հայաստանին հասցվեց տնտեսական մեծ վնաս՝ երկիրը զրկելով վառելիքի, հացահատիկի, աղի և օգտակար այլ հանածոներով հարուստ կենսական շրջաններից, սպառնալիքի տակ դրվեց Հայաստանի անվտանգությունը, անհնար դարձավ հայ գաղթականության տունդարձի կազմակերպումը: Զուգահեռաբար շրջանառության մեջ դրվեց արևմտահայկական տարածքների ու Կարսի նահանգի՝ ի սկզբանե թուրանական լինելու թեզը: Թուրանական ցեղեր համարվեցին մինչև անգամ Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ բիայնացիները, դրանով իսկ բացառվեց հայերի իրավունքն այդ տարածքի նկատմամբ, «վերացվեց» Հայկական հարցը: Սկիզբ դրվեց Նախիջևանի, Շահթախթիի, Շա-

ռուր–Դարալագյազի, Արցախի և հայկական կից հողամասերի վրա թուրքերի «իրավունքները» տարածելու քաղաքականությանն ու քարոզչությանը: Մոսկվայի պայմանագրով Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ գործված անարդարությունը վերացնելու փոխարեն, 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի հինգ անդամների վճռով «Արևելքում խորհրդային իշխանության առաջապահիկ» Ադրբեջանին մատուցվեց Լեռնային Ղարաբաղը: Ճիշտ է, 1921 թ. «կորցրած հողերի» վերադարձման հարցը խորհրդային կառավարությունն առաջ քաշեց Պոտսդամի միջազգային խորհրդաժողովի օրերին՝ 1945 թ. հուլիսին, սակայն 1953 թ. մայիսի 30-ին Մոսկվան Հայաստանի ու Վրաստանի անունից հրաժարվեց Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից՝ «բարիդրացիական հարաբերությունները պահպանելու և անվտանգությունն ու խաղաղությունը ամրապնդելու համար»[146]: Հ. Ավետիսյանը նշում է, որ հայկական տարածքների բռնազավթման «օրինականացումը» նոր վերահաստատում ստացավ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման 70-ամյակի օրերին՝ 1991 թ. մարտի 16-ին՝ Մ. Գորբաչով–Թ. Օզալ բանակցությունների ժամանակ[147]:

Հ. Հակոբյանի զուսպ գնահատմամբ, քեմալա-բոլշևիկյան գործակցությունը «մի հարվածով ոչնչի հավասարեցրեց այն առավել կարևոր փաստաթուղթը, որն անմիջապես և ամբողջությամբ վերաբերում էր Հայ Դատին՝ Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Դեկրետը «Թուրքահայաստանի մասին»»[148]: Ավելին, անվերապահորեն զորավիգ լինելով Սևրի պայմանագիրը

---

[146]Տե՛ս ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 358:
[147]Տե՛ս նույն տեղում:
[148]***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 280:

չեղյալ դարձնելու քեմալականների ձգտմանը՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը տարագիր հայերի առջև փակում էր Հայրենիք վերադառնալու ուղիները, քանի որ «չքանում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն, այսինքն՝ Արևելյան Հայաստանի թուրքերի զավթած մասերը, որոնք ճանաչվում էին իբրև Թուրքիայի սեփականությունը»[149]:

Պատմաբան-միջազգայնագետն իրավացիորեն նշում է, որ «վերադարձի իրավունքի փոխարեն 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը 12-րդ հոդվածով լրացնում էր հայերի բռնագաղթը, շեշտելով, որ «… մինչև 1918 թվականը Ռուսաստանի կազմի մեջ մտնող այն տերիտորիաների բոլոր բնակիչները, որպիսիք սույն Պայմանագրի հիման վրա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական կառավարությունն այսօր ընդունում է որպես Թուրքիայի սուվերենության տակ գտնվող տերիտորիաներ, ունեն իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով Թուրքիայից ազատ հեռանալու իրավունք»[150]: Այլ կերպ ասած, քեմալականների բռնազավթած տարածքներում մնացած հատուկենտ հայերին առաջարկվում էր հեռանալ Հայրենիքից: Ոչ մի խոսք մինչ այդ բռնագաղթի ենթարկված հայության ճակատագրի և թողած ունեցվածքի մասին: Մինչդեռ հաջորդ՝ 13-րդ հոդվածը հավաստում էր, որ «Ռուսաստանը պարտավորվում էր իր հաշվին հայրենիք վերադարձնել մինչև Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը Ռուսաստանում գտնվող բոլոր զինվորական և քաղաքացիական գերի թուրքերին»: Իսկ Թուրքիան նույն պարտավորությունը ստանձնում էր «միայն դեռևս Թուրքիայում գտնվող ռուս զինվորական և քաղաքացիական գերիների վերաբերմամբ»[151]:

---

[149]Նույն տեղում, էջ 295:
[150]Նույն տեղում, էջ 299:
[151]Նույն տեղում, էջ 299–300:

Գ. Գալոյանն անդրադարձել է Նախիջևանի պատկանելության և քաղաքական կարգավիճակի հարցին: Նա նկատում է. չնայած խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության փաստաթղթերում միանշանակ ընդունվում էր Նախիջևանի՝ Հայաստանի անքակտելի մասը լինելու փաստը, սակայն 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանում իշխանության եկած Հայաստանի փրկության կոմիտեն (ՀՓԿ), ունենալով հակախորհրդային կողմնորոշում, մտադիր էր հայ-թուրքական հարաբերություններում հիմք ընդունել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Դա նշանակում էր քեմալական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին հնարավորություն տալ անմիջականորեն կապվելու միմյանց հետ Նախիջևանի միջոցով, ինչն անցանկալի էր Խորհրդային Ռուսաստանի համար: 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը որպես ինքնավար տարածք, հանձնվեց Ադրբեջանի խնամակալությանը պայմանով, որ վերջինս այդ խնամակալությունը չէր զիջելու մի երրորդ պետության: Դրանով Խորհրդային Ռուսաստանը հասավ Նախիջևանի նկատմամբ Թուրքիայի պետական իշխանության դադարեցմանը և վերականգնման անհնարինությունը միջազգային իրավական տեսանկյունից[152]: Նշենք, որ թե՛ ռուս-թուրքական բանակցություններում և թե՛ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերում որևէ ձևակերպում չի արվել Ադրբեջանի կազմում Նախիջևանին ինքնավար հանրապետության կարգավիճակ տալու մասին: Երկրամասը լինելու էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո: Սակայն դա երկար չտևեց. 1924 թ. փետրվարի 9-ին կուսակցական որոշումների հիման վրա Նախի-

[152]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 447:

ջևանը կազմավորվեց որպես ինքնավար հանրապետություն՝ Ադրբեջանի կազմում[153]: Ի դեպ, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի դրույթների բազմաթիվ խախտումներից սա ամենամեծն է, և այն գործել է Ադրբեջանը: Մեր օրերում Նախիջևանի նկատմամբ հարաճուն նկրտումներ ունի Թուրքիան: Վերջինս ձգտում է խլել երկրամասը Ադրբեջանից և այն դարձնել հենակետ իր համաթուրքական ու համիսլամական ծրագրերի իրականացման համար:

Պատմաքննական վերլուծության ենթարկելով Խորհրդային Հայաստանի ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին՝ պատմաբաններ Կ. Խաչատրյանը, Հ. Սուքիասյանը և Գ. Բադալյանն իրենց համատեղ ուսումնասիրության մեջ նշում են, որ Հայաստանի առաջին հանրապետության կողմից դեռևս 1918–1920 թթ. ստորագրված ոչ մի միջազգային պայմանագրով չէին որոշվել ՀՀ ամբողջական տարածքներն ու սահմանագիծը. որոշվել էր միայն հայ-թուրքական սահմանագիծը: Պատահական չէ, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ խորհրդայնացման արդյունքում ՀՍԽՀ-ն ժառանգեց անորոշ պետական սահմաններ և տարածքային-սահմանային չլուծված խնդիրներ սահմանակից չորս պետություններից երեքի՝ քեմալական Թուրքիայի, Ադրբեջանական ՍԽՀ-ի և Վրացական Հանրապետության հետ: Նկատի ունենալով խորհրդայնացման ազդեցությունը Հայաստանի փաստացի իրավական կարգավիճակի վրա՝ հեղինակները նշում են, որ դրանով քեմալական Թուրքիայի բռնազավթած հայկական տարածքների պատկանելության հարցը ստորադասվեց խորհրդա-թուրքական տարածքային սահմանազատման խնդրին: Եվ ՀՍԽՀ իշխանությունները՝ ի դեմս հայ կոմունիստների, թեև վճռական

[153]Տե՛ս Документы внешней политики СССР / В 24-х томах / Глав. ред. А. А. Громыко. М., 1959, т. III (01 июля 1920–18 марта 1921), док. № 342, с. 598–599, М., 1960, т. IV (19 марта 1921–31 декабря 1921), док. № 264, с. 423.

էին հայկական տարածքների և սահմանների խնդիրը հօգուտ հանրապետության լուծելու հարցում, սակայն վճռորոշ էր լինելու Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Աշխատության մեջ բերված է խորհրդա-թուրքական կոնֆերանսին ներկայացնելու նպատակով հայկական պատվիրակության (նախագահ՝ ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյան) պատրաստած «Հայկական պատվիրակության 1921 թ. փետրվարի 2-ի տեղեկատու-զեկուցումը ռուս-թուրքական կոնֆերանսի համար» վերնագրով փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական նյութերի մեծ փաթեթը, որը ներկայացնում էր տարածքային խնդիրների նկատմամբ Խորհրդային Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը: Թղթապանակում Հայկական հարցի տեսանկյունից կարևոր է «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» բաժինը, որում հիմնավորված է հայկական մի շարք տարածքների (Կարս, Արդահան, Բայազետ, Սուրմալու, Նախիջևան, Շարուր--Դարալագյազ և այլն) ռազմավարական ու սոցիալ-տնտեսական նշանակությունը ՀՍԽՀ-ի համար և շեշտված է դրանք Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու անհրաժեշտությունը:

Հանգամանորեն ուսումնասիրելով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագծման հնարավոր չորս տարբերակների վերաբերյալ փաստաթղթերը՝ աշխատության հեղինակները հանգել են այն եզրակացության, որ Հայաստանի նոր իշխանություններին չէր բավարարում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված համաձայնագրով հանրապետությանը վերապահված տարածքը: Նրանք նշում են, որ հայկական կողմը հավակնություններ էր ներկայացնում Ախուրյան և Արաքս գետերից արևմուտք, մասամբ՝ հարավ ընկած տարածքների, այդ թվում՝ Կարսի մարզի, Արդահանի օկրուգի որոշ հատվածների, Բայազետի նկատմամբ, այսինքն՝ պահանջում էր Հայաստանի կազմում ընդգրկել 1920 թ. թուրք-

հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող վերը նշված շրջանները, որոնք միասին կազմում էին շուրջ 60 հազ. կմ^2 տարածք: Այս պահանջները հիմնավորվում էին Հայաստանի բնականոն զարգացման շահով և համաձայնագրի 3-րդ կետի պայմաններով:

Անդրադառնալով 1921 թ. մարտի 16-ի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրով հաստատված խորհրդա-թուրքական սահմանի հայ-թուրքական հատվածին, Նախիջևանի երկրամասի իրավական կարգավիճակին, ինչպես նաև Մոսկվայի կոնֆերանսում հայկական շահերի անտեսման կապակցությամբ ՀՍԽՀ պատվիրակության կողմից ՌԿ(բ)Կ կենտկոմին և խորհրդային պետության ղեկավար Վլ. Լենինին ապրիլի 15-ին ուղղված բողոքի հուշագրին՝ աշխատության հեղինակները միանգամայն զուսպ ու հավասարակշռված իրավական գնահատական են տալիս նշված պատմական փաստերին: Մասնավորապես՝ շեշտվում է, որ ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեց և Թուրքիային ու Ադրբեջանին նվիրաբերվեց հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին ու ոտնահարվեցին միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Թուրքիան առանց Հայաստանի մասնակցության որևէ իրավասություն չունեին տնօրինելու հայկական տարածքների և հայության ճակատագրերը: Հետևաբար, Հայաստանի տարածքային հարցերին վերաբերող պայմանագրի կետերը չեն կարող առաջացնել իրավական որևէ պարտավորություն Հայաստանի համար: Այս հարցում հեղինակները համակարծիք են Շ. Թորիկյանի հետ[154]: Հարկ է նկատել, որ ավելի վաղ՝ 2007 թ. լույս

---

[154]Տե՛ս ***Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ.*** նշվ. աշխ., էջ 19–21:

ընծայած «Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին» մենագրության մեջ Կ. Խաչատրյանն ավելի կտրուկ, իրավացի գնահատական էր տվել 1921 թ. մարտի 16-ի պայմանագրին, նշելով, որ դրանով բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան միմյանց միջև բաժանեցին Հայաստանը[155]:

Կ. Խաչատրյանի, Հ. Սուքիասյանի և Գ. Բադալյանի վերոնշյալ կոլեկտիվ աշխատության մեջ անդրադարձ է կատարված նաև 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված թուրք-անդրկովկասյան «Բարեկամության պայմանագրին», որը չնչին փոփոխություններով վերահաստատեց Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանը: Հեղինակները խորհրդային կողմի միակ ձեռքբերում են համարում նախկին Երևանի գավառի հարավում գտնվող Արարատ–Քյոմուրլուդաղ–Արազդայան եռանկյունու շուրջ 260 կմ^2 տարածքի ներառումը ՀՍԽՀ սահմանների մեջ, ինչի շնորհիվ Հայաստանին միացվեցին Արարատյան դաշտից Դարալագյազ (այժմ՝ Վայոց ձոր) տանող և ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհը վերահսկող Քյարքի (այժմ՝ Տիգրանաշեն), ինչպես նաև Ջաֆարլու–Գյունութ (Գենուտ) զույգ գյուղերը (Գ. Բադալյանի հաշվարկներով՝ 35–40 կմ^2 տարածք): Վերջիններս, սակայն, հետագա տարիներին աստիճանաբար «փոխանցվեցին» Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը: Աշխատության մեջ նշվում է Մոսկվայի պայմանագրի համեմատ Կարսի պայմանագրով արձանագրված հայկական կողմի համար շահեկան մի տարբերություն ևս. եթե Մոսկվայի պայմանագրի համաձայն, Նախիջևանի ինքնավար մարզի նկատմամբ խնամակա-

---

[155]Տե՛ս ***Խաչատրյան Կ.*** Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին / Խմբ. Հ. Ա. Ավետիսյան, Երևան, 2007, էջ 142:

լությունն Ադրբեջանն իրավունք չուներ զիջելու «մի երրորդ պետության», ապա Մոսկվայի ջանքերով Կարսի պայմանագրից այդ պայմանը հանվեց: Բացի այդ, Թուրքիան, փաստորեն, ճանաչում էր Անդրկովկասի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի ամբողջական վերահսկողությունը:

Ուսումնասիրության մեջ Կարսի պայմանագրին տրված գնահատականն ամրապնդում է խորհրդային պատմաբան Բ. Բորյանի կողմից դեռևս 1920-ական թվականների վերջին միջազգային իրավական այդ փաստաթղթին տրվածը: Ըստ այդմ, Կարսի պայմանագիրն իր էությամբ ու բովանդակությամբ, ինչպես նաև քաղաքական ու միջազգային իրավական նորմերի տեսանկյունից ինքնուրույն փաստաթուղթ չէ, քանի որ կրկնում և ամրագրում է Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը: Հետևաբար, քանի որ վերջինս իր հերթին ստորագրվել էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներով [պայմանագիրը ստորագրող կողմերն առանց որևէ լիազորության միջամտել էին այն չստորագրած ինքնիշխան պետության (պետությունների) տարածքային ամբողջականության հարցերին], ուստի տարածքային սահմանազատման հարցում Կարսի պայմանագրի նկատմամբ Հայաստանն իրավական պարտավորություն չպետք է կրի[156]:

Ա. Մելքոնյանն ուշադրություն է հրավիրում խնդրո առարկա պայմանագրերից բխող մեկ այլ փաստի՝ ռուսական կողմի առաջարկությամբ Կարսի պայմանագրի հավելվածում մտցված մի կետի վրա, ըստ որի՝ Թուրքիան պարտավոր էր սահմանի երկայնքով ձգվող Ալեքսանդրապոլ–Երևան երկաթուղագծի հարևանությամբ՝ 4–8 կմ հեռավորության վրա, պաշտպանական կառույցներ

---

[156]Տե՛ս ***Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.*** նշվ. աշխ., էջ 22–26, նաև՝ ***Խաչատրյան Կ.*** նշվ. աշխ., էջ 144:

չստեղծել և մեծաքանակ զորքեր չպահել: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Թուրքիան ոչ միայն չկատարեց այդ պայմանը, այլև ինչպես սահմանամերձ, այնպես էլ բռնազավթված մնացյալ տարածքները դարձրեց հակահայ և հակառուս գործունեության հենակետ[157]:

Վ. Ղազախեցյանը Հայկական հարցի նկատմամբ խորհրդային կառավարության շրջադարձի իրավական հիմքը համարում է 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի «Բարեկամության և եղբայրության» ռուս-թուրքական պայմանագրով Խորհրդային Ռուսաստանի կողմից քեմալականների «Ազգային ուխտի» ճանաչումը, որով թուրքական տարածք էր համարվում ամբողջ Արևմտյան Հայաստանը: Պատմաբանի արդարացի գնահատմամբ, դա նշանակում էր, որ Խորհրդային Ռուսաստանը հրաժարվել էր «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից[158]:

Մոսկվայի պայմանագիրը գնահատելով որպես թուրքական դիվանագիտության և, մասնավորապես, թուրքական պատվիրակության հաղթանակը՝ Վ. Ղազախեցյանը միաժամանակ նշում է, որ Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի արդյունքներում բացասական դեր են ունեցել ներքին և արտաքին մի քանի գործոններ՝ Թուրքիայի հաղթանակը Հայաստանի առաջին հանրապետության դեմ պատերազմում և 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի թուրք-հայկական հաշտության պայմանագիրը, հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի գլխավորած ՀՓԿ-ի Մոսկվա՝ Խորհրդային Հայաստանի դեմ ուղղված դիմումները, ինչպես նաև Ռուսաստանի պարտությունը Լեհաստանի դեմ պատերազմում: Նրա վկայությամբ, Մոսկվայի 1921 թ. մարտի

---

[157]Տե՛ս ***Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա.*** նշվ. աշխ., էջ 310:
[158]Տե՛ս ***Ղազախեցյան Վ.*** Հայաստանը 1920–1940 թթ., էջ 96:

16-ի պայմանագրի կնքումից հետո Թուրքիան հույս ուներ Հայաստանի հետ կնքել առանձին՝ ավելի ծանր պայմանագիր, որով կվերադառնար 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի հաշտությամբ ամրագրված պայմաններին: Պատահական չէ, որ Կարսի կոնֆերանսի հրավիրումը ձգձգվում էր Թուրքիայի բռնած դիրքի պատճառով: Սակայն իրադարձությունները չընթացան Թուրքիայի համար ցանկալի հունով: Նախ՝ ՀՓԿ-ն պարտվեց Հայաստանի խորհրդային իշխանության դեմ պայքարում, ապա՝ Խորհրդային Ռուսաստանը վճռական ու հետևողական գտնվեց Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը քեմալական զորքից 1921 թ. ապրիլի 22-ին մաքրելու հարցում: Բացի այդ, Վ. Ղազախեցյանը հիմնավորում է, որ Թուրքիայի հետ Անդրկովկասի հանրապետությունների՝ Ռուսաստանի մասնակցությամբ կոնֆերանսին Հայաստանի ներկայության հարցը լուծվել է Ռուսաստանի Սոցիալ–Դեմոկրատական Խորհրդային Հանրապետության (ՌՍԴԽՀ) համառ պայքարի արդյունքում: Դրա շնորհիվ ձախողվեց Հայաստանը դիվանագիտորեն մեկուսացնելու և նրա հետ հարցերը առանձին լուծելու թուրքական պլանը, չնայած, որ այդ փորձերը շարունակվեցին նաև կոնֆերանսի ժամանակ[159]:

Հ. Հակոբյանը, քննական վերլուծության ենթարկելով հայ ժողովրդի՝ Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, թվարկում է այն հինգ պատճառները, որոնցով Մոսկվայի պայմանագիրը հակասում է միջազգային իրավունքին և, իբրև ապօրինի գործարքի արդյունք, պետք է չեղյալ հայտարարվի: Մասնավորապես, նշվում է պայմանագրի ստորագրումն առանց Հայաստանի մասնակցության այն դեպքում, երբ Խորհրդային Հայաստանի պատվիրակությունն արտաքին գործե-

[159]Տե՛ս նույն տեղում, էջ 102–103:

րի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանի գլխավորությամբ գտնվում էր Մոսկվայում: Սակայն նրան թույլ չտվեցին մասնակցել ոչ կոնֆերանսին և ոչ էլ բանակցություններին ու պայմանագրի ստորագրմանը, թեև տարածքային զիջումները Թուրքիային կատարվում էին Հայաստանի հաշվին[160]:

Հ. Հակոբյանը կարևորում է նաև այն իրողությունը, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ինքնակամ հրաժարվել էր Ռուսական կայսրության ազգային ծայրամասերի նկատմամբ իշխանությունից: Ավելին, Ռուսական կայսրությունն այլևս գոյություն չուներ և նախկինում նրա մասը կազմող Արևելյան Հայաստանն էլ de jure անկախ, ինքնիշխան խորհրդային հանրապետություն էր: Հետևաբար, Ռուսաստանի խորհրդային կառավարությունն իրավունք չուներ մեկ այլ ինքնիշխան պետության տարածքները տնօրինել՝ իբրև Ռուսական կայսրության ծայրագավառի և, առանց այդ պետության համաձայնության, հանձնել նրա իշխանության ներքո գտնվող տարածքները մեկ այլ պետության, տվյալ դեպքում՝ քեմալական Թուրքիային[161]:

Այնուհետև, Հ. Հակոբյանը նշում է, որ իր արտաքին քաղաքական առաջին փաստաթղթում՝ «Հաշտության մասին» հրովարտակում Ռուսաստանի խորհրդային կառավարությունը սկզբունքորեն դատապարտել էր անեքսիան՝ այն բնութագրելով ոչ միայն իբրև օտարի տարածքի բռնի զավթում, այլև որևէ ազգի՝ հակառակ նրա ազատորեն արտահայտված կամքի, բռնությամբ այլ պետության կազմի մեջ պահում, այսինքն՝ ինքնորոշման իրավունքի ոտնահարում: Հետևաբար, ստորագրելով Մոսկվայի պայմանագիրը և Թուրքիայի տարածքը ճանաչելով Կարսն ու Արդահանը, ինչ-

---

[160]Տե՛ս ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 302:
[161]Տե՛ս նույն տեղում:

պես նաև Սուրմալուն, որը պատմականորեն երբեք չէր եղել թուրքական տիրույթ, քանզի 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով էր Պարսկաստանից անցել Ռուսաստանին, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ճանաչում էր թուրքական անեքսիայի արդյունքը և մերժում էր իր իսկ ընդունած սկզբունքն անեքսիայի վերաբերյալ[162]:

Հ. Հակոբյանի գնահատմամբ, միջազգային իրավունքին հակասում է, հետևաբար, նաև Մոսկվայի պայմանագիրը չեղյալ հայտարարելու հիմք է փաստաթղթի 15-րդ հոդվածը. «Դա նշանակում է, որ Ռուսաստանը պարտավորվում էր ճնշման և ահաբեկման միջոցով ստիպել Անդրկովկասի ինքնիշխան պետություններին ճանաչել և վավերացնել Թուրքիայի հետ իր ապօրինի գործարքը: Իսկ ճնշման և սպառնալիքի ներքո ընդունված պայմանագրերը միջազգային իրավունքի տեսանկյունից չեն կարող համարվել օրինական ուժ ունեցող»[163]: Ընդ որում, գրում է հետազոտողը, Խորհրդային Ռուսաստանը չհապաղեց կատարելու իր խոստումը. նրա նախաձեռնությամբ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրվեց պայմանագիր մի կողմից Թուրքիայի, իսկ մյուս կողմից Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միջև: «Ռուսաստանի ներկայացուցչի միջնորդությամբ ստորագրված այս պայմանագիրը վերարտադրում էր Մոսկվայի պայմանագրի դրույթները և հաստատում Խորհրդային Հայաստանի հողերի աճուրդը»,– արձանագրում է Հ. Հակոբյանը՝ տրամաբանորեն շարունակելով 1921 թ. կնքված ռուս-թուրքական գործարքի և ժամանակի միջազգային իրավունքի միջև հակա-

---

[162]Տե՛ս նույն տեղում, էջ 302–303:

[163]Նույն տեղում, էջ 303:

սությունների վերլուծությունը. «Սակայն, մինչ այդ Ռուսաստանը և Թուրքիան արդեն վավերացրել և ուժի մեջ էին մտցրել Մոսկովյան պայմանագիրը: Ուստի Հայաստանի հողերի առուծախը տեղի էր ունեցել և արդեն հաստատվել անկախ Կարսի պայմանագրից, որը Մոսկվայի պայմանագրի ուժի մեջ մտցնելուց հետո զուտ ձևական էր, ավելորդ և խորհրդա-թուրքական անամոթ գործարքին օրինական գործողության տեսք հաղորդելու կեղծ նպատակն էր հետապնդում:

Կարսի պայմանագիրը ևս ապօրինի էր, թեև նրա տակ դրված էին խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների ստորագրությունները, թեկուզ և այն պատճառով, որ հաստատվել էր Ադրբեջանի և Վրաստանի կողմից, որոնցից Ադրբեջանը Թուրքիայի հետ միասին տարածքային ձեռքբերումներ ունեցան Հայաստանի հաշվին (Նախիջևանը, հետագայում Արցախը), իսկ Վրաստանը վերստացավ Բաթումը»[164]:

Հ. Հակոբյանի ուշադրությունից չի վրիպել այն փաստը, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով օրինականացված Արևելյան Հայաստանի հողերի բռնազավթումը Թուրքիայի կողմից միանգամայն հերքում է Մ. Քեմալ Աթաթուրքի արտաքին քաղաքականության բնույթի վերաբերյալ նրա եվրոպացի կենսագիրների, մասնավորապես՝ լորդ Պատրիկ Բալֆուր Քինրոսի այն տեսակետը, ըստ որի, Մ. Քեմալի արտաքին քաղաքականությունը հիմնված է եղել ոչ թե արտաքին նվաճումների, այլ սահմանների կրճատման վրա: «Արևմտյան Հայաստանը մնաց բռնազավթված և հայաթափված, և Թուրքիայի նոր բռնակալը բռնագաղթի ենթարկված արևմտահայության վերադարձը Հայրենիք համարում էր իսպառ բացառված և այս գիծը Լոզանում նրա անունից հետևո-

[164]Նույն տեղում, էջ 303–304:

ղականորեն առաջ տարավ Իսմեթ Ինենյուն: Ավելին, լորդ Քինրոսը խոստովանում է, որ Քեմալը դեմ էր հայոց պետականության ստեղծմանը»[165],– գրում է Հ. Հակոբյանը:

Այն, որ Մոսկվայի պայմանագրի 3-րդ և 15-րդ հոդվածները, անկախ իրենց քաղաքական նշանակությունից, անընդունելի էին XX դարասկզբի միջազգային իրավունքի տեսանկյունից, հաստատվում է պայմանագրի կնքման պահին ու դրան նախորդող ժամանակաշրջանում հայկական տարածքների հարցում Թուրքիայի ունեցած այնպիսի անմիջական շահագրգռվածությամբ, որը դուրս էր միջազգային հարաբերություններում բնական համարվող՝ ցանկացած ռազմական և այլ բնույթի բախումները կանխելու և դրանց խաղաղ լուծման ուղիները գտնելու պետությունների բնական շահագրգռվածության շրջանակներից: Բացի այդ, նաև որոշակի հակասություն է առկա Մոսկվայի պայմանագրի ներածությունում «ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին» Թուրքիայի ու Ռուսաստանի հավատարմության վերաբերյալ ձևակերպման ու պայմանագրի 3-րդ, 15-րդ հոդվածների և 1-ին, 2-րդ հավելվածների միջև: Ակնհայտ է, որ Թուրքիայի և Ռուսաստանի կողմից ամենակոպիտ կերպով խախտվում էր հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, իսկ Հայաստանի տարածքը բաժանվում էր հարևան պետությունների միջև:

Միջազգային իրավունքի մասնագետների գնահատմամբ, ժամանակակից պայմաններում պայմանագրային ամբողջ գործընթացն է ձեռք բերել քարոզչական նշանակություն[166]: Եվ Մոսկվայի պայմանագիրն արդի միջազգային պայմանագրային իրավունքում միակ փաստաթուղթը չէ, որը նաև հետապնդել է նման նպատակ:

---

[165]Նույն տեղում, էջ 304:

[166]Տե՛ս ***Лукашук И. И.*** Форма международных договоров / Учебно-практическое пособие. М., с. 19.

Սակայն պայմանագրի համապատասխան դրույթները երբևէ գործնական որևէ նշանակություն չեն ունեցել, քանի որ դրանք չեն համապատասխանել ու չեն համապատասխանում պայմանադիր պետությունների իրական քաղաքականությանը: Այսպես, Ռ. Ղազանչյանը, վկայակոչելով ռուսական արտաքին քաղաքականության դիվանագիտական վավերագրերը, նշում է, որ դեռևս 1921 թ. մարտին, երբ ընթանում էին ռուս-թուրքական բանակցությունները, խորհրդային կառավարությունում, հայկական տարածքները Թուրքիային զիջելով հանդերձ, չէին բացառում ռուսական զորքերի հարձակման հնարավորությունն ինչպես Կարսի, այնպես էլ Օլթիի և Էրզրումի ուղղությամբ[167]:

Հարկ է նկատել, որ հայաստանյան պատմագիտության մեջ առավել մեծ ուշադրություն է հատկացվել Մոսկվայի, քան Կարսի պայմանագրին՝ ելնելով միջազգային իրավունքի սկզբունքից, որ, «… եթե պայմանագրում սահմանված է, որ այն պայմանավորված է նախորդ կամ հաջորդ պայմանագրով, կամ, որ այն չպետք է անհամատեղելի համարվի այդպիսի պայմանագրի հետ, ապա գերադաս ուժ ունեն այդ մյուս պայմանագրի դրույթները»[168]:

Պաշտպանելով Կարսի պայմանագիրն անվավեր ճանաչելու հայ պատմաբանների պահանջը՝ Ստ. Պողոսյանն ու Կ. Պողոսյանը նշում են դրա հիմքում առկա երեք հանգամանք: Նախ, որ Հայաստանի ու Թուրքիայի միջև երկաթուղով, հեռագրով և այլ միջոցներով անընդհատ հաղորդակցություն, ինչպես նաև մարդկանց ու բեռների՝ առանց որևէ ձգձգման անխափան փոխադրում

---

[167] ***Казанджян Р.*** К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921 г., с. 109.

[168] Действующее международное право / В 3-х томах / Учебное пособие для студентов и аспирантов, изучающих международное право / Составители: Ю. М. Колосов, Э. С. Кривчикова, т. 1. М., 1996, с. 352.

ապահովելու վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի 9-րդ և Կարսի պայմանագրի 13-րդ հոդվածները էապես խախտվել ու խախտվում են Թուրքիայի կողմից: Այնուհետև, ԽՍՀՄ-ն այլևս գոյություն չունի և Խորհրդային Հայաստանն էլ Կարսի պայմանագիրը ստորագրել է Մոսկվայի հարկադրանքով: Սա հիմք է կիրառելու Վիեննայի կոնվենցիայի 62-րդ հոդվածը նախկինում կնքված պայմանագիրն առկախելու կամ ընդհատելու վերաբերյալ, քանի որ տեղի է ունեցել «հանգամանքների արմատական փոփոխություն»: Հեղինակները նշում են, որ պահանջի տեսանկյունից կիրառելի են նաև նույն կոնվենցիայի 51-րդ ու 60-րդ հոդվածները: Դրանց համաձայն, պայմանագիրն անվավեր է համարվում, եթե այն կնքվել է ստիպողաբար կամ եթե պայմանավորվող կողմերից որևէ մեկը խուսափել է կատարել պայմանագրով սահմանված և էական նշանակություն ունեցող որոշ պարտավորություններ: Մոսկվայի և Կարսի պայմանագրերի խախտում է համարվում Թուրքիայի ու Ադրբեջանի միջև 1994 թ. կնքված բարեկամության և համագործակցության ուխտը[169]: Միջազգային իրավական նման ծանրակշիռ հիմքերի առկայության պայմաններում անգամ Ստ. Պողոսյանն ու Կ. Պողոսյանը անհնար են համարում Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը չեղյալ հայտարարելը, դադարեցնելը կամ վերանայելը. «Այն, որ Հայաստանը հարկադրված է եղել պայմանագիրը ստորագրել, նույնիսկ ձեւական առումով անհնար է ապացուցել, որովհետեւ Կարսում Հայաստանի պատվիրակությանը, բացի Անին Հայաստանին տալուց, ուրիշ որեւէ էական առաջարկությամբ հանդես չի եկել:

---

[169]Տե՛ս ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, էջ 447–449:

… Ինչ վերաբերում է խնդրի ոչ թե իրավական, այլ գործնական կողմին, ապա չեղյալ հայտարարելն առավել եւս իրագործելի չէ այն պարզ պատճառով, որ մեր օրերում Թուրքիան հզոր է, իսկ Հայաստանը՝ թույլ եւ ինքնախաբեություն է հույսը ՄԱԿ-ի կամ ԵԱՀԽ-ի վրա դնելը:

Հարցի բարձրացումը չի նպաստելու նաեւ հայ-թուրքական երկխոսություն սկսելուն, որովհետեւ անկախ մեր կամքից այն ոչ միայն չի օգնելու, այլ խանգարելու է երկխոսության համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը»[170],– նկատում են պատմաբանները:

Այս տեսակետը համոզիչ է նախևառաջ այն պատճառով, որ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերում Հայաստանին վերաբերող տարածքային-սահմանային դրույթների հիմքում, ըստ էության, դրված է Ալեքսանդրապոլի թուրք-հայկական հաշտության պայմանագիրը, որով, քեմալական կառավարությունն արդեն ամրագրել էր պատերազմի իրավունքով նվաճված Արևմտյան Հայաստանի, Սուրմալուի գավառի և Կարսի մարզի անցումը Թուրքիային:

Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը 1921 թ. Մոսկվայի պայմանագրի առնչությամբ նաև քննադատում են Հայաստանի առաջին հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականությունը ղեկավարած ՀՅԴ գործունեությունը: Նշում են, որ «… Մոսկվայում էական դեր խաղացին թե Ալեքսանդրապոլի պայմանագիրը եւ թե փետրվարի 18-ը (նկատի ունեն 1921 թ. փետրվարյան ապստամբությունը – Լ. Հ.), որոնք երկուսն էլ խարան են դաշնակցության ճակատին եւ արտահայտություն այդ կուսակցության կողմից ազգային ֆրազեոլոգիայի ցուցափեղկի տակ իրականացվող անլուրջ, պատեհապաշտ, անպատասխանատու քաղաքականության: Դաշ-

[170]Նույն տեղում, էջ 449:

նակցության ջոջերը իրենց «արտաքին քաղաքական փայլի տակ» քողարկում էին ամենավտանգավոր սիրողականություն ու արկածախնդրություն, որի իմաստն էր՝ ոչ թե կուսակցությունը հայրենիքի, այլ հայրենիքը կուսակցության համար»[171]:

Ա. Մարուքյանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերը հանգամանորեն վերլուծել է միջազգային ու ներպետական իրավական ակտերի խախտման տեսանկյունից: Նա հիմնավորում է, որ, Թուրքիայի տարածք ճանաչելով Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, հակառակ այդ պահին միջազգային իրավունքի անբաժան մասը կազմող պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով ուժի կիրառումը բացառելու և պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը չխախտելու վերաբերյալ նորմերի և սկզբունքների, նաև հակառակ իր հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքի, ճանաչել ու վավերացրել է 1920 թ. Հայաստանի դեմ քեմալական Թուրքիայի նվաճողական պատերազմի արդյունքները՝ թուրքական զավթումները: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է պաշտպանել իր և ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքներն այն հնարավորություններով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը: Մանավանդ, որ մեր հարևան պետությունները վաղուց այդ իրավունքը խեղաթյուրված ձևով օգտագործում են մեր դեմ[172]:

Անդրադառնալով խնդրո առարկա պայմանագրերը ստորագրած կողմերի իրավական կարգավիճակին՝ Ա. Պապյանն էլ նշում է, որ 1921 թ. Մոսկվայի պայմանագրի կնքման պահին

---

[171]Նույն տեղում, էջ 423:

[172]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 124–125, 127–128 137:

ՌՍԴԽՀ-ն միջազգայնորեն ճանաչված չէր աշխարհի որևէ պետության՝ օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից (առաջինը Մեծ Բրիտանիան է, որը 1924 թ. փետրվարի 1-ին ճանաչել է ՌՍՖՍՀ իրավահաջորդ ԽՍՀՄ-ին): Ճանաչված չէր նաև Թուրքիայի քեմալական կառավարությունը: Բացի այն, որ վերջինս միջազգային պայմանագրերը կնքում էր ոչ թե իր, այլ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) անունից, նրան վերագրելով անօրինական իրավասություն, կառավարության ղեկավար Մ. Քեմալն էլ երկրի օրինական իշխանության՝ սուլթան-խալիֆի դեմ ապստամբած և Մուդրոսի զինադադարը ոտնահարող, փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր, որը կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի 1920 թ. ապրիլի 11-ի հրամանով մահվան էր դատապարտվել[173]: Ա. Պապյանի գնահատմամբ, միջազգային իրավունքի խախտում է նաև Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը, քանի որ վերջինս չի մասնակցել դրա ստորագրմանը: Հետևաբար, Մոսկվայի պայմանագիրը, ըստ միջազգային իրավունքի, որևէ պարտավորություն կամ իրավունք չի ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար առանց նրա համաձայնության: Որպես այդպիսին, այն անօրինական է ու անվավեր[174]:

Ըստ Ա. Պապյանի, Կարսի պայմանագիրը նույնպես անօրինական ու անվավեր է, քանի որ պայմանադիր պետություններից Խորհրդային Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր և

---

[173]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 25–26, նաև՝ ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 216–217:

[174]Տե՛ս ***Պապյան Ա.*** Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921) փորձաքննությունը՝ ըստ միջազգային իրավունքի // Հայրենատիրություն, էջ 39:

այդպիսինը չեղավ իր գոյության 70 տարիների ընթացքում: Խորհրդային Հայաստանի անունից Կարսի պայմանագիրը ստորագրած Հայաստանի հեղափոխական կոմիտեն (Հայհեղկոմ, ՀՀԿ) «ակնհայտորեն օտարերկրյա, այն էլ անօրինական վարչախմբի դրածո վարչախումբ էր», որի իշխանությունը խարսխված էր «երկիրը բռնազավթած օտարերկրյա բանակի քաղաքական ղեկավարության կամքի վրա և իրականացվում էր պարտադրանքի տակ»[175]: Որպես ասվածի վկայություն, Ա. Պապյանն իրավացիորեն մատնանշում է Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը: Նաև շեշտում է, որ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի սովետական սոցիալիստական հանրապետությունները, որպես Կարսի պայմանագրի կողմ, չեն վավերացրել այն: Ի պատասխան 1922 թ. մարտի 16-ին՝ Մոսկվայի պայմանագրի առաջին տարեդարձի օրը, Կարսի պայմանագիրը ԹԱՄԺ-ի և Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից վավերացվելու, իսկ սեպտեմբերի 11-ին Երևանում պայմանագրի վավերաթղթերի փոխանակման վերաբերյալ որոշ ուսումնասիրողների արտահայտած տեսակետին՝ Ա. Պապյանը նշում է, որ Կարսի պայմանագրի, այսպես կոչված, վավերացման պահին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ՍՍՀ-ները դադարել էին գոյություն ունենալ, քանի որ դրանից 4 օր առաջ՝ մարտի 12-ին, ձևավորել էին վարչաքաղաքական նոր միավոր՝ Անդրկովկասի ՍՍՀ-ների Ֆեդերատիվ Միությունը՝ Անդրֆեդերացիան, որը Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության հետ հարաբերությունները հաստատել էր միութենական պայմանագրի հիման վրա: «Ըստ այդմ, այս վավերացումը երբեք չի կարող դիտարկվել

---

175 ***Պապյան Ա.*** Կարսի պայմանագիրն ու Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության իրավական կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի // Հայրենատիրություն, էջ 74–75:

օրինական, հետևաբար իրավական հետևանք ստեղծող, քանի որ ռուսաստանյան այդ կառույցը ոչ ներքին, ոչ միջազգային օրենքի տեսանկյունից նման լիազորություն չուներ և չէր կարող ունենալ: Չի կարող մի երկրի կառույց վավերացնել մեկ այլ երկրի կամ երկրների ստորագրած պայմանագիրը»[176],– շեշտում է հետազոտողը՝ հավելելով, որ խորհրդային ռազմակալումից մինչև ԽՍՀՄ-ի կազմավորումը Հարավային Կովկասի երկրները, գոնե ձևականորեն, անկախ էին: Այդ տեսակետն ամրապնդում է Ա. Հակոբյանը՝ շեշտելով, որ 1921 թ. մարտին Հայաստանն անկախ էր[177]:

Ավելին, Է. Զոհրաբյանը և Ա. Հակոբյանը գրում են, որ խորհրդային կողմը որոշել էր Կարսի պայմանագիրը վավերացնել Անդրֆեդերացիայի խորհրդի նիստում, սակայն թուրքական կողմի պնդմամբ որոշվեց, որ պայմանադիր հանրապետությունները առանձին-առանձին վավերացնեն պայմանագիրը: Թուրքերին առավելապես հետաքրքրում էր պայմանագրի վավերացումը հատկապես Հայաստանի կողմից՝ այն հաշվով, որ կայանալիք Լոզանի միջազգային խորհրդաժողովում Հայկական հարցի քննարկման ժամանակ թուրքական պատվիրակությունը կարողանար հղում կատարել Հայաստանի կողմից վավերացված Կարսի պայմանագրի վրա: Թուրքիայի այս ցանկություն-պահանջը ևս կատարվեց. անդրկովկասյան հանրապետություններն առանձին-առանձին վավերացրեցին Կարսի պայմանագիրը[178]: Հղում կատարելով արխիվային վավերագրերի վրա՝ Ա. Հակոբ-

---

[176] ***Պապյան Ա.*** Կարսի պայմանագրի (չ)վավերացման և հարակից հարցերի շուրջ // Հայրենատիրություն, էջ 282:

[177] Տե՛ս ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 211–213:

[178] Տե՛ս նույն տեղում, էջ 313, ***Զոհրաբյան Է. Ա.*** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920–1922 թթ.), էջ 301–302:

յանը փաստում է. 1922 թ. մարտի 20-ին ՀՍԽՀ կենտգործկոմն իր արտահերթ նստաշրջանում միաձայն որոշել է «ընդունել, հաստատել և վավերացնել սույն պայմանագիրն իր ամբողջ բովանդակությամբ»[179]: Այս իրողությունը հերքում է Կարսի պայմանագրի վավերացումը խնդրահարույց համարելու Ա. Պապյանի տեսակետը:

Հայեցակարգային նշանակություն ունի Ա. Պապյանի դիրքորոշումը Հայաստանի երկրորդ և երրորդ հանրապետությունների միջև իրավական կապի հարցում: Ի տարբերություն Ա. Մարուքյանի[180], նա պնդում է, որ Հայաստանի երրորդ հանրապետությունը չի կարող լինել ՀՍԽՀ իրավահաջորդը, քանի որ վերջինս չի եղել ինքնիշխան պետություն: Այդ պատճառով էլ ՀՀ-ն չի կարող լինել ՀՍԽՀ իրավահաջորդը նաև պայմանագրերի, մասնավորապես՝ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի հարցում: Նրա համոզմամբ, ներկայիս ՀՀ-ն Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդն է, որի հողային իրավունքները խարսխված են Վ. Վիլսոնի իրավարար վճռի վրա[181]:

Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը դիվանագիտական քննարկումների օրակարգ բերվեցին 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հան-

---

[179]ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, մաս 2, թ. 464, ֆ. 1440, ց. 1, գ. 34, թ. 10, ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 313:

[180]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 42–46:

[181]Տե՛ս ***Պապյան Ա.*** Պետությունների և պայմանագրերի նկատմամբ իրավահաջորդության հարցը // Հայրենատիրություն, էջ 262–269, ***նույնի՝*** Հայաստանի հանրապետությունների իրավահաջորդության հարցը միջազգային իրավունքի տեսանկյունից, նույն տեղում, էջ 442–445:

ռապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների ստորագրման և վավերացման փուլերում պաշտոնական Անկարայի կողմից հնչեցված ու Հայաստանի անվտանգության և Հայոց արդար պահանջատիրության դեմ ուղղված նախապայմանների առնչությամբ: Հայ հասարակական-քաղաքական շրջանակների ուշադրությունը դրանց վրա բևեռելու ուղղությամբ ակնառու է Ա. Մելքոնյանի գործունեությունը: Հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ իր հեղինակավոր կարծիքը, որը նա բազմիցս հայտնել էր մամուլի ասուլիսներում և հոդվածներում, մեկ անգամ ևս հնչեցրեց 2009 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ Ազգային ժողովում՝ այդ հարցի առնչությամբ կազմակերպված լսումների ժամանակ ունեցած ելույթում: Ա. Մելքոնյանը ունկնդիրների ուշադրությունը հրավիրեց թուրքական կողմի վտանգավոր այն դրույթների վրա, որոնք, ըստ էության, Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացված նախապայմաններ էին՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար: Մասնավորապես, Անկարայի պնդմամբ, կողմերը պետք է ճանաչեին միմյանց միջև գոյություն ունեցող սահմանը: Ա. Մելքոնյանը նշեց, որ դրանով իսկ «թուրքերն իրենք փաստում են, որ Հայաստանի ու Թուրքիայի միջև գոյություն ունի միայն փաստական, այլ ոչ թե իրավականորեն ճանաչված սահման: Այսինքն՝ այն de jure սահման չէ, քանի որ Կարսի պայմանագիրն անօրինական փաստաթուղթ է, իրավական ուժ չունի և կնքվել է 1921 թ. միջազգային հանրության կողմից չճանաչված երկու կողմերի՝ Խորհրդային Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև»[182]: «… Մեզ ցե-

[182] ***Մելքոնյան Ա.*** ՀՀ Ազգային ժողովում ՀՀ ԳԱԱ պատմության ինստի-

ղասպանել են հայրենիքից զրկելու համար … Եվ թուրքերը հասել են իրենց նպատակին՝ մեզ ցեղասպանելով, տեր են դարձել մեր հայրենիքին: Նշանակում է՝ այս արձանագրություններով նրանք ուզում են մեր հայրենազրկմանը տալ իրավական ձևակերպում՝ սահմանը դե յուրե ճանաչել տալով»[183],– նշեց պատմաբանը՝ հենց այդ հանգամանքով բացատրելով ներկայիս Թուրքիայի ջանադրությունը՝ հասնելու արդեն 1992 թ. մարտի 2-ից ՄԱԿ-ի անդամ, այսինքն՝ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության կողմից այդ սահմանի ճանաչմանը, նրա վերածմանը de facto-ից de jure-ի[184]:

Ա. Մելքոնյանը խորհրդարանական այս լսումների մասնակիցների ուշադրությունը հրավիրեց մեկ այլ դրույթի վրա, ըստ որի, «… կողմերը ձեռնպահ են մնում բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց»: Այս ձևակերպումը համեմատելով 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի 5-րդ ու 10-րդ հոդվածների և վերջինիս հավելվածի հետ, ըստ որի, Առաջին հանրապետության կառավարությունը պարտավորվում էր իր տարածքում թույլ չտալ հակաթուրքական, ավազակային-բանդիտական խմբերի գործունեությունը, պատմաբանը նկատեց. «Արձանագրություններում առկա այդ կետից բխում է, որ, օրինակ՝ ես շուրջ 25 տարի Արևմտյան Հայաստանի պատմության հարցերով զբաղվող մասնագետս, եթե վաղը մի գիտաժողով եմ կազմակերպել, օրինակ՝ Վանին նվիր-

---

տուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ելույթը հայ–թուրքական արձանագրությունների կապակցությամբ (2009 թ. հոկտեմբերի 1) // Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), էջ 274–275:

[183]Նույն տեղում, էջ 276:

[184]Տե՛ս նույն տեղում, էջ 275:

ված, թուրքերը, ըստ այս արձանագրությունների՝ կարող են պնդել, որ հայերը թշնամական գործողություն են կատարել Թուրքիայի նկատմամբ: Կամ ամեն վայրկյան մեզ կարող են մեղադրել, թե՝ ձեր տարածքից Քրդական բանվորական կուսակցությունը հակա-թուրքական գործողություն է կատարել և դրա հիման վրա իրենք իրավունք ունեն մեզ մեղադրել արձանագրությունների այդ կետը խախտելու մեջ և նորից կարող են փակել նոր բացված սահմանը … Դա կնշանակի, որ արձանագրություններով մենք Ախուրյան-Արաքսի երկայնքով ձգվող փշալարը ճանաչում ենք հայ-թուրքա-կան սահման և փաստորեն պաշտոնապես հրաժարվում Արևմտ-յան Հայաստանից՝ դիմացը ոչինչ չստանալով: Իսկ թուրքերն իրենց ձեռքին կունենան դե յուրե ճանաչված հայ-թուրքական պե-տական սահման: Չեմ կասկածում, որ միայն տարիներ անց այս արձանագրությունների համար նույնքան կզղջանք ու կմղկտանք, որքան մոտ 90 տարի առաջ կնքված չարաբաստիկ Կարսի պայ-մանագրի համար»[185]:

Ա. Պապյանը ևս իր աշխատանքներում հիմնավորում է, որ Ախուրյան ու Արաքս գետերով անցնող խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը բաժանարար գիծ է: Այն չունի հայ-թուրքական պետական սահմանի կարգավիճակ, քանի որ չկա դրա վերաբերյալ օրինականորեն ուժի մեջ մտած և գործող միջազգային որևէ պայմանագիր: Նա շեշտում է, որ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև գոյու-թյուն ունեցող միակ de jure սահմանը վիլսոնյանն է, իսկ Ալեք-սանդրապոլի, Մոսկվայի և Կարսի անօրինական պայմանագրերը չեն կարող օրինական սահմանի հիմք լինել: Հետազոտողը նկա-տում է, որ եթե ռուս-թուրքական նոր մերձեցման դեպքում նախ-

[185]Նույն տեղում, էջ 277–278:

կին ԽՍՀՄ սահմանի հայաստանյան հատվածը «հաստատվի» որպես հայ-թուրքական սահման, ապա իրավական տեսանկյունից դա կնշանակի սահմանի փոփոխություն, քանի որ դեռևս 1920 թ. Վ. Վիլսոնի կողմից գծված Հայաստանի և Թուրքիայի միջև de jure սահմանը էապես տարբերվում է խորհրդա-թուրքական սահմանից[186]: Հավելենք, որ աշխարհաքաղաքական ներկա իրողությունների պայմաններում ԱՄՆ-ը, ելնելով իր աշխարհաքաղաքական շահերից, չի կարող թույլ տալ ռուս-թուրքական նոր մերձեցում: Այդ տեսանկյունից նրա համար հարմար խաղաքարտ է Վ. Վիլսոնի իրավարար վճիռն իրագործելու հեռանկարը, որը սպառնալիք է Թուրքիային, իսկ Ռուսաստանի համար հնարավորություն՝ ազատվելու Կարսի պայմանագրից, ամրապնդելու իր տնտեսական ու ռազմաքաղաքական դիրքերը վիլսոնյան Հայաստանի տարածքում, որպես ՀՀ ռազմավարական դաշնակից, Հայաստանում ռազմաբազա ունեցող և հայկական պետության անվտանգությունը երաշխավորող պետություն:

Ժամանակը, իրոք, ապացուցեց, թե որքան իրավացի են մեր պատմաբանները, որոնք անցյալից քաղած դառը դասերը վկայակոչում են իբրև նախազգուշացում: Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան կրկին վերադարձավ նախապայմանների լեզվին, որը ոչ միայն կապ չուներ արձանագրությունների տառի ու ոգու հետ, այլև հակասում էր դրանց: Թուրքիան արձանագրությունների վավերացումը պայմանավորեց

---

[186]Տե՛ս ***Պապյան Ա.*** Կրկին Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման և Կարսի պայմանագրի հետևանքների հնարավոր ճանաչման մասին // Հայրենատիրություն, էջ 119–120, ***նույնի՝*** Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և «ընդհանուր սահմանը որոշող համապատասխան պայմանագրերի» մասին, նույն տեղում, էջ 143, ***նույնի՝*** Հայաստանն ու Թուրքիան իրավասու չեն «հաստատելու» սահմանը, նույն տեղում, էջ 177:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ադրբեջանական կողմի ծավալապաշտական և անհիմն մոտեցումներին համապատասխան կարգավորմամբ, բացահայտ ողջունեց Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սադրիչ հայտարարություններն ու գործողությունները, ինչի հետևանքով ներկայումս ձախողված են հայ-թուրքական հարաբերությունների հաստատման, Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման գործընթացները:

Այն, որ Թուրքիան պատրաստ չէր հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանը, և որ թուրքական կողմի բարձրագոչ հայտարարությունները, այսպես կոչված, պատմական հաշտեցման պատրաստակամության մասին կապ չունեին իրականության հետ, մեկ անգամ ևս փաստվեց, երբ Անկարան մերժեց 2015 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին մասնակցելու ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հրավերը:

Թուրքիան այդպես էլ որևէ քայլ չկատարեց հայ-թուրքական արձանագրությունները վավերացնելու ուղղությամբ, ընդհակառակը, շարունակում էր փոխկապակցել սկսված գործընթացն իր նախապայմաններով, սադրիչ հայտարարություններ էր հնչեցնում Հայաստանի ու հայ ժողովրդի հասցեին: Պատահական չէ, որ 2018 թ. փետրվարի 17-ին գլոբալ անվտանգության հարցերին նվիրված մյունխենյան 54-րդ միջազգային համաժողովի շրջանակներում կայացած «Նե՞րս, թե՞ դուրս. Ռուսաստանի և Եվրոպայի միջև ընկած երկրները» խորագրով քննարկման ընթացքում ունեցած իր ելույթում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, անդրադառնալով հայ-թուրքական արձանագրությունների առնչությամբ Թուրքիայի դիրքորոշմանը, ասաց. «Սառը պատերազմի տարիներին Հայաստանը երկու հակադիր բեւեռներից մեկի սահմանին էր: Բեռլինի պատի անկումից շուրջ երեսուն տարի անց Թուրքիան շարունա-

կում է փակ պահել Հայաստանի հետ սահմանը: Ժամանակն այստեղ կարծես կանգ է առել:

Կարող եմ վստահությամբ ասել, որ Հայաստանն ամեն ինչ արել է այս իրավիճակը հաղթահարելու համար: Իմ նախաձեռնությամբ սկիզբ առած Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները կանոնակարգելու գործընթացը կարող էր նոր հնարավորություններ ստեղծել ինչպես մեր երկու երկրների, այնպես էլ ողջ տարածաշրջանի համար: Այնուամենայնիվ, 2009 թ. Հայաստանի ու Թուրքիայի միջեւ կնքված արձանագրություններն այդպես էլ մնացին թղթի վրա: Թուրքիան ոչ միայն չվավերացրեց դրանք, այլեւ առաջադրեց արձանագրությունների հետ որեւէ կապ չունեցող նախապայմաններ: Դա ոչ այլ ինչ էր, քան պատմական հնարավորության տապալում»[187]:

Կարևոր էր նաև նախագահի խոսքի եզրափակիչ մասը. «Մենք չենք կարող առհավետ սպասել Թուրքիայի պատասխան քայլերին:

Արձանագրությունները բանակցվել էին՝ ելնելով եղած պայմաններից: Եթե Թուրքիան ցանկանում է սպասել այլ պայմանների, ապա վավերացնել արձանագրությունները, նա չարաչար սխալվում է:

Նոր պայմաններում պետք է բանակցվի նոր փաստաթուղթ: Հայաստանը նախապայմանների լեզվով չի խոսում, բայց չի էլ ընդունի որեւէ մեկի կողմից նախապայմանների առաջադրումը»[188]:

Հայաստանի Հանրապետության նախագահի խոսքին անմիջապես հաջորդեց գործը: 2018 թ. մարտի 1-ին Ս. Սարգսյանը

---

[187] ***«Հայաստանի Հանրապետություն»***, Երևան, 20.II.2018, էջ 3:

[188]Նույն տեղում:

ստորագրեց հրամանագիր «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին, որով հայ-թուրքական արձանագրությունները պաշտոնապես հայտարարվեցին առ ոչինչ[189]:

Դեպքերի հետագա ընթացքը ապացուցեց Թուրքիայի և Ադրբեջանի բարի կամքի հետ որևէ հույս կապելու անհնարինությունը: Թուրքիան այլևս չի թաքցնում, որ իր գերնպատակը Օսմանյան կայսրության վերականգնումն է, միատարր համաթուրքական պետության ստեղծումը: Ավելին, «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի ներքո Թուրքիան 2020 թ. սեպտեմբերի 27-ից ներքաշել է Ադրբեջանը պատերազմի մեջ Արցախի Հանրապետության դեմ՝ հայկական զինված ուժերի ու խաղաղ բնակչության դեմ կիրառելով թե՛ գերժամանակակից ու արգելված զինատեսակներ, թե՛ միջազգային ահաբեկչական խմբավորումների մեծաքանակ ուժեր: Թուրքիայի և Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարները պատերազմը վարում են Արցախն ու Հայաստանը նվաճելու, հայ ժողովրդին բնաջնջելու անթաքույց մտադրությամբ:

Հայ ժողովուրդն այս պատերազմում դատապարտված է հաղթելու. այլընտրանք չկա: Դրա ավարտից հետո կրկին օրակարգ են բերվելու հայկական տարածքների հարցերը և, գուցե քննարկման առարկա դառնա նաև հայ-թուրքական սահմանի վերանայման հարցը:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը վերանայելու նպատակով սկսված Տրապիզոնի, ապա Բաթումի հաշտության բանակցու-

---

[189]Տե՛ս նույն տեղում, 2.III.2018, էջ 3:

թյունների պատմական դասը հուշում է, որ դիվանագիտական հարթությունում Մոսկվայի պայմանագիրը վերանայելու դեպքում Թուրքիան ձգտելու է առնվազն կյանքի կոչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, իսկ խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու հնարավորության դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունից նվաճել նոր տարածք: Թուրքիայի հավակնությունները նկատի ունենալով՝ Ա. Հակոբյանը, Ա. Պապյանը և Ա. Մարուքյանը շեշտում են Ալեքսանդրապոլի պայմանագրի անօրինական և անվավեր լինելու իրողությունը[190]: Մասնավորապես՝ Ա. Պապյանը փաստում է, որ պայմանագիրը ստորագրած «պատվիրակություններից և ոչ մեկը լիազորված չէր հանդես գալու իր երկրի անունից. հայկական պատվիրակությունն արդեն չէր ներկայացնում երկրի իշխանությունը, իսկ թուրքական (քեմալական) պատվիրակությունը դեռևս չէր ներկայացնում երկրի իշխանությունը»[191]: Բացի այդ, պայմանագիրը ստորագրվել է «միջազգային իրավունքի սկզբունքները ոտնահարող ուժի կիրառման բացահայտ սպառնալիքով» ու չի վավերացվել[192]: Ուշագրավ է Ա. Հակոբյանի մատնանշած հետևյալ նուրբ հանգամանքը. 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարության հրաժարականով նրա իրա-

---

[190]Տե՛ս ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 66, 96–97, ***Պապյան Ա.*** Փոքր, բայց կարևոր ճշտում կամ ե՞րբ է ստորագրվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը // Հայրենատիրություն, էջ 368, ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 121:

[191]***Պապյան Ա.*** Փոքր, բայց կարևոր ճշտում կամ ե՞րբ է ստորագրվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, էջ 368:

[192]***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 24, ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 97:

վասությունները ժամանակավորապես անցել էին արդեն նախկին ռազմական նախարար Դրաստամատ Կանայանի (Դրո) ձեռքը, մինչև որ Հայհեղկոմ-ը՝ իբրև նոր կառավարություն, կժամաներ Երևան: Դ. Կանայանի ժամանակավոր կառավարությունը, որը գործեց մինչև դեկտեմբերի 4-ը, և իրականացնում էր իրավահաջորդի գործառույթ, կապի մեջ է եղել նախկին վարչապետ, Ալեքսանդրապոլում թուրքերի հետ հաշտության բանակցություններ վարող ՀՀ պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանի հետ ու չի առարկել, որ պայմանագիրը ստորագրվի: Կնշանակի՝ Ալ. Խատիսյանը, այդուհանդերձ, որոշ լիազորություն ուներ[193]:

Հայկական հարցի պատմության մեջ բախտորոշ դեր կատարած 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերին հայաստանյան պատմաբանների կողմից տրված գնահատականները հանգեցնում են այն եզրակացության, որ տարածքային կորուստների առումով Մոսկվայի պայմանագիրն ավելի ծանր էր, քան անգամ Բրեստ-Լիտովսկինը: Այդ պայմանագիրը նաև արագացրեց Սևրի պայմանագրում Հայկական հարցին վերաբերող հոդվածների վերանայումը Գլխավոր դաշնակից տերությունների կողմից 1921 թ. Լոնդոնի և Լոզանի բանակցություններում:

---

[193]Տե՛ս ***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 96:

2. 1921–1923 թթ. Լոնդոնի և Լոզանի դիվանագիտական բանակցություններում ու պայմանագրերում Հայկական հարցի լուսաբանումը

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանական, Ավստրո-հունգարական, Ռուսական և Օսմանյան կայսրությունների քայքայումը, Քառյակ միության պետությունների պարտությունը, ինչպես նաև Գերմանիայի հետ Դաշնակից պետությունների 1919 թ. հունիսի 28-ի Վերսալի հաշտության պայմանագրից դժգոհ ԱՄՆ-ի հեռացումը Եվրոպայից և անցումը «մեկուսացման» արտաքին քաղաքականության փոփոխություն էին առաջացրել հաղթած երկրների ռազմաքաղաքական ուժերի հարաբերակցության մեջ: Մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան ձեռք էր բերել մենաշնորհային վիճակ իր երկրաքաղաքական շահերն անխափան պաշտպանելու իմաստով: Միևնույն ժամանակ այդ հանգամանքը Լոնդոնի կառավարությանը կանգնեցրել էր համաշխարհային աննախընթաց պարտավորությունների առջև, որոնց թվում էր՝ թուրքական տիրապետությունը թոթափելու ու սեփական Հայրենիքում ազատ ապրելու հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությունը: Իր բոլոր անորոշություններով ու թերություններով հանդերձ, Սևրի պայմանագիրը միջազգային իրավական հիմք էր բռնագաղթված հայությանը Հայրենիք վերադարձնելու, պատմական Հայաստանի տարածքում հայ ժողովրդի ազատ և անկախ ապրելու իրավունքն իրագործելու համար[194]: Սակայն կար մի հանգամանք, որը Դաշնակիցները չէին կարող անտեսել ապագա հայկական վարչական միավորի միջազգային իրավական կարգավիճա-

[194]Այս մասին հանգամանորեն տե՛ս ***Հովհաննիսյան Լ.*** Հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության հարցը Սևրի պայմանագրում, էջ 173–190:

կի, նրա տարածքային իրավունքների և վերջնական սահմանների վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Դաշնակից տերությունները, հատկապես Մեծ Բրիտանիան, երկյուղում էին բոլշևիզմի վտանգի ներթափանցումից Արևմտյան Հայաստան, որտեղից բացվում էր ճանապարհ դեպի Մերձավոր ու Միջին Արևելքի նավթառատ երկրներ: Բոլշևիզմի տարածման վտանգը կանխելու նպատակով նրանք մտադիր էին օգտագործել թուրքական ազգայնականության գործոնը, ինչը նշանակում էր ստրատեգիական կարևոր դիրք ու նշանակություն ունեցող Արևմտյան Հայաստանին վերաբերող հարցերում ձեռնպահ մնալ վերջնական որոշումներից, պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում վերականգնելու թուրքական իշխանությունը հայկական տարածքներում[195]: Հան-

[195]Սա անգլիական արտաքին քաղաքականության դիվանագիտական նոր կուրսն էր, որի իրականացմանն ուղղված պաշտոնական առաջին քայլը եղել էր Մուդրոսի զինադադարի ստորագրումը 1918 թ. հոկտեմբերի 30-ին: Զինադադարի 11-րդ հոդվածի համաձայն, Օսմանյան կայսրությունն իր զորքերից «մաքրում էր» Անդրկովկասում օկուպացրած տարածքները: Դրանով իսկ Հայաստանը, որպես Ռուսական կայսրության իրավահաջորդը տարածաշրջանում, վերականգնում էր իր նախապատերազմյան սահմանները, ներառյալ Կարսի մարզը: Սակայն Հայաստանի հիմնական մասը հանդիսացող Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները չօկուպացվեցին դաշնակցային զորքերի կողմից, թեև դրա համար ավելի մեծ բարոյական և իրավական հիմքեր կային, քան Օսմանյան կայսրության մյուս ասիական տարածքների օկուպացման համար: Ավելին, զինադադարի 24-րդ հոդվածի համաձայն, հայկական վիլայեթներում, մինչև դրանց կարգավիճակի վերջնական որոշումը հաշտության միջազգային վեհաժողովում, կարգուկանոնի ապահովման պատասխանատվությունը դրվում էր թուրքական զորքի վրա: Դաշնակցային զորքերի կողմից հայկական վիլայեթների օկուպացում նախատեսվում էր միայն դրանցում «անկարգությունների դեպքում»: Թուրքական զորքը մնաց Արևմտյան Հայաստանում, որպես ոստիկանական ուժ, որը պիտի կանխեր Հայկական հարցի լուծումը «Թուրքահայաստանի մասին» խորհրդային դեկրետի հիման վրա: Փաս-

գամանք, որն էլ դարձավ Սևրի պայմանագրով հայ ժողովրդին և հայկական պետությանը վերաբերող հոդվածների իրագործումը ձախողելու հիմնական պատճառը:

Թուրքիայում իշխանության եկած քեմալականները ոչ միայն չճանաչեցին Սևրի պայմանագիրը և տարածքային որևէ զիջում չկատարեցին Հայաստանին, այլև 1920 թ. սեպտեմբերի վերջին ռազմական գործողություններ սկսեցին ՀՀ դեմ: Թուրք-հայկական պատերազմի ընթացքում, անտեսելով հրապարակման պահից ուժի մեջ մտած Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, թշնամու զորքերը զավթեցին Արևելյան Հայաստանի մեծ մասը: Այս առիթով հատկանշական է ՀՀ պաշտոնական պատվիրակության տեղեկատվության բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 15-ով թվագրված փաստաթուղթը, որում, որպես ՀՀ անկման երեք գլխավոր պատճառներ մատնանշված էին՝ Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից այն չվավերացնելը, ՀՀ միջազգային աննպաստ իրադրությունը, նրա սահմանների անորոշությունը, ինչպես նաև Դաշնակիցների կողմից Հայաստանի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական ու նյութական օգնության չտրամադրումը[196]:

Այս ժամանակահատվածում Հայկական հարցում վճռորոշ նշանակություն ուներ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը, որը բխում էր այդ պետության մերձավորարևելյան շահե-

---

տորեն, Արևմտյան Հայաստանում, որի հիմնական բնակչությունը ցեղասպանության էր ենթարկվել, բոլոր այլազգիները զինված էին, բացի զոհերից, զոհեր, ովքեր ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի բանակների քաջարի զինվորներն էին եղել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Այս մասին տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий /, т. 1, док. № 348, с. 330; նաև՝ ***Ահարոնյան Ա.*** Նշվ. աշխ., էջ 41:

[196]Տե՛ս ***Նասիպեան Ա.*** նշվ. աշխ., էջ 234:

րից ու հետաքրքրություններից: Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացումից հետո առավել որոշակի դարձավ բրիտանական կառավարության պատրաստակամությունը պաշտպանելու քեմալականներին ընդդեմ բոլշևիկների՝ քեմալական զորքերի միջոցով դեպի հարավ Կարմիր բանակի առաջխաղացումը բացառելու նպատակով: Լոնդոնի կառավարությանն այդ քաղաքական ուղու վրա դնելու գործում վճռորոշ եղան ազատագրական շարժումների վերելքն անգլիական գաղութներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում ու Իռլանդիայում, ինչպես նաև Դաշնակիցների միջև ներքին հակասությունների սրումը, ինչը բրիտանական կառավարող շրջանակներին դրդեց վերանայելու մերձավորարևելյան քաղաքականության հետագա ընթացքը: Մեծ Բրիտանիայում թրքանպաստ կողմնորոշման ուժեղացման դրսևորում էր նախևառաջ Սևրի պայմանագիրը հօգուտ Թուրքիայի վերանայելու պահանջը: Դրա բավարարումը, ըստ անգլիացի պետական գործիչների, պետք է գոհացներ մահմեդական աշխարհը, նպաստեր Անգլիայի իշխանության վերականգնմանը Հնդկաստանում և Եգիպտոսում, վերջ տար «երկարաձգված պատերազմի» դրությանն Արևելքում: Այս տեսանկյունից առանձնակի կարևորվում էր պայմանագրի՝ տարածքային պահանջներին վերաբերող պայմանների վերանայումը: Դա պետք է մղեր քեմալականներին խզելու հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչի արդյունքում Թուրքիան պետք է վերածվեր Դաշնակիցների և Խորհրդային Ռուսաստանի միջև պատվար պետության, իսկ Լոնդոնի կառավարությունն էլ՝ ստանար հզոր լծակ՝ վերացնելու իր գաղութային կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը սնող քաղաքական-գաղափարական հիմքերն այնքանով, որքանով դրանք կապված էին համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարի իրագործման հետ: Մեծ Բրի-

տանիայի համար խնդիրն ուներ նաև տնտեսական կարևորություն: Համաշխարհային պատերազմից նոր դուրս եկած և վերականգնման, տնտեսական ապառազմականցման (ռեկոնվերսիայի) ճգնաժամի մեջ անխուսափելիորեն ընկած երկիրը հնարավորություն կստանար թուրքական եկամտաբեր շուկայի հաշվին վերականգնելու բրիտանական արտաքին առևտրի նախկին ծավալները: Դրանք էապես կրճատվել էին բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակից հետո, երբ Մեծ Բրիտանիան, խզելով ռազմաքաղաքական հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, ըստ էության, կորցրել էր ռուսաստանյան տարողունակ շուկան, իսկ քեմալական կառավարության հետ ունեցած խնդիրների հետևանքով թուլացել էին նրա տնտեսական դիրքերը նաև Թուրքիայում:

Վերը թվարկված պատճառներն ընդհանրացնելով՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում Հայկական հարցի լուծումը ոչ միայն դուրս էր թողնվելու Մեծ Բրիտանիայի պետական հետաքրքրությունների ցանկից, այլև դրա փոխարեն օրակարգային էր դառնում վիլսոնյան սահմաններում Հայաստանի ընդարձակումը բացառելու խնդիրը, քանի որ Հայաստանի վրայով բոլշևիզմի ազդեցության տարածումը մինչև Կոստանդնուպոլիս չէր բխում ո՛չ Մեծ Բրիտանիայի, ո՛չ էլ Թուրքիայի շահերից[197]: Դրա խոսուն վկայությունն է դեռևս 1920 թ. նոյեմբերի 13-ին Լոնդոնում Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակության ղեկավար Ա. Ահա-

---

[197]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում // Նոր «Գլաձորը» գիտության բավիղներում / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների վեցերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու / Խմբ. Ա. Պապոյան և ուրիշներ, Երևան, 2013, էջ 236–237:

րոնյանի հետ հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության Արևելյան գործերի դիրեկտոր Ֆրենսիս Օսբորնի հայտարարությունն այն մասին, որ իր պետությունը Հայաստանում միայն մարդասիրական տեսակետից կարող է գործել, քանի որ այլ շահ չունի: Ուշագրավ է նաև 1921 թ. փետրվարի 22-ին կայացած հանդիպման ժամանակ անգլիացի դիվանագետի մեկ այլ հայտարարությունը, թե հայերի շահը պահանջում է հրաժարվել Արևմտյան Հայաստանից ու պահանջել Կիլիկիան՝ այնտեղ հաստատվելու և պետություն ստեղծելու հույսով: Նա իր առաջարկը հիմնավորում էր Արևմտյան Հայաստանի հայաթափված լինելու իրողությամբ, աշխարհասփյուռ հայության՝ իր ավերված Հայրենիքը վերադառնալու գիտակցման ու հետաքրքրության նվազմամբ, Արևմտյան Հայաստանը թուրքերից մաքրելու հայ զինուժի անկարողությամբ, նաև Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածներն իրագործելու հարցում Դաշնակից տերությունների շահագրգռվածության բացակայությամբ, քանի որ, ինչպես նշում էր ՀՀ պաշտոնական պատվիրակության ղեկավարը, «Կովկասյան Հայաստանը բոլշևիկ է այժմ: Թյուրքական հողերը նրան կցելով՝ մենք զորացրած կլինենք ռուսներին»[198]:

Այս առիթով ուշադրության արժանի է Ա. Նասիբյանի այն տեսակետը, թե պատերազմի ընթացքում Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների հետևանքով Թուրքիայի թուլացումը փաստարկ էր, որը Լոնդոնը պետք է օգտագործեր վերջինիս հետ բանակցությունների ընթացքում՝ Անկարային կանգնեցնելով Դաշնակիցների և Ռուսաստանի միջև ընտրություն կատարելու ան-

---

[198] ***Ահարոնյան Ա.*** նշվ. աշխ., էջ 139–143, նաև՝ ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 238–239:

հրաժեշտության առջև[199]: Իսկ դա ենթադրում էր ոչ միայն աջակցություն Թուրքիային՝ Սևրի պայմանագրի կապանքներից ազատվելու հարցում, այլև՝ նյութական օգնության տրամադրում նրան՝ քայքայված տնտեսությունը վերականգնելու համար:

Պատերազմում պարտված պետությունների ռազմատուգանքի, 1919 թ. սկսված հույն-թուրքական պատերազմի դադարեցման, Սևրի պայմանագրի վերանայման հարցերը քննարկելու նպատակով 1921թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցավ միջազգային նոր՝ թվով երրորդ խորհրդաժողովը, որին մասնակցում էին Անտանտի մի շարք պետություններ՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Ճապոնիան, Հունաստանը, ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիան ու Թուրքիան: Վերջինս ներկայացված էր երկու պատվիրակությամբ. Անկարայի քեմալական կառավարության՝ Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ և Կոստանդնուպոլսի օսմանյան կառավարության՝ Մեծ վեզիր Թևֆիկ փաշայի գլխավորությամբ, որը որևէ ինքնուրույն դեր չէր խաղում. Դաշնակիցները նրան լոկ օգտագործում էին Անկարայի կառավարության վրա ճնշում բանեցնելու նպատակով[200]:

---

[199] ***Նասիպեան Ա.*** նշվ. աշխ., էջ 244, նաև՝ ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 237–238:

[200] Տե՛ս История дипломатии, т. 3, с. 215. Այն, որ խորհրդաժողովում մեծ տերությունները հաշվի էին առնելու Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության առաջարկները, վկայում են անգլիական հետախուզական աղբյուրների տեղեկությունները խորհրդաժողովի նախօրեին Անկարայի և Կոստանդնուպոլսի կառավարությունների միջև հեռագրերի ակտիվ փոխանակության մասին, ինչպես նաև Մուստաֆա Քեմալի հետևյալ պատասխանը Մեծ վեզիրին. «Եթե դաշնակից տերությունները որոշել են Լոնդոնի կոնֆերանսում թուրքական հարցը լուծել արդարացի և ճիշտ ձևով, նրանք պետք է իրենց հրավերն ուղարկեն ուղղակի Ազգային ժողովի կառավարությանը» (տե՛ս Հա-

Խորհրդաժողովի նախօրեին Լոնդոն էին ժամանել նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի և Ազգային պատվիրակությունը՝ Պ. Նուբար փաշայի գլխավորությամբ: Հայկական հարցի արդարացի լուծման նրանց ակնկալիքները կապված էին բացառապես Դաշնակից տերությունների դիրքորոշման ու քաղաքականության հետ, մանավանդ որ Խորհրդային Ռուսաստանը, սերտորեն գործակցելով արևմտահայերին ցեղասպանության ենթարկած Օսմանյան կայսրության իրավահաջորդ քեմալական պետության հետ՝ հանուն համաշխարհային սոցիալիստական հեղափոխության, պատրաստվում էր Հայաստանի հաշվին տարածքային նոր զիջումներ անել Թուրքիային: Այդ էին վկայում նույն օրերին Մոսկվայում հրավիրված ռուս-թուրքական խորհրդաժողովի օրակարգն ու դրա աշխատանքներին հայկական կողմին մասնակից չդարձնելը:

Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի պատվիրակությունները նախապես քննարկել էին միջազգային խորհրդաժողովին ներկայացվելիք իրենց առաջարկները, հարթել տարաձայնությունները, մշակել և Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդին ներկայացրել միասնական հայեցակետ, որի հիմքում ՀՀ պաշտոնական պատվիրակության կազմած հուշագրի տարբերակն էր[201]: Հայկական

յաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 344, էջ 692):

[201]Նշենք, որ քննարկումների ընթացքում վիճահարույց էր, մասնավորապես, Կիլիկիայի հարցը: Պ. Նուբարն առաջարկում էր Սևրի պայմանագրով Թուրքիային թողնված Կիլիկիայում հիմնել «վարչական ինքնավարություն» Ֆրանսիայի հովանու ներքո, իսկ Կիլիկիայի՝ Ֆրանսիային հանձնված մասի համար պահանջել հայկական ինքնավարության հիմնում: ՀՀ պաշտոնական պատվիրակությունն առարկում էր այս դրույթի դեմ, քանի որ, հիմնված չլինելով Կիլիկիայում գործնական արդյունքի հասնելու իրատեսական որևէ հեռանկարի վրա, այն գալիս էր թուլացնելու Մեծ

պատվիրակությունների պահանջները հանգում էին Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծմանը Վ. Վիլսոնի իրավարար վճռով որոշված արևմտահայկական չորս (Տրապիզոն, Էրզրում, Բիթլիս և Վան) նահանգների և Հայաստանի Հանրապետության տարածքի ընդգրկմամբ: Ըստ Պ. Նուբարի, Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը բնավ չէր կարող խոչընդոտել Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծմանը, քանի որ Հայկական հարցը վերաբերում էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը թուրքական տիրապետությունից: Բացի այդ, Դաշնակից տերությունները Սևրի պայմանագիրը կնքել էին Օսմանյան կայսրության և ոչ թե Ռուսաստանի հետ, իսկ Արևելյան Հայաստանը մտցվել էր պայմանագրով նախատեսվող հայկական պետության մեջ պարզապես այն պատճառով, որ դեպքերի բերումով անկախ էր հռչակվել: Ազգային պատվիրակության ղեկավարը կարծում էր նաև, որ Դաշնակից պետություններն ունեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու հայկական չորս նահանգների մաքրումը քեմալական զորքից և Հայկական հարցի արդարացի լուծումը Սևրի պայմանագրով իրենց ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան: Ա. Ահարոնյանը ևս հանդես էր գալիս Սևրի պայմանագրով ճանաչված հայկական պետության անունից: Դա հիմնավորվում էր նրանով, որ նախ՝ քաղաքական իրադարձությունների զուգադիպությամբ նույն օրերին «ժամանակավոր սովետական ռե-

---

Հայաստանի՝ Արևելյան ու Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի երկու մասերի միասնության գաղափարը: Բացի այդ, ՀՀ պաշտոնական պատվիրակությունը դիվանագիտական տեսանկյունից նրբանկատ չէր համարում Կիլիկիայի՝ Ֆրանսիային անցած մասի համար ինքնավարություն պահանջել Լոնդոնի խորհրդաժողովից: Դրա փոխարեն առաջարկում էր այդ խնդրով առանձին բանակցել ֆրանսիական կառավարության հետ: Պ. Նուբարը համառորեն դիմադրում էր, բայց, ի վերջո, Կիլիկիայի հարցում զիջեց: Այս մասին տե՛ս ***Ահարոնյան Ա.*** նշվ. աշխ., էջ 145:

ժիմի անկումից հետո» Երևանում վերականգնվել էր Հայաստանի Հանրապետության իշխանությունը: Բացի այդ, հրատապ էր Մեծ եղեռնից մազապուրծ և Արևելյան Հայաստանում ու արտասահմանում ապաստանած մոտ 1,5 միլիոն հայերի Հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, վերադարձի կազմակերպումը[202]:

Իրենց առաջարկություններն անելիս հայ պատվիրակները, ցավոք, անտեսում էին Սևրի պայմանագրի ստորագրումից հետո ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, որի պայմաններում բացառվում էր հայկական կողմի ներկայացրած առաջարկությունների իրագործման հնարավորությունը: Հարցն այն է, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո արևմտյան տերությունները տարակուսում էին, թե արդյոք արժե՞ր թույլ տալ Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծումը: Բացի այդ, ինչպես իրավացիորեն նկատում է Գ. Գալոյանը, նրանք չէին կարող լուրջ վերաբերվել հայկական պատվիրակությունների առաջարկներին, քանի որ 1921 թ. մարտի 14-ին Հայաստանը պաշտոնապես ներկայացնող ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանը Լոնդոնի խորհրդաժողովին տեղյակ էր պահել, որ Հայաստանը մերժում է Սևրի պայմանագիրը և պատրաստ է բանակցությունների մեջ մտնել թուրքերի հետ՝ հակաբոլշևիկյան ընդհանուր շահի ու Ալեքսանդրապոլի պայմանագրի հիման վրա[203]:

Հայերի համար աննպաստ այս նոր իրադրությունը ոգևորիչ էր թուրքերի համար, ինչից օգտվելով էլ՝ օսմանյան և քեմալական կա-

---

[202]Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 347, էջ 697–702, նաև՝ ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 241–242:

[203]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 427–429:

ռավարությունների արդեն միացյալ պատվիրակությունը մերժեց հայկական առաջարկությունները[204]: Հավելենք, որ թուրքական կողմին համարձակություն էին ներշնչում նաև այն առանձին բանակցությունները, որ նրա հետ վարում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի կառավարությունները: Հանդես գալով վերջիններիս անունից՝ լորդ Քերզոնը խորհրդաժողովում նշեց, որ հայ ժողովրդի արդարացի պահանջները բավարարելու ճանապարհին դժվարությունները երեքն են՝ բոլշևիզմը Արևելյան Հայաստանում, քեմալական զորքի կողմից Հայաստանի տարածքի մեծագույն մասի գրավումը և Դաշնակից տերությունների անզոր լինելը՝ ռազմական անհրաժեշտ ուժեր ուղարկելու Հայաստանին օգնելու համար: Պատահական չէ, որ անգլիացի դիվանագետին հետաքրքրում էին ոչ այնքան Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի ներկայացրած պահանջներն ու դրանց բավարարման հիմքերը, որքան փաստացիորեն առկա քաղաքական իրադրությունից բխող այն հանգամանքները, որոնք անհնարին էին դարձնում աշխարհասփյուռ հայերի վերադարձը Հայրենիք[205]:

Ինչ վերաբերում է «Հայկական ազգային օջախ» ստեղծելու գաղափարին, որը ձևակերպվել էր “The Armenia–America” ամերիկյան ընկերության մոտ չորս տասնյակ հայասեր կոնգրեսմենների, հասարակական ու քաղաքական գործիչների կողմից և 1921 թ. փետրվարի 24-ին հուշագրով ներկայացվել Լոնդոնի խորհրդաժողովին, ապա այն ենթադրում էր Սևրի պայմանագրով նախատեսվող Հայաստանի ու Քրդստանի համադաշնության ստեղծում: Դա, ըստ հուշագրի հեղինակների, առավել կամրապնդեր այդ պետություններ-

---

[204]Տե՛ս նույն տեղում, էջ 430:

[205]Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Политика Великобритании в Армении и Закавказье, с. 242; ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 242:

րի անվտանգությունը: Նաև առաջարկվում էր Կիլիկիայի մանդատը Սիրիայի օրինակով հանձնել Ֆրանսիային ու ապահովել կիլիկիահայերի անվտանգությունը: Արևմտյան Հայաստանում ստեղծվելու էր «Հայկական ազգային օջախ», որն ապաստան կարող էր դառնալ ցեղասպանության հետևանքով բռնագաղթված հայերի համար[206]:

Հայաստանյան պատմաբանների գնահատմամբ, «Հայկական ազգային օջախի» գաղափարը բխում էր տարագրված հայերի Հայրենիք վերադառնալու խնդրի հրատապությունից, հաշվի էր առնում Անդրկովկասում կատարված քաղաքական փոփոխությունը ու նպատակ ուներ ապահովել հայերի համախմբումը և անվտանգությունն իրենց պատմական Հայրենիքում:

Դաշնակից տերությունների դիվանագետների կարծիքով, այդ խնդրի լուծումը հայկական անկախ և միացյալ պետության ստեղծման ճանապարհով անհնար էր՝ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման պատճառով: Ուստի և Հայաստանի արևելյան ու արևմտյան մասերը պետք է կազմեին վարչաքաղաքական առանձին միավորներ: Ըստ այդմ, «Հայկական ազգային օջախը» հիմնվելու էր Արևմտյան Հայաստանում: Այն լինելու էր Թուրքիայից միանգամայն անկախ, ինքնավար մի երկիր, որը հետագայում՝ խորհրդային վարչակարգի վերացումից հետո, պիտի միանար Հայաստանի Հանրապետությանը: Դաշնակիցները կարծում էին, որ խորհրդային իշխանությունը ժամանակավոր էր, և դրա անկումով Սևրի հաշտության պայմանագիրը միացյալ Հայաստանի ստեղծման մասով կիրականանար ինքնաբերաբար: Ահա թե ինչու «Հայկական ազգային օջախի» հեղինակները վստահ էին, որ իրենց գաղափարը ոչ միայն չէր հակասում Սևրի

---

[206]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 425:

պայմանագրին, այլև ժամանակավոր մի դրություն էր դեպի Միացյալ Հայաստան տանող ճանապարհին: Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները՝ անհնար է չհամաձայնել Հ. Հակոբյանի այն տեսակետին, որ «Հայկական ազգային օջախի» ստեղծումով Դաշնակից տերություններն ամբողջովին չէին հրաժարվում Հայաստանից: Ընդհակառակը, այն որպես «սեպ» խրվելու էր Թուրքիայի ու Հեռավոր Արևելքի մահմեդականների միջև քրիստոնյա հասարակության ձևով, բնավ ոչ հակառուսական պատնեշը քանդելու հաշվին[207]: Սակայն հետագա իրադարձություններն ի չիք դարձրին այդ հեռանկարը: Գ. Գալոյանի նկատառմամբ, 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում, դրա հետևանքով երկրում իշխանությունը ձեռքից ձեռք անցնելը և քաղաքական կողմնորոշումների փոփոխության փաստերը բացասաբար անդրադարձան թե՛ Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովի, թե՛ Մոսկվայում այդ օրերին ընթացող ռուս-թուրքական բանակցությունների վրա, երբ շոշափվում էր Հայաստանի հարցը[208]: Նա նշում է, որ Լոնդոնի խորհրդաժողովում հայ պատվիրակներին հնարավորություն չտրվեց ավարտելու իրենց ասելիքը, քանի որ կարևորվում էին թուրք-հունական պատերազմի դադարեցման ու Սևրի պայմանագրի վերանայման հարցերը: Ստեղծված պայմաններում դրա վրա պնդումներ կատարելն անհեռանկար էր: Եվրոպական տերությունները, վերջնականապես հրաժարվելով Արևմտյան Հայաստանին անկախություն տալու իրենց պարտավորությունից, առա-

---

[207]Տե՛ս ***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, էջ 308, նաև՝ ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 244:

[208]Տե՛ս ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 426:

ջարկեցին Թուրքիայի արևելյան տարածքում ստեղծել «Հայկական ազգային օջախ», որի սահմանները որոշելու էր Ազգերի լիգան: Մեծ տերությունները «մոռացության մատնեցին», որ իրենց իսկ առաջարկով Վ. Վիլսոնն արդեն գծել էր Հայաստանի սահմանը Թուրքիայի հետ[209]: «Դա այն վարձն էր, որ տրվում էր քեմալականներին բոլշևիկյան Ռուսաստանի դեմ պայքարելու համար, որից տուժեցին նաև հենց իրենք՝ դաշնակիցները»[210],– շեշտում է Գ. Գալոյանը: Միևնույն ժամանակ պատմաբանը քննադատում է Դ. Լլոյդ Ջորջին՝ Հայաստանի անկախ պետության ստեղծումը ձախողելու մեղքը Մեծ Բրիտանիայի վրայից հանելու և ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի վրա բարդելու փորձերի համար՝ նշելով, որ այդ փաստարկները չեն կարող մեղմել Մեծ Բրիտանիայի պատասխանատվությունն ու «դավաճանությունը»[211]:

Ուշագրավ և արդիական շեշտադրում ունի «Հայկական ազգային օջախի» գաղափարի վերաբերյալ հայկական Ազգային ու պաշտոնական պատվիրակությունների դիրքորոշումների համեմատությունը, ինչը հնարավորություն է տալիս վեր հանելու ազգային ամենակենսական խնդրի առնչությամբ հայ հասարակության երկու հատվածների միջև տարաձայնությունների խորացումն ու Հայկական հարցի արդարացի լուծումը Դաշնակից տերություններից ակնկալելու անիրատես մոտեցումը: Նշենք, որ Ա. Ահարոնյանը շարունակում էր պաշտպանել հայկական հողերը թուրքական գերիշխանությունից ազատագրելու և դրանք Վ. Վիլսոնի գծած սահմաններում անկախ պետություն հռչակելու գաղափարը: Նա վստահ էր, որ Անկախ և Միացյալ Հայաստան ստեղծելու գաղափարը դեռևս օրակարգային էր, պարզապես դրա իրագործումը

[209]Տե՛ս նույն տեղում, էջ 434:
[210]Նույն տեղում, էջ 435:
[211]Տե՛ս նույն տեղում, էջ 435–436:

բախվել էր դժվարության՝ Հայաստանի հյուսիսային մասի խորհրդայնացման հետևանքով: «Արգելք չկա նույն պետությունը հաստատել հարավային՝ Թյուրքիո մասում: Մանավանդ, որ Home-ը վտանգավոր է նրանով, որ նա կարող է, վերջ ի վերջո, վերածվել մի անկյունի Թյուրքիայի ծոցում և նրա գերիշխանության տակ, գուցեև կտրված Կովկասյան Հայաստանից: Սևրի դաշնագրին մենք դիպչելու ո՛չ պետք ունինք և ո՛չ իրավունք: Հոդվածները մեր ձեռքով փոփոխելը համազոր է նրանցից հրաժարվելուն»[212],– համոզված էր Ա. Ահարոնյանը: Նա ճիշտ էր համարում Հայաստանի սահմանների հարցը լուծել անմիջապես՝ Գերագույն խորհրդի միջոցով, քանի որ դա Ազգերի լիգային վերապահելը հավասարազոր էր խնդիրը մոռացության մատնելուն: Արևմտահայության շահերը ներկայացնող Ազգային պատվիրակության անունից հանդես եկող հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ Գ. Նորատունկյանը, ընդհակառակը, ճիշտ էր համարում Արևմտյան Հայաստանի սահմանների գծումը թողնել Ազգերի լիգային, պնդել «Հայկական ազգային օջախի» և ոչ թե հայկական պետության գաղափարը, ըստ այդմ, Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող համապատասխան հոդվածները փոփոխել համաձայն 1921 թ. Լոնդոնի խորհրդաժողովում ընդունված «Հայկական ազգային օջախի» մասին որոշման և Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից ծագող հանգամանքների: Այնուհետև, հաջորդ քայլը, ըստ Գ. Նորատունկյանի, պետք է լիներ հայկական նոր պահանջները Դաշնակիցների Գերագույն խորհրդի առջև բարձրացնելը[213]: Վ. Ղազախեցյանի գնահատմամբ, դեպքերի հետագա

---

[212] ***Ահարոնյան Ա.*** նշվ. աշխ., էջ 206:

[213] Տե՛ս ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 244–245:

ընթացքը ցույց տվեց, որ հայկական պատվիրակություններից և ոչ մեկի ակնկալիքներն էլ ստեղծված միջազգային-քաղաքական պայմաններում իրատեսական չէին կարող լինել: Հայկական հարցը, որպես տարածքային հարց, լուծվեց հենց նույն օրերին՝ Մոսկվայում ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության» պայմանագրի ստորագրումով[214]:

Եթե Լոնդոնի միջազգային խորհրդաժողովում թուրքական միացյալ պատվիրակությունը կարողացավ մերժել տալ հայկական երկու պատվիրակությունների առաջարկությունները Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները կենսագործելու և հայկական Կիլիկիայում Ֆրանսիայի հովանավորությամբ վարչական ինքնավարություն հիմնելու վերաբերյալ, ապա Մոսկվայում քեմալական Թուրքիան յուրացրեց հայկական հսկայական տարածքներ՝ գործնական հենք ապահովելով Արևմտյան Հայաստանի նկատմամբ Դաշնակից տերությունների հնարավոր բոլոր հավակնությունները չեզոքացնելու համար: Թուրքիան դրան հասավ՝ նաև անջատ պայմանագրեր կնքելով Ֆրանսիայի ու Իտալիայի հետ՝ համապատասխանաբար 1921 թ. մարտի 9-ին ու 12-ին[215]: Այդ պայ-

---

[214]Այս մասին մանրամասն տե՛ս ***Ղազախեցյան Վ.*** Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը // Հայոց պատմություն, հ. IV, գիրք I (Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)), 2010, էջ 324–339:

[215]Ըստ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանի և քեմալական կառավարության արտաքին գործերի նախարար Բեքիր Սամի բեյի միջև կնքված անջատ համաձայնության, հօգուտ Թուրքիայի կրճատվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտին Սիրիայում: Ֆրանսիան հրաժարվում էր հայ ժողովրդի արդար իրավունքները պաշտպանելուց: Դրա դիմաց նա ստանում էր տարբեր արտոնություններ ու առանձնաշնորհումներ Կիլիկիայում, Դիարբեքիրում և Սեբաստիայում: Իսկ ըստ Բեքիր Սամիի ու Իտալիայի արտաքին գործերի նախարար կոմս Կարլո Սֆորցայի միջև կնքված անջատ համաձայնության, Իտալիան պարտա–

մանագրերին հաջորդեց Հայկական հարցի տեսանկյունից հատկապես կարևոր Անկարայի թուրք-ֆրանսիական պայմանագրի կնքումը 1921 թ. հոկտեմբերի 20-ին՝ հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի ստորագրումից մեկ շաբաթ անց:

Անկարայի պայմանագրով Կիլիկիան վերջնականապես անցավ Թուրքիային: Այդ առիթով 1922 թ. մարտի 23-ին Քե դ'Օրսեյում՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունում իր պաշտոնակցի՝ Ռ. Պուանկարեի հետ հանդիպման ժամանակ լորդ Քերզոնը հիշեցրեց. «Երբ Ֆրանսիան էվակուացրեց Կիլիկիան …, նա ջանաց բավարարել իր պարտավորությունները դեպի փոքրամասնությունները՝ թուրքերից վերցնելով հատուկ երաշխիքներ: Սակայն այս երաշխիքներն այնքան անգոհացուցիչ էին, որ հեռացող զորքերի հետ փախստականները դուրս թափվեցին Կիլիկիայից, որպեսզի խուսափեն քեմալական տեռորից և գնացին Կիպրոս ու Սիրիական նավահանգիստները»[216]: Անգլիացի դիվանագետը նաև նշեց, որ «մեծ թվով հայեր կկամենային վերադառնալ» Կիլիկիա: Սակայն, հաշվի առնելով այդ երկրամասի հանձնումը Թուրքիային, ինչի հետևանքով այդ պետության հյուսիսարևելյան անկյունում ընդարձակածավալ հայկական պետության ստեղծման գա-

---

վորվում էր պաշտպանել Թուրքիայի շահերն ու պահանջները նրա հետ վերջնական հաշտության պայմանագիրը կնքելիս: Միևնույն ժամանակ, Բեքիր Սամին փորձեց անջատ համաձայնություն կնքել Լոնդոնի կառավարության հետ՝ նրան խոստանալով տնտեսական որոշ զիջումներ, ինչպես նաև ներկայանալով իբրև հզոր ուժ Խորհրդային Ռուսաստանի դեմ, սակայն՝ ապարդյուն: Այս մասին տե՛ս ***Մսըրլեան Հ.*** Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), էջ 109–111:

[216]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 351, էջ 719:

ղափարն այլևս «անիրագործելի» էր, նա հայտարարեց, որ «… դաշնակիցներն առնվազն պետք է ջանան գոհացնել իրենց խիղճը և հասնել արդարացի լուծման՝ փորձելով ստեղծել հատուկ «հանգրվան» հայ ազգի համար»[217]: Այնուհետև, անդրադառնալով Բեքիր Սամիի և քեմալական Թուրքիայի արտաքին գործերի նախարար Յուսուֆ Քեմալի հետ իր զրույցներին, որոնց ընթացքում քննարկվել էր հայկական պետությանը թուրքական տարածք հատկացնելու հարցը՝ գաղթականներին տեղավորելու համար, և թուրք դիվանագետների անզիջում դիրքորոշմանը, Քերզոնը եզրակացրեց. «Անշուշտ, ավելի լավ լուծում է, որ ավելի շուտ հայերը թողնեն Թուրքիան, քան կոտորվեն, և, եթե դա այդպես է, գերադասելի է մեծացնել անկախ հայկական պետությունը՝ որոշ թուրքական տերիտորիա ավելացնելով, որպեսզի կարելի լինի ավելի մեծ թվով բնակչություն տեղավորել»[218]:

Լոնդոնի միջազգային խորհրդաժողովում Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներն ընթացան «Հայկական ազգային օջախ» հիմնելու երեք հնարավոր տարբերակի շուրջ, որոնք մեծ տերությունները դիտում էին իբրև յուրատեսակ հատուցում ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած տարածքային, մարդկային, նյութական և բարոյահոգեբանական կորուստների ու վնասների դիմաց, նաև աշխարհասփյուռ հայերին որոշակի տարածքում համախմբելու ամենագործնական ու արդյունավետ ուղի: Դրանք էին՝ կա՛մ հայերի համախմբումը Թուրքիայի հյուսիսարևելյան մասում և այդտեղ «Հայկական ազգային օջախի» ստեղծումը, կա՛մ «Հայկական ազգային օջախի» ստեղծումը Կիլիկիայում, կա՛մ

[217]Նույն տեղում, էջ 720–721:
[218]Նույն տեղում, էջ 720:

էլ Խորհրդային Հայաստանի տարածքի ընդարձակումն ի հաշիվ Արևմտյան Հայաստանի՝ ելքով դեպի ծով[219]:

Նշված երեք տարբերակներն էլ, սակայն, անընդունելի էին Թուրքիայի համար և նրա կողմից մերժվեցին: Ա. Մարուքյանն իրավացիորեն նկատում է, որ, մերժելով Հայկական հարցի լուծման «հայկական ազգային օջախի» ստեղծման գաղափարը, թուրքերը, ըստ էության, մերժում էին նաև Սևրի պայմանագրի՝ Հայաստանի անկախությանն ու Թուրքիայի հետ նրա սահմաններին վերաբերող դրույթների վերանայումը: Դա տեսականորեն նշանակում էր Սևրի պայմանագրում Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող հոդվածների պահպանում ու վերահաստատում[220]: Լոզանի միջազգային խորհրդաժողովում՝ 1922 թ. դեկտեմբերի 13-ին, լորդ Քերզոնի գլխավորած ռազմատարածքային հանձնաժողովի տասնչորսերորդ նիստում Թուրքիայի պատվիրակության ղեկավարը՝ արտաքին գործերի նախարար Իսմեթ Ինենյուն, հայտարարեց. «Թուրքիայում մնալ ցանկացող հայերը կարող են եղբայրաբար ապրել իրենց հայրենակից թուրքերի հետ, որոնք նրանց մասին հոգ կտանեն և, որոնք հոժարակամությամբ կմոռանան անցյալի բոլոր իրադարձությունները: Մյուս կողմից, … Թուրքիայի բաղադրիչ մասը կազմող տերիտորիայի զիջումը և նրա վրա հայկական օջախ ստեղծելը կլիներ Թուրքիայի մասնատման մի նոր փորձ: Մինչդեռ նմանօրինակ փորձերի ապօրինությունն ու անհնարինությունն ապացուցվել են բազմիցս: Թուրքիան ո՛չ իր

---

[219]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 138, ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 247:

[220]Տե՛ս ***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 138:

արևելյան նահանգներում, ո՛չ Կիլիկիայում չունի տերիտորիայի ոչ մի պատառ, որի բնակչության մեծ մասը թուրքեր չլինեն և, որը կարելի լիներ որևէ կերպ անջատել Մայր հայրենիքից:

Մյուս կողմից, Թուրքիան միջազգային իրավունքին համապատասխան, և ընդունված ձևերի համաձայն պայմանագրեր է կնքել և բարիդրացիական հարաբերություններ է հաստատել ներկայումս գոյություն ունեցող անկախ Հայաստանի՝ այսինքն Երևանի Սովետական Հանրապետության հետ: Թուրքիայի ստանձնած պարտավորություններին հակառակ կլիներ պատկերացնել որևէ այլ Հայաստանի գոյությունը»[221]:

Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են: Դաշնակից տերությունները Լոզանի խորհրդաժողովում մի կողմ դրեցին նաև «Հայկական ազգային օջախի» ստեղծման գաղափարը՝ տեղի տալով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ Իսմեթ փաշայի խոստումներին: Ինչ վերաբերում է աշխարհասփյուռ հայության տունդարձի խնդրին, ապա այն հանգեցվեց դեպի Խորհրդային Հայաստան հայ գաղթականների վերադարձը կազմակերպելուն: Դաշնակից տերությունները համաձայնության եկան, որ այդ խնդրի լուծմամբ զբաղվեր Ազգերի լիգան: Սևրի պայմանագրից հետո Հայկական հարցում Դաշնակից պետությունների քաղաքականության այս շրջադարձում Լոնդոնի խորհրդաժողովը կարևոր փուլ էր: Թուրքիայի հետ Դաշնակից տերությունների հաշտության նոր պայմանագրի կնքման ճանապարհին հենց այդ փուլում է, որ հայկական ազգային արդար իրավունքները բախվեցին դրանք շրջանցելու, Հայկական հարցի լուծումը ձախողելու և, ընդհանրապես, այդ հարցի

---

[221]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 356, էջ 748–749:

լուծումն անժամկետ հետաձգելու՝ մեծ տերությունների նոր դիրքորոշմանը: Դրա պատճառներն էին՝ եվրոպական պետությունների շահադիտական կեցվածքը, քեմալական վարչակարգի հմուտ դիվանագիտությունը, Հայաստանի անորոշ ու խոցելի քաղաքական դրությունը, հայկական ազգային և պաշտոնական պատվիրակությունների ծրագրերում ու դրանց ղեկավարների գործունեության մեջ առկա անմիաբանությունը, դրա հետ միջազգային իրադրության փոփոխությունները սթափ ու հեռատեսորեն գնահատելու նրանց անկարողությունը[222]:

Փարիզյան վեհաժողովում Հայկական հարցի միջազգային դիվանագիտական քննարկումների արդյունքների ամփոփումը վեհաժողովի որոշումներում ու Սևրի, Լոնդոնի, Լոզանի միջազգային պայմանագրերում Վ. Մելիքյանը դիտարկում է որպես «Մեծ Հայաստան» ստեղծելու 1919–1923 թթ. փարիզյան գործընթացի փուլեր՝ հիմնավորելով, որ նշված փաստաթղթերի միջև առկա է տրամաբանական որոշակի կապ, այն է՝ դրանք բոլորն էլ անմիջականորեն կրում էին Ռուսաստանում, Թուրքիայում, Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում ծավալվող ռազմաքաղաքական փոփոխությունների կնիքը: Ավելին, պատմաբանը ընդհանուր շղթայի մեջ է դիտարկում Հայկական հարցի դիվանագիտական ողջ պատմությունը՝ Բեռլինի տրակտատից մինչև Սևրի ու Լոզանի հաշտության պայմանագրերը, շեշտելով, որ Սևրի պայմանագիրն անխզելիորեն կապվում է Բեռլինում Հայկական հարցի միջազգայնացման հետ, կրում է դրան հաջորդած Հայկական հարցի փուլերի ազդեցությունն ու անգամ ձախողման նույն հայտագիրն է ամ-

---

[222]Տե՛ս ***Հովհաննիսյան Լ. Հ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում, էջ 248:

փոփում[223]: «Բեռլինից–Սևր, 40 տարուայ ընթացքում, միջազգային յարաբերութիւններում վերջին հաշուով մէկ արմատական տեղաշարժ կատարուեց, այն է՝ համաշխարհային պատերազմի արդիւնքում Եւրոպայի, ինչպէս եւ Խորհրդային Ռուսաստանի համար աւարտուեց թուրքական ժառանգութեան բաժանման հարցը: Պատերազմում յաղթած տէրութիւնների կողմից Սեւրը դիտուեց որպէս Արեւելեան Հարցի բաղձալի, եզրափակիչ փուլ: Իրօք, ոչ շահագրգիռ մօտեցման պարագայում տեղի էր ունեցել սպասուած եւ ժամանակի համար անհնար իրադարձութիւն՝ դադարել էր գոյութիւն ունենալ Օսմանեան Կայսրութիւնը, մի շարք ժողովուրդներ անկախացել էին, ձեւաւորուել էին նոր պետութիւններ: Այդ էր սպասւում եւ հայ ժողովրդին»,– նշում է Վ. Մելիքյանը, այնուհետև անցնում ասվածից բխող գիտաքաղաքական կարևոր հարցի՝ Սևրի պայմանագրի չիրագործման պատճառների վերլուծությանը: Նա մատնանշում է դրա ութ պատճառ.

• Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշումը դեպի Դաշնակից տերությունները, չնայած այն հանգամանքին, որ դեռևս 1920 թ. մայիս–հունիսին միջազգային ու տարածաշրջանային դրությունն արմատական տեղաշարժերի էր ենթարկվել, մասնավորապես՝ բրիտանական զորքը հեռացել էր Անդրկովկասից, Կարմիր բանակն օկուպացրել էր Ադրբեջանը և ծրագրում էր Հայաստանի խորհրդայնացումը, իսկ քեմալականությունն էլ որոշակի էր դարձնում Հայաստանի ոչնչացումը,

• Մ. Քեմալի և նրա ղեկավարած «միլլի»՝ ժողովրդական շարժման համախոհների կողմից Ստամբուլի սուլթանական կառավարությունից անջատ ժամանակավոր կառավարության հիմնումը,

---

[223]Տե՛ս ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 28:

որն իր վրա էր վերցրել Թուրքիայի արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանությունը, երբ Ստամբուլի կառավարությունը հարկադրաբար հրաժարվել էր դրանցից Փարիզի վեհաժողովում,

• քեմալա-բոլշևիկյան մերձեցումը՝ ուղղված Անտանտի, նրա հակախորհրդային քաղաքականության և Ասիական Թուրքիայի վերաբաժանման ծրագրի դեմ, որն անշրջելի դարձավ 1920 թ. փետրվարի 10-ին անգլիական զորքի կողմից Ստամբուլն օկուպացնելու և թուրքական պառլամենտը ցրելու հետևանքով,

• Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունը քեմալական Թուրքիայի նկատմամբ, ավելին՝ Ֆրանսիայի անջատ գործարքները քեմալականների հետ, որոնք հանգեցրին 1921 թ. Անկարայի պայմանագրի ստորագրմանը: Դաշնակիցներն աստիճանաբար հրաժարվեցին պատերազմի ու հետպատերազմյան երկու տարիների ընթացքում որդեգրած իրենց հակաթուրքական դիրքորոշումից: Այն փոխարինվեց Մ. Քեմալի հետ հաշտության ու գործակցության եզրեր գտնելու և նրան բոլշևիկյան Ռուսաստանի դեմ ուղղելու անհեռատես քաղաքականությամբ,

• Դաշնակից պետությունների միջև Փոքր Ասիայում գոյություն ունեցող տարաձայնությունների խորացումը,

• քեմալական վարչակարգի հաստատումը Թուրքիայում և 1920 թ. հունվարի 28-ին թուրքական պառլամենտի կողմից «Ազգային ուխտի» ընդունումը, որպես և՛ ինքնապաշտպանության, և՛ հարձակման ուղենիշ՝ տեր դառնալու այն բոլոր տարածքներին, որոնք Թուրքիան ձեռք էր բերել Բրեստ-Լիտովսկի և Բաթումի հաշտության պայմանագրերով: Մեջբերելով Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի միտքն այն մասին, թե ի դեմս Մ. Քեմալի Թուրքիայի երկնակամարում ծագել էր նոր աստղ, Վ. Մելիքյանը նկատում է, որ այդ հանգամանքը Սևրի պայմանագիրը դարձնում

էր մեռելածին՝ հայկական ինքնուրույն բավարար ուժի բացակայության պայմաններում,

• հայկական երկու պատվիրակությունների միջև ներքին սկզբունքային տարաձայնությունների շարունակումն անգամ նրանց միջև 1919 թ. փետրվարյան համաձայնության կայացումից հետո,

• քեմալական 150 հազարանոց լավ զինված ու կարգապահ բանակի դեմ կռվելու Դաշնակից տերությունների մտադրության բացակայությունը[224]:

Մեկ անգամ ևս շեշտելով, որ Սևրի պայմանագիրն Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն է և այս առումով վաղեմության ժամկետ չունի, Վ. Մելիքյանը շեշտում է, որ եթե անգամ այն վավերացվեր, ապա հայերին լոկ իրավական հնարավորություն կտար սեփական ուժերով Թուրքիայից ազատագրելու հայկական տարածքները: Անդրադառնալով պայմանագրի 39-րդ հոդվածին, որի համաձայն այն կարող է փոփոխվել մասնակիցների համաձայնությամբ, պատմաբանը բարձրացնում է պետության շարունակականության, տիրող վարչակարգի փոփոխման դեպքում պետության, պետական իշխանության, պետական պարտավորությունների իրավական ժառանգականության խնդիրը: Վ. Մելիքյանը նշում է, որ եթե այդ խնդիրը լուծված է Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, ապա նույնը չի կարելի ասել Թուրքիայի և Ռուսաստանի վերաբերյալ, քանի որ «Ռուսաստանը, թէեւ չի

---

[224]Տե՛ս նույն տեղում, էջ 35–42: Այս տեսանկյունից ուշագրավ է 1920 թ. մարտի 16-ին Կոստանդնուպոլսի զինագրավումը և Հայկական հարցի միջազգային դիվանագիտական քննարկումների բովանդակության կապը դրա հետ (տե՛ս ***Махмурян Г. Г.*** Армянская тематика в британской политике (В свете константинопольских событий 1919–1920 гг.) // Вестник общественных наук / НАН РА, 2011, № 1–2, с. 375–378):

ստորագրել Սեւրի պայմանագիրը, սակայն առ այսօր չի յայտարարել, թէ ռուսական ո՞ր վարչակարգի իրաւայաջորդն է, ինչի հետ էլ կապուած են հայ-ռուսական, ռուս-թուրքական յարաբերութիւնների, այդ թւում եւ սահմանների ու տարածքների հարցերը: Նոյնը վերաբերում է Թուրքիային, հայոց ցեղասպանութեան ու Սեւրի միջազգային ճանաչման ասպարէզում ու նաեւ Հայաստանին, որը չի հրաժարուել Խորհրդային Հայաստանի իրաւայաջորդը լինելուց»[225]: Պատմաբանի կարծիքով, «Սեւրի պայմանագրի վաւերացման խնդիրը ուղղակիօրէն պէտք է կապել Սայքս-Պիկոյի համաձայնագրի հետ այսինքն՝ վերադառնալ 1916, անգամ 1912–1914 թթ. նախայեղափոխական իրականութիւն, որտեղ եւ բարձրանում է Ռուսաստանի մասնակցութեան հարցը: Ռուսաստանի խորհրդայնացումով այդ երկիրը փաստօրէն դուրս մղուեց միջազգային իրաւական դաշտից»[226]: Քեմալական Թուրքիային սիրաշահելու՝ Խորհրդային Ռուսաստանի ու Դաշնակից տերությունների քաղաքականությունը Վ. Մելիքյանը բացատրում է հետևյալ պատճառներով. «Խորհրդային Ռուսաստանը վճռականօրէն հանդէս եկաւ Սեւրի պայմանագրի դէմ: Եւ դա ոչ միայն այն պատճառով, որ ուղղուած էր դաշնակից Քեմալի դէմ, նախկին թշնամի Թուրքիայի շահերի դէմ, այլ այն, որ արմատապէս հակասում էր իր շահերին, նախ եւ առաջ՝ հակաբոլշեւիկեան Անտանտի ամրապնդմանը: Դաշնակից տէրութիւններն էլ հրաժարւում էին ոչ թէ «Հայաստանի անպտուղ սարահարթերից», այլ պատերազմի եւ յետպատերազմեան երկու տարիների ընթացքում որդեգրած իրենց հակաթուրքական քաղաքականութիւնից: Այդ քաղաքականութիւնը փո-

---

[225] ***Մելիքեան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., էջ 42:
[226] Նույն տեղում:

խաղրուեց Քեմալի հետ լեզու գտնելու եւ նրան բոլշեւիկեան Ռուսաստանի դէմ ուղղելու անհեռատես միտումով:

Այս փուլում քաղաքական արմատական տեղաշարժէր տեղի ունեցան եւրոպական երկրներում: Կադրային փոփոխութիւնները (Կլեմանսօ–Միլերան, Քերզոն–Բալֆուր, Օռլանդօ–Նիտտի) իրենց հետ բերում էին նաեւ այդ երկրների արտաքին քաղաքականութեան վերանայման: Թուրքիան դառնում էր պատերազմից յոգնած Եւրոպայի համար «օգտակար» պետութիւն:

1920 թ. միայն Վիլսոնը մնաց իր կարծիքին, որ «Եւրոպայում թուրքերի մնալը անոմալիա է»:

Ստեղծուած պայմաններում Հայաստանին վերաբերող մասում Սեւրի պայմանագրին վիճակուած չէր իրականանալ»[227]:

Այսպիսով, Վ. Մելիքյանի կարծիքով, վերջին հարյուրամյակի ընթացքում Հայկական հարցի միջազգային դիվանագիտական քննարկումների տրամաբանությունն անհրաժեշտ է դարձնում Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1912–1914 թթ. դիվանագիտական բանակցությունների ձևաչափի ու բովանդակության, Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ 1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի վերաարժևորումը: Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների այդ փուլերում, ըստ պատմաբանի, արտացոլված են շահագրգիռ բոլոր մեծ տերությունների պաշտոնական դիրքորոշումներն ու դրանց հենքի վրա ձեռք բերված փոխհամաձայնություններն Արևմտյան Հայաստանի հարցի լուծման վերաբերյալ, որոնց իրագործումը խափանվեց Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխության հաղթանակի և դրա արդյունքում Խորհրդային Ռուսաստանը հետ-

[227]Նույն տեղում, էջ 42–43:

պատերազմյան աշխարհակարգի ձևավորման միջազգային դիվանագիտական գործընթացից դուրս մղելու հետևանքով:

Հայկական հարցի պատմության 1921–1923 թթ. ընդգրկող ժամանակահատվածին անդրադառնում է և Լ. Խուրշուդյանը: Կարևորելով դեռևս 1921 թ. մեծ տերությունների փոխհարաբերությունների բնույթը, նաև Թուրքիայի ու Ռուսաստանի անզիջում դիրքորոշումը՝ հեղինակը եզրակացնում է, որ «Հայկական հարցը պատմության այդ փուլում փակված էր»: Իսկ Լոզանի պայմանագիրը, պատմաբանի գնահատմամբ, ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հայկական հարցի թաղում[228]:

Հայկական հարցի 1921–1923 թթ. իրողություններին անդրադառնում և կարևոր եզրահանգումներ է կատարում նաև Գ. Մախմուրյանը՝ Հայաստանի առաջին հանրապետության տարածքային ամբողջականությունը պահպանելու, նրան արտաքին ագրեսիայից պաշտպանելու հարցերում Ազգերի լիգայի քաղաքականությանը նվիրված ծավալուն վերլուծության մեջ: Շեշտում է, որ Ազգերի լիգայի գործունեությունը Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում չի ունեցել քաղաքական նշանակություն: Իր էությամբ ու բովանդակությամբ այն միտված է եղել Հայկական հարցը մոռացության մատնելուն, ինչը և տեղի ունեցավ 1923 թ. հուլիսի 24-ին՝ մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև կնքված Լոզանի պայմանագրով: Պատմաբանը բերում է Ու. Չերչիլի ուշագրավ գնահատականը, թե մինչև 1922 թ. հուլիսը «հունական բանակի և Քեմալի ուժերը հավասար էին»[229]:

---

[228] ***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, էջ 52:

[229] Տե՛ս ***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 133.

Սա նշանակում է, որ քեմալականները ճիշտ մարտավարություն ու քաղաքականություն էին իրականացնում՝ մեկուսացնելով ու մեկ առ մեկ կռվելով իրենց հակառակորդների դեմ: Ուստի, հետազոտողի ձևակերպմամբ, Հայաստանը աղետալի բացթողում է թույլ տվել, քանի որ «անտեսել է զինակիցներ ունենալու այդքան կարևոր հնարավորությունները»: Իսկ Դաշնակից տերությունների խնամքով քողարկված աջակցությունը քեմալականներին, և այդ պետության քաղաքական փորձառությունն էական դեր են կատարել Հայաստանի Հանրապետության անկման գործում[230]:

Լ. Խուրշուդյանի և Գ. Մախմուրյանի աշխատություններն ավելի շուտ են հրատարակվել, քան՝ վերոնշյալ մյուս պատմաբաններինը: Սակայն ներկայացված պատմագիտական տեսակետները վկայում են, որ հետխորհրդային ժամանակահատվածում 1921–1923 թթ. Հայկական հարցում մեծ տերությունների և քեմալական Թուրքիայի վարած քաղաքականության վերաբերյալ հայ պատմաբանների եզրահանգումները գնալով ամրապնդվել են: Ավելին, դրանք ունեն ոչ միայն գիտական, այլև՝ գործնական նշանակություն:

Գործնական արժեքի իմաստով ուշագրավ են Ա. Պապյանի եզրահանգումները Հայոց պահանջատիրության բավարարման վրա Լոզանի պայմանագրի ազդեցության վերաբերյալ: Նրա համոզմամբ, այդ պայմանագրի կնքումով Սևրի պայմանագիրը չեղյալ չի հայտարարվել: Ավելին, վերջինիս կողմ հանդիսացող պետությունները դրա մասին որևէ հայտարարություն չեն արել, այդ իրողությունը չեն ամրագրել պայմանագրում: Ըստ միջազգային իրավունքի, Լոզանի պայմանագիրը ստորագրած պետությունների համար իրավական են Սևրի պայմանագրի այն դրույթները, որոնք

[230]Տե՛ս նույն տեղում:

չեն փոփոխվել Լոզանի պայմանագրով: Իսկ այդ պայմանագրով հայոց իրավունքները ոչ միայն չեղյալ չեն հայտարարվել, այլև պայմանագրի 16-րդ հոդվածով վերահաստատվել են: Դրա վկայությունն է Թուրքիայի սահմանների հստակեցումը Բուլղարիայի, Հունաստանի, Սիրիայի և Իրաքի հետ՝ 16-րդ հոդվածում ամրագրելով, որ Թուրքիան հրաժարվում է այն բոլոր տարածքներից, որոնց վրա Լոզանի պայմանագրով չի ճանաչվել Թուրքիայի ինքնիշխանությունը: Ա. Պապյանը նկատում է, որ այդպիսով պայմանագիրը նաև չի ճանաչել թուրքական ինքնիշխանությունը Վ. Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքների վրա, հետևաբար, Թուրքիան մեկ անգամ ևս հաստատել է իր հրաժարումը վիլսոնյան Հայաստանից[231]: Իսկ Ա. Մարուքյանը հավելում է. «… թուրքական այն «բացատրությունները», թե Լոզանում արևելյան սահմանների ու մասնավորապես Հայաստանի հետ սահմանի հարցը չքննարկվեց, քանի որ այդ հարցն արդեն իսկ լուծված էր Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով չի դիմանում քննադատության այն պարզ պատճառով, որ եվրոպական տերությունների գաղափարական ու քաղաքական հակառակորդ հանդիսացող Խորհրդային Ռուսաստանի հետ կատարված երկկողմ գործարքը չէր կարող պարտադիր լինել Լոզանի խորհրդաժողովին հավաքված տերությունների համար»[232]: Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում այն ձևակերպումը, թե տվյալ հոդվածի դրույթները չեն տարածվում Թուրքիայի և նրա սահմանակից երկրներից որևէ մեկի միջև ձեռք բերված կամ բերվելիք բարիդրացիական հարաբերություններից բխող հա-

---

[231]Տե՛ս ***Պապյան Ա.*** Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 28:

[232]***Մարուքյան Ա. Յ.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 139:

տուկ պայմանավորվածությունների վրա, պատմաբանի մեկնաբանմամբ նշանակում է՝ Թուրքիայի և նրա հարևան Հայաստանի միջև ձեռք բերված միակ «հատուկ պայմանավորվածության»՝ Վ. Վիլսոնի հայ-թուրքական սահմանը սահմանագծող իրավարար վճռի ընդունում[233]:

Վերլուծելով Սևրի ու Լոզանի պայմանագրերի իրավական փոխհարաբերությունները՝ Ա. Մարուքյանը և Ա. Պապյանը եզրակացնում են՝ դրանք իրավական տարբեր փաստաթղթեր են: Լոզանի պայմանագիրը իրավասու չէր և չեղյալ չի հայտարարել Սևրի պայմանագիրը, իսկ այն, որ Լոզանի պայմանագիրը չէր կրկնում Սևրով նախատեսված հայերի ցեղասպանության համար պատասխանատվություն սահմանող հոդվածների դրույթները, չի կարող նշանակել, որ դրանք վերացել կամ փոխարինվել են: Հետևաբար, Թուրքիան կոպտորեն խախտում է միջազգային իրավունքը և իր ստանձնած պարտավորությունները՝ ոչ միայն չկատարելով Վ. Վիլսոնի իրավարար վճիռը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ և Լոզանի պայմանագրով նախատեսված ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի իրավունքների պաշտպանությանը վերաբերող հոդվածները, այլև 1993 թ. հուլիսից Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրականացնելով շրջափակման քաղաքականություն[234]:

Հայկական հարցը քննարկման առարկա է եղել նաև 1921 թ. Կովկասի խորհրդայնացումից դժգոհ նախկին կովկասյան (գլխավորապես՝ այսրկովկասյան) հանրապետությունների՝ Փարիզում կենտրոնացած վտարանդի պետական-կուսակցական ղեկավար

---

[233]Տե՛ս նույն տեղում, էջ 139–140:

[234]Տե՛ս նույն տեղում, էջ 143–145, ***Պապյան Ա.*** Սևրի և Լոզանի պայմանագրերի իրավական փոխհարաբերությունները // Հայրենատիրություն, էջ 66:

գործիչների միջև տեղի ունեցած բանակցություններում, որոնց նպատակը դրանց միության հիմնումն էր և եվրոպական դաշնակից պետությունների, մասնավորապես՝ Ֆրանսիայի աջակցությամբ երկրամասի ազատագրումը բոլշևիզմից: Հայկական կողմի շահերն այդ բանակցություններում ներկայացրել է ՀՅԴ-ն, ի դեմս Ա. Ահարոնյանի, Ալ. Խատիսյանի, Վ. Փափազյանի, Գ. Բաստրմաջյանի, Գ. Կորգանովի և Տ. Բեկզադյանի: Հաշվի առնելով, որ կովկասյան հանրապետություններում բոլշևիկյան իշխանության տապալումով և Կովկասյան հանրապետությունների միության ստեղծումով երկրամասը, ըստ էության, վերածվելու էր պատնեշ-պետության Թուրքիայի ու Ռուսաստանի միջև՝ ՀՅԴ-ն Հայաստանի մասնակցությունը Կովկասյան հանրապետությունների միությանը պայմանավորում էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Հայաստանից խլված տարածքների՝ Կարսի մարզի, Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառի անվերապահ վերադարձով ու 1914 թ. սահմաններում Կովկասի տարածքային անձեռնմխելիության ապահովմամբ:

Կովկասյան հանրապետությունների միության նախագծին և դրա շրջանակներում Հայկական հարցի լուծման հնարավորություններին է նվիրված Ա. Հարությունյանի ««Կովկասյան տան» նախագիծը 1921–1922 թվականներին՝ ՀՅ Դաշնակցության դերակատարության լույսի ներքո» վերնագրով հոդվածը[235]: Հրապարակման մեջ ներառված են ՀԱԱ-ի Ալեքսանդր Մյասնիկյանի անձնական ֆոնդում (թ. 1435) պահպանվող ուշագրավ փաստաթղթեր՝ արձանագրություններ, հոչակագրեր, նամակներ, որոնք արտա-

[235]Տե՛ս ***Հարությունյան Ա.*** «Կովկասյան տան» նախագիծը 1921–1922 թվականներին՝ ՀՅ Դաշնակցության դերակատարության լույսի ներքո // Վէմ / համահայկական հանդես, 2015, Է տարի, թ. 4, հոկտեմբեր–դեկտեմբեր, էջ 182–220:

սահմանից ստացված հետախուզական տեղեկատվության տեսքով Ալ. Մյասնիկյանին են ուղարկվել 1924 թ. հունվար–սեպտեմբերին, երբ նա Խորհրդային Անդրկովկասի կուսակցական ղեկավարն էր: Ա. Հարությունյանը նշում է, որ թեև քեմալական Թուրքիան այդպես էլ Հայաստանից խլված տարածքների վերադարձի հարցում որևէ հստակ ու իրական քայլ կատարելու պատրաստակամություն չդրսևորեց, այնուամենայնիվ, դրանով ստեղծվեց Կովկասի միասնության նոր հարացույց: Այսպես, վտարանդիական շրջանակներում ՀՅԴ-ի ստանձնած աշխարհաքաղաքական հստակ դիրքորոշումն ապահովեց տարածաշրջանի երկրների միասնության հակախորհրդային ընկալման տարանջատումը հակառուսականից՝ նրանց անկախության ու ինքնիշխանության վերականգնման խնդիրը դիտարկելով ոչ միայն բոլշևիկյան, այլև քեմալական սպառնալիքի հաշվառման տիրույթում: Հոդվածի հեղինակը չի վերլուծում Հայկական հարցում ՀՅԴ-ի դիրքորոշումը, սակայն հրապարակման մեջ ընդգրկված արխիվային փաստաթղթերը վկայում են, որ կուսակցությունը խնդրո առարկա բանակցություններում իբրև Հայկական հարցի լուծման ելակետ դիտարկել է, ինչպես վերը նշվեց, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Հայաստանից խլված տարածքների անվերապահ վերադարձը և ոչ ավելին: Նկատենք, որ դա էր եղել հայկական կողմի գլխավոր պահանջը նաև 1921 թ. սկզբներին Մոսկվայի ռուս-թուրք-հայ-ադրբեջանական քառակողմ կոնֆերանսի նախօրեին: Դա նշանակում էր ելնել հայ-թուրքական հարաբերությունների փաստացի ընթացքից, ինչից շատ հեռու էին թե՛ Սևրի պայմանագրի, թե՛ Վ. Վիլսոնի իրավարար վճռի դրույթները:

1921–1923 թթ. Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների ու դրանց արդյունքների վերաբերյալ հայաստանյան պատմաբանների վերլուծությունները, արտահայտած կարծիքներն

ու տեսակետները վեր են հանում այն դառը ճշմարտությունը, որ անցած 100 տարիների ընթացքում Սևրի պայմանագրում Արևմտյան Հայաստանին ու արևմտահայերին, Լոզանի պայմանագրում ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի իրավունքների պաշտպանությանը վերաբերող հոդվածներն ու Վ. Վիլսոնի իրավարար վճիռը չեն իրագործվել արտաքին անհաղթահարելի գործոնների՝ մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախման, Թուրքիային սիրաշահելու նրանց քաղաքականության, թուրքական հակահայկական դիվանագիտության կողմից միջազգային իրավունքի կոպիտ խախտումների հետևանքով: Այդ հանգամանքները, սակայն, որևէ կերպ չեն ազդել նշված փաստաթղթերի վավերականության ու օրինականության վրա:

Թեև Հայկական հարցը մինչ օրս լուծված չէ, այդուհանդերձ, Վ. Վիլսոնի իրավարար վճիռը ցանկացած պահի կարող է բերվել դիվանագիտական քննարկումների օրակարգ: Ըստ այդմ, հայ-թուրքական հարաբերությունները իրավական դաշտում քննարկելու պարագայում հայկական կողմը պետք է պատրաստ լինի արժանապատվորեն պաշտպանելու իր ազգային-պետական շահերը դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական-քարոզչական, գաղափարաքաղաքական պայքարում՝ թիկունքում ունենալով Հայաստանի Հանրապետության անկախության և սահմանների անվտանգության երաշխավորի՝ հայկական բանակի ուժը:

ԱՄՓՈՓՈՒՄ

1915–1923 թթ. Հայկական հարցի միջազգային բանակցությունների և դրանց արդյունքների պատմությունը լուսաբանող հետխորհրդային հայաստանյան գիտական ուսումնասիրություններում պատմական իրադարձություններին ու գործիչներին տրված գնահատականները հիմնված են տվյալ ժամանակահատվածի ներքին և արտաքին իրադրության համակողմանի և հանգամանալից վերլուծության վրա, ինչն ապահովում է այդ ուսումնասիրությունների օբյեկտիվությունը:

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացված և վերլուծված աշխատություններում գերակշռում է այն տեսակետը, որ ինչպես Հայկական հարցի բովանդակությունը, այն լուծելու ուղիներն ու պայմանները թելադրված են եղել ժամանակի մեծ տերությունների կողմից, այնպես էլ Հայկական հարցի լուծման ձախողումը պայմանավորված է եղել նրանց շահերով և հակասություններով: Այս իմաստով ուշագրավ է Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարի իրագործումը ձախողելու, քեմալական Թուրքիայի հակահայկական քաղաքականությանը նպաստելու հարցերում Մեծ Բրիտանիայի պատասխանատվության շեշտադրումը: 1915–1923 թթ. այդ տերության վարած քաղաքականությունը Հայկական հարցի ընթացքի վրա ազդող առավել լուրջ արտաքին գործոն է եղել, քան Դաշնակից որևէ այլ տերության, ներառյալ ԱՄՆ-ի քաղաքականությունը, որը 1919–1920 թթ. ամենաշահագրգռված պետությունն էր Կոստանդնուպոլսի, Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի ու Անդրկովկասի համար միասնական մանդատի հարցում: Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ գիտական աշխատությունների հեղինակներն ընդգծում են ռուսական պետության դերը Թուրքիայի համաթուրքական հավակնությունները սանձահարե-

լու գործում՝ հաշվի առնելով դրանց հակառուսական բնույթը և հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության արդիականությունը պետական շահերի ընդհանրության հենքի վրա:

Թեմայի վերաբերյալ պատմագիտական աշխատությունների ուսումնասիրումը հանգեցնում է այն եզրակացության, որ, ռազմաքաղաքական գործընթացների բարդությամբ հանդերձ, Հայկական հարցի լուծումը եղել և մնում է պայմանավորված հայ-թուրքական հարաբերությունների ընթացքով և միջազգային իրավական երկու փաստաթղթերի՝ 1920 թ. Սևրի պայմանագրում Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող հոդվածների և հայ-թուրքական պետական սահմանի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի իրագործման հնարավորությամբ:

Հայաստանյան պատմաբանների գիտական աշխատանքներում մյուս կարևոր ընդհանրացումն այն է, որ հայ հասարակաքաղաքական շրջանակներն ու գործիչները որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հայկական հարցի շուրջ ընթացող միջազգային բանակցությունների և դրանց արդյունքների վրա՝ ազգային ուժերի պառակտվածության, համազգային գործողությունների օրակարգի բացակայության, հայկական պետականության թուլության, ազգային խնդիրների լուծման գործում արտաքին ուժերի բարեհաճությանն ապավինելու պատճառով: Պատմաբանների համոզմամբ, ազգը և նրան ներկայացնող պետությունը պետք է թե՛ ձևակերպեն ազգային խնդիրները, մատնանշեն դրանց լուծման ուղիներն ու եղանակները, թե՛ իրենց պահանջները հստակ, հետևողականորեն առաջադրեն ազդեցիկ պետություններին ու միջազգային կազմակերպություններին: Այս դեպքում բացառապես հայ ժողովուրդը և նրա պետությունը պետք է լինեն իրենց ազգային-պետական խնդիրների լուծման ուղղությամբ գործնական քայլերի նախաձեռնողն ու եթե ոչ դրանց ողջ պատասխանատվության, ապա գոնե դրա մի մասի կրողը: Այս իմաստով Հա-

յաստանի առաջին հանրապետության դիվանագիտությունը եղել է թույլ, միակողմանի՝ եվրոպամետ, և զուրկ ճկունությունից: Այդ իրավիճակում իր ֆիզիկական անվտանգությունն ապահովելու, համազգային գործողությունների օրակարգ մշակելու հարցերում վճռորոշ է եղել հայ ժողովրդի ինքնակազմակերպման կարողությունը:

1915–1923 թթ. Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների պատմության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների արդյունքների և հեղինակների եզրակացությունների համադրումը բացահայտում է, որ ցեղասպանության հետևանքով տարագիր դարձած հայերին իրենց Հայրենիքում համախմբելու հույսերը երբեք այնքան մեծ չեն եղել, որքան Մուդրոսի զինադադարից մինչև Լոզանի պայմանագիրն ընկած ժամանակամիջոցում, թեև 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի կնքումից հետո Հայկական հարցի արդար և արմատական լուծման հնարավորություններն աստիճանաբար նվազել են:

Արևմտյան տերությունները, գիտակցելով, որ Հայկական հարցի լուծման միջոցով կարող է փլուզվել հակառուսական «պատնեշը»՝ թուրքական պետությունը, թույլ տվեցին, որ այն վերականգնվեր որպես Խորհրդային Ռուսաստանի հակակշիռ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով համաթուրանականության հեռանկարը, նրանք չէին կարող լիովին անտեսել Հայկական հարցը, որը «սեպ» էր՝ անհրաժեշտության դեպքում հակառուսական պատնեշի մեջ խրելու, բայց այն չքանդելու համար: Այդ պատճառով էլ մեծ տերությունները հակված էին հայկական պետությունը սահմանափակել լավագույն դեպքում Արևելյան Հայաստանի տարածքով՝ իբրև արդարացում վկայակոչելով Արևմտյան Հայաստանում մահմեդականների մեծամասնություն լինելու փաստը և անտեսելով Հայոց ցեղասպանության հետևանքները:

Ընթացիկ պատմափուլում հայ ժողովրդի ու նրա պետականության կարևորագույն խնդիրը Հայաստանի անկախ Հանրապետու-

թյան և Սփյուռքի միասնության հենքի վրա հայոց արդար պահանջատիրության բավարարմանն ու Հայոց ցեղասպանության ողբերգական հետևանքների վերացմանը հասնելն է 1920 թ. Սևրի միջազգային պայմանագրի և Վ. Վիլսոնի իրավարար վճռի շրջանակներում: Թեև Սևրի պայմանագիրը չի վավերացվել ստորագրող պետությունների կողմից, այնուամենայնիվ, այն իրավական ուժ ունեցող միջազգային փաստաթուղթ է, որում Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած մեծ տերություններն ու նրանց դաշնակիցները հաստատել են հայերի անվիճելի ու արդարացի իրավունքներն Արևմտյան Հայաստանի նկատմամբ՝ Հայկական հարցի լուծման հիմքում դնելով հայկական հողերի միավորման, Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման նպատակը: Սևրի պայմանագրով նաև սահմանվել է Հայոց ցեղասպանության ամենածանր հետևանքի՝ հայ ժողովրդի հայրենազրկման հաղթահարման իրավական գործնական ուղին, իսկ Վ. Վիլսոնի անբեկանելի ուժ ունեցող իրավարար վճռով գծվել են Թուրքիայի հետ հայկական անկախ պետության de jure սահմանները:

Միջազգային իրավունքի նորմերից ելնելով՝ հայ ժողովրդի արդար պահանջատիրությունը կարող է բավարարվել Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, հայկական Սփյուռքի տնտեսական, գաղափարաքաղաքական, ռազմական միասնության ու դրա անշեղ ամրապնդման, հայ ազգային և պետական կյանքի բոլոր ասպարեզներում համբերատար, հետևողական ու նպատակասլաց աշխատանքի, Հայկական հարցի լուծմամբ ուղղակի և անուղղակի շահագրգիռ արտաքին ուժերի հետ ճկուն դիվանագիտական համագործակցության շնորհիվ:

SUMMARY

The appraisals given to historical events and figures in post-Soviet Armenian scientific researches, elucidating the history and results of international diplomatic negotiations on the Armenian question in 1915–1923, are based on comprehensive and detailed analysis of the domestic and foreign conditions of this period, ensuring the impartiality of these studies.

The opinion that both the content of the Armenian Question, as well as the methods and conditions for its solution were dictated by the Great Powers of those days, meanwhile the failure of the solution of the Armenian Question was due to contradictions of their interests, prevails in the works analyzed in this study. As far as we start with the noted assumption, it is noteworthy to stress the responsibility of the Great Britain for the failure to implement the idea of creating of the United and Independent Armenia, together with promoting the anti-Armenian policy of Kemalist Turkey. In 1915–1923, the British policy had been dominant in regard to the course of the Armenian Question, as an external factor it was much more significant, than the policy of any other Great Power, including the USA – the state of the most concern, relating to the question of a united mandate for Constantinople, Turkey, Western Armenia and Transcaucasia, discussed in 1919–1920. Besides, it is important to note that authors of the contemporary scientific works emphasize the role of the Russian state in restriction of Turkey's pan-Turkish pretentions; the latters are considered to be of anti-Russian nature, so the relevance of the advantageous Armenian-

Russian military-political cooperation, based on common interests, is stresses.

Our analysis of appropriate scientific works leads to the conclusion that, in spite of the intricacy of military-political processes, the solution of the Armenian Question had been and still depends on the course of the Armenian-Turkish relations, as well as on the possibility to implement two international legal documents – the articles of the 1920 Sèvres International Treaty concerning Armenia and the Armenian people, in common with the Arbitral Award of the President of the USA Woodrow Wilson on the border delimitation between Turkey and Armenia.

The opinion that the Armenian socio-political circles and figures had neither real influence on the international diplomatic negotiations, regarding the Armenian Question, nor on their results due to the split of the Armenian national forces into two camps; the absence of an agenda for national actions, the weakness of the Armenian State, together with hope for the benevolence of external forces in solving the Armenian national problems, is one of the important generalizations in scientific publications of Armenian historians. They are sure that the nation and its State must formulate national tasks themselves, as well as indicate the ways and means of solution and clearly and consistently present their demands to leading States or to the international organizations. It is solely the Armenian nation and its State, who initiate practical steps to solve Armenian national-state problems and bear, if not full responsibility for them, then – at least part of it. In this sense, the diplomacy of the first Republic of Armenia was weak, one-sided – pro-European and devoid of flexibility. In such a situation, the ability of the Armenian people to organize themselves was of decisive importance

for ensuring their physical security and developing a program of national actions.

When we compare the results and conclusions, made by the authors of scientific works on history of diplomatic relations regarding to the Armenian Question, 1915–1923, one reveals that hopes of Armenian refugees, victims of the Genocide, to repatriate into their homeland had been never as great as in the period from Mudros Armistice to the Treaty of Lausanne, although after the August 10, 1920, when the Treaty of Sèvres was signed, the opportunities for just and radical solution of the Armenian Question constantly diminished.

Being aware that the anti-Russian "barrier" – i. e. the Turkish state, could collapse because of the solution of the Armenian Question, the Western Powers greatly contributed to its restoration as a counterweight to Soviet Russia. At the same time, considering the prospects of pan-Turkism, Western Powers could not completely ignore the Armenian Question, which, like a sharp "wedge", they drove into the anti-Russian barrier, though without destructing it. This is why, recalling the majority of Muslims in Western Armenia as an excuse and ignoring the aftermath of the Armenian Genocide, the Great Powers inclined to limit the Armenian State by the territory of Eastern Armenia, at best.

Successful suing the Armenian claims in accordance with the norms of international law and overcoming the tragic consequences of the Armenian Genocide within the framework of the Treaty of Sevres and the W. Wilson's Arbitral Award are the most important tasks of the Armenian people and its State in the recent period of history.

The Sèvres Treaty is a legally valid international document despite the fact that it has not been ratified by the signatory States. The Great Powers and their Allies, who won the World War I, confirmed by this Treaty just and indisputable rights of the Armenians towards

the Western Armenia; they applied the thesis of unity of the Armenian lands, together with a creation of United and Independent Armenia, as the basis for solution of the Armenian Question. The Treaty of Sèvres had also established the practical legal path of overcoming the gravest consequence of the Armenian Genocide – the deprivation of the Armenian people of the great part of its motherland. Meanwhile, the Arbitral Award of W. Wilson has a binding power; it demarcated de jure borders of the independent Armenian State with Turkey.

Armenian claims are fair under international law; they can be satisfied only through the economic, ideological, political, military unity of the Republic of Armenia, the Republic of Artsakh, the Armenian Diaspora and its steady reinforcement. We need patient, consistent and purposeful work in all spheres of national and State life, as well as flexible diplomatic cooperation with all external forces, who are directly or indirectly interested in the solution of the Armenian Question.

РЕЗЮМЕ

Оценки, данные историческим событиям и деятелям в постсоветских армянских научных исследованиях, освещающих историю и результаты международных переговоров по Армянскому вопросу в 1915–1923 гг., основаны на всестороннем и обстоятельном анализе внутренней и внешней ситуации данного периода, обеспечивающем объективность этих исследований.

В проанализированных работах, представленных в данном исследовании, преобладает мнение, что, как содержание Армянского вопроса, так и способы, условия его решения были продиктованы великими державами того времени, а провал разрешения Армянского вопроса был обусловлен их интересами и противоречиями. В этом смысле примечательно акцентирование ответственности Великобритании за провал осуществления идеи создания Единой и Независимой Армении, за содействие антиармянской политике Кемалистской Турции. В 1915–1923 гг. политика именно этой державы была более серьезным внешним фактором, влияющим на ход Армянского вопроса, чем политика любой из Союзных держав, включая США – самого заинтересованного государства в вопросе единого мандата для Константинополя, Турции, Западной Армении и Закавказья в 1919–1920 гг. В то же время важно подчеркнуть, что авторы научных трудов придают особое значение роли российского государства в обуздании пантюркистских притязаний Турции, учитывая их антироссийский характер и актуальность армяно-российского военно-политического сотрудничества на основе общих интересов.

Изучение научных работ по этой теме приводит к выводу, что, невзирая на сложность военно-политических процессов, решение Армянского вопроса было и по-прежнему обусловлено ходом армяно-турецких отношений и возможностью претворения в жизнь

двух международно-правовых документов – статей Севрского международного договора относительно Армении и армянского народа, а также Арбитражного решения президента США Вудро Вильсона 1920 г. о территориальном разграничении Турции и Армении.

Еще одно важное обобщение в научных публикациях армянских историков заключается в том, что армянские общественно-политические круги и деятели не имели практического влияния на международные переговоры по Армянскому вопросу и их результаты вследствие расколотости армянских национальных сил на два лагеря, отсутствия повестки дня общенациональных действий, слабости армянской государственности, надежды на доброжелательность внешних сил в решении армянских национальных проблем. Они уверены, что нация и представляющее его государство должны сами формулировать национальные задачи, указывать пути и средства их решения, четко и последовательно излагать свои требования влиятельным государствам и международным организациям. В этом случае, исключительно армянский народ и его государство являются инициатором практических шагов по решению армянских национально-государственных проблем и несут если не полную ответственность за них, то – хотя бы часть её. В этом смысле дипломатия первой Республики Армения была слабой, односторонней – проевропейской и лишенной гибкости. В этой ситуации способность армянского народа к самоорганизации имела решающее значение для обеспечения его физической безопасности и разработки программы национальных действий.

Сопоставление результатов и выводов авторов научных исследований по истории дипломатических дискуссий по Армянскому вопросу 1915–1923 гг. выявляет, что надежды объединения депортированных вследствие Геноцида армян на их родине, никогда не были столь велики, как в период от Мудросского перемирия до Лозаннского договора, хотя после подписания 10 августа 1920 г. Севрского договора, возможности для справедливого и радикального решения Армянского вопроса постепенно уменьшились.

Сознавая, что с разрешением Армянского вопроса может рухнуть антироссийский «барьер» – турецкое государство, западные державы способствовали его восстановлению как противовес Советской России. В то же время, учитывая перспективу пантюркизма, они не могли полностью игнорировать Армянский вопрос, который, как «клин», втыкали в антироссийский барьер, при этом не разрушая его. Вот почему, ссылаясь, в качестве оправдания, на наличие большинства мусульман в Западной Армении и игнорируя последствия Геноцида армян, великие державы были склонны к ограничению армянского государства, в лучшем случае, территорией Восточной Армении.

В нынешнем историческом периоде важнейшей задачей армянского народа и его государственности является достижение армянских требований с применением норм международного права и устранение трагических последствий Геноцида армян в рамках Севрского договора и Арбитражного решения В. Вильсона.

Несмотря на то, что Севрский договор не ратифицирован подписавшими его государствами, он, тем не менее, является международным документом, имеющим юридическую силу, в котором великие державы и их союзники, победившие в Первой мировой войне, подтвердили справедливые и неоспоримые права армянского народа на Западную Армению, положив в основу решения Армянского вопроса цель объединения армянских земель, а также создания Единой и Независимой Армении. Кроме этого, Севрский договор предопределил и практический юридический путь преодоления наиболее тяжёлого последствия Геноцида армян – лишения армянского народа большей части своей родины, а Арбитражным решением В. Вильсона, имеющем юридическую силу не подлежащую кассации, были определены границы de jure независимого армянского государства с Турцией.

Исходя из норм международного права, справедливые армянские требования могут удовлетворяться лишь путём экономического, идеологического, политического, военного единства

Республики Армения, Республики Арцах, Армянской диаспоры и его неуклонного укрепления, терпеливой, последовательной и целенаправленной работы во всех сферах национальной и государственной жизни, а также – гибкого дипломатического сотрудничества со всеми внешними силами, прямо или косвенно заинтересованными в решении Армянского вопроса.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1.1.Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113 (ՀՀ Կառավարություն), ց. 3, գ. 19, ֆ. 200 (Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ց. 2, գ. 31, ֆ. 374 (Պատերազմի իրավունքով գրավված Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի այլ մարզերի գեներալ կոմիսարիատի Էրզրումի մարզի կոմիսարի վարչություն), ց. 1, գ. 1, Ֆ. 1440 (Ասքանազ Մռավյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 34:

ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1.2.Ազատյան ***Հ. Գ.*** Բախտորոշ պայմանագրեր, Երևան, «Տիգրան Մեծ», 2002, 172 էջ:

1.3.***Ահարոնյան Ա.*** Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր 1919–1927 / Կազմ.՝ Լ. Գ. Մանուկյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2001, 252 էջ:

1.4.Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.): (Փաստաթղթերի ժողովածու) / Կազմ. և առաջաբ. Ա. Օհանջանյան / Գերմ. թարգմ. Վ. Մարտիրոսյան / Խմբ. Լ. Բարսեղյան / Մատենաշար «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը», թիվ 3, Երևան, «Նահապետ», 2004, 130 էջ:

1.5.Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923 թթ. / Նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց,

առաջաբանը գրեց և հրատարակ. պատրաստեց Ա. Բալոյանը / Հատոր Ա (1913–1917) / Հատոր Բ (1918–1923), Երևան, ՀՅԹԻ հրատ., 2008, 252+280 էջ:
1.6.Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.) / Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Երևան, ՀԱԱ հրատ., 2004, 794 էջ:
1.7.Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923) / Խմբ. պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, «Հայաստան», 1972, 809 էջ:
1.8.Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918–1920 թթ. / Գլխ. խմբ. և կազմ. Ա. Վիրաբյան / Կազմ.՝ Ա. Հարությունյան, Գ. Մանուկյան, Ս. Միրզոյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2010, 616 էջ:
1.9.Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն) / Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմ. Գ. Գալոյան և ուրիշ. / Խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, «Գիտություն», 2000, 455 էջ:
1.10.«Հայաստանի ավտոնոմիան» յեւ Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից / Առաջաբ. Ա. Հովհաննիսյան, Յերեվան, «Պետհրատ», 1926, XV+93 էջ:
1.11.Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում / Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Խմբ. Մ. Գ. Ներսիսյան, Երևան, «Հայաստան», 1991, 758 էջ:
1.12.Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918 թթ.): Ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի / Կազմ. և առաջ. Վ. Ա. Միքայելյան / Խմբ. Վ. Մ. Մարտիրոսյան / Թարգմ. Ա. Մարուքյան, Երևան, «Նահապետ», 2004, 219 էջ:

1.13.Հայ ժողովրդի կորուստները առաջին աշխարհամարտի տարիներին: «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմ., առաջաբ. և ծանոթագր. Ա. Զաքարյան / Խմբ. Լ. Բարսեղյան, Երևան, ա. հ., 2005, 237 էջ:
1.14.Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918–1920) / Թարգմ. Հ. Մ. Բարթիկյան, Երևան, ա. հ., 1998, 137 էջ:
1.15.Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918) / Հատոր I և II / Աշխատասիրությամբ Ա. Պեյլերյան / Առաջաբ. Ժան-Բատիստ Դյուրոզել / Թարգմ. ֆրանս. Վ. Պողոսյան, Երևան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), 2005, 484+520 էջ:
1.16.Նախիջևան-Շարուրը 1918–1921 թթ. / Փաստաթղթեր և նյութեր / Խմբ. Վ. Ղազախեցյան // Բանբեր Հայաստանի արխիվների, 1993, № 1–2:
1.17.***Ռուպրոմ***, Նամականի: (Մահուան ութսունամեակին առթիւ), Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 1999, 669 էջ:
1.18.Ցավալի պայմանագրեր / Կազմեց Տ. Ղ. Սահակյան / Խմբ. Վ. Այվազյան, Երևան, «Լուսակն», 2007, 531 էջ:
1.19.Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг. / Составитель и перевод с английского Г. Г. Махмурян / Ред. В. Казахецян. Ереван, Ин-т истории НАН Армении, 2011, 560 с.
1.20.Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919) / Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Новые документы / Сб. / Отв. ред. В. А. Микаелян. Ереван, «Гитутюн», 1995, 643 с.
1.21.Архив полковника Хауза / Т. IV. М., «Госполитиздат», 1944, 403 с.

1.22.Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества / Документы и комментарий, в 2-х томах / Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов / Т. 1. М., «Гардарики», 2002, 814 с. / Т. 2, ч. 1. М., «Гардарики», 2003, 912 с. / Т. 2, ч. 2. М., «Гардарики», 2005, 608 с.
1.23.Декреты советской власти / Сборник материалов и документов / В 2-х томах / Т. I (25 октября 1917 г.–16 марта 1918 г.). М., «Госполитиздат», 1957, 626 с.
1.24.Документы внешней политики СССР / Т. 1 (7 ноября 1917 г.–31 декабря 1918 г.) / Ред. кол.: И. Н. Земсков и др. М., «Госполитиздат», 1959, 773 с.
1.24.Документы внешней политики СССР / В 24-х томах / Министерство иностранных дел СССР / Глав. ред. А. А. Громыко / Т. III (1 июля 1920–18 марта 1921). М., «Политиздат», 1959, 724 с. / Т. IV (19 марта 1921–31 декабря 1921). М., «Политиздат», 1960, 836 с.
1.25.Мирные переговоры в Брест-Литовске с 22/9 декабря 1917 г. до 3 марта (18 февраля) 1918 г. / Т. 1 (Пленарные заседания. Заседания политической комиссии) / Полный текст стенограммы под ред. и с прим. А. А. Иоффе (В. Крымского) / Предисл. Л. Д. Троцкого. М., Издание Народного Комиссариата Иностранных Дел, 1920, VI+270 с.+илл.
1.26.Сборник договоров России с другими государствами (1856–1917) / Сост. И. В. Козьменко / Под ред. Е. А. Адамова. М., «Госполитиздат», 1952, 463 с.
1.27.Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson / Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, Novem-

ber 22nd, 1920 / Prepared with an introduction by A. Papian. Yerevan, “Asoghik” Publishing House, 2011, 332 p.
1.28.Documents on British Foreign Policy 1919–1939 / Vol. 1 / Ed. by E. L. Woodward, R. Butler / 1st Series. Lnd, HMSO, 1947, 969 p.
1.29.Papers Relating to the Foreign Relations of the United States, The Paris Peace Conference, 1919 / Vol. 1 / Ed. by J. V. Fuller. Washington, United States Government Printing Office, 1942, 575 p.
1.30.Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919 (In two volumes) / Vol. II. Washington, US Government Printing Office, 1934, 916 p.
1.31.Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913–1919): Dokumente aus dem Politischen Archiv des Deutschen auswärtigen Amts / Zusammengestellt und eingeleitet von Prof. W. Mikaelyan. Jerewan, “Hayastan” verlag, 2004, 634 s.
1.32.Österreich-Armenien 1872–1936: Faksimilesammlung diplomatischer Aktenstücke / herausgegeben und eingeleitet von A. Ohanjanian / Bände 1–12. Wien, Ohandjanian Eigenverlag, 1995.
1.33.Österrich-Ungarn und Armenien 1912–1918: Sammlung diplomatischer Aktenstücke / Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. A. Ohanjanian. Jerewan: Institut-Museum für Armenischen Genozid der Akademie der Wissenschaften Armeniens, 2005, 521 s.

2. ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1.***Ադոնց Ն.*** Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1989, 113 էջ:
2.2.***Ադոնց Ն.*** Երկեր / Կազմ., ծանոթ., ներած. Պ. Հովհաննիսյան / Թարգմ. Վ. Դիլոյան, հ. Ա (Հայկական հարց), Երևան, «Հայագիտակ», 1996, 244 էջ:

2.3. ***Ալիխանյան Ս.*** Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Երևան, «Հայաստան», 1966, 413 էջ:
2.4. ***Ավետիսյան Հ.*** Հայկական հարցը 1918 թվականին / Խմբ. Ա. Ա. Խառատյան, Երևան, «Բարձրագույն դպրոց», 1997, 436 էջ:
2.5. ***Ավետիսյան Հ.*** Հայոց ազգային միասնության հաղթանակը, Երևան, «Գիտություն», 1998, 302 էջ:
2.6. ***Արզումանյան Մ. Վ.*** Արհավիրքից վերածնունդ, Երևան, «Հայաստան», 1973, 580 էջ:
2.7. ***Բարդակչյան Գ. Պ.*** Հիտլերը և հայոց ցեղասպանությունը: [Հիտլերի ճառը 1939 թ. օգոստոսի 22-ին] / Անգլ. թարգմ. Շ. Ս. Ալթունյան, Երևան, «Նշանակ», 2005, 88 էջ:
2.8. ***Բարսեղով Յու.*** Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 1999, 33 էջ:
2.9. ***Գալոյան Գ.*** Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, «Հայաստան», 1982, 460 էջ:
2.10. ***Գալոյան Գ.*** Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ. / Խմբ. Վ. Միքայելյան, Երևան, «Գիտություն», 1999, 539 էջ:
2.11. ***Գալոյան Գ.*** Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.) / Խմբ. Է. Լ. Դանիելյան, Երևան, «Գիտություն», 2004, 822 էջ:
2.12. ***Գզոյան Է.*** Հայաստանի առաջին Հանրապետությունը և Ազգերի լիգան / Պատ. խմբ. Է. Ա. Զոհրաբյան, Երևան, «Գիտություն», 2013, 218 էջ:
2.13. ***Դադրյան Վ.*** Հայոց ցեղասպանությունը՝ ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր / Անգլ. թարգմ. Ա. Բեժանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 44 էջ:

2.14. ***Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա.*** Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, «Զանգակ-97», 2008, 352 էջ:
2.15. ***Եսայան Ա.*** «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, «Միտք», 1965, 374 էջ:
2.16. ***Եսայան Ա.*** Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920–1922), Երևան, «Միտք», 1967, 431 էջ:
2.17. ***Զատիկյան Հ. Գ.*** Հայկական հարց, Երևան, «Խ. Աբովյան» հրատ., 2014, 520 էջ:
2.18. ***Զոհրաբյան Է. Ա.*** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920–1922 թթ.), Երևանի համալսարանի հրատ., 1979, 344 էջ:
2.19. ***Զոհրաբյան Է. Ա.*** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, «Ոսկան Երևանցի», 1997, 366 էջ:
2.20. ***Զոհրաբյան Է. Ա.*** Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր–1920 թ. ապրիլ), Երևան, ա. հ., 2002, 266 էջ:
2.21. ***Թորիկեան Շ.*** Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, «Կիլիկիա», Հրատարակութիւն Հայ դատի յանձնախումբի, 1976, 312 էջ:
2.22. ***Լազյան Գ.*** Հայաստան եւ հայ դատը: Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Ադանա», 1991, 435 էջ:
2.23. ***Լիպլ Է.*** Հայկական հարցը / Թարգմ. Գ. Սարգսյան, Երևան, «Նահապետ», 2003, 40 էջ:
2.24. ***Խաչատրյան Կ.*** Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին / Խմբ. Հ. Ա. Ավետիսյան / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 27, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2007, 260 էջ:

2.25.***Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ.*** Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015, 160 էջ+4 էջ ներդիր+2 քարտեզ:
2.26.***Խատիսյան Ալ.*** Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բեյրութ, «Համազգային», 1968, 488 էջ:
2.27.***Խուրշուդյան Լ.*** Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը / Խմբ. Բ. Ուլուբաբյան, Երևան, «Համազգային հայ կրթական և մշակութային միություն», 1995, 100 էջ:
2.28.***Խուրշուդյան Լ.*** Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, ԵՊՀ հրատ., 2002, 315 էջ:
2.29.***Կարապետյան Հ.*** Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում / Խմբ. Ա. Հարությունյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2004, 128 էջ:
2.30.***Կիրակոսյան Ա.*** Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահրավական եռալեզու տեղեկանք), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, 103 էջ:
2.31.***Հակոբյան Ա.*** Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.), Երևան, «Հայաստան», 1992, 35 էջ:
2.32.***Հակոբյան Ա.*** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում / Խմբ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, «Գիտություն», 2010, 339 էջ:
2.33.***Հակոբյան Հ. Վ.*** Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Երևան, «Ասողիկ», 2000, 288 էջ:
2.34.***Հակոբյան Հ. Վ.*** Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը / Խմբ. Վ. Բայբուրդյան, Երևան, «Ասողիկ», 2002, 414 էջ:

2.35. ***Հարությունյան Ա.*** Սևրի պայմանագիրը և հայ հասարակական–քաղաքական միտքը / Խմբ. Վ. Ղազախեցյան, Երևան, «Գիտություն», 2004, 139 էջ+1 ներդ. թ. դիմանկ.+1 ներդ. թ. քարտեզ:
2.36. ***Հովհաննիսյան Լ.*** Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին / Պատ. խմբ. Հ. Ա. Ավետիսյան, Երևան, «Զանգակ-97», 2002, 184 էջ:
2.37. ***Հովհաննիսյան Լ.*** Օսմանյան կայսրության մասնատման մեծ տերությունների ծրագրերը 1914–1917 թթ. // Հայոց պատմություն / Հատոր III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին) / Խմբ. Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ», 2015, էջ 529–535:
2.38. ***Հովհաննիսյան Ռ. Գ.*** Հայաստանի Հանրապետություն / ՀՀ ԳԱԱ / Պատմության ինստիտուտ / Խմբ. Ա. Ա. Խառատյան / Հատոր I / Առաջին տարին, 1918–1919, Երևան, «Տիգրան Մեծ», 2005, 604 էջ, Հատոր II / Վերսալից–Լոնդոն, 1919–1920, Երևան, «Տիգրան Մեծ», 2014, 665 էջ, Հատոր III / Լոնդոնից–Սևր, փետրվար–օգոստոս, 1920, Երևան, «Տիգրան Մեծ», 2015, 628 էջ, Հատոր IV / Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 572 էջ:
2.39. ***Ղազախեցյան Վ.*** Հայաստանը 1920–1940 թթ. / Պատ. խմբ. Հ. Մ. Հարությունյան / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 14 /, Երևան, Պատմության ինստիտուտի հրատ., 2006, 564 էջ:
2.40. ***Ղազախեցյան Վ.*** Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը // Հայոց պատմություն / Հատոր IV, գիրք I (Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)) / Խմբ. Վ. Ղազախեցյան և ուրիշ., Երևան, «Զանգակ-97», 2010, էջ 324–339:

2.41. ***Ղազարյան Հ. Մ.*** Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, «Էդիթ Պրինտ», 2010, 988 էջ:
2.42. ***Ղազարյան Հ.*** Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ / գիրք առաջին / Սևրի 1920 թվականի պայմանագիրը և Միացյալ Անկախ Հայաստանի հռչակումը, Երևան, «Էդիթ Պրինտ», 2012, 732 էջ+8 ներդ. թ. դիմանկ.+2 ներդ. թ. քարտեզ, գիրք երկրորդ / Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստանի և Թուրքիայի սահմանաբաժանման վերաբերյալ, Երևան, «Էդիթ Պրինտ», 2012, 732 էջ+12 ներդ. թ. դիմանկ.+1 ներդ. թ. քարտեզ:
2.43. ***Մարուքյան Ա.*** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները / Խմբ. Ա. Մելքոնյան, Վ. Վարդանյան / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 102, Երևան, Պատմության ինստիտուտ, 2014, 332 էջ:
2.44. ***Մելիքյան Վ. Հ.*** Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր) / Պատ. խմբ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, «Մխիթար Գոշ», 1997, 320 էջ:
2.45. ***Մելիքյան Վ.*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Երևան, «Զանգակ-97», 2007, 80 էջ:
2.46. ***Մելիքյան Վ.*** Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար) / Խմբ. Հ. Հարությունյան / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 64, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2010, 264 էջ:
2.47. ***Մելիքեան Վ. Հ.*** Հայկական պահանջատիրութիւն: Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ

համագումարի անհրաժեշտութիւնը, Երևան, «Զանգակ-97», 2010, 120 էջ:
2.48. ***Մելիքյան Վ.*** Հայաստանը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո; 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում և Հայաստանը // Հայոց պատմություն / ՀՀ ԳԱԱ ՊԻ / Հատոր III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին) / Խմբ. Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ» հրատ., 2015, էջ 543–579, 580–614:
2.49. ***Մելքոնյան Ա. Ա.*** Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ) / ՀՀ ԳԱԱ / Պատմության ինստիտուտ, Երևան, «Զանգակ» հրատ., 2015, 440 էջ:
2.50. ***Մելքոնյան Ա.*** Հայոց պատմություն / Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, «Հայագիտակ», 1998, 278 էջ:
2.51. ***Մելքոնյան Ա. Ա.*** Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, «Միտք» վերլուծական կենտրոն, 2011, 456 էջ:
2.52. ***Մելքոնյան Ա. Ա.*** Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, «Գիտություն», 2013, 632 էջ:
2.53. ***Մսըրլեան Զ.*** Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), Պէյրութ, 1979, 176 էջ:
2.54. ***Մսըրլեան Զ.*** Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900–2009), Պէյրութ, 2010, 160 էջ:
2.55. ***Նաթալի Շ. (Տէր-Յակոբեան Յա.)***, Հայաստանի վերջին աղէտը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբօլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայ-

ման պատճառները, պալշէվիքեան տիրապետութիւնը: Անտիպ փաստաթուղթեր դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ, Կ.Պոլիս, տպ. Մ. Տէր Սահակեան, 1921, 126 էջ:
2.56. ***Նաթալի Շ.*** Երեք դաշնագրեր: (Աղէքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի) / «Արարատ» մատենաշար թիւ 24 և 25, Պէյրութ, 1957, 130 էջ:
2.57. ***Նասիպեան Ա.*** Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրութ, «Սիփան», 1994, 343 էջ:
2.58. ***Պապյան Ա.*** Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (Հոդվածների ժողովածու), Երևան, «Ասողիկ», 2012, 488 էջ:
2.59. ***Պօղոսեան Ս.*** Պօղոս Նուբար փաշա: Ազգային գործիչը / Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայոց պատմ. ամբ. / Գիտ. խմբ. Մ. Կարապետյան, Ս. Դանիելյան, Երևան, «Զանգակ-97», 2004, 264 էջ+4 էջ ներդ.:
2.60. ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն / Հատոր III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, Երևան, «Հայաստան», 2003, 456 էջ:
2.61. ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն / Հատոր III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), Երևան, «Հայաստան», 2004, 392 էջ:
2.62. ***Պողոսյան Ստ., Պողոսյան Կ.*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն / Հատոր III (Հայկական հարցը 1918–1919 թթ.), գիրք I, մաս Բ, Երևան, «Հայաստան», 2004, 416 էջ:
2.63. ***Սարգսյան Ե.*** Դավադիր գործարք: Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, «Հայաստան», 1995, 204 էջ:
2.64. ***Սիմոնյան Հր. Ռ.*** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, «Հայաստան», 1991, 630 էջ:

2.65.***Սրեփանյանց Սպ. (Կերպող)*** Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003, 344 էջ:
2.66.***Վրացյան Ս.*** Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, 704 էջ:
2.67.***Տերնոն Ի.*** Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև / ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, Երևան, «Նահապետ», 2003, 36 էջ:
2.68.***Փիրումեան Ռ.*** Հայաստանը Հ.Յ.Դ. – Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում (1917–1921), Երևան, ԵՊՀ հրատ., 1997, 421 էջ:
2.69.***Քաջազնունի Հ.*** Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, «Շաղիկ», 1994, 87 էջ:
2.70.***Քառյան Ս.*** Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության պատմագրություն / Խմբ. Հ. Ա. Ավետիսյան / ՀՀ ԳԱԱ / Պատմ. ին-տ, Երևան, «Գիտություն», 2003, 289 էջ:
2.71.***Аветисян Г.*** Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум. Ереван, «Спюрк», 1994, 144 с.
2.72.***Арабян И. А.*** Геноцид и его наказуемость (страницы истории: вчера и сегодня) / Ред. Л. Барсегян / МИГА НАН РА. Ереван, «Гитутюн», 1999, 92 с.
2.73.***Барсегов Ю.*** Геноцид армян–преступление против человечества. (О правомерности термина и юридической квалификации). Ереван, «Айастан», 1990, 32 с.
2.74.***Барсегов Ю.*** Арбитражное решение президента США по армяно-турецкой границе: (полит. и междунар.-правовой коммент.). Ереван, 1995, 18 с.
2.75.***Барсегов Ю.*** Геноцид армян–преступление по международному праву / Союз армян России, Арм. ин-т междунар. права и политологии в Москве. М., «XXI век–Согласие», 2000, 272 с.

2.76.***Барсегов Ю.*** Турецкая доктрина международного права на службе политики геноцида. (О концепции члена «Комиссии примирения» Гюндюз Актана). М., «Готика», 2002.
2.77.***Борьян Б. А.*** Армения, международная дипломатия и СССР, ч. II. М.-Л., «ГИЗ», 1929, 434 с.
2.78.***Врацян С. К.*** Армения между большевистским молотом и турецкой наковальней. Ереван, изд. А. Р. Дашнакцутюн, 1992, 136 с.
2.79.***Гюрюн К.*** Армянское досье. Баку, «Языцы», 1993, 176 с.
2.80.***Дадрян В.*** Геноцид армян. Содержание преступления / Музей-Институт Геноцида Армян НАН РА. Ереван, «Наапет», 2005, 55 с.
2.81.***Дадрян В.*** История Армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа / Ереванский университет «Гладзор» / Пер. с англ. С. Д. Оганесян / Науч. ред. А. В. Акопян. Ереван, «Ноян Тапан», 2007, 620 с.
2.82.Действующее международное право / В 3-х томах / Учебное пособие для студентов и аспирантов, изучающих международное право // Министерство иностранных дел РФ, Московский государственный институт (университет) международных отношений МИД РФ, Московский независимый институт международного права / Составители: Ю. М. Колосов, Э. С. Кривчикова / Т. 1. М.: Московский независимый институт международного права, 1996, 864 с.
2.83.История дипломатии / Т. 3 / Ред. А. А. Громыко. М., «Госполитиздат», 1965, 831 с.
2.84.***Лукашук И. И.*** Форма международных договоров / Учебно-практическое пособие / РАН: Ин-т государства и права. М., «СПАРК», 2001, 111 с.

2.85.***Марукян А. Ц.*** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.) / Отв. ред.: В. Тунян, Р. Багдасарян. Ереван, МИГА НАН РА, 2003, 482 с.

2.86.***Махмурян Г. Г.*** Лига наций, Армянский вопрос и Республика Армения / Институт истории НАН Армении. Ереван, «Артагерс», 1999, 176 с.

2.87.***Махмурян Г. Г.*** Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Бремя белого человека / Ин-т истории НАН РА / Ред. С. С. Степанян. Ереван, «Лусакн», 2002, 309 с.

2.88.***Ованнесян Р. Г.*** Международные отношения Республики Армения, 1918–1920 гг. / НАН РА / Ин-т истории / Пер. с англ. Г. Г. Махмурян. Ереван, «Тигран Мец», 2007, 920 с.

2.89.***Оганян П. К.*** Геноцид армянского народа и защита прав человека / МИГА НАН РА. Ереван, «Наапет», 2003, 44 с.

2.90.***Тунян В.*** Россия и Армянский вопрос / НАН РА / Музей-институт геноцида армян / Отв. ред. С. С. Степанян. Ереван, «Амарас», 1998, 241 с.

2.91.Georgia and the War. Zurich, The Orient publishing Co., 1916, 62 p.

2.92.***Эриксон Э. Э.*** Турки и армяне. Исследование борьбы с повстанцами. М., «Российская политическая энциклопедия», 2018, 376 с.

2.93.***Marashlian L.*** Politics and Demography: Armenians. Turks and Kurds in the Ottoman Empire. N.Y., Zoryan Institute, 1991, 152 p.

2.94.Die Armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutschland / Institut-Museum für Armenischen Genozid der Akademie der Wissenschaften Armeniens. Jerewan, Institut-Museum für Armenischen Genozid der Akademie der Wissenschaften Armeniens, 2005, 54 s.

2.95.***Ohanian C. P.*** La Cuestión Armenia y las Relaciones Internacionales / tomo 5 / 1919 / Academia National de Ciencias de la Republica de Armenia / Museo-Instituto del Genocidio de los Armenios / Director L. Barseghian. Buenos Aires, 2005, 942 p.; tomo 6 / 1920 / Academia National de Ciencias de la Republica de Armenia. Buenos Aires, "Akian Gráfica Editora", 2010, 1456 p.
2.96.***Marashlian L.*** Ermeni Sorunu ve Turk-Amerikan Iliskileri–1919–1923. Istanbul, Belge Uluslararasi Yayincilek, 2000, 119 p.

3. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1.***Գաբրիելյան Գ. Ֆ.*** Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի փոխհարաբերությունները 1920 թ. մայիս–դեկտեմբերին / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012, 24 էջ:
3.2.***Եփրիկյան Ա. Մ.*** Նախիջևանը 1917–1921 թվականներին / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2008, 26 էջ:
3.3.***Թորոսյան Ջ. Ջ.*** Հայաստանի տարածքների խնդիրը 1918–1920 թթ. խորհրդաժողովներում և պայմանագրերում / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015, 22 էջ:
3.4.***Հակոբյան Ն. Է.*** Հայ-ամերիկյան առնչությունները 1914–1920 թթ. / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015, 20 էջ:

3.5. ***Ղազարյան Ս. Հ.*** Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը Հայկական հարցում (1918–1920 թթ.) / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006, 25 էջ:
3.6. ***Մախմուրյան Գ. Գ.*** 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, ա. հ., 2007, 53 էջ:
3.7. ***Մինասյան Մ. Ա.*** Հայ առաքելական եկեղեցին և Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, ա. հ., 2004, 22 էջ:
3.8. ***Սրեփանյանց Ս. Մ.*** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը առաջին աշխարհամարտի տարիներին / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2013, 35 էջ:
3.9. ***Маргарян В. Д.*** Основания международно-правовой ответственности государств за совершение преступления геноцида / Автореферат диссертации кандидата юридических наук по спец. «Международное право». Ереван, 2005, 26 с.

4. ՀՈԴՎԱԾՆԵՐ

4.1. ***Ավետիսյան Հ.*** Հունական արխիվային փաստաթղթերը հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապե-

տության շրջանում (1918–1920 թթ.) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1999, № 1 էջ 22–33:
4.2. ***Ավետիսյան Հ.*** Հայ-հունական հարաբերությունները 1919–1920 թվականներին (Հայաստանի պետական արխիվների փաստաթղթեր և նյութեր) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2000, № 2, էջ 192–210:
4.3. ***Ավետիսյան Հ.*** Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի հարցի շուրջ (1919–20) // Հայկական հարց / Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր / Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան / Խմբ. Ստ. Պողոսյան, Հ. Ավետիսյան և ուրիշներ, Երևան, «Արտագերս», 2000, էջ 24–31:
4.4. ***Գալոյան Գ.*** Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը Առաջին համաշխարհային պատերազմից հետո // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1993, № 4, էջ 3–24:
4.5. ***Գալոյան Գ.*** Հայաստանը Ասիական Թուրքիայի բաժանման ծրագրերում (1915–1917 թթ.) // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2001, № 2, էջ 58–76:
4.6. ***Զատիկյան Հ.*** Ավետիս Ահարոնյանը և Հայկական հարցը // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2006, № 2, էջ 41–52:
4.7. ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2010, №№ 1–2, էջ 36–58:
4.8. ***Խաչատրյան Կ.*** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատանքները 2009–2013 թթ. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ասպարեզում // Հայագիտության հարցեր / ԵՊՀ, 2014, № 1, էջ 214–217:

4.9.***Հակոբյան Ա.*** Անկախության գաղափարը Հ.Յ. Դաշնակցության ծրագրերում (1890–1920 թթ.) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1993, № 3, էջ 18–26:
4.10.***Հակոբյան Ա.*** Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ // Պատմա–բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2006, № 3, էջ 36–56:
4.11.***Հակոբյան Ա.*** Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական գնահատականը (1920–1921 թթ.) // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2007, № 2, էջ 17–30:
4.12.***Հայրունի Ա.*** Հայկական հարցը 1918 թ. հայ-գերմանական և թուրք-գերմանական հարաբերությունների համատեքստում // Պատմա-բանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2007, № 1, էջ 18–35:
4.13.***Հարությունյան Ա.*** «Կովկասյան տան» նախագիծը 1921–1922 թվականներին՝ ՀՅ Դաշնակցության դերակատարության լույսի ներքո // ՎԷմ / համահայկական հանդես, 2015, Է տարի, թ. 4, հոկտեմբեր–դեկտեմբեր, էջ 182–220:
4.14.***Հարությունյան Բ.*** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2011, № 3, էջ 51–61:
4.15.***Հովհաննիսյան Լ.*** Հայաստանը «Կովկասյան տան» թուրքական և Կ.Պոլիս-Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագրերում // Ժամանակակից քաղաքակրթական գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների առաջին գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու / Խմբ. Հ. Հակոբյան և ուրիշներ, Երևան, «Նոյյան Տապան», 2004, էջ 110–125:

4.16. ***Հովհաննիսյան Լ.*** Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1915 թվականին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 7 / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 15 / ՀՀ ԳԱԱ / Պատմության ինստ. / Խմբ. կոլ. Ա. Ա. Մելքոնյան, Է. Լ. Դանիելյան և ուրիշներ, Երևան, Պատմ. ինստ., 2006, էջ 108–117:

4.17. ***Հովհաննիսյան Լ.*** 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վերանայման անհրաժեշտությունը // Պետություն, պատմություն, տնտեսություն, մշակույթ / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների չորրորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու / Խմբ. Հ. Զաքարյան և ուրիշներ, Երևան, «Նոյյան տապան», 2009, էջ 171–181:

4.18. ***Հովհաննիսյան Լ.*** Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1917 թվականին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 11 / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 63 / ՀՀ ԳԱԱ ՊԻ / Խմբ. խորհ. Ա. Ա. Մելքոնյան, Կ. Հ. Խաչատրյան, Երևան, Պատմ. ինստ., 2010, էջ 240–257:

4.19. ***Հովհաննիսյան Լ.*** Հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության հարցը Սևրի պայմանագրում // «Գլաձոր»-20: Հոդվածների հոբելյանական ժողովածու / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների հինգերորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու / Խմբ. Ա. Պապոյան, Ս. Իսկանդարյան, Երևան, 2011, էջ 173–190:

4.20. ***Հովհաննիսյան Լ.*** Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական հարցում Սան Ռեմոյի և Լոնդոնի խորհրդաժողովների միջև ընկած ժամանակահատվածում // Հայոց պատմության հար-

ցեր (Գիտական հոդվածների ժողովածու 13) / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 86 / ՀՀ ԳԱԱ / Պատմության ինստ. / Խմբ. խորհ. Ա. Ա. Մելքոնյան, Ա. Ա. Խառատյան և ուրիշներ, Երևան, Պատմ. ինստ., 2012, էջ 184–194:

4.21.***Հովհաննիսյան Լ.*** Բռնագաղթված հայության հայրենիք վերադառնալու հիմնախնդիրը 1921 թվականի Լոնդոնի խորհրդաժողովում // Նոր «Գլաձորը» գիտության բավիղներում / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների վեցերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու / Խմբ. Ա. Պապոյան և ուրիշներ, Երևան, «Նոյյան Տապան», 2013, էջ 233–250:

4.22.***Հովհաննիսյան Լ.*** Հայերի ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հիմնախնդիրը // Հայաստան: Ցեղասպանությունից վերածնունդ, 1915–2015 / Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների յոթերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու / Խմբ. Ս. Պապիկյան և ուրիշներ, Երևան, «Նոյյան տապան», 2015, էջ 310–332:

4.23.***Հովհաննիսյան Լ. Հ.*** Հայկական հարցի պատմության 1917–1918 թթ. հիմնախնդիրների լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2018 թթ.) // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2019, № 1, էջ 107–125:

4.24.***Հովհաննիսյան Լ. Հ.*** Ուշագրավ աշխատություն ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների և հատուցման կառուցակարգերի վերաբերյալ // Վէմ / համահայկական հանդես, 2019, ԺԱ տարի, թ. 3, հուլիս–սեպտեմբեր, էջ 193–203:

4.25.***Հովհաննիսյան Լ. Հ.*** Հայկական հարցի 1919–1920 թթ. պատմության լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–

2019 թթ.) // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2020, № 1, էջ 60–80:

4.26. ***Հովհաննիսյան Լ. Հ.*** 1918–1920 թթ. Հայկական պետականութեան եվ ազգային միասնութեան հիմնահարցերի լուսաբանումը Հայաստանի պատմագրութեան մէջ (1991–2019 թթ.) // Հայկազեան հայագիտական հանդէս, Բէյրութ, 2020, թ. 40, էջ 63–82:

4.27. ***Ղամբարյան Ա.*** Վուդրո Վիլսոնի ուղերձը ԱՄՆ Կոնգրեսին // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 4 / ՀՀ ԳԱԱ / Պատմության ինստ-տ / Պատ. խմբ. Ա. Ա. Մելքոնյան, Երևան, «Գիտություն», 2003, էջ 125–130:

4.28. ***Ղամբարյան Ա.*** ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական հարցում Փարիզի վեհաժողովի նախօրյակին // Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը / Գիտաժողովի նյութեր / Խմբ. Ս. Ստեփանյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2009, էջ 60–68:

4.29. ***Ղամբարյան Ա.*** Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի դիվանագիտական դրսևորումները Հայկական հարցում Առաջին աշխարհամարտի ավարտից հետո // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 11 / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 63 / ՀՀ ԳԱԱ ՊԻ / Խմբ. խորհ. Ա. Ա. Մելքոնյան, Կ. Հ. Խաչատրյան, Երևան, Պատմ. ինստ., 2010, էջ 225–239:

4.30. ***Մախմուրյան Գ.*** Ինքնապաշտպանության կազմակերպման հարցերի քննարկումը Հայոց Ազգային խորհրդում (1917 թ. նոյեմբեր–1918 թ. հունվար) // Բանբեր Հայաստանի արխիվների / Գիտական ժողովածու / Հայաստանի ազգային արխիվ, 2014, էջ 58–111:

4.31. ***Մախմուրյան Գ.*** Հայկական հարցն ու Հայաստանի Հանրապետությունը բրիտանական պառլամենտի 1920 թ. փետրվար–

ապրիլ ամիսների հաշվետվություններում // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 2009, № 2, էջ 20–32:
4.32.***Մախմուրյան Գ.*** ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արծարծումը Ավետիս Ահարոնյանի Փարիզից ու Սան Ռեմոյից ուղարկված նամակներում // Բանբեր Հայաստանի արխիվների, 2010, № 1, էջ 56–72:
4.33.***Մախմուրյան Գ.*** Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում // Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ) / 1–2 հոկտեմբերի, 2014 թ. / Զեկուցումների ժողովածու / ՀՀ ԳԱԱ / Խմբ. Ա. Մարուքյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., էջ 158–171:
4.34.***Մարուքյան Ա.*** Հայկական հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում (պատմա-իրավական գնահատական) // Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը / Գիտաժողովի նյութեր / Խմբ. Ս. Ստեփանյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2009, էջ 48–59:
4.35.***Մարուքյան Ա. Յ.*** Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը: Ամփոփում և առաջարկներ // ՎԷմ / համահայկական հանդես, 2010, Բ տարի, թ. 1, հունվար–մարտ, էջ 11–28:
4.36.***Մարուքյան Ա. Յ.*** Սևրի պայմանագրի և Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի վավերականության հարցի շուրջ // ՎԷմ / համահայկական հանդես, 2010, Բ տարի, թ. 3, հուլիս–օգոստոս, էջ 130–142:
4.37.***Մարուքյան Ա.*** ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական ու միջազգային-իրավական նշանակությունը // Մեծ եղեռն. դատապարտումից՝ հատուցում / Հոդվածների ժողո-

վածու / ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. / Խմբ. Ս. Ստեփանյան, Ա. Մարուքյան, Երևան, ԳԱԱ հրատ., 2011, էջ 83–98:
4.38. ***Մարուքյան Ա.*** Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգային-իրավական գնահատականը // Վէմ / համահայկական հանդես, 2011, Գ տարի, թ. 2, ապրիլ–հունիս, էջ 129–139:
4.39. ***Մարուքյան Ա.*** Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2015, № 1, էջ 24–35:
4.40. ***Ներսիսյան Ա., Թորոսյան Ջ.*** Բաթումի կոնֆերանսը: Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում // Ակունք / Գիտական հոդվածների ժողովածու թիվ 2 / Գլխ. Խմբ. Ա. Ներսիսյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 3–18:
4.41. ***Պողոսյան Ս.*** Կիլիկիայի հարցը 1920 թ. Սևրի պայմանագրից հետո // Հայոց պատմության հարցեր / Գիտական հոդվածների ժողովածու 7 / Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 15 / ՀՀ ԳԱԱ / Պատմության ինստ. / Խմբ. կոլ. Ա. Ա. Մելքոնյան, Է. Լ. Դանիելյան և ուրիշներ, Երևան, Պատմ. ինստ., 2006, էջ 166–178:
4.42. ***Պողոսյան Ս.*** Կիլիկիայի հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում // Վէմ / համահայկական հանդես, 2012, Դ տարի, թ. 3, հուլիս–սեպտեմբեր, էջ 154–168:
4.43. ***Սարգսյան Ե.*** Քեմալականների 1920–1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագիրը // Լրաբեր հասարակական գիտությունների / ՀՀ ԳԱԱ, 1992, № 1, էջ 19–34:
4.44. ***Սարուխանյան Ն.*** Ռուսաստանը և Հայկական հարցը // Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ, 2009, №№ 2–3, էջ 3–22:
4.45. ***Аветисян Г. А.*** Генерал Акоп Багратуни (1879–1943) // Историко-филологический журнал / НАН РА, 1997, № 1, с. 41–56.

4.46.***Барсегов Ю. Г.*** Ответственность государства за геноцид в международном праве // Геноцид–преступление против человечества / Материалы I Московского международного симпозиума 18–19 апреля 1995 г. / Междунар. гуманит. фонд арменоведения им. акад. Ц.П. Агаяна / Отв. ред. В. А. Микаелян. М., «Информ-полиграф», 1997, 232 с.

4.47.***Закарян А.*** Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.) // Историко-филологический журнал / НАН РА, 2005, № 3, с. 254–257.

4.48.***Казанджян Р.*** К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г. // Вестник общественных наук /НАН РА, 1999, № 1, с. 183–187.

4.49.***Казанджян Р.*** К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г. // Страны и народы Ближнего и Среднего Востока, XX. Ереван, НАН РА, 2001, с. 106–124.

4.50.***Казанджян Р.*** Русско-турецкие отношения 1920–1921 гг. и вопрос Армении в свете секретных документов московских архивов // Современное состояние и перспективы развития арменоведения / Сборник докладов международного симпозиума / Ред. В. Бархударян. Ереван, «Тигран Мец», 2004, с. 201–227.

4.51.***Марукян А. Ц.*** Новые тенденции в процессе отрицания геноцида армян (о попытках отрицания геноцида армян российскими историками М. Мейером и О. Кузнецовым) // Вестник общественных наук / НАН РА, 2014, № 1, с. 19–45.

4.52.***Махмурян Г. Г.*** Дипломатия Республики Армения в январе–апреле 1920 г. // Историко-филологический журнал / НАН РА, 2007, № 2, с. 82–96.

4.53.***Махмурян Г. Г.*** Армянская тематика в британской политике (В свете константинопольских событий 1919-1920 гг.) // Вестник общественных наук / НАН РА, 2011, №№ 1–2, с. 363–382.
4.54.***Махмурян Г.*** Лондонский договор 26 апреля 1915 г. на Парижской мирной конференции (апрель–май 1919 г.) // Вопросы истории Армении / Сборник научных статей 8 / Серия изданий Месроп арх. Ашчян 31 / НАН РА. Ереван, Инст-т истории, 2007, с. 252–274.
4.55.***Махмурян Г.*** Брестский мир 1918 г. в оценке современников и армянской историографии // Историко-филологический журнал / НАН РА, 2012, № 2, с. 46–62.
4.56.***Оганесян Л. Г.*** Западная Армения в планах великих держав в годы Первой мировой войны // Историческое пространство. Проблемы истории стран СНГ. М., «Наука», 2014, с. 91–114.
4.57.***Оганисян Л. Г.*** Западная Армения в планах великих держав в 1914–1916 гг. // Вестник общественных наук / НАН РА, 2013, № 3, с. 68–76.
4.58.***Саркисян Е.*** За кулисами, как рождался Московский договор 1921 г. // Литературная Армения, 1991, № 1, с. 71–82.
4.59.***Dadrian V. N.*** Genocide as a Problem of National and International Law / The World War I, Armenian Case and its Contemporary Legal Ramifications / Yale Journal of International Law, 1989, Vol. 14, № 2, pp. 221–334.
4.60.***Dadrian V. N.*** Textual Analyses of the Key Indictment of the Turkish Military Tribunal Investigating the Armenian Genocide / The Armenian Review, 1991, № 1, pp. 1–36.
4.61.***Hovhannisyan L. H.*** Melkonyan A., Poghosyan G., Aghasyan A., Marukyan A., Kertmenjyan D., Melik-Adamyan H., Vardanyan V., Badalyan G., Hovhannisyan A. The losses of Armenian people

because of Genocide and the methodological grounds of compensation structure. Yerevan, “Tir” Publishing House, 2019, 608 pp. // Review of Armenian Studies / NAS RA, 2020, № 1, pp. 241–244.

5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

5.1.«Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1993, 2010, 2014
5.2.«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1992, 1993, 1999, 2000, 2007, 2009, 2010, 2011, 2013, 2014
5.3.«Հայագիտության հարցեր», Երևան, 2014
5.4.«Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1997, 2001, 2005, 2006, 2007, 2009, 2011, 2012, 2015
5.5.«ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2010, 2011, 2012, 2015
5.6.«Историческое пространство. Проблемы истории стран СНГ», Москва, 2014
5.7.«Литературная Армения», Ереван, 1991
5.8.“Yale Journal of International Law”, New Haven, 1989
5.9.“The Armenian Review”, Watertown, 1991

6. ԹԵՐԹԵՐ

6.1.«Զանգ», Երևան, 1918
6.2.«Հորիզոն», Թիֆլիս, 1917, 1918
6.3.«Մշակ», Թիֆլիս, 1917
6.4.«Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2018

7. ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1.Հայկական հարց: Հայոց ցեղասպանություն: Մատենագիտություն / Գիրք 1–2 / Կազմողներ՝ Ե. Չեքելեզյան, Լ. Խաչատրյան, Ա. Դավթյան, Է. Բաբայան / Խմբագիրներ՝ Դ. Սարգսյան, Հ. Ղազարյան, Երևան, Հայաստանի Ազգային գրադարան, 2005, 348+552 էջ:

7.2.***Հարությունյան Ա.*** Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց: Գրքերի մատենագիտություն (1860–2010) / Խմբ. Պ. Հովհաննիսյան, Էջմիածին, Մայր աթոռ, 2014, 560 էջ:

7.3.Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877–1997) / Составители: П. О. Оганесян, Э. А. Бабаян / Отв. ред. и предисл. П. О. Оганесян / Центр изучения Национального вопроса и Геноцида. Ереван, «Хоск», 1998, 316 с.

8. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

8.1.armeniangenocide100.org/pan-armenian-declaration/

8.2.armenianhouse.org/barsegov/genocide-ru/doctrine/doctrine.html#1

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ադոնց Նիկողայոս 5
Ալիխանյան Ս. 249
Ահարոնյան Ավետիս 150, 155, 156, 187, 192, 203, 210, 225, 288, 291, 292, 294, 296, 299, 300, 316
Ասքվիթ Հերբերտ Հենրի 54
Ավանեսով Վառլամ 111
Ավետիսյան Հրանտ 24, 34, 50, 51, 65, 66, 67, 71, 77, 79, 86, 87, 91, 94, 95, 113, 118, 119, 121–123, 125–130, 133, 135, 137–141, 144, 146, 149, 151, 155, 156, 164–169, 200, 208, 249, 250, 254, 255, 261
Արաբյան Իոսիֆ 229
Արզումանյան Մ. 249
Աքսելրոդ Պավել 111

Բադալյան Գեղամ 44, 250, 258, 260, 261, 262
Բաթլեր Նիկոլաս 168
Բալֆուր Արթուր 172, 267, 311
Բաստրմաջյան Գ. 105, 316
Բարդակչյան Գևորգ 12
Բարթիկյան Հրաչ 200
Բարսեղով Յուրի 115, 228
Բեկզադյան Ալ. 259, 265
Բեկզադյան Տ. 316
Բեյլերյան Արթուր 12, 20
Բեքիր Սամի բեյ 292, 301–303
Բիցենկո Անաստասիա 70
Բոբինսկի Ստանիսլավ 70
Բորել Է. 238
Բորյան Բ. 249, 262
Բրիան Արիստիդ 301
Բուսշե Հելմուտ ֆոն 146

Գաբրիելյան Գեորգի 46
Գալոյան Գալուստ 28, 29, 30, 50, 51, 54, 55, 59, 77, 80, 81, 87, 117, 187, 190, 191, 196–198, 201, 209, 215, 249, 251, 252, 257, 295, 297, 298, 299
Գզոյան Էդիտա 211–214
Գիբեն Ջոն 168
Գորբաչով Մ. 255

Դադրյան Վահագն 11, 229
Դավութօղլու Ահմեդ 222

Դենիկին Անտոն 169

Եսայան Ա. 249
Եփրիկյան Արմինե 46

Զավրյան Հակոբ 63, 102, 112
Զատիկյան Հովհաննես 156, 209
Զորյան Ստեփան (Ռոստոմ) 102, 111, 112
Զուրաբյան Արշակ 129, 149

Էնվեր փաշա 95, 108, 126, 150

Թալեաթ 70, 108, 120, 124, 126, 150
Թեհլիրյան Սողոմոն 41
Թևֆիկ փաշա 292
Թորիկյան Շավարշ 229, 249, 260
Թորոսյան Ջավահիր 46, 140
Թունյան Վալերի 61

Իզզեթ Ահմեդ փաշա 70, 164
Ինենյու Իսմեթ 268, 304
Իոֆֆե Ադոլֆ 70, 136
Լազյան Գ. 249
Լեբեդինսկի Եվգենի 128
Լենին Վլադիմիր 70, 92, 113, 117, 260
Լեփսիուս Յովհաննես 19
Լիթլ Էդուարդ 168

Խաչատրյան Կարեն 16, 44, 88, 225, 249, 250, 258, 260–262
Խատիսյան Ալեքսանդր 129, 143, 150, 154, 203, 249, 285, 316
Խուրշուդյան Լենդրուշ 22, 23, 51, 60, 82, 113, 193, 215, 249, 250, 312, 313

Կամենև Լև 70
Կանայան Դրաստամատ (Դրո) 285
Կարախան Լևոն 70
Կարապետյան Համբարձում 82, 88, 113, 115, 132, 205, 206
Կիրակոսյան Արման 45
Կիրակոսյան Ջ. 8, 249
Կլեմանսո Ժորժ 164, 311
Կորգանով Գ. 316

Հագգը Իբրահիմ փաշա 70, 120
Հալիլ փաշա 126

Հակոբյան Արարատ 10, 42, 43, 201, 202, 207, 209, 220, 248–252, 273, 275, 276, 284, 285
Հակոբյան Հակոբ 31–34, 52, 68, 116, 119, 220, 229, 230, 231, 233–235, 250, 255, 264–267, 298
Հակոբյան Նորայր 46
Համիդ Աբդուլ 186
Հարբորդ Ջեյմս 166, 168, 169
Հարությունյան Ավագ 181, 225, 235, 236, 316, 317
Հարությունյան Բաբկեն 43
Հինդենբուրգ Պաուլ ֆոն 126
Հյուզ Չարլզ 168
Հոհենլոե Գոտֆրիդ 149
Հովհաննիսյան Ռիչարդ 11, 161

Ղազախեցյան Վլադիմիր 25, 42, 43, 48, 181, 201, 225, 249, 250, 263, 264, 300, 301
Ղազանչյան Ռ. 249, 269
Ղազարյան Հայկ 208, 225, 250
Ղազարյան Սամվել 46
Ղամբարյան Արմենուհի 209, 210
Ղորղանյան Գաբրիել 150

Մախմուրյան Գայանե 21, 22, 27, 46, 77, 105, 115, 132, 162, 163, 170, 171, 173, 175–179, 184, 185–189, 195, 196, 209, 210, 312, 313
Մանուկյան Արամ 112, 153, 225
Մարաշլյան Լևոն 161
Մարգարյան Վլադիմիր 230
Մարուքյան Արմեն 16, 17, 37–40, 52, 55, 63, 73, 77, 82–84, 105, 116, 119, 195, 210, 215–218, 236, 237–244, 249, 250, 272, 276, 284, 304, 314, 315
Մելիք-Ղարագյոզյան Գևորգ 145, 150
Մելիքյան Վահան 25, 27, 77, 80, 81, 85, 87, 98, 99, 100, 101, 105, 154, 162, 163, 169, 174–176, 179, 180–183, 187, 188, 206, 306–311
Մելքոնյան Աշոտ 7, 39, 52, 88, 117, 118, 153, 210, 211, 219–223, 246, 262, 263, 277, 278
Մըսրյան Զավեն 161
Միլերան 311

Միլյուկով Պավել 120
Մինասյան Միքայել 46
Միքայելյան Վարդգես 17–19, 28
Միցկևիչ-Կապսուկաս Վինցաս 70
Մյասնիկյան Ալեքսանդր 316
Մոնթեգյու Էդվին 172

Նազարյանց Լիպարիտ 145, 150
Նաթալի Շ. 249
Նասիբյան Ագապի 161, 291
Նավասարդյան Վահան 103
Նեսիմի Ահմեդ 70, 121, 124, 150
Ներսիսյան Մկրտիչ 19, 20, 140
Նիկոլայ II 54
Նիտտի 311
Նորատունկյան Գ. 300
Նուբար Պողոս 21, 63, 87, 88, 154, 157, 171, 182, 185, 186, 189, 190, 203, 293, 294, 296

Շահումյան Ստեփան 99, 108, 112
Շանթ Լևոն 203
Շերիֆ փաշա 235
Շուրման Ջեկոբ 168
Շտիր Էվալդ 147

Չերչիլ Ու. 312
Չիչերին Գեորգի 135, 179

Պալմերսթոն Հենրի 68
Պապաջանյան Միքայել 150, 156
Պապյան Արա 215–218, 223, 224, 237, 239, 245, 249, 251, 272–276, 279, 280, 284, 313–315
Պավլովիչ Միխայիլ 70, 136
Պիկո Ֆրանսուա Ժորժ 57, 58, 179
Պոկրովսկի Միխայիլ 70
Պողոսյան Կարո 36, 37, 77, 80, 81, 87, 96, 101–103, 107–115, 135, 136, 138, 139, 194, 195, 203, 204, 269–271
Պողոսյան Սամվել 210
Պողոսյան Ստեփան 36, 37, 77, 80, 81, 87, 96, 101–103, 107–115, 135, 136, 138, 139, 183, 194, 195, 203, 204, 209, 210, 269–271
Պողոսյան Վարուժան 20

Պուանկարե Ռայմոն 117, 302
Պռոշյան Պռոշ 111, 112
Ջամայյան Արշակ 145, 150
Ջեսափ Հենրի 168
Ջերալդ Ջեյմս 168
Ջիվելեգով Ալեքսեյ 86
Ջորջ Դեյվիդ Լլոյդ 162, 164, 177, 190, 191, 299, 308
Ջուղաշվիլի Իոսիֆ (Ի. Ստալին) 111

Ռադեկ Կարլ 70
Ռաուֆ Հուսեին 70
Ռինելանդեր Ֆիլիպ 168
Ռոհրբախ Պաուլ 67
Ռութ Էլիհու 168

Սազոնով Սերգեյ 39, 59
Սահակյան Ավետիք 152
Սայքս Մարկ 57
Սանդերս Օ. Լիման ֆոն 126
Սարգսյան Ե. 249, 250
Սարգսյան Սերժ 221, 281, 282
Սարուխանյան Նորայր 114
Սեսիլ Ռոբերտ (Կրտսեր) 172
Սիմոնյան Հր. 215, 249, 250
Սմաթս Յան-Քրիստիան 170, 172
Սոկոլնիկով Գրիգորի 70, 136
Ստեփանյանց Ստեփան (Կերտող), 46, 157
Ստուչկա Պյոտր 70
Սրապիոնյան Սարգիս (Ս. Լուկաշին) 111
Սուրենյանց Գևորգ Ե (Տփխիսեցի) 21
Սուքիասյան Համո 44, 250, 258, 260–262
Սֆորցա Կարլո 301

Վեհիբ փաշա 126, 128
Վեհիբ Ֆերիք Մահմեդ 93
Վերխովսկի Ալեքսանդր 84
Վիլսոն Հենրի Մ. 172
Վիլսոն Վուդրո 8, 22, 92, 162–165, 167, 173, 174, 178, 180, 195, 196, 208, 210, 214–217, 219, 238, 245, 276, 280, 288, 294, 299, 311, 314, 315, 317, 318, 320, 322
Վորոնցով-Դաշկով Իլարիոն 80
Վրացյան Սիմոն 153, 225, 249, 263, 295

Տերեշչենկո Միխայիլ 83, 85
Տերյան Վահան 111

Տերնոն Իվ. 230
Տիգրանյան Սիրական 129
Տրոցկի Լև 70

Փարկեր Ալթոն Բ. 168
Փափազյան Վ. 316

Քաջազնունի Հովհաննես 202
Քառյան Սամսոն 208
Քեմալ Մուստաֆա (Աթաթուրք) 167, 204, 220, 267, 268, 273, 292, 307, 308, 311, 312
Քեմալ Յուսուֆ 303
Քերզոն Ջորջ 172, 199, 296, 302–304
Քինրոս Պատրիկ Բալֆուր 267, 268
Քյամիլ փաշա 65
Քյուլման Ռիչարդ ֆոն 121, 124

Օդիշելիձե Իլյա 128
Օզալ Թ. 255
Օհանյան Պասկալ 11
Օհանյան Պարգև 229
Օհանջանյան Արտեմ 11
Օհանջանյան Համո 149, 155
Օռլանդո 311
Օսբորն Ֆրենսիս 291

Ֆիսք Բրեդլի Ա. 168

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան, Մեծ Հայաստան, ծովից ծով Հայաստան 8, 9, 77, 87, 113, 153–154, 161, 163, 177, 183, 187–188, 190–191, 201–203, 207, 235, 244, 246, 294–295, 297–299, 306, 319, 322, 359
Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ադրբեջանի ՍՍՀ) 274
Ադրբեջանական ՍԽՀ 258
Խորհրդային Ադրբեջան 44, 205, 257
Ադրբեջան 47, 72, 138, 149, 254, 255, 257, 258, 260, 262, 267, 270, 274, 281, 283, 307
Ալաշկերտ 201
Ալաշկերտի դաշտավայր 142
Ալբանիա 212
Ալեքսանդրապոլ քաղաք և գավառ 42, 43, 140, 198, 214, 218, 220, 249, 251, 257, 262, 264, 271, 279, 284, 285, 295, 316
Ախալցխա 149
Ախալքալաք 140, 149
Ախուրյան գետ 222, 224, 259, 279
Ամերիկա 142, 167
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ) 8, 10, 12, 21, 22, 62, 75, 82, 90, 104, 105, 159, 161–164, 167–168, 170, 172–175, 177–180, 188, 195–196, 208, 213–216, 280, 286, 288, 299, 319, 320
Ադրիանապոլիս 95
Անատոլիա 67, 129–131, 138, 141, 165–168
Անդրկովկաս 21, 24, 27, 53, 68–69, 76, 79, 81, 93, 95–98, 112–113, 128–130, 132, 136, 137, 140–145, 148–149, 164–167, 169, 172–173, 185, 203, 233, 251, 254, 262, 264, 266, 287, 297, 306–307, 317, 319
Անդրկովկասի հանրապետություն 108, 143
Անդրկովկասի ՍՍՀ-ների ֆեդերատիվ միություն, Անդրֆեդերացիա 274
Անի 270

Անկարա 205, 236, 253, 277, 281, 291, 292, 302, 308
Ասիական Թուրքիա 21, 29, 50, 55, 63, 79, 84, 115, 195, 197, 308, 311
Ավստրիա 53, 121, 148, 192
Ավստրո-Հունգարիա (Ավստրո-հունգարական կայսրություն) 35, 76, 121, 148, 152, 286
Արաբիա 163, 237
Արագած լեռ 140
Արազդայան 261
Արազդայանի հանրապետություն 233
Արարատ լեռ 67, 261
Արարատյան դաշտ 152, 261
Արարատյան Հանրապետություն (տե՛ս Հայաստանի առաջին հանրապետություն)
Արաքս գետ 222, 224, 259, 279
Արաքսյան հանրապետություն 233
Արդահան 32, 70, 76, 96, 124–125, 130–132, 135, 138, 145–146, 151, 256, 259, 265, 272
Արևելյան Անատոլիա (տե՛ս Արևմտյան Հայաստան)
Արևելյան Հայաստան (Ռուսահայաստան) 32, 69, 71, 86–87, 93, 96, 98, 104, 111, 113–114, 139, 141–142, 152, 173, 181, 186, 204, 233, 256, 265, 267, 288, 294–296, 321
Արևելք 66, 110, 120, 137, 255, 289
Արևմտյան Հայաստան (Արևմտահայաստան, Թուրքահայաստան, Տաճկահայաստան) 6, 7, 9, 13, 19, 20, 23–24, 27, 30–34, 36–38, 49–56, 60, 62, 64, 67–68, 71, 73–75, 78–88, 90, 92–102, 103–106, 108, 110–118, 125, 127, 129–133, 135, 137, 138, 139, 141–144, 147–148, 151, 153–156, 159, 165–168, 171–174, 181–182, 186–187, 190, 193–195, 197–200, 203, 217, 222, 226, 228, 233, 234, 235, 237, 244, 255–256, 263, 267, 271, 278–279, 287–288, 291, 294–295, 297, 298, 300, 301, 304, 309, 311, 318, 319, 322

Արցախ, Արցախի Հանրապետություն 26, 44, 72, 140, 255, 267, 283, 322
Աֆղանստան 117

Բաբերդ 126
Բաթման-սու գետ 142
Բաթում քաղաք 24, 75, 139, 151–153, 159, 267, 278, 283, 308
Բաթումի մարզ 70, 76, 96, 124, 125, 130, 131, 133, 138, 145, 146, 149, 151
Բաղդադ 66
Բայազետ քաղաք 126
Բայազետի սանջակ 142, 201, 259
Բասրա 66
Բաքու 24, 99, 140, 151, 194, 204, 205
Բելգիա 8, 216, 292
Բեյրութ 57
Բեռլին 24, 31, 53–54, 65–67, 121, 124, 138, 145–151, 154-155, 183, 281, 306–307, 151, 154–155, 183, 281, 306–307
Բիթլիսի սանջակ 142
Բիթլիսի վիլայեթ 58, 62, 79, 96, 111, 142, 222, 294
Բոնն 18
Բոսֆոր 67
Բուդապեշտ 25
Բուլղարիա 35, 76, 121, 192, 314
Բրեստ-Լիտովսկ (Բրեստ) 24, 36, 70, 75–77, 117–119, 121, 123, 129–130, 132–136, 138–140, 142, 147–149, 151, 179, 283, 285, 308
Մեծ Բրիտանիա (Բրիտանական կայսրություն) 6, 8, 21, 38, 46, 50, 52–54, 56–58, 61, 63, 68, 83–84, 90–91, 116, 119, 150, 159, 161–162, 165, 170–173, 175, 177–179, 195, 197–198, 216, 218, 235, 252, 273, 286–292, 296, 299, 308–309, 312, 319

Գերմանիա, կայզերական (Գերմանական կայսրություն) 17, 18, 19, 28, 34, 35, 54, 61, 64, 66–67, 70–71, 76, 83, 106, 118, 121, 133, 143, 145–152, 155, 159, 163, 178, 189, 286, 292, 309
Գյունութ (Գենուտ) 261

Դաղստան 140
Դարալագյազ (Վայոց ձոր) 140, 152, 206, 214, 233, 254, 255, 259, 261
Դարդանել 55, 144
Դրեզդեն 19

Եգիպտոս 212, 289
Ելիզավետպոլի նահանգ 79
Եմեն 237
Եվրոպա 29, 150, 204, 281, 286
Երզնկա 24, 93–95, 99, 112, 126
Երևանի գավառ 140, 261
Երևանի նահանգ 79, 145
Երևան քաղաք 16, 25, 26, 46, 104, 153, 167, 176, 204, 236, 259, 262, 274, 285, 295, 305
Զանգեզուր 140, 206, 254
Զանգիբասար 233
Զմյուռնիա 82

Էգեյան ծով 64
Էլզաս-Լոթարինգիա 83
Էջմիածին քաղաք 108, 185
Էջմիածնի գավառ 140
Էստոնիա 123
Էրզրումի վիլայեթ 62, 79, 96, 111, 142, 222, 294
Էրզրում քաղաք 112, 126, 269

Թիֆլիսի նահանգ 79, 149
Թիֆլիս քաղաք 103, 105, 128, 145–149, 152
Թրակիա 66
Թուրքեստան 185
Թուրքիա 8, 13, 18, 20, 28–29, 30–31, 35, 41, 44, 47, 60, 67, 70–71, 76, 81, 87, 95, 100, 104, 110, 114, 118–119, 120, 121, 122, 125–126, 129–130, 131–135, 137, 139, 140, 143–145, 150, 165–167, 172, 175, 177, 185, 194–195, 197–200, 203–205, 207, 209, 212, 214, 216–218, 220–221, 222–224, 233–238, 241–243, 245–246, 251–273, 275–284, 288–293, 297–306, 308–320, 322
Թուրքմենչայ 266

Իգդիր 254
Իռլանդիա 289
Իսրայել 237

Իտալիա 8, 56, 59, 82, 197, 216, 292, 296, 299, 301, 312
Իրան (տե՛ս Պարսկաստան)
Իրաք 237, 314

Լատվիա 83
Լեհաստան 8, 83, 90, 107, 216, 263
Լեմնոս կղ. 75
Լեռնային Ղարաբաղ, Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ) 23, 44, 255, 281
Լիբանան 14, 161, 237
Լիտվա 83
Լիֆլանդիա (Արևելյան Գալիցիա) 123
Լոնդոն 9, 53–58, 82, 91, 173–175, 211, 218, 286, 289, 290, 291, 292, 293, 302
Լոռի-Փամբակ 152
Լոս Անջելես 10

Խաղաղ օվկիանոս 178, 192
Խարբերդ 62, 195
Խորհրդային Միություն 117, 243
Խորհրդային Ռուսաստան 36, 70, 75–76, 90–94, 102, 105, 107–108, 110–116, 118, 121, 130, 133–136, 138, 177, 194, 199, 201, 205, 207, 220, 251, 252, 256–257, 259, 262–266, 272, 289–290, 293, 302, 311
ԽՍՀՄ 243, 270, 273, 275, 280

Կալիֆորնիա 10
Կաղզվան 139, 254
Կասպից ծով 64, 168
Կարին քաղաք (տե՛ս նաև Էրզրում) 95
Կարսի գավառ 139
Կարսի մարզ 32, 70, 76, 79, 96, 112, 117, 124, 125, 130–135, 138, 145–146, 151, 214, 254–255, 259, 265, 271, 287, 302, 316
Կարսի շուրա 233
Կարս քաղաք 9, 42, 138, 140, 198, 254, 261, 266, 269, 270
Կենտրոնական Ասիա 140, 185
Կիլիկիա, երկրամաս 32, 50, 54, 56, 62, 82, 88, 106, 112, 291, 293–294, 297, 301–303, 305
Կիլիկիայի թագավորություն 23

Կիպրոս 26, 302
Կոստանդնուպոլիս 22, 55–56, 68–69, 83–84, 121–122, 125, 138, 144–145, 149–150, 162, 164–167, 174, 197, 290, 292, 307–309
Կովկաս 38, 65–71, 80, 87, 95–96, 112–113, 129, 131, 144–145, 147–150, 154, 165, 167–168, 174, 182, 197, 199, 206, 232, 315–317
Կովկասյան Ադրբեջան 140
Կովկասյան լեռնաշղթա 140
Կուբա 117
Կուռլանդիա 119

Հաագա 215
Հայաստան (տե՛ս Հայաստանի առաջին հանրապետություն, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, Հայաստանի երրորդ հանրապետություն, Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան, Մեծ Հայաստան, ծովից ծով Հայաստան)
Հայաստանի առաջին հանրապետություն (ՀՀ) 22, 28, 30, 36, 78, 153, 157, 159–161, 169, 180–181, 186, 189, 190, 192, 195, 197–199, 201–209, 211, 214, 222, 243–244, 258, 271, 276, 285, 288, 291, 293–294, 307, 312, 321
Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Հայաստանի ՍՍՀ, ՀՍԽՀ), Խորհրդային Հայաստան 10, 42, 44–45, 274, 258–261, 276
Հայաստանի երրորդ հանրապետություն (ՀՀ) 5, 7, 11–12, 14–15, 17–19, 22, 24, 26, 28, 31, 36, 41, 43, 45–48, 200, 206, 230, 237, 239, 245, 247, 249, 276–277, 280–281
Հարավային Կովկաս 113, 150, 275
Հարավարևմտյան հանրապետություն (տե՛ս Կարսի շուրա)
Հարավսլավիա 312
Հեջազ 8, 216
Հեռավոր Արևելք 298
Հյուսիսային Կովկաս 140, 150
Հնդկաստան 164, 289
Հորդանան 237

Հունաստան 8, 199, 216, 292, 312, 314
Հունգարիա 148, 192
Ղարաբաղ (տե՛ս Արցախ)
Ղրիմ 68

Ճապոնիա 8, 82, 216, 292, 309, 312

Մարմարա ծով 64
Մեծ Բրիտանիա 8, 21, 38, 46, 50, 52–54, 56–58, 61, 63, 68, 83, 84, 116, 119, 150, 159–162, 165, 170–173, 175, 177–179, 195, 197, 198, 210, 211, 216, 218, 235, 252, 273, 286–292, 296, 299, 308, 309, 312, 319
Մերձավոր Արևելք 22, 51, 57, 58, 66, 173–175, 177, 197, 235, 287, 306
Մերսին 87
Միչիգան 12
Միջագետք 66, 67, 142, 147, 163, 164, 176
Միջերկրական ծով 87, 106
Միջին Ասիա 197
Միջին Արևելք 197, 287
Մոսկվա 9, 10, 25, 42–44, 86, 115, 145, 203, 204, 218, 248, 250, 252–276, 279, 284, 285, 293, 298, 301, 314, 317
Մոսուլ 172
Մուդրոս 75, 155, 164, 195, 273, 287, 321
Մուշի դաշտավայր 142
Մուշի սանջակ 142

Նախիջևան, երկրամաս 46, 140, 152, 206, 214, 225, 233, 254, 257–261, 267
Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն 261
Նախիջևանի Հանրապետություն 233
Նեյ 192
Նիկոսիա 26
Նյու Յորք 11
Նյուրնբերգ 220
Նոր Բայազետ 108

Շահթախթի 214, 254
Շանդուն թերակղզի 178
Շարուր–Դարալագյազ 140, 152, 206, 214, 225, 233, 254, 259
Շիրակ 152
Շվեյցարիա 87, 155

Չեխոսլովակիա 8, 216
Չինաստան 192

Պաղեստին 67, 147, 163, 176, 237, Պարսից ծոց 67 Պարսկական Ադրբեջան 140 Պարսկաստան 29, 31, 266 Պետերբուրգ 54 Պոնտոս (տե՛ս Տրապիզոնի վիլայեթ)
Պոտսդամ 18, 19, 255
Պորտուգալիա 8, 216
Պրուսիա 53

Ջաֆարլու 261
Ջիբրալթար 64

Ռումելիա 166
Ռումինիա 8, 216, 312
Ռուսաստան (Ռուսիա, Ռուսական կայսրություն) 6, 21, 29, 34, 35–43, 50, 52–61, 63, 66–72, 74–86, 88–96, 99, 102, 105–116, 118–121, 125, 129–139, 144, 145, 148, 150, 151, 165–167, 169, 177, 180, 190, 194, 195, 197–199, 201, 202–207, 220, 233, 249–253, 255–257, 259–268, 272, 274, 275, 280, 281, 288–291, 293, 294, 299, 302, 306–312, 314, 316, 321
Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն 274
Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Խորհրդային Հանրապետություն (ՌՍԴԽՀ) 264

Սալոնիկ 65
Սան Ռեմո 177
Սան Ստեֆանո 32, 94
Սարիղամիշ 254
Սաուդյան Արաբիա 237
Սեբաստիա 62, 195, 301
Սեն-Ժան-դե Մորիեն 59, 81, 82
Սեն Ժերմեն 192
Սերբա-խորվաթա-սլովենական պետություն 8, 216
Սիրիա 67, 163, 172, 237, 253, 297, 301, 302, 314
Սմոլնի 113
Սորբոն 12
Ստամբուլ (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Ստոկհոլմ 105

Սուեզի ջրանցք 67
Սուրմալու 32, 140, 214, 233, 254, 256, 259, 266, 271, 272, 316
Սուրմալուի գավառ 140, 214, 271, 316
Սև ծով 94, 119
Սևանա լիճ 140
Սևծովյան նեղուցներ 55, 56, 83, 84, 144, 162, 174, 175, 178, 197
Սևր (տե՛ս Փարիզ)

Վան քաղաք 126, 278
Վանի վիլայեթ, Վասպուրական 62, 79, 81, 94, 96, 107, 111, 126, 142, 222, 278, 294
Վանա լիճ 94, 142
Վանի դաշտավայր 142
Վանի սանջակ 142
Վանի վիլայեթ 142
Վաշինգտոն 173, 178, 191, 192
Վեդիբասար 233
Վերսալ 192
Վիեննա 11, 24, 25, 90, 121, 149, 270
Վրաստան, Վրացական Հանրապետություն 44, 69, 72, 96, 145, 149, 255, 266, 267, 274
Վրաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Վրաստանի ՍՍՀ) 274

Տաճկաստան (տե՛ս Օսմանյան կայսրություն, Թուրքիա)
Տրապիզոնի վիլայեթ 96, 199
Տրապիզոն քաղաք 24, 75, 126, 137, 143, 222, 283, 294
Տրիանոն 192
Ցյուրիխ 69, 221, 276

Ուկրաինա 90, 102
Ուրմիա լիճ 58

Փարիզ 25, 55, 58, 82, 91, 153, 154, 156, 159, 160, 163, 164, 172, 174, 178, 182–187, 189–192, 203, 205, 209, 210, 219, 234, 235, 306, 315
Փոքր Ասիա 67, 83, 308

Քյարքի 261
Քյոմուրլուդաղ 261

Քրդստան (Մեծ Քրդստան)
235, 296

Օլթի 269
Օսմանյան կայսրություն 12,
17, 19–21, 29, 49, 64, 66,
70, 73, 75, 92, 96, 106, 124,
125, 147, 150, 151, 162, 165,
218, 224, 237, 286, 287
Օքսֆորդ 12

Ֆինլանդիա 90, 123
Ֆրանսիա 6, 8, 12, 21, 38,
50, 52–61, 63, 82–84, 88, 91,
106, 116, 119, 147, 159, 164,
165, 170, 175, 177, 178, 180,
185, 195, 197, 216, 218, 224,
252, 288, 292–294, 296, 297,
299, 301, 302, 308, 309, 312,
316

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցերը: Հեղինակ է 1 մենագրության, 5 գիտամեթոդական աշխատանքի և շուրջ 40 հոդվածի:

Գիտական գործունեությանը զուգահեռ շուրջ երեք տասնամյակ կատարում է մանկավարժական ու դասախոսական աշխատանք: Երկար տարիներ հայոց և համաշխարհային պատմություն, ընդհանուր մասնագիտական ու մասնագիտացման առարկաներ է դասավանդել Երևանի թիվ 137 միջնակարգ դպրոցում, «Քվանտ» վարժարանում, «Գլաձոր» համալսարանում, որտեղ 2007–2014 թթ. նաև ղեկավարել է Հ. Հակոբյանի անվան միջազգային հարաբերությունների ու պատմության ամբիոնը:

Ներկայումս հիմնական դասընթացներ է վարում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) «Միջազգային հարաբերություններ» և Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի

«Ցեղասպանագիտություն» և սփյուռքագիտության ամբիոնի «Սփյուռքագիտություն» մասնագիտությունների մագիստրոսական կրթական ծրագրերում:

Մասնակցել է դպրոցական և բուհական համակարգերի բարեփոխումների ուղղությամբ ՀՀ–ում պետական մակարդակով իրականացված աշխատանքներին:

Պարբերաբար մասնակցում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման կենտրոնի և ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից կազմակերպվող մասնագիտական վերապատրաստումներին:

Արժանացել է Երևանի քաղաքապետարանի պատվոգրին՝ երեխաների կրթության և դաստիարակության գործում ունեցած ձեռքբերումների համար (2006 թ.), ՀՀ կրթության և գիտության նախարարության շնորհակալագրին՝ անբասիր աշխատանքի համար (2009 թ.), ՀՀ ԳԱԱ ՊԻ գովեստագրին՝ ինստիտուտի հիմնադրման 70-ամյակի առթիվ և արդյունավետ գիտական գործունեության համար (2013 թ.), ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրին՝ կրթության, գիտության ոլորտում ներդրած ավանդի համար և Երևանի «Գլաձոր» համալսարանի հիմնադրման 25-ամյա հոբելյանի կապակցությամբ (2015 թ.):

Հեղինակի էլ. փոստի հասցեն՝ lilithovannisian@yahoo.com

LILIT HOVHANNISYAN

PhD in History, Associate Professor, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide in the Institute of History, NAS RA. Scientific interests include main issues of history and historiography of the Armenian Question, combined with the Genocide of Armenians. L. Hovhannisyan has published 1 monograph, 5 methodical textbooks and over 40 articles.

Simultaneously with scientific activities, she has been teaching for nearly three decades in the institutions of general and higher education. As a tutor and lecturer of long standing, she taught the history of Armenia, world history, general professional courses and gave specialized training in Yerevan at the secondary school № 137, "Quantum" college, "Gladzor" University, where she also headed in 2007-2014 the Department of International Relations and History named after H. Hakobyan.

Currently, she conducts basic courses in the Master's educational Programs on "International Relations" at the International Scientific and Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia (ISEC NAS RA) together with lectures on "Genocide Studies" at the Institute of Armenian Studies and on "Diaspora Studies" at the Chair of Diaspora of the Yerevan State University.

The author of this book had also actively participated in the work carried out at the state level with the aim to reform the system of the secondary and higher education in the Republic of Armenia.

She regularly participates in professional trainings organized by the Quality Assurance Center of the ISEC NAS RA, as well as by the National Center of the RA for Quality Assurance in Professional Education.

L. Hovhannisyan is awarded a Certificate of Merit from the Municipality of Yerevan for acquisitions in the education and upbringing of children (2006), a Letter of Gratitude from the Ministry of Education and Science of the RA for impeccable work (2009), a Certificate of Merit from the Directorate of the Institute of History NAS RA for productive scientific activities and in connection with the 70th anniversary of the establishment of the institute (2013), the Certificate of Merit of the Ministry of Education and Science of the Republic of Armenia for the contribution made in the field of education, science and in connection with the 25th anniversary of the "Gladzor" University, stationed in Yerevan (2015).

The author's email: lilithovannisian@yahoo.com

ЛИЛИТ ОГАНИСЯН

Кандидат исторических наук, доцент, старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА. Научные интересы охватывают вопросы истории и историографии Армянского вопроса и Геноцида армян. Автор 1 монографии, 5 научно-методических пособий и около 40 статей.

Около трех десятилетий параллельно с научной деятельностью преподает в сферах общего и высшего образования. В течение многих лет преподавала историю Армении, всемирную историю, общепрофессиональные курсы и курсы специализации в ереванской средней школе № 137, колледже «Квант», университете «Гладзор», где в 2007–2014 гг. заведовала также кафедрой Международных отношений и истории имени А. Акопяна.

В настоящее время ведет базовые курсы в магистерских образовательных программах «Международные отношения» Международного научно-образовательного центра НАН РА (МНОЦ НАН РА), «Геноцидоведение» Института арменоведческих исследований и «Диаспороведение» кафедры Диаспороведения Ереванского государственного университета.

Активно участвовала в работах, проводимых на государственном уровне по реформированию систем школьного и университетского образования в Республике Армения.

Регулярно участвует в профессиональных тренингах, осуществляемых Центром обеспечения качества МНОЦ НАН РА и

Национального центра обеспечения качества профессионального образования РА.

Награждена почётной грамотой мэрии города Ереван за достижения в деле образования и воспитания детей (2006 г.), благодарственным письмом Министерства образования и науки РА за безупречный труд (2009 г.), похвальной грамотой дирекции Института истории НАН РА за продуктивную научную деятельность и в связи с 70-летием основания института (2013 г.), почётной грамотой Министерства образования и науки РА за вклад внесённый в сфере образования, науки и в связи с 25-летним юбилеем университета «Гладзор» города Ереван (2015 г.).

Адрес эл. почты автора: lilithovannisian@yahoo.com

Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

1. Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին: [Մենագրություն] / Խմբ.՝ Հ. Ա. Ավետիսյան / ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ / «Տաթև» գիտակրթական համալիր, Երևան, «Զանգակ-97», 2002, 184 էջ:
2. Համաշխարհային պատմություն: (Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր) // Պատմություն: (Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր) / ՀՀ կրթության և գիտության նախարարություն / Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, «Տիգրան Մեծ», 2009, էջ 105–200:
3. Ուսանողի ուղեցույց և կրթական ծրագրերի տեղեկագիրք «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի առկա ուսուցման համար / Երևանի «Գլաձոր» համալսարան / Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Երևան, հրատ.՝ Անահիտ Ղազարյան, 2014, 94 էջ:
4. Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը և տեսությունները: (Թեմատիկ դասախոսություններ «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության կրթական ծրագրի մագիստրատուրայի ուսանողների համար) / ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն / Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոն / Խմբ.՝ Կ. Խաչատրյան, Երևան, «Զանգակ», 2016, 136 էջ:
5. Հրանտ Ալեքսանի Ավետիսյան: Կենսամատենագիտություն / ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ / Պատ. խմբ.՝ Ա. Ա. Մելքոնյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2017, 119 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

1. Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակի հարցը Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերում և «Կովկասյան տան» թուրք-գերմանական ծրագրում 49

2.Հայկական հարցի 1917–1918 թթ. պատմության հիմնա–խնդիրների լուսաբանումը 74

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1919–1920 ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ՈՒ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1.Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովին ներկա–յացված հայ ազգային պահանջների և Հայկական հարցի նկատմամբ Դաշնակից տերությունների դիրքորոշման վերա–գնահատումը..... 159

2. Մեծ եղեռնի հետևանքով հայրենազրկված և տեղահանված հայերի ու նրանց սերունդների՝ Հայրենիք վերադառնալու պա–հանջի պատմական և իրավական հիմքերի լուսաբանումը ... 228

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1921–1923 ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1.1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմա–գիտական վերագնահատումը.....248

2.1921–1923 թթ. Լոնդոնի և Լոզանի դիվանագիտական բա–նակցություններում ու պայմանագրերում Հայկական հարցի լու–սաբանումը.....286

Ամփոփում 319

Summary 323

Резюме 327

Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ.....331

Անվանացանկ 359

Հեղինակի մասին.....375

About the Author 377

Об авторе.....379

Լ. Հովհաննիսյանի գիտամեթոդական աշխատանքներից 381

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1915–1923 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1991–2015 ԹԹ.)

Տպագրվել է «ԻՆՖՈԿՈՊԻ» ՍՊԸ –ի տպարանում

Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am